

ՄԱՐԿԱԼ-ԲԱՍՏԱՆԱԿԱՆ ՓԵՐՈՒՄ 3

Ալեքսանդր Փեթրինգ և այլք

Մարկալական պետություն և մարկալ-դեմոկրատիա



AKADEMIE
FÜR SOZIALE
DEMOKRATIE

FRIEDRICH
EBERT
STIFTUNG

ՀՏԴ 32.001
ԳՄԴ 66.01
Ս 783

Ս 783 ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԳԻՐԶ 3: Սոցիալական պետություն և սոցիալ-դեմոկրատիա / Ա. Փեթրինգ և այլք. – Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ, 2014. – 184 էջ:

ISBN 978-9939-1-0063-0 2-րդ վերամշակված հրատարակություն



Հրատարակիչ **Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ**

Գերմաներեն հրատարակությունը՝ **Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի Զադաքական ակադեմիայի բաժնի, Բոնն, նոյեմբեր 2012թ.**

Հայերեն հրատարակությունը՝ **Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի** հայաստանյան մասնաճյուղի, Երևան, օգոստոս 2014թ.

Խմբագիրներ՝ Յոխեն Դահմ, Թոբիաս Գոմբերթ, Զրիստիան Զրեկ, Ալեքսանդր Փեթրինգ, Թիոմաս Ռիքսեն
Թարգմանիչ՝ Հրայր Բաղդամյան
Հայերեն հրատարակության խմբագիր՝ Արմեն Բաղդասարյան
Էջադրող՝ Գրիգոր Հակոբյան
Շապիկի նկարը՝ Յուրի Արթուրս, Ֆրեդերիկ Սիլոն

Սույն հրատարակության մեջ արտահայտված մտքերի համար պատասխանատվությունը կրում են առանձին բաժինների հեղինակները: Արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել **Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի** կարծիքի հետ:

ՀՏԴ 32.001
ԳՄԴ 66.01

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԳԻՐԸ 3

Ալեքսանդր Փեթրինգ և այլք

Սոցիալական պետություն և սոցիալ-դեմոկրատիա

Երևան

Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ

2014թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ	4
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ և ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱ	8
3. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	15
3.1 Հավասարություն	19
3.2 Վարձատրության արդարություն	21
3.3 Պահանջի արդարություն	24
3.4 Հնարավորությունների հավասարություն	26
3.5 Ամփոփում	29
3.6 Էքսկուրս՝ Էրիարդ Էփիլերը «Արդարություն» հասկացության մասին	30
4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԸ, ԿԱՌՈՒՑԱԶԵՎԵՐԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	34
4.1 Սոցիալական պետության շինանյութերն ու գործիքակազմը	35
4.2 Սոցիալական պետության ճարտարապետությունները	38
4.3 Սոցիալական պետության ճարտարապետությունների արդյունքները	44
5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ	49
5.1 Համաշխարհայնացում (գլոբալիզացիա)	52
5.2 Համակարգային փոփոխություն տնտեսության և աշխատանքային ոլորտներում	57
5.3 Ժողովրդագրական շրջադարձ	61
5.4 Սոցիալական շրջադարձ	63

6. ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	68
---	-----------

6.1 Հիմնարար սկզբունքներ Գերմանիայի համար. Քրիստոնեա-դեմոկրատական միության ծրագիրը	69
6.2 Ազատ դեմոկրատական կուսակցության Կարլգրուեի թեզեր	72
6.3 Համբուրգյան ծրագիր՝ Գերմանիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության հիմնարար սկզբունքների ծրագիրը	75
6.4 «Ապագան կանաչ է». 90-ի դաշինք/Կանաչների հիմնարար սկզբունքների ծրագիրը	79
6.5 «Զախ» կուսակցության ծրագիրը	83
6.6 Ամփոփում	85

7. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ	87
---	-----------

7.1 Հարկեր	88
7.2 Աշխատանք	106
7.3 Կենսաթոշակ	121
7.4 Առողջապահություն	139
7.5 Կրթություն	158

8. ՀԱՐՈՒՆԱԿԵԼ ՄՏԱԾԵԼ	174
-----------------------------	------------

Գրականություն	176
Հեղինակների մասին	182

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆ

Սոցիալական պետությունը սոցիալ-դեմոկրատիայի համար հավելյալ գործիք է, այլ՝ ժողովրդավարության նախապայման է: Այն ապահովում է հավասար ազատություն-բացարձակ ազատություն:

Սոցիալական պետության մեջ սոցիալ-դեմոկրատիայի **ազատություն** հասկացությունը հստակեցվում է: Այն ներառում է ինչպես պետության, այնպես էլ հասարակության կամայական միջամտություններից պաշտպանության սկզբունքը՝ սահմանվելով որպես մտքի և խղճի ազատություն: Բացարձակ ազատությունը նշանակում է, ընդհուպ, կարիքի և վախի ազատություն՝ նյութական նախապայման ինքնորոշված կյանքի համար:

Սոցիալ-դեմոկրատիայի սոցիալական քաղաքականությունը մշտապես ներկայացնում է բացարձակ ազատության պահանջը: Ուղղությունն ու նպատակը պարզ են: Ժամանակի թելադրանքով կոնկրետ քայլերը նորովի են նախանշվում, և անցնելիք ուղին նորովի վերահաստատելու անհրաժեշտություն է առաջանում: Այս գրքի նպատակը այդ վերահաստատմանը նպաստելն է:

Գիրքը նկարագրում է սոցիալական պետության և ժողովրդավարության հիմնարար կապը, ցույց է տալիս, թե արդարության որ եզրույթներն են բնութագրում սոցիալական պետությունը և բացատրում է՝ սոցիալական պետության ինչպիսի տեսակներում են տարբեր երկրները հասարակական հանդուրժողականություն դրսևորում: Գիրքն ուսումնասիրում է սոցիալական պետությանն ուղղված հանրաժանող քննադատությունը, մատնանշում իրական մարտահրավերները, տալիս ակնարկ կուսակցությունների սոցիալ-քաղաքական ծրագրերի մասին և մանրամասնորեն քննարկում է սոցիալական պետության ոլորտները՝ աշխատանք, կենսաթոշակ, առողջապահություն, կրթություն և հարկեր: Ուստի նաև սույն հատորի նպատակը ոչ թե հարաժամանակյա պատասխաններ տալն է, այլ ընթերցելու և մտորելու հրավիրելը:

Սոցիալական պետություն և սոցիալ-դեմոկրատիա գիրքը սոցիալ-դեմոկրատիային վերաբերող գրաշարի երրորդ հատորն է և հիմնվում է **Սոցիալ-դեմոկրատիայի հիմքերը** գրքի վրա: Այնտեղ քննվում են սոցիալ-դեմոկրատիայի հիմնարար արժեքները, համեմատվում հասարակության ազատական, պահպանողական ու սոցիալ-դեմոկրատական մոդելները և ներկայացվում լիբերալ դեմոկրատիայի ու սոցիալ-դեմոկրատիայի տարբերությունները: Այս հատորը ընդհանրություններ

ունի **Տնտեսություն և սոցիալ-դեմոկրատիա** հատորի հետ, որը քննում է, թե ինչպես կարող է սոցիալ-դեմոկրատիայի արդի արժեքահեն տնտեսական քաղաքականությունը հաջողակ լինել:

Սոցիալական քաղաքականության ոլորտում մշտապես կարևորվում են նաև եվրոպական և գլոբալ նշանակության հարցեր: Այս հատորի կենտրոնում է գերմանական սոցիալական պետությունը: Միջազգային հեռանկարները առանցքային են **Եվրոպա և սոցիալ-դեմոկրատիա** ու **Համաշխարհայնացում և սոցիալ-դեմոկրատիա** հատորների համար:

Ֆինանսական և տնտեսական ճգնաժամի ժամանակ առանձնահատուկ կերպով պարզ դարձավ սոցիալական պետության կարևորությունը: Հենց ճգնաժամի ընթացքում տեսանելի դարձան նրա ուժը և նշանակությունը: Այն գործեց որպես ավտոմատ կարգավորիչ, ապահովեց ներքին պահանջարկը, օգնեց կանխել աղբաւոությունը և ապահովել աշխատատեղեր:

Այստեղ կցանկանայինք սրտանց շնորհակալություն հայտնել Ալեքսանդր Փետրինգին, Թոբիաս Գոմբերգին և Թոմաս Ֆիքսին: Ալեքսանդր Փետրինգը հեղինակել է գրքի հիմնական մասը: Թոբիաս Գոմբերգը և Թոմաս Ֆիքսը, իրենց բովանդակային ներդրավածության հետ մեկտեղ, իրականացրել են խմբագրական և դիդակտիկ աշխատանքները: Շնորհակալություն ենք հայտնում նաև Դիանա Օգլյանովային և Մարիուս Բուսեմեյերին, ովքեր համագործակցել են *Առողջապահություն և կրթություն* գլուխներում, ինչպես նաև Միխայել Դաուդերշթեդթին և Զլաուդիա Բոգեդանին՝ գրքի հայեցակարգի մշակման իրենց խորհուրդներով աջակցելու, Եվա Ֆլեբին, Զուլթ Լամբերթին և ուրիշներին գերազանց համագործակցության, ներգրավվածության և գրքի հաջողությանը նպաստելու համար: Հնարավոր թերությունների մեղավորությունը մերն է:

Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիայի խորհրդանիշը կողմնացույցն է: Ակադեմիայի տրամադրած առաջարկներով *Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամը* կամենում է դիրքորոշումներ և կողմնորոշումների հստակեցման շրջանակ տալ: Ուրախ կլինենք, եթե օգտվեք մեր առաջարկներից՝ ձեր քաղաքական ուղին որոշելու համար: Սոցիալ-դեմոկրատիան կենսունակ է այն բանի շնորհիվ, որ քաղաքացիները կրկին ու կրկին զբաղվում են դրանով և հանդես գալիս դրա օգտին:



Դոկտոր Զրիստիան Զրեյ
Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիայի տնօրեն
Բոնն, նոյեմբեր 2012



Յոխեն Դահմ
Սոցիալ-դեմոկրատիայի գրաշար Նախագծի
ղեկավար

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պետությունը սոցիալ-դեմոկրատիայի հիմնարար տարրն է: Այն երաշխիք է, որպեսզի հիմնարար իրավունքները ոչ միայն ձևական գոյություն ունենան, այլ նաև՝ ակտիվորեն կյանքի կոչվեն:

Որպես կանոն, սոցիալական պետության մասին բանավեճերը անցկացվում են քաղաքական բոլոր խմբերի կողմից առանձնակի շեշտադրմամբ, որը ինքնին հասկանալի է և արդարացի, որովհետև սոցիալական պետության գաղափարը ինքնին արտահայտում է ժողովրդավարության և հիմնարար արժեքների հասկացությունները: Այս գրքի նպատակն է՝ օգնել գտնել այդ բանավեճերի ժամանակ սեփական դիրքորոշումը, պարզաբանել և կարողանալ այն ներկայացնել:

Սոցիալ-դեմոկրատիայի հիմնարար արժեքներն են՝ ազատությունը, արդարությունը և համերաշխությունը: Վերջիններս են կազմում սոցիալական պետության ընկալման հիմքը, որն էլ իր արտահայտությունն է գտնում այս գրքում: Այդ իսկ պատճառով, սոցիալական պետության և սոցիալ- դեմոկրատիայի արմատական կապը ներկայացված է այս հատորի սկզբում (Գլուխ 2):

Սույնով հասկանալի է դառնում, որ սոցիալական քաղաքականության մասին խոսելիս նկատի է առնվում բաշխումը, այսինքն՝ թե ինչ սկզբունքներով են բաժանվում կրթությունը, մասնագիտության հնարավորությունները և եկամուտները, իշխանությունը, անվտանգությունը, իրավունքները և պարտավորությունները: Զանի որ կյանքում սրանք առանցքային հարցեր են, առաջանում է դրանց արդարացի բաշխման պահանջը: Սակայն ի՞նչ ասել է արդար: Ի՞նչ է նշանակում արդարությունը առանձին ոլորտներում: Գոյություն ունի՞ որևէ օրինաչափություն, համաձայն որի գործազուրկների ապահովագրությունը իրականացվում է ճիշտ այնպես, ինչպես կրթական համակարգի և առողջապահության համար: Նշյալ արդարության խնդիրներին է նվիրված երրորդ գլուխը:

Միջազգային համեմատության արդյունքում ձևավորվել են սոցիալական պետության տարբեր տիպեր: Նրանք բոլորը օգտվում են միևնույն նյութերից և կառուցման մեթոդներից: Սակայն դրանց ճարտարապետությունը և բնակիչների համար դրանց հետևանքները զգալիորեն տարբերվում են: Ճարտարապետական այդ տարբերություններին է նվիրված 4-րդ գլուխը:

Գլուխ 2. Սոցիալական պետություն և սոցիալ-դեմոկրատիա

Գլուխ 3. Արդարությունը սոցիալական պետությունում

Գլուխ 4. Սոցիալական պետության շինանյութերը, կառուցածքները և ճարտարապետությունները

Սոցիալական պետությունը հաճախ նաև պոպուլիստական քննադատության զոհ է դառնում: 5-րդ գլուխը դասակարգում է այդ քննադատությունը, ցույց է տալիս, թե իրականում ինչպիսի մարտահրավերների առջև է կանգնած գերմանական սոցիալական պետությունը՝ մատնանշելով առաջին նշանները, որոնց կարող էք բախվել:

Հասկացությունները և մարտահրավերները հստակեցնելուց հետո 6-րդ գլուխը արծարծում է սոցիալ-քաղաքականության ոլորտում գերմանական խորհրդարանում՝ Բունդեստագում, ներկայացված կուսակցությունների զբաղեցրած դիրքին, սոցիալական պետության նրանց ներկայացրած մոդելին ու առաջարկած բարեփոխումներին առնչվող հարցեր:

Սոցիալ-դեմոկրատիայի պահանջը հավասար ազատություն երաշխավորելն է: Նպատակը ինքնին պարզ է, սակայն դրանով, իհարկե, դեռ չի սահմանվում, թե ինչպիսի կոնկրետ ձև պետք է ընդունեն սոցիալական պետության առանձին ոլորտները:

Առանձնացվում են հինգ կարևորագույն բնագավառներ, որոնք ձևավորում են ժամանակակից սոցիալական պետությունը: Սոցիալական պետության տարրական բաղկացուցիչներն են բժշկական ապահովագրությունը, գործազրկության ապահովագրությունը և կենսաթոշակային ապահովագրությունը, որովհետև սոցիալական պետությունը պետք է պաշտպանի կենսական մեծ վտանգներից և երաշխավորի մարդու արժանապատվությունը:

Ժամանակակից սոցիալական պետության հասկացությունների շարքում է նաև կրթության քաղաքականությունը, քանի որ սոցիալական պետության նպատակն է ապահովել բոլոր քաղաքացիների՝ մասնակցայնությունը: Քանի որ կրթությունը ժողովրդավարական իրավունքների ըմբռնման համար առաջնային նախապայման է, այն որոշիչ է նաև նյութական ռեսուրսների բաշխման համար: Կրթությունը նշանակում է մասնակցություն և հնարավորություններ:

Ժամանակակից սոցիալական պետության մեկ այլ տարր է հարկային քաղաքականությունը: Վերջինս չպետք է միայն քննարկվի սոցիալ-քաղաքական տեսանկյունից, քանի որ հարկերի և գանձումների միջոցով են սոցիալական պետության ծառայությունները ֆինանսավորվում: Հարկերը նաև կենտրոնական գործիք են՝ ազդելու հասարակության մեջ եկամուտների և ունեցվածքի բաշխման վրա:

1 Տեքստում [այն կիրառությունն են գտել արական և իգական ձևերը: Կան հատվածներ, որտեղ լեզվական պատճառներով հրաժարվել ենք կիրառել երկու սեռային ձևերը (ինչպես օրինակ՝ քաղաքացի-քաղաքացուի)՝ հայերենի համար նախընտրելի համարելով հավաքականության իմաստը: Ծանոթ.՝ թարգմ.:

Գլուխ 5. Սոցիալական պետության մարտահրավերները

Գլուխ 6. Կուսակցությունների սոցիալական քաղաքական դիրքորոշումները

Գլուխ 7. Սոցիալական պետության կենտրոնական ոլորտները

Աշխատանք, կենսաթոշակ և առողջապահություն

Կրթություն

Հարկեր

2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱ²

Այս գլխում՝

- կենսարկվի սոցիալական պետության և սոցիալ-դեմոկրատիայի հարաբերակցությունը,
- կներկայացվեն սոցիալական պետության և սոցիալ-դեմոկրատիայի հասկացությունները՝ հիմնվելով հիմնարար արժեքների՝ ազատության, արդարության և հանդուրժողականության վրա,
- կներկայացվի՝ սոցիալական պետության դերակատարումը քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, սոցիալական և մշակութային հիմնարար իրավունքների ապահովման գործընթացներում:

Գերմանիա. սոցիալական դաշնային պետություն

«Գերմանիայի Դանշնային Զանրապետությունը ժողովրդավարական և սոցիալական դաշնային պետություն է»: Սա գերմանական սահմանադրության 20-րդ հոդվածի առաջին նախադասությունն է, որը ներառում է ժողովրդավարության, սոցիալական պետության և իրավական պետության սկզբունքը և որը, ըստ սահմանադրության մայրերի և հայրերի, պետք է հավիտյան իրավական ուժ ունենա:

Սոցիալական պետության կառուցվածքը. արդարության հարց

Թեև գերմանական սահմանադրության (Գրունդգեզեթց) բազմաթիվ հատվածներում մանրամասնորեն նկարագրվում են ժողովրդավարության և իրավական պետության սկզբունքները, այդուհանդերձ չի հստակեցվում սոցիալական պետության սկզբունքը: Այս հանգամանքը այնքան էլ զարմանալի չէ, եթե հաշվի առնվի, որ սոցիալական պետության կառուցվածքի ամենակարևոր չափանիշը արդարությունն է:

Ինչն է արդար. հին վեճ

Մարդկության ձևավորման սկզբնավորումից ի վեր «արդարություն» հասկացությունը մշտապես վեճերի առարկա է: Սույն հատորի մեծ մասը նվիրված է արդար սոցիալական պետության մասին մտորումներին, առկա սոցիալական պետության առավելություններին ու թերություններին և այլընտրանքային կառուցվածքային հնարավորությունների որոնմանը:

Սոցիալական պետությունը բնութագրվում է իբրև մի ժողովրդավարական պետություն, որը ըստ սահմանադրության երաշխավորում է ոչ միայն հիմնարար իրավունքները և անձնական ու տնտեսական ազատությունները (իրավական պետություն), այլև իրավական, ֆինանսական և նյութական միջոցառումներ է ձեռնարկում, որպեսզի սոցիալական հակադրությունները և լարվածությունները (որոշ չափով) փոխհատուցվեն: Սոցիալական պետության սկզբունքը, այսպիսով, միանում է արդարության իրավական-պետական նպատակին և ամրագրված է գերմանական սահմանադրության 20-րդ և 28-րդ հոդվածներում: «Քաղաքագիտական հանրագիտարան», 2011, էջ 281

² Այս գլուխը մշակելիս անդրադարձ է կատարվել Քնայփի (2003), Փրոյսի (1990), Սթանլսի (2005), Զաուֆմանի (2003) և Ռիթեմի (1991) մտքերին:

Սոցիալական քաղաքականության տարբեր ոլորտների և հայեցակետերի հետ մանրամասնորեն ծանոթանալուց առաջ խորհուրդ է տրվում նախ ուսումնասիրել սոցիալ-պետականության և ժողովրդավարության հարաբերակցությունը:

Հաճախ այն տպավորությունն է ստեղծվում, թե սոցիալական քաղաքականությունը շատերի համար քաղաքական գործունեություն ծավալելու դաշտ է: Այն մեծապես տարբերվում է այլ ոլորտներից, քանի որ դաշնային բյուջեյի հատկացումների ամենամեծ բլոկը ուղղված է հենց այս ոլորտին: Բոլոր քաղաքացիները ուղղակիորեն (ծառայություններն ընդունելով) կամ անուղղակիորեն (հարկերի և հատկացումների հաշվին ֆինանսավորման միջոցով) իրենց վրա կրում են սոցիալ-քաղաքական որոշումների ազդեցությունը: Գերմանական հիմնական օրենքում արված հիշատակումը արդեն իսկ մատնանշում է այս դիրքորոշման սեղմությունը: Այսպիսով՝ ո՞րն է սոցիալ-դեմոկրատիայի և սոցիալական պետության կապի յուրահատկությունը:

«Ժողովրդավարություն» նշանակում է՝ բոլոր քաղաքացիներն ունեն ազատության և քաղաքական մասնակցության հավասար իրավունք: Բոլոր մարդիկ ունեն հավասար արժանապատվություն և արժանի են հավասար հարգանքի: Սա չափազանց ընդհանրական է կամ կարող է նույնիսկ հիմարություն թվալ: Սակայն Արիստոտելը, որի մտքերը շատ առումներով ազդեցիկ են դեռևս մեր օրերում, խորապես համոզված էր հակառակում: Ըստ նրա, կան մարդիկ, որոնք չեն կարող ազատ ապրել: Նա այն կարծիքին էր, որ ստրուկ լինում են ի բնե: Նրա կարծիքով կանայք չպետք է հավասարեցվեն տղամարդկանց: Կանանց ընտրական իրավունքը խոսուն օրինակ է հավասար քաղաքական իրավունքի մտքի զարգացման տեսանկյունից: Գերմանիայում կանայք ընտրական իրավունք ունեն 1919 թ. սկսած, Շվեյցարիայում այդ իրավունքը ձեռք բերելու գործընթացը տևեց մինչև 1971 թ.: Ուստի քաղաքական հավասարության գաղափարը ոչ մի դեպքում հիմարություն չէ և զարգացվել է դեռևս շատ վաղ անցյալում:

Այսպիսով, արժանապատվության, հարգանքի և ինքնորոշման հավասարությունը ժողովրդավարության համար նախապայման է և նախադրյալ: Ինչպես օրինակներն են ցույց տալիս, այդ հավասարությունը ոչ մի դեպքում բնությունից չի տրվում: Բացի դրանից, այն պետք է հավելյալ գործիքներով լրացվի: Անձի հարգանքը և ինքնորոշումը ենթադրում է առաջնային խնամքի նյութական ապահովություն: Առանց սննդի և բնակարանի անգամ ամենամեծ ձևական ազատությունը քիչ արժեք ունի: Այսպիսով, սոցիալական պետությունը ծառայում է ազատության և ժողովրդավարության իրականացման համար նախապայմաններ ստեղծելուն:

Սոցիալական քաղաքականությունը նույնպիսի քաղաքական դաշտ է, ինչպիսին մյուսներն են:

Ժողովրդավարությունը հիմարություն չէ:

Սոցիալական պետությունը հիմք է իրական ազատության և ժողովրդավարության իրականացման համար:

Ժողովրդավարական
պետությունը կարիք
ունի սոցիալական
պետության:

Սոցիալ-դեմոկրատիա-
տիա. սոցիալական և
քաղաքական
հարցերի վաղ կապ

Այնպիսի բարիքների կողքին, ինչպիսիք են սնունդը և բնակարանը, պետք է ապահովվեն նաև կրթությունն ու տեղեկատվությունը, եթե ժողովրդավարությունը չի դիտարկվում լոկ որպես մի դատարկ բառ: Գործազրկության ռիսկերից ապահովագրումը և կրթության ապահովումը չպետք է մեկնաբանվեն որպես կամավոր բարեգործություն կամ ողջախոսի համերաշխություն, քանի որ իրական ժողովրդավարությունը առանց սոցիալական քաղաքականության հնարավոր չէ: Ժողովրդավարական պետությունը կարիք ունի սոցիալական պետության:

Սոցիալ-դեմոկրատիայի համար ժողովրդավարության և սոցիալական ապահովության միջև կապը մշտապես առանցքային նշանակություն է ունեցել: Դեռ 1868 թ. «Գերմանական աշխատավորների միավորումների միություն»-ը այսպիսի ձևակերպում էր տվել, «քաղաքական ազատությունը /.../ աշխատավոր խավի տնտեսական ազատագրման անհրաժեշտ նախապայմանն է /.../: Սոցիալական խնդիրը, այսպիսով, անբաժան է քաղաքականից, վերջինիս լուծումը պայմանավորված է դրանով և հնարավոր է միայն ժողովրդավարական պետությունում» (մեջբերում՝ ըստ Dowe/Klotzbach-ի, 2004:ժ, էջ 158): Ավելի քան 150 տարի անց այդ կապը սոցիալ-դեմոկրատիայում կրկին ու կրկին նորովի է ընկալվում, նաև մուտք է գործել Սոցիալ-դեմոկրատական կուսակցության (ՍԴԿ) ընթացիկ ծրագիր:


«Սոցիալական պետությունը 20-րդ դարի մեծ քաղաքակրթական ձեռքբերումներից է: Այն լրացնում է քաղաքացիական ազատության իրավունքները սոցիալական- քաղաքացիական իրավունքների միջոցով: Ուստի մեզ համար ժողովրդավարությունը և սոցիալական պետությունը անբաժան են: Սոցիալական պետությունը միլիոնավոր մարդկանց ազատել է ի ծնե աղքատությունից, պաշտպանել է շուկայի դաժանությունից և հնարավորություններ է ընձեռել ինքնորոշված կյանքի համար: Սոցիալական պետությունը տնտեսական դինամիկայի համար որոշիչ հիմք է, որը մեր բարեկեցությունն է ստեղծում: /.../ Ապահովության և վերելքի խոստումը մեր ժամանակներում թարմացնելու համար, շարունակում ենք զարգացնել սոցիալական պետությունը որպես այդպիսին, ընդհուպ մինչև հոգատար սոցիալական պետություն» (Յամբուրգի ծրագիր, 2007, էջ 55-56):

Նախապես հոգա-
ցող սոցիալական
պետության գաղա-
փարը տես՝ 4-րդ գլխի
սոցիալ-դեմոկրատի-
ական մոդելում:

Վերոնշյալ հոգատար սոցիալական պետության միտքը կապվում է սկանդինավյան պետությունների հաջողակ սոցիալական քաղաքականության և իրենց, այսպես կոչված, սոցիալ-դեմոկրատական սոցիալական պետության տիպի հետ, որը մասնաճյուղն է պարզաբանվում է 4-րդ գլխում (Սոցիալական պետության նյութերը, շինարարական մեթոդները և ճարտարապետությունները):

Ժողովրդավարության ուսումնասիրությունը վերջին տասնամյակներում մշտապես ցույց է տվել, որ ժողովրդավարության նյութական և ոչ նյութական նախադրյալները ստիպված են լինել ավելին, քան պարզունակ գոյության ապահովումն է: Այսպիսով, քաղաքական մասնակցության ծավալը սերտորեն կապված է նշյալ ռեսուրսների հետ՝ մասնակցություն ընտրություններին, գործառնություն կուսակցություններում և այլ ձևաչափերի քաղաքական գործունեություն:

Նա, ով գործազուրկ է կամ միայն ցածր եկամուտ և ոչ լիարժեք կրթություն ունի, գործնականում նաև ավելի քիչ օգուտ է քաղում իր քաղաքական իրավունքներից: Ազատության և քաղաքական իրավունքների հավասարազոր ընկալումը, որը ըստ էության ժողովրդավարության հիմնարար նախադրյալն է, կապված է կյանքի առնվազն համեմատելի սոցիալական և տնտեսական պայմանների հետ:



Գծապատկեր 1. Սոցիալական պետության և ժողովրդավարության կապը

Սոցիալական պետության մասին շատ բանավեճեր ընթանում են հենց նրա կողմից առաջ բերած ծախսերի շուրջ: Ասվում է նաև, որ սոցիալական քաղաքականությունը խոչընդոտում է տնտեսական աճը: Ժողովրդավարության և սոցիալական պետության անբաժանելի կապի ֆոնին որոշ փաստարկներ գրեթե անհերքելի են թվում. Ժողովրդավարության համար գնի հարցը էական չէ: Ազատությունն ու ժողովրդավարությունը համադրելի չեն տնտեսական աճի հետ:

Սոցիալական պետություն. ավելին, քան սոսկ գոյատևումն է:

Ակտիվ (քաղաքական) մասնակցության նախապայման:

Սոցիալական պետությունը «ջա՞նդ թանկ» է: Կարո՞ղ է ժողովրդավարությունը շատ թանկ լինել:

*Ուժեղ սոցիալական
պետություն ունեցող
երկրները հաճախ
տնտեսապես
հաջողակ են:*

Շատ քննադատություններ, որոնք ուղղված են սոցիալական պետության դեմ, չեն դիմանում ճշգրիտ քննության: Ահավասիկ՝ ամենահարուստ ժողովրդավարությունների շարքերում միաժամանակ այն երկրներն են, որոնք ամենամեծ սոցիալական պետություններն ունեն:

Եվ ոչ էլ այն պնդումն է հավաստի, թե իբր լայնածավալ սոցիալական պետության պատշաճ ֆինանսավորումը անհնար է, և որ դրա հետևանքով պետության պարտքերի աճը անխուսափելի է: Թեև կան մեծ պետական պարտք, սակայն կայացած սոցիալական պետություն ունեցող երկրներ, միաժամանակ կան նաև բարձր սոցիալական հատկացումներով և ցածր պետական պարտք կուտակած երկրների օրինակներ:

*«Սոցիալական
պետություն»
նշանակում է
վերաբաշխում:*

Սոցիալական պետության ֆինանսավորման հարցը բերում է սոցիալական պետության շուրջ մեկ այլ հայտնի քննադատության: «Սոցիալական քաղաքականություն» նշանակում է վերաբաշխում: Իսկ «վերաբաշխում» նշանակում է, որ նրանք, ովքեր շատ ունեն, ինչ-որ բանից իրաժարվում են, և նրանք, ովքեր քիչ ունեն, ինչ-որ բան ստանում են: Այս գործընթացը ոմանց կողմից ընդունվում է որպես պատերազմի զինվորականության անընդունելի դրսևորում կամ նույնիսկ որպես բռնագրավում:

*Չիմնավորում.
իրավական
պետությունն է
երաշխավորում
սեփականությունը:*

Իսկապես, պետությունը միջամտում է քաղաքացու եկամուտի բաշխման գործընթացին, և ավելի քան ակնհայտ է, թե որ արժեքն է այստեղ առաջնային: Սեփականության իրավունքը՝ առանց ժողովրդավարական, իրավական պետության, պակաս արժեքավոր է, քանի որ միայն վերջինս է ապահովում սեփականության իրավունքը: Ժողովրդավարական իրավական պետությունն իր հերթին որպես պայման ունի քաղաքացիների ինքնորոշված և արժանապատիվ կյանքը:

Շուկայի միջոցով առաջացած եկամուտները հարկերի և գանձումների տեսքով բաշխելը անհրաժեշտ միջոց է բոլորի ազատությունը, ապահովությունը և սեփականությունը երաշխավորելու համար: Այսպիսով, սեփականության իրավունքը ամբողջապես չի վերացվում, այլ՝ միայն նրա անսահմանափակ առաջնահերթությունը:


*Սոցիալ-դեմոկրատիա.
բացասական
և դրական ազա-
տություններ:*

Ըստ սոցիալ-դեմոկրատիայի հեռանակարի հավասարապես պետք է ձգտել ու իրականացնել և՛ այն ազատությունը, որը անհատին պաշտպանում է համայնքի միջամտությունից (ազատության բացասական իրավունքներ), և՛ այն ազատությունը, որն իրապես հետապնդում է սեփական ցանկություններն ու նպատակները (դրական ազատություն)³: Նա, ով սոցիալական քաղաքականության և վերաբաշխման համատեքստում դեռևս խոսում է պատերազմի զին և յուրացման մասին, ամենա-

3 Դրական և բացասական ազատությունների հարաբերակցության մասին տես նաև 1-ին գրքում. «Սոցիալ-դեմոկրատիայի հիմքերը», գլուխ 4.4.:

քիչը պետք է թերևս հիշատակի, որ ոչ բոլորը կարող են վայելել այն ազատության բերկրանքը, որ նա ցանկանում է պաշտպանել:

«Ազատություն» նշանակում է ինքնորոշված ապրելու հնարավորություն: Յուրաքանչյուր որ ունի ազատության իրավունք և կարողություն: Սակայն հասարակությունն է որոշում՝ արդյո՞ք անհատն ի գործու է այդպես ապրել: Յուրաքանչյուր որ պետք է ապրի առանց նվաստացնող կախվածության, կարիքի ու վախի և պետք է հնարավորություն ունենա իրացնելու իր հմտություններն ու պատասխանատվությամբ մասնակցելու հասարակական և քաղաքական կյանքին: Միայն նա, ով իրեն սոցիալապես բավականաչափ ապահովված է զգում, կարող է օգտագործել իր ազատությունը: (Համբուրգյան ծրագիր, 2007թ., էջ 15)



Գծապատկեր 2. Ազատության բացասական և դրական իրավունքները

Այսպիսով, սոցիալական քաղաքականությունը ոչ թե որևէ ժողովրդավարությունում բազմաթիվ քաղաքական դաշտերից մեկն է, այլ՝ ժողովրդավարության անբաժանելի մասը: Դա թերևս միայն այն դեպքում է այդպես, երբ ժողովրդավարությունն ասելիս, հասկանում են ոչ միայն ազատության իրավունքների, ընտրու-

Սոցիալական պետությունը և ժողովրդավարությունը անբաժանելի են:

թյունների և անկախ դատարանների ձևական գոյություն, այլ նաև՝ քաղաքացիների իրական մասնակցություն հասարակական և քաղաքական կյանքին: Սա ևս առանցքային է սոցիալ-դեմոկրատիայի համար: Սոցիալ-դեմոկրատիան ձգտում է հիմնարար իրավունքների իրականացմանը: **Սոցիալ-դեմոկրատիայի հիմքեր** գիրքը դա այսպես է բացատրում.

«Որպեսզի ազատության բացասական իրավունքները ոչ միայն ձևական բնույթ կրեն, այլ բոլորի համար գործեն, պետք է երաշխավորվեն ազատության դրական իրավունքները: Որը, ի դեպ, նշանակում է, որ ունևորները հասարակության շրջանում պետք է հաշվի նստեն վերաբաշխման հետ: /.../ Առանց բարիքների հասարակական վերաբաշխման, որը, որպես կանոն, կազմակերպվում է պետության կողմից, ազատության իրավունքների իրականացում հնարավոր չէ»: (Գիրք 1. «Սոցիալ-դեմոկրատիայի հիմքերը», էջ 104)

3. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ⁴

Այս գլխում՝

- քննարկվում են բաշխման արդարության չորս սկզբունքները, որոնք են՝ հավասարությունը, արդար վարձատրությունը, պահանջի արդարությունը, հնարավորությունների հավասարությունը և վերջիններիս հարաբերակցությունը միմյանց հետ,
- պարզաբանվում են համընդհանուր արդարության սկզբունքները, սեռերի և սերունդների արդարությունը,
- Էրիարդ Էպպլերը մի աշխատության շրջանակում քննության է առնում «արդարություն» հասկացության լեզվական կիրառությունը քաղաքական առօրյայում:

Արդարությունը մի չափանիշ է, որով նկարագրվում և գնահատվում է դիմացինի հանդեպ վարքագիծը: Սոցիալական արդարությունը նույնպես նկարագրվում է դիմացինի հանդեպ ունեցած վարքագծով, սակայն այս դեպքում դերակատարը պետությունն է, համապատասխանաբար՝ հասարակությունը: Այսպիսով, հարցը հետևյալն է, թե բաշխման ինչպիսի՞ սանդղակ պետք է կիրառի պետությունը:

Պետական (վերա)բաշխման հիմքը արդեն իսկ նշված է՝ ելնելով հավասար արժանապատվությունից՝ բոլոր քաղաքացիները պետք է ունենան ինքնորոշված կյանքի և քաղաքական մասնակցության հավասար հնարավորություններ:

«Արդարությունը հաստատում է յուրաքանչյուրի հավասար արժանապատվությունը: Այն նշանակում է հավասար ազատություն և կյանքի հավասար պայմաններ՝ անկախ ծագումից կամ սեռից»: (Յամբուրգյան ծրագիր, 2007 թ., էջ 15)

Սակայն ինչպե՞ս կարելի է հասնել դրան: Պետք է բոլոր քաղաքացիները հավասարաչափ վաստակեն: Կամ՝ արդյունքում բոլորը պետք է հավասարաչափ տնօրինեն: Բոլորի անհատական կարիքները պետք է հավասարաչափ բավարարվեն: Կամ՝ արդյո՞ք վաստակն ու ունեցվածքը պետք է բաշխման հիմք լինեն: Կամ՝ արդյո՞ք բարիքներն ավելի քիչ պետք է լինեն, փոխարենը հնարավորությունները հավասարապես բաժանվեն:

*Ինչպե՞ս արդար
բաշխել:*

Լրացուցիչ ընթերցանության համար՝
գիրք 1. «Սոցիալ-դեմոկրատիայի հիմքերը» (2008թ.), գլուխ 2.2.

Բոլորին հավասարաչափ

⁴ Այս գլուխը մշակելիս հետախայաց անդրադարձ է կատարվել Բեթեր/Յաուգերի (2004 թ.), Գոգեփաթի (2004թ.), Զերստինգի (2000 թ.), Պեթրինգ/Յենգերսի (2007 թ.), Գյորինգի (1998 թ.), Զերսթինգի (2001 թ.) և Լեգենիխի (2003 թ.) մտքերին:


*Չորս սկզբունք՝
հավասարություն,
հնարավորություն-
ների հավասարու-
թյուն, վարձատրու-
թյուն և կարիք:*

*Սեռերի և սերունդ-
ների արդարություն*

Իհնչ են իրենցից ներկայացնում հավասարության, վարձատրության արդարության, պահանջի արդարության և հնարավորությունների հավասարության սկզբունք-ները: Սոցիալական պետության ո՞ր ոլորտներում է վերջիններիս կիրառությունը արդարացված: Այս ամենը պետք է մանրամասնորեն քննության առնվի ներքոշա-րադրյալում: Արդարության վերը նշված հասկացություններում խոսքը բաշխման արդարության առանցքային սկզբունքների մասին է:

Արդարության երկու սկզբունքներ՝ սեռերի և սերունդների հավասարությունը, պետք է լրջորեն հաշվի առնվեն: Բաշխման արդարության ժամանակ ընդհանրա-կան հարց է առաջանում՝ արդյոք ինչպե՞ս պետք է պետությունը քաղաքացիների միջև եղած տարբերությունները շրջանցի: Այս պարագայում տարբեր ոլորտներում կիրառություն են գտնում տարատեսակ սկզբունքներ:

Հնարավորությունների հավասարություն



Գծապատկեր 3. Արդարության չորս հասկացություններ

Տղամարդու և կնոջ հավասարությունը և ներկայիս գործելակերպի սկզբունքը պետք է ապահովեն ապագա սերունդների ապրուստի հիմքը, սակայն այս երկու հանգամանքը չեն սահմանափակվում քաղաքականության առանձին ոլորտներով: Երկու սկզբունքները՝ սեռերի և սերունդների հավասարությունը պետք է (սոցիա-լական) քաղաքականության հիմանարար մոդելներ լինեն:

Սեռերի իրավահավասարություն

Էվա Ֆլեբեն

Արդա՞ր է, որ աշխատանքային կյանքում մայրերը ավելի քիչ մասնակցություն ունեն, քան հայրերը: Արդա՞ր է որ, կանայք ավելի քիչ են վաստակում քան տղամարդիկ: Արդա՞ր է, որ աշակերտները գնալով ավելի ցածր առաջադիմություն են ցուցաբերում, քան աշակերտուհիները:

Սրանք մի քանի հարցեր են, որ սեռերի իրավահավասարության համատեքստում պետք է բարձրաձայնվեն: «Սեռերի իրավահավասարություն» նշանակում է կանանց և տղամարդկանց կյանքի իրականությունների պարբերական հաշվառում բաղաբաղականության բոլոր ոլորտներում: Սեռերի իրավահավասարությունը որոշակիորեն խաչաձևվում է բաշխման արդարության չորս առանցքային սկզբունքների հետ, ընդ որում՝ այն հատկապես արտացոլվում է վարձատրության և հնարավորությունների հավասարության համատեքստում:

Թեև սեռերի իրավահավասարության ամրագրումը Նոր չէ, հիմնովին չեն նվազեցվում սեռերի միջև տարբերությունները: Այս թեման շարունակում է բաղաբաղական հասարակական արդիականություն ունենալ նաև երեխաների կամավոր խնամակալության մասին չավարտվող զրույցների շնորհիվ: Նմանատիպ զրույցները շարունակում են արդիական մնալ և շրջանառվում են Նույնիսկ հանրաճանաչ գործիչների միջոցով:

Վերջին տասնամյակներում փոփոխվել են ֆեմինիստական թեմաները և դրանց շեշտադրումները: Այսօր ավելի շատ շեշտադրվում է զուգընկերային իրավահավասարությունը և ավելի քիչ՝ արմատական պահանջները, որոնք դեռ 1970-ականներին անհրաժեշտ էին: Անկախ ֆեմինիստության կառուցվածքային փոփոխություններից ու հետագա զարգացումներից՝ ֆեմինիստական պահանջները, ինչպես նախկինում, այնպես էլ հիմա շարունակում են բաղաբաղական խնդիր մնալ:

Այս ամենը հատկապես արդարացված է, երբ դիտարկում ենք գերմանական սոցիալական պետության օրինակով: Օրինակ՝ տարեց կանանց շրջանում աղքատությունը ավելի ցայտուն է, ամուսնալուծություններն իրականում ազդեցություն են թողնում առաջին հերթին կանանց մասնագիտական կյանքում: Ամեն դեպքում, սեռերի իրավահավասարության անարդարության ֆոնին նախանշանների փոփոխություններ են ի հայտ գալիս: Որոշ բնագավառներում, ինչպիսին օրինակ կրթականն է, կարելի է հանդիպել նաև խտրականություն արական սեռի հանդեպ:

Այսպիսով, երկու սեռերն էլ պայքարում են անարդարությունների դեմ: Ո՛չ գերազնահատումը, և ո՛չ էլ թերազնահատումը տևտեսապես և սոցիալապես նպատակահարմար չեն, քանի որ

Լրացուցիչ ընթերցանության համար՝

Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ
(հրատարակող) (2009 a), *Թեմաների պորտալ՝ «Կանայք-տղամարդիկ-գենդեր»*, www.fes.de/gender:
Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ
(հրատարակող) (2009 b), *«Տարիք, աշխատանք, աղքատություն: Կանխել կանանց աղքատությունը տարեցների շրջանում»*, *Բեռլին: Զրիստինե Ֆերբեր, Ուլրիքե Շվանգենբերգ, Բարբարա Շտիգլեր (2008 թ.), «Վերահարկում. ընտանիքների բաժանումը կանխելու նպատակով նախադրյալներ»*, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ
(հրատարակող), *Բոնն:*

Լրացուցիչ ընթեր- ցանության համար՝

*Ֆրիդրիխ Էբերտ
հիմնադրամ
(հրատարակող)
(2006), «Սերունդների
համերաշխություն.*

*ՖԷՅ առցանց
ակադեմիայի
թեմատիկ մոդուլներ»,
www.fes-
onlineakademie.de:*

*Փեթեր Բոֆինգեր
(2009), «Արդարու-
թյուն սերունդների
համար. Ընդհանուր*

*տնտեսական
հեռանկար» ,*

*Ֆրիդրիխ Էբերտ
հիմնադրամ
(հրատարակող),*

*Բոնն:
Բյորն Բյոնինգ և Կայ
Բուրմայստեր (հրատ.)
(2004), «Սերունդներ
և արդարություն»,
Համբուրգ:*

անարդարությունը հնարավոր չէ մեկ այլ անարդարությամբ հավասարակշռել: Հայացքն ավելի շատ պետք է սևեռել այլ ուղղությամբ. արդի հասարակության մեջ մենք այսուհետ գործ ունենք սեռերի իրավահավասարության բազմաբևեռ անարդարությունների հետ: Երեխաների խնամքի հարցում միայնակ հայրերը առնչվում են միևնույն խնդիրների հետ, ինչ միայնակ մայրերը: Հիվանդների խնամակալները, լինեն կին, թե տղամարդ, դատապարտված են անընդունելի ցածր աշխատավարձերի: Սեռերի անարդարության թեման, այսպիսով, բազմակողմ է և արդիական, քան երբևէ:

Բազմակարծիք հասարակությունը պահանջում է բաշխման արդարության ոչ միայն ավելի համապարփակ ռազմավարություններ, այլ նաև՝ ընդհանուր առմամբ արդարության սկզբունքների ավելի տարբերակված տեսություն: Սա վերաբերում է նաև սեռերի իրավահավասարության արդարությանը:

Սերունդների համերաշխությունը մի կողմից՝ անդրադառնում է երիտասարդների և տարեցների միջև բարիքների բաշխման և մյուս կողմից՝ ներկայի և ապագայի սերունդների հարցերին: Սերունդների համերաշխության բացակայության դասական օրինակ է հանդիսանում շրջակա միջավայրի ոչնչացումը: Այս հասկացության կիրառումը գնալով ավելի հաճախ է հանդիպում սոցիալական պետության ֆինանսավորման և պետական պարտքի աճի տեսանկյունից: Այս համատեքստում խնդիրը վիճելի է, հատկապես քաղաքական տարբեր նպատակներ հետապնդելու պատրվակով շրջակա միջավայրի հատկացումները հոգուտ կրթական և սոցիալական համակարգի կրճատելու նախաձեռնությունների պարագայում:

Այս առումով Սոցիալ-դեմոկրատական կուսակցության համբուրգյան ծրագիրը սերունդների համերաշխության հասկացության մի ընդգրկուն սահմանում է տվել. «Պատշաճ ֆինանսական բաղաբականություն ասելով՝ հասկանում ենք, որ այսօր չենք ապրում ապագա սերունդների հաշվին: Հանրային ֆինանսների համախմբումը չպետք է հանգեցնի նրան, որ մենք եկող սերունդներին թողնենք անառողջ ենթակառուցվածքներ: Գալիք սերունդների հանդեպ ունեցած մեր պարտավորությունն է կրճատել պետական պարտքը և միաժամանակ ավելի շատ ներդրումներ կատարել կրթության, գիտության և ենթակառուցվածքների մեջ» (Համբուրգյան ծրագիր, 2007 թ., էջ 46):

3.1. Հավասարություն

Հավասարությունը՝ որպես բաշխման սկզբունք պահանջում է, որ հասարակության անդամների միջև՝ անկախ իրենց իրավական, քաղաքական, սոցիալական և տնտեսական դիրքից, որևէ տարբերություն չլինի: 1789 թ. Ֆրանսիական հեղափոխության ժամանակ «Ազատության, հավասարության և համերաշխության» պահանջը առաջ մղող առանցքային գործոն էր: 19-րդ դարից ի վեր աշխատավորների շարժումը պայքարում էր բոլոր քաղաքացիների իրավական և քաղաքական հավասարության համար: Այսպիսով, աշխատավորական շարժումների համար կարևոր էր ոչ միայն կին և տղամարդ աշխատողների էմանսիպացիան՝ ազատագրումը, այլև՝ հավասար ազատությունը բոլորի համար:

19-րդ դար. իրավական և քաղաքական հավասարության պահանջ

Էմանսիպացիայի համար պայքարը աշխատավոր խավի պարթարն է ոչ միայն խավերի արտոնության և մենաշնորհի, այլև՝ հավասար իրավունքների և պարտավորությունների համար:

(Գերմանական աշխատավորների միության համաժողովի ծրագիր, Նյուրնբերգ, 1868 թ., մեջբերում ըստ Դոլվե/Զլոցբախի, 2004 թ., էջ 157-158)

Ամենամեծ առաջիադացումը «իրավահավասարության» համատեքստում տեղի է ունեցել իրավական և քաղաքական հավասարության առումով: Դիտարկելով հիմքերի կարգախոսը, համաձայն որի հավասարի հետ պետք է վարվել հավասար, իսկ անհավասարի հետ՝ անհավասար, ակնհայտ է դառնում, որ քաղաքական մասնակցություն և ինքնորոշում պետք է տրվի բոլորին հավասարապես: Սեռերի տարբերակումը չի կարող արդարացվել հենց միայն այն պատճառով, որ արժանապատվության, քաղաքական մասնակցության և ինքնորոշման առումով սեռերի որևէ տարբերություն չի կարող գոյություն ունենալ:

Ձևական հավասարությունը գրեթե իրականացված է:

Այսպիսով, պետք է տարբերել անարդար վարվեցողությունը՝ որպես գործիք, արդյունքում ունեցած անարդարությունից, և հենց դրա համար էլ անհրաժեշտ է սակավ հնարավորություն ունեցող անձանց հանդեպ արտոնյալ վերաբերմունք ցուցաբերել: Հավասարությունը հատկապես իրավական ոլորտում է կյանքի կոչվում: Իրական կյանքում, սակայն, հաճախ կարելի է նկատել, որ հավասարության սկզբունքից շեղվում են:

Անհրաժեշտ է տարբերակել գործիքները և արդյունքը:

«Իրավական հավասարությունը դեռ չի նշանակում իրավահավասարություն: Մասնագիտական և աշխատանքային ոլորտներում դեռ շարունակում են գոյություն ունենալ հին խտրականությունները: Մասնագիտության և ընտանիքի համատեղելիու-

թյունը դեռևս շարունակում է խնդրահարույց լինել հիմնականում կանանց համար: Կանայք ավելի քիչ են վաստակում, քան տղամարդիկ, կանայք ավելի հեշտությամբ են կորցնում աշխատանքը և նրանց ավելի հաճախ է սպառնում աղքատությունը»: (Համբուլդյան ծրագիր, 2007 թ., էջ 10)

*Անհավասարությունը
պահանջում է
արդարացում:*

Անարդարության բախվելիս մենք արդարացում ենք ակնկալում: Հավասար արժանապատվության, ազատության մեջ ինքնորոշված ապրելու և քաղաքական մասնակցության հավասար իրավունքի տեսանկյունից անարդարությունները հիմնավորման կարիք ունեն:

*Հավասարության
ինչպիսի՞ չափումներ
գոյություն ունեն*

Արդյո՞ք հավասարությունը վերաբերում է միայն քաղաքական և սոցիալական իրավունքներին, թե՞ նաև եկամուտի և բարիքների բաշխմանը: Չնայած թվացյալ հեշտ կիրառելի հավասարության սկզբունքի, բազմաթիվ հարցեր են առաջանում՝ արդյո՞ք պետք է հավասարությունը տարածվի ընտանիքների, թե՞ անհատների վրա: Խոսքը հավասար եկամուտի, թե՞ կենսական պայմանների հավասարության մասին է: Եվ հավասարությունն ստեղծելիս ինչպիսի՞ ժամանակային միավորի մասին ենք խոսում: Խոսքը որևէ ժամանակահատվածի, կյանքի որոշակի փուլի, թե՞ անժամկետության մասին է:

Կենսական պայմանների հայեցակարգ

Քնույթ Լամբերթին և Զրիստիան Զրելլ

Կենսական պայմանների մոտեցումը Գերհարդ Վայգերի կողմից առաջարկված մի հայեցակարգ է, որը դիտարկման է առնում աղքատության և հարստության բազմակողմանի բնույթը: Գերհարդ Վայգերը (1898-1989) եղել է Նախարար, սոցիալական գիտությունների մասնագետ, Զյուլի համալսարանի պրոֆեսոր, ակտիվ բողոքական և շահագրգիռ սոցիալ-դեմոկրատ: 1954-1970 թթ. նա եղել է *Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի* վաչության խորհրդի նախագահ:

Գ. Վայգերի բաշխման քաղաքականության մոտեցման առանցքը «Բաշխվում են կենսական պայմանները» հայտարարությունն է: Նա ենթադրում էր, որ բաշխման քաղաքական նկատառումներում պետք է հաշվի առնվեն ոչ միայն նյութական չափերը, այլ նաև՝ մարդկային կարիքների բոլոր հայեցակետերը, գործելու շրջանակները, սոցիալական ցանցերը կամ մշակութային նվաճումները: Նրան մտահոգում էր ոչ միայն սոցիալ-տնտեսական հարթությունը, այլ նաև՝ դրա հետ կապված հնարավորությունները և բարեկեցությունը, իսկ վերջիններս բացի զուտ նյութական հարցերից կախված են շատ այլ հայեցակետերից:

իր կենսական պայմանների հայեցակարգով Գերհարդ Վայգերին հաջողվեց ստեղծել մի սինթեզ՝ տեսական աշխատանքով և գործնական անդրադարձով: Նրա աշխատանքի ազդեցությունը առկա էր ոչ միայն ՍԴԿ Գոդեսբերգյան ծրագրում, այլ նաև դաշնային սոցիալական օգնության օրենքի և դաշնային կառավարության արժեքատվության և հարստության հաշվետվության մեջ:

«Եկամուտի, ունեցվածքի և իշխանության բաշխման հավասարության» և մասնակցության ու հավասար կենսական հնարավորությունների պահանջի համատեքստում Գ. Վայգերի մտքերին կարելի է հանդիպել նաև 2007 թ. ՍԴԿ Համբուրգյան ծրագրում:

Հնարավոր է նաև հավասարությունը մեկնաբանել որպես նյութական արդյունքի հավասարություն, անկախ նրանից, թե ինչ և որքան է անհատը վաստակել: Պետության կողմից նյութական հատկացումները բոլորին տրվում են հավասարաչափ:

Այս մոդելի դեմ առաջ են բաշխում ծանրակշիռ փաստարկներ: Հավասարության նպատակի հետևողական իրականացումը հնարավոր չէ համատեղել շուկայական տնտեսության հետ: Այն հակամարտության մեջ է մտնում անհատական իրավունքների հետ, ինչպես օրինակ՝ սեփականության իրավունքի, որը առկա է ժամանակակից ժողովրդավարության տեսակներում: Սակայն ավելի կարևոր է այն, որ հավասարությունը՝ որպես միակ բաշխման սկզբունք, չի դիտարկվում որպես արդարացի:

Վարձատրությունը և կարիքը երկու այլ կարևոր սկզբունքներ են, ըստ որոնց կարող է առաջնորդվել բարիքների և ռեսուրսների բաշխումը: Կարո՞ղ են արդյոք այդ չափանիշները անարդարություններն արդարացնել:

3.2. Վարձատրության արդարություն

Տարբերակված բաշխումը արդարացնելու համար մարդիկ հիմնականում առաջնորդվում են իրենց համար ավելի ծանոթ արդարության սկզբունքով՝ այն է վարձատրության արդարությունը: Վարձատրության արդարությունը (կամ՝ վաստակի սկզբունքը) պահանջում է ըստ արժանվույն վերաբերվել վարձատրությանը՝

Նյութական արդյունքի հավասարություն ...

... միայն չափման միավոր չէ՝

Օրինակ՝ հավասար վարձատրություն նույն աշխատանքի համար:

առաջնորդվելով կատարած աշխատանքի ծավալներով: «Հավասար աշխատավարձ հավասար աշխատանքի համար» պահանջը արդար վարվելակերպի տիպիկ օրինակ է:

«Սոցիալ-դեմոկրատիայի դեմ մշտապես բերվող կոշտ նախապաշարմունքը հերքելու համար հարկավոր է Նշել, որ սոցիալ-դեմոկրատիան բարիքների և ռեսուրսների բաշխման մեջ տարբերությունները լեզվի տիպ է դիտարկում միայն այն դեպքում, երբ դրանք հիմնավորվում են յուրահատուկ կարիքով կամ արժանիքով կամ էլ հիմնվում են գործունեության շոշափելի, նկատելի և չափելի տարբերությունների վրա»: (Թիիրգե, 2005թ., էջ 14)

*Ինչպե՞ն չափել
վարձատրությունը*

Հաճախ այդպես էլ հեշտ չէ ասել, թե ինչպես պետք է ճիշտ որոշել աշխատանքի համարժեք վարձատրությունը: Համարժեք է այն կատարած աշխատանքի արդյունքի համեմատ, թե՞ կապված է աշխատանքի պահանջած ջանքի (եռանդի և աշխատասիրության) հետ: Ինչպիսի՞ դեր են խաղում տարատեսակ հմտություններն աշխատանքի վարձատրության գնահատման ժամանակ: Պե՞տք է արդյոք պարզևատրվեն ի ծնե տրված առանձնահատուկ տաղանդները, որոնց համար առանձնապես ջանքեր չեն գործադրվել:

«Միայն Աստված է ի վիճակի կատարել անհրաժեշտ արդար բաշխում՝ տիրապետելով մարդկանց սրտում ապրող գաղտնիքներին: Եթե այդ աշխատանքը մարդկային էակներն իրականացնելու լինեին, ապա բաշխման սարքը շատ արագ կհայտնվեր մի խումբ արիստոկրատների ձեռքերում (այդպես կհամարեին ընտրյալներն իրենք իրենց), որոնք հստակ կիմանային՝ ինչ կարելի է հասկանալ՝ ասելով լավ, ավելի լավ, ամենալավ և յուրահատուկ վարձատրության արժանի և կույր կլինեին իրենց մնացյալ քաղաքացիների արժանիքների և բազմազան առավելությունների հանդեպ»: (Վալցեր, 2006 թ., էջ 56)

*Վարձատրություն՝
արդյունք, ջանք և
տաղանդ*

Փորձերը և հարցումները ցույց են տալիս, որ բազմաթիվ մարդիկ համարժեք վարձատրությունը հասկանում են որպես երեք գործոնների համադրություն, դրանք են՝ արդյունքը, եռանդը և տաղանդը, ընդ որում, արդյունքն ու եռանդը ամենակարևոր գործոններն են:

*Վարձատրությունը
գնահատվում է
շուկայի միջոցով ...*

Անձնական տաղանդը շատերի կողմից գնահատման արժանի է համարվում միայն ջանքերի հետ համադրմամբ:⁵ Եռանդը, ջանքը և աշխատասիրությունը այն գործոններն են, որոնք արտաբուստ հեշտ չէ գնահատել:

5 Արդարության կարգավորումների վերաբերյալ հետաքրքիր ակնարկ տես Միլլերի 4-րդ գլխում (2008 թ.):

Այսպիսով, արդար վարձատրության սկզբունքի հետևողական կիրառությունը բնավ հեշտ չէ: Ամենապարզ լուծումը կլիներ, շուկային թողնել համարժեք վարձատրության սահմանումը: Լուծման այս ճանապարհը, սակայն, հետևանքներ ունի, քանի որ շուկան վարձահատույց է լինում անհատական ջանքից և պատրաստակամությունից ելնելով:

Շուկան կողմնորոշվում է արդյունքով: Դա, ի դեպ, հանգեցնում է նրան, որ քաղաքացիների կողմից ընկալվող արդար վարձատրության եկամուտների տարբերությունները շատ ավելի քիչ են, քան իրականում գոյություն ունեցող տարբերություններն են (Միլլեր, 2008 թ., էջ 112):

Եվս մեկ՝ շատ ավելի հիմնարար, խնդիր է գումարվում նշվածերին՝ շատ աշխատանքներ, մասնավորապես՝ ընտանիքներում, կատարվում են անհատույց, ինչպես օրինակ՝ դաստիարակությունը, կենցաղի ապահովումը, ինչպես: Ամփջապես անարդարության կրկնակի դեֆիցիտ է առաջանում, քանի որ այս աշխատանքները մինչև այսօր հիմնականում կանանց կողմից են կատարվում:

1. շատերի աշխատանքը ընդհանրապես չի վարձատրվում,
2. հիմնականում կանայք են, որ այս անարդարության զոհն են դառնում:

Արդարության այս սկզբունքի կիրառությունը առավել ակնհայտ է գործազրկության և կենսաթոշակային ապահովագրության պարագայում: Երկու դեպքում էլ հատկացումների չափը կախված է կատարած վճարումների չափից: Կենսաթոշակի պարագայում չափը որոշվում է աշխատած ժամանակահատվածում վճարած կենսաթոշակային հատկացումների չափով: Գործազրկության գումարի չափը որոշվում է վերջին տարվա միջին աշխատավարձի հաշվարկով:

Առողջապահության համակարգում վարձատրության արդարությունը միայն սահմանափակ կիրառություն է գտնում: Բժշկական ապահովագրությունը օրինական և մասնավորի բաժանման արդյունքում անուղղակիորեն առողջապահական ծառայությունների տարբերակում է առաջանում, որն իր հերթին նույնպես կախված է աշխատավարձից:⁶

Կրթական համակարգում նույնպես տեսնում ենք այս սկզբունքի կիրառությունը: Այստեղ բաշխվում են ոչ թե փողը և առողջապահական ծառայությունները, այլ՝ կրթությունը: Տարրական կրթություն ստանալուց հետո, հետագա պետական

... կողմնորոշվում
հիմնականում
արդյունքով:

խնդիր՝ շուկան չի
ընդգրկում բոլոր
ծառայությունները:

Վարձատրության
սկզբունքի կիրա-
ռություն. գոր-
ծազրկության և
կենսաթոշակային
ապահովագրություն

Կիրառություն կրթա-
կան համակարգում

6 Արդարության սկզբունքները, որոնք կիրառություն են գտնում սոցիալական պետության տարբեր ոլորտներում, հանազամասշտիվ կբնարկվեն 7-րդ գլխի համապատասխան հատվածներում:

**Լրացուցիչ
ընթերցանության
համար՝**

Գերդ Նոլլման (2004 թ.),
«Արդյո՞ք ապրում ենք
ծառայությունների
մատուցող հասարակության մեջ»,
Սոցիոլոգիայի ավստրիական ամսագիր,
3/2004, էջ 24-48:

«Յուրաքանչյուրին՝
ըստ իր կարողություն-
ների, յուրաքանչյու-
րին՝ ըստ իր
կարիքների»

Անհատական
ցանկությունները
որպես չափ

Պահանջ. այն, ինչ
հարկավոր է
արժանավայել
կյանքի համար

կրթության համար միայն նրանք են իրավունք ստանում, ովքեր համապատասխանում են առաջադիմության որոշակի չափորոշիչների: Եթե վերը նշյալ ոլորտներում հատուցման ցուցիչը որոշվում էր նախկինում ունեցած եկամուտով, ապա կրթական համակարգում հետագա հնարավորությունների համար հիմնականում որոշիչ են գնահատականները և ավարտական քննությունները:

3.3. Պահանջի արդարություն

Պահանջի արդարության գաղափարը ընդգծվեց Կարլ Մարքսի գերմանական աշխատավորների կուսակցության «Գոթհաեր» ծրագրի քննարկումների ժամանակ, երբ նա պահանջեց. «Յուրաքանչյուրին՝ ըստ իր կարողությունների, յուրաքանչյուրին՝ ըստ իր կարիքների», թեև նա այդ պահանջը չէր դիտարկում որպես քաղաքականության առաջադրանք: Նա այն կածիքին էր, որ այս սկզբունքը ինքնին կիրականանա կոմունիստական հասարակարգի բարձրագույն փուլում, և որ դրանով իսկ արդարության հասկացությունը ավելորդ կդառնա:

Եվ ուրեմն, ո՞րն է պահանջի և կարիքի համապատասխան ընկալումը, որը ժամանակակից հասարակությունում բարիքների բաշխման համար կծառայի որպես հիմք: Կարիքը կարելի է նույնացնել անհատական ցանկությունների հետ: Ոմանք կարիք ունեն բնակվելու ահռելի պարտեզ ունեցող առանձնատանը: Եթե կողմնորոշվում ենք կարիքի այսպիսի ձևակերպմամբ, ապա, հաշվի առնելով սակավ ռեսուրսները՝ շատ արագ կբախվենք անհաղթահարելի սահմանափակում:

Վերոնշյալին այլընտրանք է՝ պահանջ ասելով՝ հասկանալ այն պայմանները, որոնք անհրաժեշտ են հասարակության մեջ արժանավայել կյանք ապրելու համար: Ի դեպ, պահանջի նմանօրինակ ձևակերպում էր առաջարկել դեռ Ադամ Սմիթը.

«Կենսական նշանակության բարիքներ ասելով՝ ես չեմ հասկանում միայն այնպիսիք, որ անհրաժեշտ են միայն գոյատևման համար, այլ նաև՝ այնպիսիք, առանց որոնց մարդիկ, նույնիսկ ամենացածր խավերից, չեն կարող արժանապատիվ կյանք ունենալ»: (Սմիթ, 1978 թ. [1776], էջ 747)

Այսպիսով, արդարացի պահանջի նպատակը մեծամասամբ հիմնական կարիքների խելամիտ, միջին կամ նվազագույն ծածկույթի ապահովումն է: Սակայն, եթե նույնիսկ նման սահմանափակումը վերը նշված առանձնատուրը որպես հիմ-

Նական կարիք չի ընդունում, ապա սա դեռևս չի նշանակում, որ առկա է հստակ բաժանարար գիծ:

Որո՞նք են, մասնավորապես, հենց այն իրերը և բարիքները, որոնք Նախապայման են արժանավայել կյանքի համար: Ակնհայտ է, որ սա մի հարց է, որը պետք է լուծվի միայն համապատասխան հասարակական բարքերի համատեքստում: Այսօր հիմնական պահանջների թվին են դասվում հեռախոսը, հեռուստացույցը և համացանցը, մինչև 1960-ականները այդ իրերը դրանց շարքին չէին դասվում:

Սակայն խնդիրներ և, համապատասխանաբար՝ դրանց լուծման կարիքը առաջանում է ոչ միայն տեխնիկական և կենսամակարդակի փոփոխության հետևանքով: Ինչպե՞ս վարվել մարդկանց այն պահանջների հետ, որոնց կարիքը չի առաջացել անհաջողության, պատահականության կամ այլ հանգամանքների հետևանքով, որոնք անձի պատասխանատվության շրջանակներից դուրս են: Կամ ինչպե՞ս է այն մարդկանց պարագայում, ովքեր ամբողջովին պատասխանատու են իրենց անախորժ իրավիճակի համար: Արդյո՞ք վերջին դեպքում պետությունը պարտավոր է ցուցաբերել հավասարաչափ օգնություն, ինչպես այն կարիքավորի դեպքում, ով ամեն ինչ փորձել է վնասները կանխելու համար:

Արդարացի պահանջի կիրառումը ավելի դժվար կարող է դառնալ այն դեպքերում, երբ բարիքներն անբաժանելի են: Այդպես է, օրինակ, դոնորական օրգանների նվիրատվության ժամանակ: Ինչպե՞ս պետք է որոշում կայացվի, թե կենսական կարևորության փոխպատկաստումը առաջնահերթ ո՞ւմ համար պետք է արվի, երբ դրա կարիքն ունեն մեկից ավելի հիվանդներ:

Ակնհայտ է, որ արդարացի պահանջի հիմնական միտքը, վկայակոչելով՝ արժանապատիվ կյանքը, յուրահատուկ կերպով համապատասխանում է այն գաղափարին, որը հանգեցրեց սոցիալական պետության սկզբունքը գերմանական հիմնական օրենքում ներառելուն: Միաժամանակ ակնհայտ է դառնում, որ այդ սկզբունքի հստակ կիրառությունը ոչ միշտ է դյուրին:

Գերմանական սոցիալական պետության որոշ առանցքային ոլորտներում այս սկզբունքը ազդեցիկ է: Առողջապահական համակարգում նրա կիրառությունը բավականին ակնառու է: Հիվանդների բուժումը տեղի է ունենում հիմնականում ըստ կարիքի, նույնիսկ եթե որոշ ոլորտներում վարձատրության արդարության սկզբունքի արդյունքում որոշ սահմանափակումներ են ի հայտ գալիս:

Խնդիր առաջին. ո՞րն է նյութական բաժանարար գիծը:

Խնդիր 2-րդ. որտե՞ղ է ավարտվում պետական հոգաճությունը

Խնդիր 3-րդ. ինչպե՞ս բաժանել անբաժանելի բարիքները:

Պահանջի արդարությունը՝ որպես սոցիալական պետության սկզբունքի արտահայտում

Կիրառությունը առողջապահական համակարգում

ԳՁՆ II. հիմնական
ապահովման
սկզբունք

Արդարացի պահանջի սկզբունքն առավել ակնհայտորեն հանդիպում է գործազրկության նպաստ II-ի պարագայում (ԳՁՆ II), որը նախկինում սոցիալական օգնությունն էր: Այստեղ միանշանակ ակնհայտ է հիմնական ապահովման գաղափարը, որն է՝ բոլոր քաղաքացիներին երաշխավորել արժանապատիվ կյանքի համար նվազագույն կենսամակարդակ:

Վիճահարույց հարց՝
պահանջի չափը

Թերևս այստեղ տեսանելի են կիրառության դժվարությունները: Նպաստների չափը պարբերաբար դառնում է թեժ քննարկումների առարկա: Ոմանք արժանապատիվ ապրելու համար հատկացվող նպաստների չափը չափազանց ցածր են համարում: Մյուսների համար նպաստները այնքան բարձր են, որ կրկին աշխատելու որևէ գալթակոչություն չի առաջանում:

Մարդու արժանա-
պատվությունը չի
կարելի հարաբերա-
կանացնել:

Այսպիսի մոտեցումը ոչ թե արդարությանը, այլ արդյունավետությանը վերաբերող փաստարկ է: Արդյունավետություն ստեղծելու համար, միևնույնն է ինչ տեսակի, անկարելի է մարդկային արժանապատվությունը հարաբերականացնել: Խիստ մոտենալու դեպքում այդ վեճը իրավունք ունի շոշափել միայն այն հարցը, թե արդյո՞ք նպաստները բավարար են հասարակական և քաղաքական կյանքում մասնակցություն երաշխավորելու համար:

3.4. Հնարավորությունների հավասարություն

Հնարավորություն-
ների հավասարու-
թյուն. լայնածավալ
սկզբունք

Զննարկված արդարության սկզբունքներից չորրորդը՝ հնարավորությունների հավասարությունը, էականորեն տարբերվում է մյուս երեքից: Արդյունքի հավասարությունը, վարձատրության արդարությունը և պահանջի արդարությունը շատ իրավիճակներում միմյանց հանդեպ հակասության մեջ են հայտնվում:

Հնարավորություն-
ների հավասարու-
թյունը՝ որպես
վարձատրության
սկզբունքի նախա-
պայման

Հնարավորությունների հավասարությունը ոչ միայն միավորում է վարձատրության և արդյունքի հավասարությունը միմյանց հետ, այլև, որոշակի առումով, այդ երկու սկզբունքների կյանքի կոչման համար նախադրյալ է հանդիսանում, սակայն, իհարկե, ըստ հերթականության:

Հնարավորությունների հավասարության հասկացությունը ի սկզբանե առանձնա-
նում է նրանով, որ ի տարբերություն նախորդ երեքի, յուրօրինակ կերպով է անդրա-
դառնում բարիքներին: Այս սկզբունքի պարագայում խոսքը ոչ թե ընդհանրապես

բարիքների և ռեսուրսների բաշխման մասին է, այլ՝ բացահայտորեն հնարավորությունների հավասար բաշխման մասին: Այլ կերպ ասած՝ խոսքը սկզբնական պայմանների հավասարության մասին է:

Եթե այս հավասարությունը երաշխավորված է, ապա դրան հաջորդող եկամուտի, դիրքի և այլ բաների բաշխման անհավասարությունը արդար է: Հավասար վարձատրության սկզբունքը կիրառելի է, քանի որ բոլորի համար սկզբնական պայմանները հավասար են: Որո՞նք են ինքնորոշված կյանքի համար սկզբնական պայմանները, որոնք թե՛ մարդկանց միջև, և թե՛ մարդու կյանքի տարբեր ժամանակահատվածներում ի սկզբանե շատ անհավասար են բաշխված: Հնարավորությունների անհավասարությունն արտահայտվում է, օրինակ, բնածին կարողությունների տարբերությունների, ծնողների տարբեր հնարավորությունների, դերերի բաշխման սեռային յուրահատկությունների, տարբեր կրթական ուղիների հետևանքով:

Հնարավորությունների հավասարության ժամանակ, ամեն դեպքում, բախվում ենք այն խնդրին, որ երբեմնի հավասար հնարավորություններով դիտարկված պայմանները կարող են հարաբերականորեն արագ վերածվել անհավասարի: Այդ իսկ պատճառով, հնարավորությունների հավասարության ժամանակակից տեսությունները խաղաղությամբ կատարում են «կյանքի հնարավորությունների հավասարության» վրա: Ըստ այս հայեցակարգի արդարությունը հատկանշվում է ոչ միայն պետության միանգամյա միջամտությամբ, այլ շարունակական ճշգրտումների պահանջ է առաջանում արդարությունը ստեղծելու և այն պահպանելու համար:

Սակայն այստեղ ևս հարց է առաջանում, հնարավորությունների հավասարությունը ստեղծելու համար կոնկրետ ի՞նչը պետք է հավասար բաշխվի: Առաջարկվում է կանգ առնել անհավասարության սկզբնապատճառի վրա: Անհավասար կենսական պայմանները, որոնք հիմնված են անհատական մտադրությունների վրա, չեն արդարացնում պետության միջամտությունները:

Անհավասարությունները, որոնք բխում են կարողություններից և տաղանդից, և անկախ են որևէ ազդեցությունից («Բնության վիճակախաղ»), պետք է պետականորեն փոխհատուցվեն: Այս բաժանումը թեև ճշմարտանման է հնչում, սակայն գործնականում անհավասարության արդար և անարդար սկզբնապատճառների ընտրողական տարբերակումը հազվադեպ է հնարավոր:

Հիմնական. սկզբնական պայմաններ

Ի՞նչն է ազդում սկզբնական պայմանների վրա

Կյանքի հնարավորությունների հավասարություն

Սկզբնապատճառների տարբերակում. անհատական մտադրություններ ...

... կամ «Բնության վիճակախաղ»

«Մի կողմից, եթե նույնիսկ ոտնահարում ենք հավասարության պատվիրանը, մենք ստիպված ենք հասարակության շրջանում թույլ տալ ռեսուրսների անհավասար բաշխում, որը առաջանում է մարդկանց զանազանվող աշխատասիրության, հանձնառության, հավակնությունների արդյունքում, մյուս կողմից, սակայն, մենք ոչ մի կերպ իրավունք չունենք ընդունելու անհավասար բաշխումը, որը դրսևորվում է տարատեսակ կարողությունների արդյունքում, այնպես, ինչպես չմիջամտելու քաղաքականության կանոնն է (Դվորկին 1981 թ., էջ 311):

*«Ունակությունների»
տարբերակում*

Այլք առաջարկում են այդ պատճառով «ունակությունների» („capabilities“) բաշխումը կենտրոնում տեղակայել: Բոլոր մարդիկ պետք է զինվեն այնպիսի ունակություններով, որոնք իրենց թույլ կտան իսկապես իրականացնել իրենց կյանքի նախագծերը: Անհատի կյանքի հնարավորությունները ապահովելու համար սոցիալական քաղաքականությունը չպետք է հետադարձ ուժով նվազեցնի անհավասարությունը: Փոխարենը կարևորվում է քաղաքացու զինումը միջոցներով՝ կանխելու միտումնավոր, տևական սոցիալական խտրականությունները կամ նույնիսկ բացառելու սոցիալական պետության հիմնական բարիքներից օգտվելու միջոցների սահմանափակվածությունը:

*Յնարավորությունների
հավասարության համար
առանցքային դաշտ.
կրթական քաղաքականություն*

Եթե արդարության այս սկզբունքի շուրջ մտորումների առանցքում արդար սկզբնական պայմանները այդքան ակներև են, ապա պարզ է, որ կրթության քաղաքականությունը կենտրոնական կիրառական ոլորտներից մեկն է: Պետական հաստատությունները, սկսած մանկապարտեզներից ընդհուպ մինչև մասնագիտական կրթահամալիրներ, մատնացույց են անում, որ պետությունն իր պարտականությունն է համարում բոլորին կրթության հնարավորություն ընձեռելը:

*Գերմանիա.
հնարավորությունների
հավասարության բացակայու-
թյուն, տե՛ս գլուխ 7.5.
(Կրթություն):*

Դպրոցական առաջադիմության միջազգային գնահատման ծրագրի (PISA-Programme for International Student Assessment) վերջին տարիների ընթացքում հրապարակած արդյունքները նույնպես ցույց են տալիս, որ գերմանական կրթական համակարգում հնարավորությունների հավասարության մասին կարելի է խոսել միայն շատ սահմանափակ դեպքերում (համեմատությունը՝ 7.5. գլխում):

3.5. Ամփոփում

Երհարդ Էփփլերը պարզ ձևակերպում է. «Քաղաքականապես իմաստ չունի գլուխ կոտրել սոցիալական բացարձակ արդարության համար: Այն գոյություն չունի» (գլուխ 3.6. Էփսկուրս՝ Երհարդ Էփփլերը «արդարություն» հասկացության մասին):

Արդարության մեկ միասնական հայեցակարգին ձգտելը, որով կհամակարգվեն հասարակական և քաղաքական բոլոր ոլորտները, ավելի քան մտացածին է: Այսպիսի նախձեռնությունը խորապես ոչ ժողովրդավարական կլիներ, որովհետև պարզ է, որ բնակչության շրջանում արդարության մասին դատողությունները հաճախ չեն համընկնում:

Տարատեսակ սկզբունքների քննարկումը ցույց տվեց, որ տարբեր քաղաքական դաշտերում արդարությանը տարբեր աստիճանի կանոնություն է տրվում: Այդուհանդերձ, քաղաքականությունը կողմնացույցի կարիք ունի, որի օգնությամբ կդիմեն որոշումներ կայացնելիս:

Էփփլեր. Չկա բացարձակ սոցիալական արդարություն:

Քաղաքականությունը կողմնացույցի կարիք ունի

Սոցիալական արդարություն. քաղաքականության գլխավոր առաջադրանքը

Ի՞նչ է սա նշանակում սոցիալ-դեմոկրատիայի համար.

- ինքնորոշված կյանքի և քաղաքական մասնակցության համար հավասար արժանապատվությունը և հավասար հնարավորությունները պահանջում են հասարակական ռեսուրսների արդար բաշխում,
- արդար բաշխման հարցը կարող է քննարկվել՝ հենվելով հավասարության, վարձատրության արդարության, պահանջի արդարության և հնարավորությունների հավասարության չորս սկզբունքների վրա,
- այս սկզբունքները տարբեր բնագավառներում միևնույն կշիռը չպետք է ունենան. հավասարությունը, վարձատրության արդարությունը և պահանջի արդարությունը սահմանափակում են միմյանց, հնարավորությունների հավասարությունը լայն սկզբունք է և մյուս սկզբունքների, մասնավորապես՝ վարձատրության արդարության իրականացման համար նախապայման է:

3.6. Էքսկուրս՝ Երիարդ Էփփլերը «Արդարություն» հասկացության մասին

«Գուցե ճիշտ է այն պնդումը, որ մենք լսում ենք շատ ամբիոններից և որի համաձայն արդարությունը հնարավոր չէ սահմանել, երաշխավորել, չափել և հատկապես պարտադրել: Դատավորի կողմից մահափորձի համար կայացրած պատիժը արդա՞ր էր, թե՞ ոչ, մեղադրող և պաշտպանական կողմերի գնահատականները տարբեր են: Նույնիսկ վիճահարույց են այն փաստի հիմքերը, թե գործ ունենք մահափորձի հետ: Կկայացնի՞ր արդյոք հաջորդ ատյանը արդարացի դատավճիռ: Արդյո՞ք տարեկան հաշվեկշիռը ճիշտ է: Դա հնարավոր է վերստուգել, վերահաշվել և հասկանալ, ինչը բացարձակ արդարացի է: Հաշվեկշռի համար հարկավոր են մարդիկ, որոնք կարող են հաշվել և գիտեն՝ ինչը ինչին է պատկանում: Ամեն՝ որևէ կասկածից վեր, բացարձակ արդարություն հասու չէ մարդկանց:

Երիարդ Էփփլերը ծնվել է 1926 թ.: Նա Նախկինում եղել է Բուլղետագի անդամ, դաշնային Նախարար, ինչպես նաև՝ 1973-1992 թթ. Սոցիալ-դեմոկրատական կուսակցության հիմնադրար արժեքների հանձնաժողովի Նախագահ:

Սա առավելապես վերաբերում է նրան, ինչը մենք կոչում ենք «սոցիալական արդարություն»: Մենք, թերևս, երբեք չենք հասնի արդարության միայն այն պատճառով, որ երբեք միակարծիք չենք լինի արդարության եության շուրջ: Անհատ ձեռներեց ատաղձագործը եկամուտի արդար բաշխումը կոդիտարկի այլ կերպ, քան սոցիալական նպաստ ստացողը (Hartz IV), խնայքանկի տնօրենը՝ այլ կերպ, քան Նախարարի խորհրդականը:

Այն փաստը, որ համընդհանուր հավասարությունը, յուրաքանչյուր աշխատանքի համար միանման վարձատրությունը արդար չէին լինի, և տնտեսությանը օգուտ չէին տա, ընդունվում է գրեթե փոխգիշմամբ: Արդյո՞ք պետք է կոնցերնների ղեկավարները քսանապատիկ, հարյուրապատիկ կամ միայն հնգապատիկ ավելի վաստակեն, քան մասնագետ աշխատակիցները: Երեսուն տարի առաջ քսանապատիկ ավել վարձատրվելը տարածված էր, այժմ հաճախ չի բավարարում նույնիսկ հարյուրապատիկ ավելը: Հաճախ որպես հիմնավորում առաջ է քաշվում «պատասխանատվության մեծության անհավասար» լինելու փաստարկը: Սակայն ինչո՞ւ է այդ դեպքում դաշնային կանցլերը վաստակում բանկային կառավարչին վերագրվող աշխատավարձի մի չնչին մասը: Մի՞թե կանցլերի պատասխանատվության չափը ավելի քիչ է: Չարմանալի չէ, որ խելացի տնտե-

սագեսները մեզ խորհուրդ են տալիս վերջապես դադարեցնել արդարության մասին մեր դատարկաբանությունները և կենտրոնանալ միայն այն բանի վրա, ինչը շուկան է յուրաքանչյուրի համար հնարավոր դարձնում: Եթե շուկան ավելի փոքր թվով առանց բարձրագույն կրթության աշխատողների պահանջարկ ունի, քան առաջարկն է, ապա աշխատավարձը կնվազի, և եթե լավ կառավարիչները սակավաթիվ են, ապա նրանց վարձատրությունը կբարձրանա: Այն, ինչ շուկան որոշում է, միանշանակ է և ստույգ, և երկար քննարկումները այլևս ավելորդ են: Ի դեպ, շուկան խրախուսում է աշխատասերներին և բանիմացներին և պատժում ծուլներին և հարմարավետության ձգտողներին:

Վերոնշյալը առնվազն նրանց համար է պարզ, ում համար հիմնավորումները բացառապես գիտականորեն ապացուցելի, սահմանելի և չափելի են: Սակայն մարդիկ ունեն նաև զգացմունքներ, հույսեր, կարիքներ: Ուտելու և խմելու կողքին այդ կարիքների շարքին են դասվում նաև հարգանքը, նվիրվածությունը, ապահովվածությունը և արդարությունը: Առկա է «արդարության սով»: Վերջինս ավելի հաճախ արտահայտվում է անարդարության դեմ նուրբ զգացմունքներում, քան արդարության մասին խելացի դատողություններում: Վստահաբար զգացմունքը նույնպես սուբյեկտիվ է. ամեն ոք ինչ-որ մի բան է կարևորում: Սակայն այդ զգացմունքը ուժեղ է ու հասկանալի, և այն հնարավոր չէ սպանել: Այն պատում է մարդկանց, և երբ վիրավորում են զգացմունքը, վիրավորվում է մարդը:

Սա կարելի է նկատել արդեն իսկ մանկապարտեզում կամ տարրական դպրոցում: Ուսուցչուհուն անարդար են կոչում, քանի որ նրա նվիրվածությունը մի երեխայի հանդեպ ավելին է, քան՝ մյուսի և նա պետք է մտահոգվի իր հեղինակության համար: Սակայն մարդկայնորեն հասկանալի է, որ նրան ավելի դուր է գալիս հմայիչ, խելացի ու, առավել ևս, եռանդուն փոքրիկը, քան կողքի անբան, գեր և անհետաքրքիր մանչուկը:

Երեխաները կմեծանան և կսովորեն, որ այս աշխարհում երբեք բացարձակ արդարություն չի լինում, ավելի ճիշտ՝ աշխարհն այնպիսին չէ, որ նրանք կարողանան այն ամբողջովին արդար համարել: Ավագ քույրը մշտապես որևէ պատճառ ունի ավելի երկար արթուն մնալու, անպայման մի գիրք կամ նույնիսկ հեծանիվ ունենալու և պարտեզում մայրիկին օգնելու համար ժամանակ չունենալու համար:

Տարրական դպրոցի աշակերտուհին պետք է ընդունի, որ իր ընկերուհու հայրը հրաշալի «Մերսեդես» է վարում, իսկ իր հայրը՝ մի հնամազ «Գոլֆ», որ իր

ընկերուհին կարող է ձիավարություն սովորել, իսկ ինքը՝ ոչ, թեև խելագարվում է ձիերի համար: Նա այս ամենն արդար չի համարում, սակայն դա չի սահմանափակում իր ընկերական վերաբերմունքը ընկերուհու հանդեպ: Նա կբարկանար և կչարանար այն դեպքում, երբ ընկերուհու մայրը, ցանկանալով սոցիալական խավերի տարբերությունը ընդգծել, արգելել նրան իրենց տուն գնալ: Երեխաները սովորում են, որ մարդիկ ստիպված են և կարող են ապրել անարդարության որոշակի չափաբաժնի առկայությամբ: Սակայն այն պետք է սահմաններ ունենա:

Նույն կերպ է գործում նաև հասարակությունը: Այն սովորում է ապրել հազարավոր մանր ու միջին անարդարությունների հետ: Ոչ բոլորին է հաջողվում իրականացնել բոլոր ցանկությունները: Իհարկե միլիոնատերը ավելի շատ հնարավորություններ ունի իր աղջկան ավարտական քննությունների համար նախապատրաստելու քան աղբահավաքը: Վերջինս կըմբոստանա միայն այն դեպքում, եթե համոզված լինի, որ միլիոնատիրոջ աղջիկը չի տապալել քննությունները միայն այն հանգամանքի շնորհիվ, որ ուսուցչուհին չի ցանկացել զայրացնել նրա հզոր հայրիկին: Սա կլիներ այլևս անընդունելի անարդարություն:

Քաղաքականապես իմաստ չկա գլուխ կոտրել սոցիալական բացարձակ արդարության համար: Այն գոյություն չունի: Քաղաքականապես սահմանը գծվում է ընդունելի և անընդունելի անարդարությունների միջև: Դեռևս ոչ ոք չի ապստամբել այն պատճառով, որ մենեջերը իր կատարած աշխատանքի համար քսանապատիկ ավել է վաստակում: Սակայն, երբ խոսքը երկու հարյուրապատիկի մասին է, ապա գտնվում է մի մեծամասնություն, որն այդ փաստն անընդունելի է համարում, հատկապես այն դեպքում, երբ այդ մենեջերը աշխատակիցների է ազատում երկամուտը բարձրացնելու համար: Զարտուղարուհին խնդիր չի տեսնում, երբ իր ղեկավարը ավելի շատ է վաստակում, սակայն նա զայրանում է, երբ պարզում է, որ ղեկավարը ավելի քիչ հարկ է վճարում, քանի որ նա հարկերից խուսափելու միջոցներից օգտվելու արվեստին է տիրապետում:

Եթե գերմանացիների երեք քառորդը համոզված է, որ երկրում անարդարություն է տիրում, և շատերը կասկածում են, որ այդ իրավիճակը երբևիցե կփոխվի, ապա ավելի քան ակնհայտ է, որ ընդունելի և անընդունելի անարդարության միջև սահմանագիծը խախտվել է: Պատահական չէ, որ կարծիք հետազոտողները այս բացահայտումը կատարեցին հենց 2008 թ.՝ արմատական շուկայական հարաբերությունների դարաշրջանի ավարտին: Եթե ոչ միայն աղբատներն ու կարիքավոր-

ներն են անարդարության դեմ բողոքում, այլ՝ գրեթե բոլոր նրանք, ովքեր իրենց հարուստների շարքին չեն դասում, ապա վտանգը ավելի քան ակնհայտ է: Ոչ մի հասարակություն նման իրավիճակին երկար չի դիմանա: Այդ է պատճառը, որ սոցիալական արդարությունը չպետք է դիտարկել որպես մի փայտե ձի սոցիալ-ռոմանտիկների համար, այն քաղաքականության հիմնական առաջադրանքն է, առավել ևս այնպիսի առաջադրանք, որը երբեք ավարտին չի հասցվում» (Էփփլեր, 2009թ., էջ 47-50):

4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԸ, ԿԱՌՈՒՑԱԶԵՎԵՐԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս գլխում՝

- կնկարագրվեն սոցիալական պետության շինանյութերը (փող, ծառայություններ, նպաստներ) և վերջիններիս նշանակությունը սոցիալական պետության տարբեր ոլորտներում,
- կներկայացվեն սոցիալական պետության ճարտարապետության ազատական, պահպանողական, սոցիալ-դեմոկրատական մոդելները,
- կմատնանշվեն սոցիալական պետության ճարտարապետության արդյունքում բնակիչների համար գոյացող հետևանքները:

*Գերմանական
սոցիալական
պետություն.
անփոփոխ*

Ավելի քան 100 տարի շարունակ գերմանական սոցիալական պետության հիմնական բաղկացուցիչներն են կենսաթոշակային և գործազրկության ապահովագրությունները: Այս ժամանակահատվածում կանոններն այստեղ կա՛մ չեն վերանայվել, կա՛մ էլ ենթարկվել են միայն աննշան փոփոխության: Սա թույլ է տալիս ենթադրել, որ որոշակի կանոնակարգումներ և առանձնահատկություններ կարող են դիտարկվել որպես անփոխարինելի:

*Միջազգային
համեմատությունը
արդարացված է:*

Դիտարկելով հարևան պետությունները՝ կարելի է տեսնել, որ սոցիալական ապահովումը երաշխավորելու համար գոյություն ունեն նաև այլ հնարավորություններ: Թեև հնարավորությունները տարբեր են, այնուամենայնիվ, տրամադրության տակ եղած միջոցները, ինչպիսիք են օրինակ՝ փողը, ծառայությունները, նպաստները, ամենուրեք նույնն են: Այս ամենը փորձենք դիտարկել տան շինարարական կառույցի օրինակով: Ելնելով շինարարական նախագծից՝ օգտագործվող շինարարական նյութերը կարող են ունենալ նշանակության տարբեր կշիռներ:

Այս գլուխը մատնանշում է շինանյութերը, ճարտարապետությունները և հետևանքները:

Այս հանգամանքը հանգեցնում է նրան, որ կառուցված տներն արտաքին տեսքից տարբերվում են միմյանցից, և այդ տարբերություններն ունենում են շոշափելի հետևանքներ բնակիչների համար: Հաջորդող էջերում՝ նախ կներկայացվեն շինարարական նյութերը, որպեսզի հաջորդիվ նկարագրվեն ճարտարապետական տարբերությունները: Այդ տարբերությունների հետևանքները կքննարկվեն 4.3. գլխում:

4.1. Սոցիալական պետության շինանյութերն ու գործիքակազմը

Սոցիալական քաղաքականությանը հատուկ են բազմատեսակ շինանյութեր և գործիքներ: Պետական սոցիալական քաղաքականության ամենաառաջին միջոցը դրամական նպաստներն են: Գործազրկության նպաստը, կենսաթոշակը և երեխայի խնամքի համար հատկացվող նպաստը փոխանցվում են գործազուրկների, թոշակառուների կամ ծնողների հաշվին:

*Գործիք առաջին.
գումարային
նպաստներ*

Այդուհանդերձ, սոցիալական պետության գործիքակազմը չի սահմանափակվում միայն դրամական փոխհատուցմամբ: Օրինակ՝ առողջապահական քաղաքականության մեջ առաջարկվում են ծառայություններ. ախտորոշում և բուժում բժիշկների, թերապևտների և սպասարկող անձնակազմի կողմից: Կրթական և ընտանեկան քաղաքականությանը նույնպես հատուկ են ծառայություններ, ինչպես օրինակ՝ դպրոցներում ուսուցիչների կողմից ուղղորդված ուսուցումը, մանկապարտեզներում երեխաների խնամքը, և այլն:

*Գործիք 2-րդ.
ծառայություններ*

Դրամական հատուցումներին և մատուցվող ծառայություններին զուգահեռ նյութական նպաստները սոցիալական քաղաքականության երրորդ առանցքային «շինանյութն» են: Առողջապահական քաղաքականության մեջ նյութական նպաստի օրինակ են հատկացվող դեղամիջոցները:

*Գործիք 3-րդ. բնեղեն
նպաստներ*

Հարկերն ու տուրքերը նույնպես սոցիալական քաղաքականության գործիքակազմում են, քանի որ նրանք բացի ֆինանսավորման առաջադրանք կատարելուց, դերակատարություն ունեն նաև բաշխման և ուղղորդման հարցերում: Այսպիսով, ո՞ր շինանյութերն են կիրառելի սոցիալական պետության տարբեր ոլորտներում:

*Հարկերն ու տուրքերը՝
նույնպես
գործիքակազմում*

Գործազրկության ապահովագրության գործիքներ

Գործազրկության ապահովագրությունը աշխատավարձի փոխհատուցման դասական կարգն է: Գործազրկության ապահովագրությունը փոխարինում է եկամուտին և, այդ պատճառով, շատ երկրներում հիմնականում իրականացվում է դրամական փոխհատուցման տեսքով:

*Դասական դրամական
նպաստներ*

Անշուշտ հարց է առաջանում՝ արդյո՞ք նպատակահարմար չէ աշխատավարձի դրամական փոխհատուցումից բացի առաջարկել նաև այլ ծառայություններ, որոնց միջոցով կբարձրացվեր նորից աշխատանք գտնելու հավանականությունը: Շատ երկրներում պետական աշխատանքային գործակալությունների կողմից մատուցվող ծառայու-

*Այլ մանրամասներ՝
7.2. գլխում
(Աշխատանք):*

թյունների հիմնական բաղադրիչների շարքում են նաև մասնագիտական կրթություն ստանալու և վերապատրաստման հնարավորությունները: Այս առաջարկների որակը և դրանց իրականացման համար գործազրկության ապահովագրության բյուջեից հատկացվող միջոցները տարբեր երկրներում շատ տարբեր են: Այսպիսով, գործազրկության ապահովագրությունը միայն դրամական փոխհատուցմամբ չսահմանափակելու համար հիմքեր կան, այն պետք է համալրվի այնպիսի ծառայություններով, ինչպիսիք են՝ մասնագիտական կրթության և վերապատրաստման առաջարկները:

Կենսաթոշակային համակարգի գործիքներ

Կենսաթոշակային ապահովագրությունը սոցիալական պետության մի ոլորտի օրինակ է, որտեղ դրամական փոխհատուցումը առաջնային պլանում է: Թեև տարեցների շրջանում բժշկական և ինամքի ծառայություններից օգտվելու հավանականությունը բարձրանում է, սակայն նման ծառայությունների մատուցումը կենսաթոշակային ապահովագրության բաղադրիչներից չէ:

Կենսաթոշակային համակարգի առանցքային հարցն է, թե ի՞նչ ճանապարհով պետք է իրականացվի ֆինանսավորումը: Ի՞նչ դերակատարություն ունեն անհատական ներդրումները հարկերի հետ համեմատությամբ: Ի՞նչ նշանակություն պետք է ունենա մասնավոր կենսաթոշակային համակարգը: Այս խնդիրների հետևանքները տեսանելի են թոշակառուների շարքերում երկրում առկա եկամուտների անհավասարության և տարեցների շրջանում աղքատության խնդրի համատեքստում: Այլ մանրամասներ կներկայացվեն 7.3. գլխում (Կենսաթոշակ):

Առողջապահության բաղաբաղականության գործիքներ

Ինչ վերաբերում է առողջապահական համակարգում գործի դրվող «գործիքներին», ապա այստեղ, ի տարբերություն կենսաթոշակային ապահովագրության, ուր փոխհատուցումը հիմնականում դրամական է, խոսքը մեծամասամբ ծառայությունների, նյութական նպաստների տրամադրման մասին է, քանի որ առողջությունը հնարավոր չէ գնել:

Եվ ահա այստեղ հարց է առաջանում՝ ովքե՞ր պետք է մատուցեն այդ ծառայությունները, և վերջիններս ինչպե՞ս պետք է ֆինանսավորվեն: Առողջապահական համակարգերը, ակնհայտորեն, ստիպված են պայքարել անարդյունավետության մեղադրանքների դեմ: Առողջապահական ապահովագրությունը պետականի և մասնավորի բաժանելու արդյունքում առաջանում է բժշկության երկու դասակարգերի առաջացման վտանգ: Այլ մանրամասներ կներկայացվեն 7.4. գլխում (Առողջապահություն):

Դասական դրամական նպաստներ

Առանցքային հարց. Ինչպե՞ս ֆինանսավորել: Այլ մանրամասներ՝ 7.3. գլխում (Կենսաթոշակ):

Բնեղեն նպաստների և ծառայությունների տրամադրում. առողջությունը հնարավոր չէ գնել:

Առանցքային հարցեր. Ինչպե՞ս ֆինանսավորել, ով ի՞նչ է ապահովում: Այլ մանրամասներ՝ 7.4. գլխում (Առողջապահություն):

Կրթական համակարգի գործիքներ

Կրթական քաղաքականության ոլորտում նույնպես դրամական փոփոխատուցումը մեծ դեր չի խաղում, և դրա փոխարեն առաջնային պլանում են առաջարկվող ծառայությունները:

Այստեղ, մասնավորապես, այն հարցն է կարևորվում, թե ինչպե՞ս պետք է կազմակերպվեն այդ ծառայությունները: Գոյություն ունի՞ արդյոք երեխաների հանրային խնամք: Դպրոցի քանի՞ տեսակներ կան: Որքանո՞վ են թափանցիկ տարբեր դպրոցների և մասնագիտական կրթության ճանապարհները: Այլ մանրամասներ կներկայացվեն 7.5. գլխում (Կրթություն):

Չարկային քաղաքականության գործիքներ

Պետությունը հարկերի և տուրքերի միջոցով ձեռք է բերում եկամուտներ, որոնք, ի թիվս այլ բաների, ծառայում են սոցիալական համակարգերի ֆինանսավորմանը: Լավ կառուցված սոցիալական պետությունը, համապատասխանաբար, կախված է բարձր եկամուտներից: Ցածր հարկերը հնարավոր են դարձնում ունենալ միայն թույլ կառույցով սոցիալական պետություն: Հավաքագրվող հասույթի չափերի հետ մեկտեղ տարբերակման կարևոր ցուցանիշ է նաև հարկերի հավաքագրման եղանակը: Տարբեր հարկային համակարգերն ունեն բաշխման տարբեր ազդեցություն: Այլ մանրամասներ կներկայացվեն 7. 1. գլխում (Հարկեր):

Այսպիսով, սոցիալական քաղաքականության կազմավորման համար բազմապիսի հնարավորություններ կան: Հիմնականում գործի են դրվում բոլոր շինանյութերն ու գործիքները: Առանձին երկրներ, սակայն, առաջնորդվում են տարբեր ճարտարապետական լուծումներով, և դա է պատճառը, որ որոշ շինանյութեր, ի տարբերություն մյուսների, ավելի հազվադեպ են կիրառություն գտնում: Այս գրքի 7-րդ գլխում մանրամասնորեն կհետազոտվեն սոցիալական քաղաքականության առանձին ոլորտները և առանձին երկրների միջև համեմատություններ կանցկացվեն, իսկ այս գլխում նկարագրվում են վերջիններիս հիմնական տարբերությունները: Եվ ուրեմն ինչպիսի՞ ճարտարապետական տեսակներ գոյություն ունեն:

Ծառայությունների տրամադրում

Առանցքային հարց. Ինչպե՞ս են համակարգվում ծառայությունները: Այլ մանրամասներ՝ 7.5. գլխում (Կրթություն):

Սոցիալական պետության ֆինանսավորում և բաշխման ազդեցություն: Այլ մանրամասներ՝ 7.6. գլխում (Հարկեր):

Ինչպիսի՞ ճարտարապետություններ, ինչպիսի՞ շինանյութեր

4.2. Սոցիալական պետության ճարտարապետությունները

Գոետա Եսպինգ-Անդերսեն, “*The Three Worlds of Welfare Capitalism*”

Անվանակոչումը ըստ «ճարտարապետների»

Սոցիալական պետության տարբեր տեսակների մասին ամենահայտնի և ազդեցիկ ուսումնասիրությունը պատկանում է Գոետա Եսպինգ-Անդերսենին: 1990 թ. նա մի գիրք է հրատարակել՝ *The Three Worlds of Welfare Capitalism*, որում հիմնական զարգացած պետությունները դասակարգում է երեք տարբեր «աշխարհների»:

Գոետա Եսպինգ-Անդերսենը ծնվել է 1947թ. Դանիայում: Նա ուսանել է Կոպենհագենում և իր թեկնածուական աշխատանքը գրել ԱՄՆ-ում՝ Վիսկոնսինի համալսարանում: Այնուհետև դասավանդել և հետազոտություններ է իրականացրել Զարվարդում, Բեռլինի գիտական կենտրոնում, Ֆլորենցիայի և Տրինիտի համալսարաններում: 2002 թվականից ի վեր աշխատում է Բարսելոնայի համալսարանում: 1990թ. լույս տեսած *The Three Worlds of Welfare Capitalism* աշխատությունից բացի, հայտնի են նաև հեղինակի *Foundations of Postindustrial Economies* (1998 թ.) և *Why We Need a New Welfare State* (2000 թ.) գրքերը:

Սոցիալական պետության երեք տիպերը. ազատական, պահպանողական և սոցիալ-դեմոկրատական

Այդ երեք աշխարհները, համապատասխանաբար՝ երեք ճարտարապետությունները, կրում են իրենց ճարտարապետների անունները, որոնք էական ազդեցություն են ունեցել սոցիալական պետության համապատասխան մոդելի վրա: Դրանք այն ազդեցիկ քաղաքական կուսակցություններն ու շարժումներն էին, որոնք սոցիալական պետությունը բնութագրող տեսակներ են սահմանել:

Տարբերակվում են ազատական, պահպանողական և սոցիալ-դեմոկրատական աշխարհները: Այդ երեք նախագծման սկզբունքները արտահայտվում են նաև տարբեր աշխարհագրական օրինակներով, նրանց զուգահեռաբար վերագրվում են համապատասխան անվանումներ: Ազատական աշխարհը կոչվում է անգլոսաքսոնական, պահպանողականը՝ մայրցամաքային (կենտրոնական եվրոպական) և սոցիալ-դեմոկրատականը՝ սկանդինավյան: Ինչպե՞ս համեմատել ուրեմն այս երեք տարբեր ճարտարապետությունները:

Համեմատության համար հարկավոր է չափորոշիչ: Եսպինգ-Անդերսենը առաջնորդվում է երկու չափորոշիչներով: Դրանք են՝ դեկոմոդիֆիկացիայի (արժանավայել կենսամակարդակ անկախ աշխատաշուկայից) աստիճանը և խավերի դասակարգման՝ ստրատիֆիկացիայի (Stratifikation) աստիճանը:

Դեկոմոդիֆիկացիան ծագում է անգլերենից, հիմքում «commodity» (ապրանք) հասկացությունն է: Ապրանքն աշխատանքն է, որի վրա սևեռվում է ուշադրությունը: Դեկոմոդիֆիկացիան, այսպիսով, նկարագրում է այն չափը, որն անհրաժեշտ է մարդու կենսամակարդակը ապահովելու համար, առանց աշխատաշուկային ապավինելու:

Եթե աշխատաշուկան արժանավայել կենսամակարդակի ապահովման միակ հնարավորությունն է, ապա մարդիկ ստիպված են ընդունել յուրաքանչյուր տիպի աշխատանք, անկախ նրանից, թե որքան ցածր է վարձատրությունը: Այդ դեպքում դեկոմոդիֆիկացիան ցածր մակարդակի վրա է: Եթե պետությունը կենսական ապահովման իրավական պահանջը բավարարում է, այսինքն՝ արժանավայել կյանքը հնարավոր է դառնում նաև այնպիսի դեպքերում, երբ աշխատանքը հնարավոր չէ (օրինակ՝ հիվանդության կամ ծերության պատճառով) կամ տնտեսական վատ իրավիճակի հետևանքով, ապա դեկոմոդիֆիկացիայի աստիճանը բարձր է:

«Stratifikation» հասկացությունը ձևավորվել է լատիներեն «stratum» հասկացությունից, որ նշանակում է «տանիք», այն նկարագրում է հասարակության մեջ սոցիալական խավերի դասակարգումը: Այս հասկացությունը կիրառվում է սոցիոլոգիական գիտություններում հասարակության տարբեր խմբերը նկարագրելու և ուսումնասիրելու համար: Կախված նրանից, թե հետազոտության առաջնային պլանում ինչ է դրվում, հետազոտվում են հասարակության խավերը (ստորին, միջին և վերին), դասերը (աշխատավոր դաս և կապիտալիստներ) կամ միջավայրերը (ազատական-բողոքական, սոցիալ-դեմոկրատական, կաթոլիկ):

Եսպիգ-Անդերսենը նպատակ չի հետապնդում նկարագրել կամ հետազոտել հասարակության տարբեր խավերը, նրա համար առաջնային է ուսումնասիրել, թե ինչպես է սոցիալական պետությունը վերաբերում սոցիալական տարբեր խավերին և արդյո՞ք հենց ինքը, իր ճարտարապետությամբ չի նպաստում հասարակության խավերի առավել ընդգծմանը: Այսպիսով, որո՞նք են դեկոմոդիֆիկացիայի և ստրատիֆիկացիայի տեսանկյունից վերոնշյալ երեք աշխարհների առանձնահատկությունները:

Ազատական սոցիալական պետություն

Ազատական սոցիալական պետության մեջ շուկան անհառու դեր է խաղում: Սոցիալական իրավունքները և սոցիալական ծառայությունները բավականին թույլ են զարգացած, բացի դրանից սոցիալական ծառայությունների տրամադրումը կախված է կարիքների բավականին հաճախ և ինտենսիվ ստուգման գործընթացից:

*Ստրատիֆիկացիա.
Նկարագրում է սոցիալական խավերի շերտավորումը*

Շուկայի ուժեղ դիրք

Դա հանգեցնում է նրան, որ սոցիալական նպաստ ստացողները իրենց հաճախ նվաստացած են զգում և վատ համբավ են վայելում հասարակության շրջանում:

*Պետություն. միայն
վերջին ապահով-
ման առյուծանակ*

Պետությունը, այս պարագայում, առաջարկում է միայն վերջին ապահովման ցանց: Սկզբունքորեն, քաղաքացիները առանձնահատուկ մեծ կախվածության մեջ են հայտնվում աշխատաշուկայի եկամուտներից, այսինքն՝ դեկոմոնոֆիկացիայի աստիճանը ցածր է: Սոցիալական ծառայությունների ֆինանսավորումը տեղի է ունենում հարկերի հաշվին: Սոցիալական պետության այս տեսակում հազվադեպ են նկատվում իրավական պահանջների արդյունքում կատարված անհատական ներդրումներ: Ծառայությունները համապատասխանում են ներդրումների չափերին, և դա է պատճառը, որ սոցիալական ծառայությունների դրույքաչափերը միատեսակ են:

*Եկամուտների և
մասնագիտություն-
ների միջև պետական
ոչ մի տարբերակում
բազմակի անհատա-
կան հավելյալ
առաջարկներ*

Սոցիալական պետությունը տարբերություն չի դնում քաղաքացիների տարբեր մասնագիտությունների և տարբեր եկամուտների միջև: Սոցիալական ծառայությունները ապահովում են միայն նվազագույն խնամքի ծավալ և ուղղված են, մասնավորապես, աղքատության նվազեցմանը: Միայն նրանք են օգտվում մասնավոր ծառայություններից, ովքեր կարող են իրենց դա թույլ տալ (օրինակ՝ մասնավոր կենսաթոշակային ապահովագրություն, մասնավոր դպրոցներ): Սոցիալական պետությունը անուղղակիորեն հանգեցնում է սոցիալական խավերի՝ աղքատների և հարուստների միջև շերտավորման: Սոցիալական պետության ազատական տիպը հատուկ է հիմնականում ԱՄՆ-ին, Մեծ Բրիտանիային և Ավստրալիային:

Ազատական սոցիալական պետության հիմնական առանձնահատկություններն են՝

- դրամական փոխհատուցման համեմատաբար ցածր դրույքաչափերը,
- ֆինանսավորումը հարկերի միջոցով,
- ցածր դեկոմոնոֆիկացիան,
- մասնավոր ծառայություններից և ապահովագրություններից օգտվելու արդյունքում սոցիալական խավերի շերտավորումը:

Պահպանողական սոցիալական պետություն

Եսպինգ-Անդերսենը պահպանողական սոցիալական պետությունը շատ դեպքերում անվանում է կորպորատիվ՝ սոցիալական պետություն: Ճիշտ այնպես, ինչպես ընկերակցությունները (կորպորացիա) տարբեր խմբերի դիրքորոշումների ավան-

7 «Korporatismus» բառը ծագում է լատիներեն «corporatio» բառից, որը նշանակում է կորպորացիա (ընկերակցություն): Այն համառոտ նկարագրում է հասարակության այն մոդելը, որտեղ տարբեր հասարակական խմբերի միջև կորպորատիվ բանակցային գործընթացները առանցքային դերակատարություն ունեն (օրինակ՝ գործատուների և աշխատողների միջև):

*Սոցիալական
պետություն ըստ
սոցիալական
կարգավիճակի*

դույթն են շարունակում, այնպես էլ պահպանողական սոցիալական պետությունն է տարբերակում դնում տարբեր մասնագիտական խմբերի միջև:

Հանրային ծառայողների մասին գերմանական օրենքն իր արտոնություններով վերոնշյալի վառ ապացույցն է: Այսօր դեռևս պահպանվում է այն սկզբունքը, ըստ որի որոշակի մասնագիտությունների համար դեռ առաջարկվում են այսպես կոչված մասնագիտական արտոնյալ ապահովագրական ծառայություններ, այդ թվում նաև՝ յուրահատուկ կենսաթոշակային ապահովագրություն: Այդ մասնագիտական խմբերի շարքին են դասվում, օրինակ, հարկային ծառայությունների աշխատակիցները, դատապաշտպանները, նոտարները, անասնաբույժերը, դեղագործները, տնտեսագետները: Նրանք, ովքեր անդամակցում են համապատասխան մասնագիտական ընկերակցությունների, ինքնըստիսթյան դասվում են մասնագիտական արտոնյալ ապահովագրական ծառայություններից օգտվողների շարքին:

Սակայն այս մասնագիտությունների շրջանակներում աշխատող անհատ ձեռներեցները և վարձու աշխատակիցները (ծառայության մատուցման պայմանագրով աշխատողները) չեն օգտվում օրինական կենսաթոշակային ապահովագրությունից: Այլ երկրներում, որտեղ գործում է պահպանողական սոցիալական պետության մոդելը, ինչպես օրինակ՝ Իտալիայում և Ֆրանսիայում, նմանատիպ մասնագիտական տարբերակումները նկատվում են, օրինակ, գործազրկության ապահովագրության շրջանակում:

Պետական ապահովագրական ծառայություններում, որտեղ, ըստ էության, մասնագիտական խմբերի որևէ տարբերակում չի կատարվում, նկատելի է պահպանողական սկզբունքը, որովհետև սոցիալական պետության ֆինանսավորման մի մեծ մաս իրականացվում է ներդրումների միջոցով: Ըստ համարժեքության սկզբունքի (սոցիալական ծառայությունների ծավալը պետք է համընկնի անհատական ներդրումների չափի հետ) սոցիալական ծառայությունների ծավալը արտացոլում է նախկինում ունեցած եկամուտը (գործազրկության ապահովագրություն, կենսաթոշակ):

Սոցիալական փոխհատուցումը, այսպիսով, «պահպանում է» նախկին կարգավիճակը: Պահպանողական սոցիալական պետություններում սոցիալական ապահովման ծավալը, միջին հաշվով, ավելի մեծ է քան ազատական սոցիալական պետություններում: Այդ ծավալը, միևնույն ժամանակ, հավասարաչափ չէ բոլոր քաղաքացիների համար:

*Օրինակ՝ հանրային
ծառայողների մասին
գերմանական օրենքը*

*Ֆինանսավորումը
ներդրումների
միջոցով*

*Սոցիալական փոխ-
հատուցումը «պահ-
պանում է» նախկին
կարգավիճակը*

*Անհավասարություններ
ներ ներդրումների
չափման սահմանագծի
առաջացման
արդյունքում*

Գրեթե բոլոր պահպանողական սոցիալական պետություններում ներդրումների միջոցով ֆինանսավորումը հանգեցնում է ներդրումների չափելիության սահմանագծի (տարբեր աստիճանների) առաջացմանը, որը ենթադրում է եկամուտների սահմանագիծ: Մինչ այդ, պետք է կատարվեն անհատական ներդրումները: Սա անհավասար վերաբերմունքի ևս մեկ աղբյուր է, քանի որ շատ դեպքերում անհատական ներդրումների չափելիության սահմանագիծը ուղեկցվում է պետական և մասնավոր ապահովագրվածների տարբերակմամբ (վերջինս առավել ակնհայտ է Գերմանիայի բժշկական ապահովագրական համակարգում, սրան կանդրադառնանք Նաև 7.1. գլխում, Հարկեր):

*Միտվածություն
դեպի արական սեռի
վաստակողների
մոդելի*

Պահպանողական սոցիալական պետությունը առանձնանում է ևս մեկ յուրահատկությամբ, որը, թերևս, վերջին տասնամյակներում նահանջ է ապրել, սակայն դրա հետքերը դեռ շարունակում են տեսանելի մնալ: Ի տարբերություն սոցիալական պետության մյուս երկու տիպերի, պահպանողական սոցիալական պետությունը միտված է արական սեռի վաստակողների մոդելին:

*Արդյունքում՝ կանանց
գրավվածության
ցածր ցուցանիշ*

Հարկային արտոնության գալթակցությունը (ամուսնալուծություններ), երեխաների շուրջօրյա խնամքի բացակայող ենթակառուցվածքները, համեմատաբար ավելի քիչ կեսօրյա դրույքաչափով աշխատատեղերը հանգեցնում են նրան, որ պահպանողական սոցիալական պետություններում վաստակող կանանց թիվը շատ ավելի ցածր է, քան սոցիալական պետության ազատական և սոցիալ-դեմոկրատական տիպերում:

*Հաճախ հանդիպող
ստորատիֆիկացիա
(խավերի
չերտավորում)*

Պահպանողական սոցիալական պետության մեջ սոցիալական խավերի բաժանվածության աստիճանը շատ բարձր է, ընդ որում, այն ընթանում է մի շարք բաժանարար գծերի երկայնքով, որոնք են՝ մասնագիտական խմբերը, եկամուտը, սեռը: Այս տիպի սոցիալական պետության տիպիկ օրինակներ են Գերմանիան, Ֆրանսիան, Ավստրիան և Բելգիան:

Պահպանողական սոցիալական պետության հիմնական առանձնահատկություններն են՝

- նախկին աշխատավարձով պայմանավորված դրամական փոխհատուցում,
- թույլ արտահայտված հանրային ծառայություններ,
- անհատական ներդրումների արդյունքում ֆինանսավորման մեծ չափաբաժին,
- սոցիալական խավերի խիստ ընդգծվածություն՝ կախված մասնագիտական խմբերից, եկամուտից, սեռից:

Սոցիալ-դեմոկրատական սոցիալական պետություն

Սոցիալ-դեմոկրատական սոցիալական պետության ճարտարապետությունը ֆինանսավորման ոլորտում առանձնանում է ազատական սոցիալական պետության հետ ունեցած որոշ զուգահեռներով: Ինչպես ազատական մոդելում, այստեղ ևս ֆինանսավորումը հիմնականում տեղի է ունենում ընդհանուր հարկերի և ոչ թե անհատական ներդրումների հաշվին: Սակայն սոցիալական ծառայությունների մատուցման կողմից պետք է առանձնացնել երեք տարբերություն:

Սոցիալ-դեմոկրատական սոցիալական պետության սոցիալական փոխհատուցման չափը, որպես կանոն, ավելի բարձր է, քան ազատական երկրներում:

Սոցիալական ապահովումը, ի տարբերություն պահպանողական մոդելի, հավասարաչափ միանման է տարբեր չափի եկամուտ ունեցող մարդկանց համար: Դա հնարավոր է դարձել շատ սոցիալական օժանդակությունների, ինչպես օրինակ՝ գործազրկության նպաստների հարկման արդյունքում:

Այս տարբերությունը ներկայումս ամենակարևորն է: Առաջարկվում են ունիվերսալ հանրային ծառայություններ, որոնք հասանելի են բոլորին և որոնց համար անհրաժեշտ չեն ներդրումներ, կամ եթե անհրաժեշտ են, ապա միայն աննշան չափերի:

Սա սոցիալ-դեմոկրատական ճարտարապետության կարևոր անկյունաքարն է: Պետական ծառայությունների ցանցը զարգացած է, մասնավորապես, երեխաների խնամքի ոլորտում (համապատասխանաբար՝ համայնքային):

Սա բազում դրական արդյունքներ ունի: Երաշխավորվում է ընտանիքի և աշխատանքի համատեղելիությունը, մասնավորապես կանանց համար, քանի որ առկա է խնամքի հուսալի և բարձրորակ ենթակառուցվածք: Ընդ որում, երեխաների խնամքի բարձր չափորոշիչներն ուղղված չեն միայն աշխատող կանանց թվի ավելացմանը:

Պետությունը, բացի դրանից, ավելի հաճախ է հանդես գալիս որպես գործատու: Հանրային ծառայություններում աշխատողների թիվը սոցիալ-դեմոկրատական ուղղվածություն ունեցող երկրներում, որպես կանոն, ավելի բարձր է: Դրա միջոցով պետությունն ի վիճակի է ուղղակիորեն ազդեցություն ունենալ զբաղվածության իրավիճակի, ինչպես նաև խնամքի ոլորտի որակի վրա: Միաժամանակ դա հանգեցնում է նրան, որ հանրային ծառայությունները մատչելի են դառնում բոլորի համար, և որ միայնակ ծնողների աղքատության ցուցանիշը էականորեն ավելի ցածր է:

Նույնպես ֆինանսավորվում է հարկերի միջոցով

Թանկ ծառայություններ

Ծառայությունների հավասարաչափ բաշխում

Ունիվերսալ հանրային ծառայություններ

Ընտանիքի և աշխատանքի ավելի լավ համատեղելիություն՝ կանանց զբաղվածության բարձր ցուցանիշ

Պետությունը հանդես է գալիս որպես գործատու

Սոցիալական ծառայությունների ընդարձակ ծածկույթը, հավասարաչափ դրամական փոխհատուցումը սոցիալական պետության այս մոդելում հանգեցնում են դեկոմոդիֆիկացիայի բարձր ցուցանիշի և սոցիալական խավերի միայն սակավ արտահայտվածության աստիճանի: Այս ճարտարապետական սկզբունքով առաջնորդվում են հիմնականում սկանդինավյան երկները, օրինակ՝ Շվեդիան, Դանիան և Նորվեգիան:

Սոցիալ-դեմոկրատական սոցիալական պետության հիմնական առանձնահատկություններն են.

- ծառայությունները սոցիալական քաղաքականության կարևոր բաղադրիչն են,
- համաչափ դրամական փոխհատուցում,
- ֆինանսավորում բարձր հարկերի միջոցով,
- դեկոմոդիֆիկացիայի բարձր ցուցանիշ,
- եկամուտի հավասարության բարձր աստիճան և թույլ արտահայտված սոցիալական խավեր:

4.3. Սոցիալական պետության ճարտարապետությունների արդյունքները

Նույնիսկ եթե աշխարհի երկրներից և ոչ մեկը 100 %-ով չի համապատասխանում նկարագրված մոդելներին, երկրների մեծ մասին հնարավոր է միանշանակորեն դասել նկարագրված շինարարական սկզբունքների այս կամ այն խմբին: Նկարագրության որոշ հատվածներում արդեն իսկ պարզ դարձավ, որ սոցիալական պետության կառուցման ձևով են պայմանավորված որոշ շոշափելի արդյունքներ:

Սոցիալական պետության երեք ճարտարապետությունների առանձնահատկությունները

	Ազատական	Պահպանողական	Սոցիալ-դեմոկրատական
Դեկոմոդիֆիկացիա	ցածր	միջին	խիստ բարձր
Սոցիալական խավերի ընդգծվածության աստիճան	միջին	խիստ բարձր	ցածր

Աղթատության ցուցանիշ	բարձր	միջին	խիստ ցածր
Կանանց զբաղվածու- թյան աստիճան	միջին	ցածր	բարձր
Հանրային ծառայու- թյան ոլորտում զբաղ- վածության աստիճան	խիստ ցածր	միջին	բարձր
Հարկեր	ցածր	միջին	բարձր
Անհատական ներդրումներ	խիստ ցածր	բարձր	խիստ ցածր

Արդյունքները առավել ակնհայտ են դառնում, երբ երեք տարբեր տիպերը համեմատում ենք միմյանց հետ: Այսպիսով, սոցիալ-դեմոկրատական ուղղվածության սկանդինավյան երկրների աղթատության ցուցանիշը ավելի ցածր է, քան ազատական կամ պահպանողական երկրներում: Կանանց զբաղվածության ցուցանիշը ամենաբարձրն է սոցիալ-դեմոկրատական տիպում: Այս ցուցանիշները ձեռք են բերվել, հիմնականում, սոցիալական ապահովման արդյունքում, որը շատ ոլորտներում արտահայտվում է ծառայությունների մատուցման և ոչ միայն դրամական փոխատուցման տեսքով: Համապատասխանաբար հանրային ծառայողների զբաղվածության ցուցանիշը այս երկրներում ավելի բարձր է, քան կենտրոնական եվրոպայում:

Իհարկե, նման կառուցվածքներ հնարավոր չէ անվճար ունենալ: Ֆինանսավորումը, սկզբունքորեն, իրականացվում է հարկերի միջոցով: Սոցիալական ապահովագրական անհատական ներդրումները երկրորդային դերակատարում ունեն: Սոցիալ-դեմոկրատական երկրներում տուրքերի բեռը շատ ավելի ծանր է, քան ազատական և պահպանողական երկրներում: Այնուամենայնիվ, հարկային ծանր բեռի արդյունքում տնտեսական սպառողունակաությունը չի նվազում, ինչը պարբերաբար ժխտում են ազատական և պահպանողական դիրքորոշման որոշ ներկայացուցիչներ:

Ավելին, երկրի տնտեսական աճի և հարկերի ցուցանիշի միջև որևէ նկատելի բացասական կապ չկա: Երեխաների և կրթության համար մատուցվող ծառայությունների համար կատարվող հատկացումները, ինչպես նաև գործազուրկների համար կրթական և վերապատրաստման առաջարկները, ենթադրաբար, կապահովեն միջին և երկարաժամկետ ավելի բարձր եկամտաբերություն, քան հարկերի նվազեցումները: Որակյալ, բարձրակարգ և բոլորի համար հասանելի սոցիալա-

*Սոցիալ-դեմոկրատա-
կան սոցիալական
պետությունը
համեմատության մեջ*

*Ֆինանսավորումը
հարկերի միջոցով*

*Ծառայությունների
համար ներդրումները
ապահովում են
երկարաժամկետ
եկամտաբերություն:*

կան ծառայությունների արդյունքում շատ ավելի քիչ մարդիկ են ընդհանրապես հայտնվում այնպիսի իրավիճակում, երբ նրանք ստիպված կլինեն ակնկալել պետության տևական օժանդակությունը: Այսպիսով, սոցիալ-դեմոկրատական



Գծապատկեր 4. Նախապես հոգացող և հետհոգատար սոցիալական պետության կապը

Սոցիալական
խավերի բարձր
թափանցելիություն

Ընդհանուր առմամբ, սոցիալ-դեմոկրատական սոցիալական պետությունը հանգեցնում է սոցիալական խավերի թափանցելիության աստիճանի բարձրացման: Ի տարբերություն Գերմանիայի, սկանդինավյան երկրներում սոցիալական անապահով ընտանիքների երեխաներին լավ կրթության հնարավորության ընձեռումը թույլ է տալիս օգտագործել նրանց պոտենցիալը:

Նախապես հոգացող
սոցիալական
պետությունը այլևս
իրականություն է:

Ցածր կրթությունը անմիջականորեն կապված է գործազրկության ծայրահեղ բարձր միակերպի հետ: Դրան հետևում են կենսաթոշակային անհաղթահարելի չափերի ծախսեր: Սոցիալ-դեմոկրատական ուղղվածության ընդգրկումն սոցիալական պետությունը, թերևս, կարող է ամրացնել երկրի տնտեսա-բաղադրարար դիրքը: Մի հասարակություն, որը բոլորին ընձեռում է հնարավորություններ, ապահովում է առանցքային բարիքներով և ծառայություններով, խուսափում է եկամուտի ցայտուն տարբերակվածությունից և ունի տնտեսական դիմամիկա, չի կարող գործել առանց պետության ուժեղ դերակատարության: Հիշատակման է

արժանի նաև այն փաստը, որ 1980-ական թթ. ի վեր սոցիալական պետության բոլոր երեք տիպերը անցել են ազատականացման գործընթացով: Այդ գործընթացը հիմնականում վերաբերում է մասնավորեցմանը և ենթակառուցվածքների ոլորտին, ավելի քիչ՝ պետական սոցիալական ծառայությունների ծավալին (տե՛ս 3-րդ կարգի, 2001 թ.):

Ի՞նչ է նշանակում դա սոցիալ-դեմոկրատիայի համար:

- Ազատական և պահպանողական սոցիալական պետություններին չի հաջողվում իրենց բնակիչներին բավարար չափով երաշխավորել հավասար ազատություն և մասնակցություն:
- Սոցիալ-դեմոկրատական սոցիալական պետությունը ավելի լավ և հուսալի է բավարարում այդ պահանջները, հատկապես շատ լավ կառուցված հանրային ծառայության ենթակառուցվածքի օգնությամբ:
- 3-րդ կարգի սոցիալական ծառայությունների համար կատարվող ծախսերը սոցիալ-դեմոկրատական մոդելի սոցիալական պետություններին տնտեսապես չեն վնասում: Ընդհակառակը, այդ երկրները աչքի են ընկնում բարձր տնտեսական դինամիկայով:

Սոցիալական պետության տարբեր ճարտարապետությունների համաձայն, առաջացել են կապիտալիզմի մի շարք տարբերակներ: Շրջանառվում են **համակարգվող և չհամակարգվող կապիտալիզմի** տեսակները: Վերջիններս տարբերակվում են ձեռնարկությունների ֆինանսավորման, աշխատանքային հարաբերությունների, կրթության ու մասնագիտացման համակարգի և ձեռնարկությունների միջև հարաբերությունների տեսանկյունից (տե՛ս գիրք 2, «Տնտեսություն և սոցիալ-դեմոկրատիա», 3.2. գլուխ):

Նախապես հոգացող սոցիալական պետություն

Մայթթիխաս Փլաթցեկ

«Արդի ժամանակներում աղքատության և գործազրկության «հին» սոցիալական հարցերը մուտք են գործում՝ նոր՝ ոչ նորմալ զարգացմամբ ահագնացող վտանգավոր անհամամասնությունների դաշտ: Կրթության և մասնագիտացման ահռելի դեֆիցիտի և սխալ սնվելու դեպքերի աճի միտում ունեցող երևույթի հետևանքներն են հանդիսանում բաղաբակրթությունների հիվանդությունները, ինչպիսիք են՝ ավելորդ քաշը, շաքարային դիաբետը, մոլուցքային խնդիրները, ժամանա-

Լրացուցիչ ընթերցանության համար՝

Մարտին 3-րդ կարգի, Ալեքսանդեր Փեթրինգ, Դանիել Սայթել, Բենիամին Վերներ (2011), «Ազատականացման բաղաբակրթություն. Տնտեսական և սոցիալական բաղաբակրթության ապամոնոտաժման արդյունքները զարգացած երկրներում», Սոցիոլոգիայի և սոցիալական հոգեբանության Զյոլնի ամսագիր, 63(1), էջ 1-32:

Լրացուցիչ ընթերցանության համար՝

Ավեն Յոխեմ (2012),

«Նախապես հոգացող սոցիալական պետությունը գործնականում օրինակներ սկանդինավյան պետությունների աշխատանքային և սոցիալական քաղաքականություններից», *Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ*, վերլուծություն, Բեռլին:

կից շուտ նկատվող ֆիզիկական թուլությունը, որոշակի խմբերի և ներգաղթյալների չինտեգրման միտումները, նահանջող առաջխաղացման ձգտումը, խիզախության բացակայությունը և տարածված հուսալքությունը: Նմանատիպ խախտված զարգացումները փոխակերպվում են մեկը մյուսին՝ միաժամանակ ամրապնդելով միմյանց: [...]

Այսպիսով, առաջանում է աղբատության, բացակայող կրթության, աշխատանքի, մոտիվացիայի անկման և հետագայում ինքնուրույն կյանք վարելու նվազող հնարավորությունների արատավոր շրջանակ: Ոչ փողի ժամանակավոր սղությունը և ոչ էլ ժամանակավոր գործազրկությունը չպետք է լինեն մեծ սպառնալիքներ: Իհարկե, դա այն դեպքում այդպես կլիներ, եթե պարզ լիներ, որ «մեկ անգամ» աղբատ չի նշանակում «ընդմիջող աղբատ», «մեկ անգամ» գործազուրկ չի նշանակում «ընդմիջող գործազուրկ»: Յենց այս վախն է առանձնապես լայնորեն տարածված Գերմանիայում՝ մինչև իսկ հասարակության խորքերը:

Ակնհայտ է, որ գոյություն ունեցող սոցիալական պետությունը, որը նախապես հոգատար չէ, մարդկանց այդ վախից չի ազատում: Յենց դա է պախարակում Նրա անունը: Այդ պատճառով նախապես հոգացող սոցիալական պետությունը ի սկզբանե շեշտը դնում է բարձրորակ կրթության, առողջապահական կանխարգելման վրա: Այն խթանում է զբաղվածությունը և դրանով իսկ կանխում ազբատությունը: Մոտակա տասնամյակներում Գերմանիայում կեսաթոշակ ստանալ ցանկացողների հետաքրքրությունից պետք է բխի սոցիալական պետության նախապես հոգացող մոդելի իրականացումը: Նախապես հոգացող սոցիալական պետությունը և գործող տնտեսությունը միևնույն մետաղադրամի երկու կողմերն են: 21-րդ դարի պայմաններում բարգավաճող տնտեսություն ունենալ ցանկացողները պետք է միևնույն ժամանակ ներկայացնեն սոցիալական պետության պահանջը, որը պարբերական ներդրումներ է կատարում մարդկանց և սոցիալական ենթակառուցվածքների մեջ: Նախապես հոգացող սոցիալական պետությունը չի ենթադրում ապահովության և մասնակցության վերադարձ, այն նախ ստեղծում է պայմաններ, որ ապագայում անվտանգությունը և մասնակցությունը բոլորի համար հնարավոր լինեն: Անշուշտ, նախապես հոգացող սոցիալական պետությունը հավակնոտ ծրագիր է, որը մեկ օրում հնարավոր չէ իրականացնել: Յենց դա է պատճառը, որ 21-րդ դարի սոցիալ-դեմոկրատիայի կարևորագույն առաջադրանքն է վճռականորեն առաջ քաշել այդ հիմնարար ուղղությունը» (Փլաթցեկ, 2007թ., էջ 229-232):

5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ

Այս գլխում՝

- կներկայացվի և կդասակարգվի սոցիալական պետության շուրջ տարածված քննադատությունը,
- կքննարկվեն համաշխարհայնացման, տնտեսական և աշխատանքային համակարգերի, ժողովրդագրական և սոցիալական փոփոխությունների ոլորտային իրական մարտահրավերները,
- ցույց կտրվի, որ այդ մարտահրավերները պահանջում են մեկ այլ ճարտարապետություն, այլ ոչ թե սոցիալական պետության լուծարում:

«Նոր ժամանակներում բաշխման հակամարտությունները նոր թափ են առնում, վերջիններս խաղաղ լուծում էին ստանում հին իդեալիստական դաշնային հանրապետության միջոցով, երբ բաշխվում էին ավելցուկները: Այժմ հավասարության և արդարության հարցերը նորովի են հրատապ դառնում» (Թիիրգե, 2005թ., էջ 13):

Եթե Վոլֆգանգ Թիիրգեն իրավացի է, ապա հարց է առաջանում՝ ինչո՞վ է տարբերվում ներկան «հին իդեալիստական դաշնային հանրապետությունից»: Ի՞նչն է պատճառը, որ հակամարտությունը ոչ թե բաշխման առաջնային հարցերի, այլ ավելցուկների շուրջ է: Ո՞ր հանգամանքներն են հանգեցրել նրան, որ այսօր սոցիալական բաղաբականության առաջադրանքները այլ են, քան մի քանի տասնամյակներ առաջ:

Կարևորագույն փոփոխությունները բացատրվում են չորս զարգացումներով, որոնք են՝ համաշխարհայնացումը, տնտեսական և աշխատանքային համակարգային փոփոխությունները, ժողովրդագրական, սոցիալական փոփոխությունները: Սոցիալական պետության միայն առանձին կանոններ քննադատելու փոխարեն, երբեմն այս զարգացումները օգտագործում են ամբողջական սոցիալական պետության ուղղված ընդհանուր քննադատության համար:

Մշտապես ասվում է, որ գերմանական սոցիալական պետությունը չափազանց մեծ է և առատաձեռն: Նախկին դաշնային Նախագահ Ռոման Յերցոգը կարծում էր, որ պետք է կոլմ լինել մետաղական արդյունաբերության գործատուների միության կողմից ֆինանսավորվող նոր սոցիալական շուկայական տնտեսության Նախա-

Կա՞ն արդյոք բաշխման նոր հարցեր: Ի՞նչն է փոխվել:

Չորս զարգացումներ՝ համաշխարհայնացում, ժողովրդագրական, սոցիալական և կառուցվածքային շրջադարձեր:

Քննադատությունը՝ ուղղված սոցիալական պետությանը, տարածված երևույթ է, սակայն ...

ծեռնությանը⁸, միևնույն ժամանակ հայտարարելով, որ «Շատերի համար ավելի հարմար է ապրել պետության հաշվին, քան ինքնուրույն վաստակել: Դա մինչև երկինք աղաղակող անարդարություն է բոլոր աշխատողների հանդեպ» (հայտարարություն «FAZ» թերթում, 5 նոյեմբերի 2001թ.):

*... հիմնականում
չտարբերակված ...*

Դեռևս 2009թ. փիլիսոփա Փետեր Սթոտերդիյը կարծում էր, որ պետք է համաձայնվել նեոլիբերալ փաստարկների հետ. «Գոյատևման համակարգը իրենց ուսերին կրող ազատական դիտորդների շնորհիվ է, որ ներկայիս հարաբերություններում առկա վտանգները ուշադրության են արժանանում: Այդ վտանգներն են՝ չափազանցված կանոնակարգումները, որոնք խստորեն սահմանափակում են ձեռնարկատիրական էներգիան, չափազանցված հարկումը, որով պատժվում է հաջողությունը և պարտքերը, որոնք ձեռնարկության տնտեսության լրջությունը, թերթևամիտ չարաշահմամբ, նույնքան են առաջ մղում մասնավոր հատվածում, որքան հանրայինում:

*...իրականության
անտեսում*

Պետական չարիքի դեմ նրա բաղադրատոմսը հասարակության «վերաբացահայտումն» է. «Դա առնվազն կդառնար վճարող ձեռքի հեղափոխություն: Դա կբերեր ստիպողական հարկերի վերացման, և վերջիններս հանրության համար կվերափոխվեին նվերների, առանց այդ քայլի հանրային ոլորտը ստիպված կսննկանար» («FAZ» թերթ, 10 հունիսի 2009 թ.):

*Ոչ մի բացասական
կապ. տնտեսություն
և սոցիալական
պետություն*

Ինչպես ներկայացվում է 7.1. գլխում (Հարկային քաղաքականություն) և 4-րդ գլխում (Սոցիալական պետության շինակյությունը, կառուցածները և ճարտարապետությունները), նման հայտարարությունները միայն շատ սահմանափակ ուսումնասիրության են արժանանում: Առաջին՝ գերմանական հարկային և սոցիալական պետությունը միջազգային համապատկերում միայն միջին մեծության է, երկրորդ՝ սոցիալական պետության չափի և երկրի տնտեսական ներուժի միջև բացասական կապ չկա:

*Անհավասար ֆինանսավորումը խիստ
անհավասար բաշխման արդյունքն է:*

Երրորդ՝ 2007 թ. հարկատուների գրեթե մեկ քառորդը (24,2 %) տարեկան 40.000 եվրո և ավելի եկամուտներով վճարում էր Գերմանիայի եկամտահարկի 79,7 %-ը: Սա պայմանավորված է նրանով, որ 2007թ. 10,9 միլիոն հարկատուների կամ նրանց ավելի քան մեկ քառորդի (28,5 %) տարեկան եկամուտը կազմել է առավելագույնը 10.000 եվրո: Հարկատուների կեսի տարեկան եկամուտը կազմել է ոչ ավելի, քան 22.500 եվրո, և վերջիններս վճարել են 3,6 % եկամտահարկ (Վիճակագրական դաշնային ծառայություն, 2011 թ):

8 Մանրամասների համար տես Շպեթ, 2004 թ.:

Սլոթերոյի կողմից որպես գերհարկում որակված իրավիճակը հանգեցրել է Նրան, որ վերջին տասնամյակներում Գերմանիայում ունեցվածքի անհավասարության դրսևորումը մշտապես մեծանում է: 2007թ. մեծահասակների ավելի քան մեկ քառորդը (27 %) ոչինչ չի տնօրինել կամ պարտքեր է ունեցել, մինչդեռ բնակչության հարուստ տասնյակի տարեկան հարկված եկամուտը կազմել է նվազագույնը 222.000 եվրո:

Գերմանիայի բնակչության հարուստ 10 %-ը տնօրինում է ընդհանուր ունեցվածքի ավելի քան 60 %-ը: Բնակչության ստորին հատվածի՝ 70 %-ի, ընդհանուր ունեցվածքի մասնաբաժինը կազմում է ավելի քիչ, քան 9 % (Ֆրիկ և Գրաբլե, 2009թ.): Նա, ով այս համատեքստում ներկայիս գերհարկման «վտանգները» տեսնում է և ապագայում ցանկանում է սոցիալական քաղաքականությունը գործի դնել բարեգործության և նվիրատվությունների տեսքով, ամենաքիչը պետք է պարզևատրման արժանաևա իրականության հանդեպ ունեցած ինքնատիպ վերաբերմունքի համար:

Ընդհանրական քննադատության կողքին կան նաև ցուցումներ, որոնք լրջագույն վերաբերմունքի են արժանի: Այդպիսի քննադատությունները վերաբերում են անցյալ տասնամյակներում տեղի ունեցած սոցիալական, տնտեսական և բնապահպանական փոփոխություններին, որոնց արդյունքում ի հայտ են գալիս սոցիալական պետության համակարգային իրական մարտահրավերները: Մինչև սոցիալական պետության վերանայման անհրաժեշտության վերաբերյալ հապճեպ որոշում կայացնելը, արժե հանգամանալից քննության առնել փոփոխված պայմանները: Ինչպես 7-րդ գլխում է (Սոցիալական պետության առնցքային ոլորտները) մատնանշվում, նկարագրված զարգացումներին հարկավոր է տալ ոչ թե ընդհանրական, այլ տարբերակված պատասխաններ:

«Վերակառուցում և արդիականացում սոցիալական պետության կրճատման և աղճատման փոխարեն, այսպիսին է կառուցողական ձախերի պատասխանը՝ Նոր մարտահրավերներին: Այս խաչմերուկում են ի հայտ գալիս զանազան ուղղությունների և ուժերի պարզ տարբերությունները: Աճերը՝ պահպանողականները և նեոլիբերալները, ցանկանում են, պահն օգտագործելով, էականորեն թուլացնել սոցիալական պետությունը և վերջինիս պաշտպաններին հուսախաբ անել՝ զնդակի ուժգնությամբ առաջ սլանալու նպատակով: [...] Սոցիալական պետության արդիականացման յուրաքանչյուր փորձի դեմ բողոքական ձախերի պոպուլիստական մեղադրանքները սոցիալական պետության գոյության վտանգման մեկ այլ տարբերակ են: Նրանք ապրում են այն երևակայությամբ, որ, ցանկության պարագայում, ամեն ինչ կարող է մնալ այնպես, ինչպես եղել է» (Գաբրիել, 2008թ., էջ 305):

Ունեցվածքի անհավասարությունը սրացել է:

10%-ը տնօրինում է 60%, 70%-ը տնօրինում է 9%

Լուրջ ցուցումներ

Լրացուցիչ ընթերցանության համար՝
Քրիստոֆ Բուլթեր-վեգե (2005), «Սոցիալական պետության ճգնաժամը և ապագան», Վիսբադեն, էջ 75-114:

5.1. Համաշխարհայնացում (գլոբալիզացիա)

Թիմաս Ռիբսեն

Հանրային քննարկումներում տնտեսական գլոբալիզացիան՝ համաշխարհայնացումը համարվում է լայնածավալ սոցիալական պետության պահպանման կարևորագույն մարտահրավերներից մեկը: Սոցիալական քաղաքական կրճատման ուղղված միջոցառումների պահանջը մշտապես ուղեկցվում է միջազգային մրցունակության ցուցումով և ժամանակ առ ժամանակ նաև կյանքի է կոչվում:

Ընթերցողները, վստահաբար, հիմնականում ծանոթ են շահագրգիռ կողմերի հաճախ կրկնվող և տարածված փաստարկներին: Միևնույն ավելի ճշգրիտ դիտարկման դեպքում ամենևին էլ միանշանակ չէ, որ համաշխարհայնացումը վտանգ է ներկայացնում սոցիալական պետության համար:

Համաշխարհայնացումը բազմակողմանի հասկացություն է, որը կարող է վերաբերել տարաբնույթ միջազգայնացման գործընթացների: Խոսվում է մշակութային, սոցիալական, քաղաքական և հատկապես՝ տնտեսական համաշխարհայնացման մասին: Տնտեսական համաշխարհայնացմանը հատուկ են երեք հիմնական շարժիչ ուժեր: Դրանք են առևտրի համար խոչընդոտների վերացումը, զարգացող երկրների վերելքը և տեխնիկական նորարարությունները:

Աճող միջազգային տնտեսական ինտեգրացիայի և սոցիալական պետության առնչությամբ գոյություն ունեն տարբեր տեսլականներ: Վերջիններս, ավելի դյուրին ներկայացնելու նպատակով, բաժանվում են երկու խմբի՝ համաշխարհայնացման լավատեսներ և հոռետեսներ, որոնք կներկայացվեն ստորև: Համառոտ կպատկերվի, թե ինչպես են հիմնականում կառավարությունները արձագանքում համաշխարհայնացման մարտահրավերին: Վերջում կքննարկվի սոցիալական քաղաքականության համաշխարհայնացման կամ եվրոպականացման այլընտրանքային քաղաքականության մի տարբերակ:

Համաշխարհայնացման լավատեսները

Լավատեսները պնդում են, որ գլոբալիզացիայի արդյունքում սոցիալական պետությունը չի հայտնվում ճնշման տակ: Նրանք առաջնորդվում են այն մտայնությամբ, որ սոցիալական պետության կոնֆիգուրացիան ազգային քաղաքական որոշում է, և որ վերջինս կախված է ազգային քաղաքական ինստիտուտներից և մեծամասնության որոշումից: Եթե նույնիսկ համաշխարհային մրցակցությունը սոցիալական պետության կազմաքանդման ուղղությամբ ճնշում գործադրի, դրանից հնա-

Լրացուցիչ ընթերցանության

համար՝ Գիրք 2,

«Տնտեսություն և սոցիալ-դեմոկրատիա», գլուխ 3.3.:

Ժոզեֆ Շտիգլից

(2006), «Գլոբալիզացիայի հնարավորությունները», Մյունխեն:

Սոցիալական պետությունը՝ որպես քաղաքական, այլ ոչ թե տնտեսական որոշում

րավոր է խուսափել, քանի դեռ քաղաքացիների մեծամասնությունը ցանկանում է լայնածավալ սոցիալական պետություն (տե՛ս Սվանկ, 2002 թ.):

«Փոխհատուցման թեզը»

Ոմանք ավելի հեռուն են գնում և պնդում, որ համաշխարհայնացումը կարող է նպաստել սոցիալական պետության ընդլայնմանը: Նրանք առաջնորդվում են նրանով, որ համաշխարհային առևտուրը կհանգեցնի բարեկեցության ավելի բարձր աստիճանի, և դրանով իսկ ավելի կմեծանա սոցիալական պետության համար բաշխման շրջանակը: Նրանք հավատացած են նաև, որ լավ գործող սոցիալական պետությունը շուկաների ազատականացման համար քաղաքականապես կարող է նախապայման հանդիսանալ: Միայն երբ քաղաքացիները վստահ կլինեն, որ համաշխարհային շուկաների ռիսկերից սոցիալականապես ապահովված են, նրանք պատրաստ կլինեն ազատականացման քաղաքական որոշում կայացնել: Այս պարագայում համաշխարհայնացումը և սոցիալական պետության ընդլայնումը փոխադարձաբար կամրապնդեն միմյանց (տե՛ս Ռոդրիկ, 1998 թ.):

Սոցիալական պետությունը՝ որպես համեմատական ինստիտուցիոնալ առավելություն

Այլ բան են պնդում «Կապիտալիզմի տարատեսակներ»⁹ մոտեցման ներկայա-

Համեմատական առավելության դասական օրինակ է բրդի և գինու արտադրությունը: Բնական պայմաններից ելնելով՝ հնարավոր է դառնում գինին ավելի մատչելի արտադրել Պորտուգալիայում, իսկ բուրդը՝ Շոտլանդիայում: Եթե այս երկու երկրները երկու ապրանքատեսակ միաժամանակ արտադրելու փոխարեն մասնագիտանան համապատասխանաբար միայն իրենց ապրանքատեսակի առևտրի շրջանակում, նրանք դրանից միայն կշահեն:

ցուցիչները: Նրանք հավատացած են, որ համաշխարհային առևտրի արդյունքում համաշխարհային աշխատանքի բաժանման միաջազայնացում տեղի կունենա, և որ դրանով նոր մասնագիտացումների համար հնարավորություններ կառաջանան:

Նրանք առաջնորդվում են հետևյալով՝ ազգային տնտեսության ինս-

տիտուցիոնալ կառույցները, որոնց թվին է դասվում նաև սոցիալական պետությունը, լավագույնս համապատասխանում և փախադարձաբար ամրացնում են միմյանց՝ առաջացնելով մասնագիտացումներ համապատասխան համեմատական առավելությունների համար: Հետևաբար ակնկալվում է, որ այն երկրներում, որտեղ համաշխարհային առևտրի ինտենսիվացում է նկատվում, լավ կառուցված սոցիալական պետությունը արդյունքում ավելի կընդլայնվի: Ի հակադրություն

Համաշխարհայնացումը հանգեցնում է սոցիալական պետության ընդլայնմանը

Կապիտալիզմի որոշ տարբերակներ չեչտադրում են սոցիալական պետության զաղապարը

Սոցիալական պետությունը թույլատրում է մասնագիտացում

⁹ Տե՛ս գիրք 2, «Տնտեսություն և սոցիալ-դեմոկրատիա», գլուխ 3.3.:

դրան, հնարավոր է նաև, որ անգլոսաքսոնական երկրներում արձանագրվի սոցիալական պետության վերացում: Դիտարկելով նաև այս դիրքորոշումը՝ համաշխարհայնացումը սկզբունքորեն որևէ վտանգ չի ներկայացնում սոցիալական պետության համար:

Սոցիալական պետությունը՝ որպես ծախսերի գործոն

Համաշխարհայնացման հոռետեսները

Հակադարձելով վերոնշյալին՝ հոռետեսները ընդգծում են, որ միջազգային գործունեություն ծավալող ձեռնարկությունների համար սոցիալական քաղաքական միջոցառումները ծախսերի գործոն են հանդիսանում: **Համաշխարհայնացման** արդյունքում ձեռնարկություններին հնարավորություն կընձեռվի ընտրել իրենց արտադրության համար երկրներ, որտեղ նրանք նվազագույնի կհասցնեն վարձատրության ծախսերը, հարկերը և տուրքերը, որոնց միջոցով էլ, ի վերջո, ֆինանսավորվում է սոցիալական պետությունը: Նույնը վերաբերում է նաև խոշոր կապիտալ տնօրինողներին: Հնարավոր կլինի կապիտալների արատահոսքի ինտենսիվացում դեպի ցածր հարկային բեռով երկրներ (տե՛ս Շառաֆ, 2000թ.):

Արգելափակման սպառնալիքը՝ որպես սոցիալական քաղաքական մրցակցային գործիք:

Ձեռնարկությունների, կապիտալի, որակյալ աշխատուժի համաշխարհային շարժունակության արդյունքում կառավարությունների միջև մրցակցություն կառաջանա ցածր հարկերի և սոցիալական չափորոշիչների հարցում: Ըստ **համաշխարհայնացման** հոռետեսների, այս ամենի արդյունքում ամենուր կարձանագրվի սոցիալական պետության վերացում („race to the bottom“): Մրցակցություն ստեղծելու համար ամենևին էլ անհրաժեշտ չէ կապիտալը կամ ձեռնարկությունը դուրս բերել երկրից, բավական է միայն, որ ձեռնարկատերերը սպառնան այդպիսի հեռանկարով:

Որոշիչ է կապիտալի շարժի ազատականացումը:

Հոռետեսները հավատացած են, որ մրցակցության ճնշումը առաջանում է ոչ թե տնտեսության միջազգայնացման, այլ կապիտալի շարժի ազատականացման արդյունքում: Մի կողմ թողնելով լավատեսների բավականին իմաստալից դիրքորոշումը՝ հոռետեսների կարծում են, որ բարիքների առևտրով միայնակ զբաղվելով՝ մրցակցության դինամիկա է զարգանում համակարգի ներսում, մասնավորապես՝ կապիտալի շարժի ազատականացման միջոցով:

Ծախսերի վերագրումը անշարժ գործոններին

Համաշխարհայնացման հոռետեսները կանխատեսում են, որ իրական ազդեցությունը տեսնելու համար տևական ժամանակ է հարկավոր: Որպես առաջին քայլ՝ սոցիալական պետության ծախսերը պայմանավորված են լինում անշարժ գործոններով, խոսքը աշխատողների մասին է, իսկ շարժական գործոնների հնարավորություններով պայմանավորված՝ հնարավոր է դառնում շրջանցել հարկերը: Կապիտալից ստացած եկամուտը ավելի քիչ է հարկվում, քան աշխատանքի արդ-

յունքում ստացված եկամուտը: Եվ քանի որ հարուստները հիմնականում ավելի շատ կապիտալ ունեն, քան աղքատները, իջնում է հարկման արդյունավետ պրոգրեսիվությունը (տե՛ս գլուխ 7.1. Հարկեր): Ֆինանսավորումը դառնում է ավելի անարդար, և սոցիալական պետությունը այլևս չի հասնում իր նպատակներին: Անարդար ֆինանսավորման տևականությունը կարող է հանգեցնել սոցիալական պետության կազմաքանդմանը:

Ի՞նչ արծազանք է եղել մինչև այժմ

Գիտական գրականությունը միասնական չէ այն հարցում, թե արդյո՞ք **համաշխարհայնացումը** հանգեցրել է սոցիալական պետության կազմաքանդմանը: Ուսումնասիրությունների քանակական համեմատության արդյունքում պարզվեց, որ մինչև 1990-ականների կեսերը չի եղել սոցիալական ծախսերի և հարկերի հավաքագրման նվազում: Այս ուսումնասիրությունները քննադատության են արժանացել, քանի որ, ըստ քննադատների, ուսումնասիրությունների համար չեն ընտրվել օգտակար ցուցանիշներ: Սոցիալական ծախսերի ամփոփ պատկերը թույլ չի տալիս տեսնել, թե ինչպես են տեղակայված անհատական ներդրումները: Միանգամայն հնարավոր է, որ երբ նպաստ ստացողների թիվն աճի, ամբողջական ծախսերը մասն կայուն, թեև նրանց անհատական աշխատանքի արդյունաբերությունը կնվազի: Որակական տեսանկյունից, ըստ ուսումնասիրությունների, դիտարկվող ժամանակահատվածում նպաստառուների շրջանում, այնուամենայնիվ, նպաստների կրճատում և սահմանափակումներ արձանագրվել են: Նույնը վերաբերում է նաև հավաքագրման կողմին: Հարկերի չափը որևէ տեղեկություն չի տալիս հարկերի հավաքագրման կառուցվածքի մասին: Իրականում էմպիրիկ ապացույցներ կան, որ հարկային բեռը կապիտալից տեղափոխվել է աշխատանքի վրա: Քննադատվել է նաև հետազոտության անցկացման ժամանակահատվածը՝ միայն մինչև 1990-ականների կեսերը:

Մրցակցության ճնշման ազդեցությունը գործնականում

Ավելի երկար ժամանակահատված ընդգրկող նորագույն ուսումնասիրությունների արդյունքում ակնհայտ է դառնում, որ համաշխարհայնացումն ի վերջո հանգեցրել է սոցիալական ծախսերի նվազման (տե՛ս Բուսեմեյեր, 2009թ.): Ընդհանուր առմամբ, որոշ ապացույցներ փաստում են, որ գործնականում կառավարությունները համաշխարհայնացման արծազանքել են սոցիալական նպաստների կրճատմամբ: Թեև սա ամենևին էլ չի նշանակում, որ տնտեսական համաշխարհայնացման մարտահրավերի միակ հնարավոր արծազանքը դա է: Ճիշտ հակառակը, գոյություն ունեն այս քաղաքականության հնարավոր այլընտրանքներ, որոնք սոցիալական

Արդյո՞ք դա նշանակում է սոցիալական պետության կազմաքանդում: Պատկերը միատարր չէ:

Լրացուցիչ ընթերցանության համար՝
Ֆիլիպ Գեևլ (2003թ.), «Գլոբալիզացիան՝ որպես խնդիր, որպես լուծում և որպես համալրում»; Գյունթեր Յելլման, Զլաուս Դիթեր Վոլֆ, Միխաել Յյուրն, «Նոր միջազգային հարաբերությունները, ուսումնասիրությունները և հեռանկարները Գերմանիայում», Բադեն-Բադեն, էջ 429-464:
Զերբեր Զինգեր և Փեթեր Շթարկե (2007թ.), «Սոցիալական քաղաքական գարգացման միտումները Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության երկրներում 1980-2001 թթ. մերձեցում, բաժանում, համառություն», Քաղաքական ամսագիր, թիվ 38, էջ 470-495:

պետության ամրությունը կապահովեն համաշխարհայնացման պայմաններում: Այդ այլընտրանքները համառոտ կքննարկվեն ստորև:

Ո՞րն է ելքը. Գլոբալ, թե՞ Եվրոպական սոցիալական քաղաքականություն

Հաշվի առնելով մրցակցային ճնշումները, որոնց ենթարկվում է սոցիալական պետությունը, հարց է առաջանում, թե ինչպե՞ս պետք է արձագանքել այս մարտահրավերներին:

Բնագլոբալի հավանական լուծումը կլինե՞ր սոցիալական պետության ինստիտուտների գործարկումը միջազգային հարթակում: Տնտեսության համաշխարհայնացմանը պետք է պատասխանել սոցիալական քաղաքականության համաշխարհայնացմամբ: Վեջինիս հաջողության պարագայում այլ երկրներում սոցիալական պետության ծախսերից խուսափելու հնարավորությունները այլևս կսահմանափակվեն: Հաշվի առնելով սոցիալական պետությունների միջև գոյություն ունեցող ահռելի տարբերությունները՝ այս լուծումը, թերևս, քաղաքականապես հազիվ թե հնարավոր լինի իրականացնել: Բացի դրանից, կասկածելի է նաև, թե արդյո՞ք առկա պայմաններում միջազգային սոցիալական քաղաքականությունը ցանկալի կլինե՞ր: Հաշվի առնելով սոցիալական պետության և ժողովրդավարության սերտ կապը՝ առաջարկվող լուծումը պետք է ուղեկցվի միջազգային որոշումների մակարդակով ընթացող ժողովրդավարացմամբ, որը նույնպես ուսուպիստական է:

Եվրամիությունում¹⁰ իրավիճակը այլ է: ԵՄ-ը սոցիալական պետության կառուցման իրավասություն չունի: Վերպետական ինստիտուտները միասնական ներքին շուկայի ստեղծման հարցում կարող են պարտավորեցնող որոշումներ կայացնել («բացասական ինտեգրացիա»), իսկ «դրական ինտեգրացիայի» շրջանում, այսինքն սոցիալական շուկայի կարգավորման հարցում նրանց ձեռքերը շղթայված են (տե՛ս Շարպֆ, 1999թ.):

Կամավորության հիմունքներով, այնուամենայնիվ, տեղի է ունենում տարբեր սոցիալական քաղաքականությունների համակարգում: Բացի դրանից, ԵՄ-ն ունի այնպիսի ինստիտուցիոնալ համակարգ, որի զարգացումը ապագայում հնարավոր է ընդհուպ մինչև պարտավորեցնող կանոնակարգերի ընդունում: Ընդ որում, վերջինս ամենևին էլ ուղղված չի լինելու սոցիալական քաղաքականությունների ամբողջական ներդաշնակեցմանը: Ելնելով Եվրոպայում տարբեր սոցիալ-քաղաքական ավանդույթներից՝ այդ հեռանկարն անիրատեսական է: Փոխարենը

¹⁰ Տե՛ս «Եվրոպական սոցիալական քաղաքականության» մասին թեմայով գիրք 4, «Եվրոպա և սոցիալ-դեմոկրատիա» (2010թ.):

կարևորվում է եվրոպական մակարդակով պարտավորեցնող նվազագույն ստանդարտների ամրագրումը: Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը նման սոցիալական միության նպատակի հանձնառու է:

«Եվրամիությունը պետք է համաշխարհայնացման շուրջ մեր հարցերի քաղաքական պատասխանը հանդիսանա: [...] Տնտեսական և արժույթի միությունների կողքին պետք է հավասար չափով հանդես գա սոցիալական միությունը: [...] Մենք չենք ցանկանում սոցիալական համակարգերը միասնականացնել, մեզ համար կարևոր է հարաբերվել ԵՄ անդամ պետությունների հետ սոցիալական կայունության շրջանակներում»: (Համբուլդյան ծրագիր, 2007թ., էջ 26, 28)

Լրացուցիչ ընթերցանության համար՝

Մարիուս Ռ. Բուսենեյեր (2006թ.), «Եվրոպական տնտեսական և սոցիալական մոդելի քաղաքական դիրքորոշումներ՝ հետաքրքրությունների բարտեզ», Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Բոնն

5.2. Համակարգային փոփոխություն տնտեսության և աշխատանքային ոլորտներում

Դաշնային հանրապետության առաջին տասնամյակների համար առանձնահատուկ էր արտադրության ոլորտի հաստատուն աճը: Այս ոլորտում մշտապես արձանագրվում էր զբաղվածների թվի և համապատասխանաբար՝ աշխատավարձերի աճ: Բարձրացող աշխատավարձերի արդյունքում բնակչությունն իր եկամտի մի սակավ մասն էր միայն բաժին հանում բնակարանի և սննդի համար, ավելի շատ միջոցներ էին տրամադրվում սպառողական ապրանքների համար:

ԳԴՀ – ի առաջին տասնամյակներ. արտադրության ոլորտի հաստատուն աճ


1960-ական թվականները մի ժամանակաշրջան էր, երբ մեծաթիվ գերմանական տնային տնտեսություններ (նաև եվրոպական) առաջին անգամ համալրվում էին սառնարաններով, լվացքի մեքենաներով, տոստերներով, ավտոմեքենաներով: Բարձրացող եկամուտների արդյունքում աճում էր նաև արտադրության ոլորտի ապրանքատեսակների պահանջարկը: Այդ ոլորտները աչքի էին ընկնում արտադրողականության աճով, որն իր հերթին հանգեցնում էր գների նվազման և պահանջարկի ավելի բարձրացման: Առաջացել էր մի ինքնին ամրապնդվող գործընթաց, որը ուղեկցվում էր արտադրողականության շահույթով, աճող պահանջարկով, արտադրության աճով և դրանով իսկ՝ հավելյալ արտադրողականության շահույթով: Արտադրության ոլորտում զբաղվածների թիվը, ինչպես նաև եկամուտները և պահանջարկը, շարունակում էին աճել:

1960-ականներ. նոր արտադրանքի ժամանակաշրջան

Լրացուցիչ ընթերցանության համար՝

Բուրկարտ Լուիզ (1989), «Հավերժական բարեկեցության կարճ երազը. արտադրական կապիտալիզմի զարգացման նոր մեկնաբանություն 20-րդ դարի եվրոպայում», Ֆրանկֆուրտ-Մայն, Նյու Յորք:

Առկա էր նաև դրական հետադարձ կապ ավանդական (գյուղատնտեսություն և արհեստագործություն) և ժամանակակից արտադրության ոլորտների միջև: Ժամանակակից արտադրության ոլորտում բացակայող աշխատուժը կարող էր հավասարակշռվել ավանդական ոլորտի միջոցով: Ավանդական ոլորտն էլ իր հերթին օգուտ էր քաղում ժամանակակից ոլորտի նորարարություններից:



Գծապատկեր 5. Չբաղվածությունը Գերմանիայում ըստ տնտեսական ճյուղերի¹¹

Օրինակ՝ 1966 թվականին զբաղվածների շուրջ 10 %-ը ներգրավված են հիմնական, գրեթե 49 %-ը երկրորդական և մոտ 41 %-ը երրորդական սեկտորներում:

1970 թ-ից սկսած՝ զբաղվածության աստիճանի նվազում արտադրության ոլորտում

1970 և 1980-ական թվականներին այս իրավիճակը շրջադարձ ապրեց: «Առաջին համալրման» ժամանակաշրջանը այլևս անցյալում էր: Սպառողները ավելի կարևորում էին որակը, քան քանակը: Պահանջարկը այլևս չէր աճում, նույնիսկ այն դեպքում, երբ դեռ հնարավոր էր արտադրողականության շահույթի արդյունքում իջեցնել գները: Հետևաբար, այս ոլորտում այլևս զբաղվածության աճ չկար, ընդհակառակը՝ նկատվեց զբաղվածության աճի կանգ, իսկ այնուհետև զբաղվածությունն սկսեց դանդաղ անկում ապրել:

Ավելի մեծ կարևորություն՝ սպասարկման ոլորտին

Պահանջարկը ուժգնորեն շրջվեց դեպի սպասարկման ոլորտ: Այս ոլորտը, 1970-ական թվականներից սկսած, ավելի ու ավելի էր կարևորվում, ինչը արձանագրվում էր նաև զբաղվածության թվի աճով, թեև այս ոլորտի շահույթները Գերմանիայում հետ մնացին արտադրության ոլորտի արդեն իսկ նահանջ ապրած շահույթի ցու-

¹¹ Մինչև 1990թ., Նախկին դաշնային տարածք, 1950-1959թթ.: առանց Բեռլինի և Զառլանդի:

ցանկից: Հետևաբար, արժե այս ոլորտն ավելի մանրամասն ուսումնասիրել, քանի որ դեռ 20-րդ դարի առաջին տասնամյակներում նմանատիպ շրջադարձային անցում էր տեղի ունեցել ագրարային տնտեսությունից դեպի արտադրական տնտեսություն: Այսպիսով, ինչո՞վ են առանձնանում այս փոփոխվող գործընթացները:

Սպասարկման ծառայությունները կարող են շատ տարբեր լինել. որոշ ծառայություններ հիմնականում տրամադրվում են ձեռնարկություններին, որոշներն էլ առավելապես մասնավոր տնտեսությունների համար են: Գոյություն ունեն բարձր որակավորում պահանջող ծառայություններ, ինչպես նաև այնպիսիք, որ առանձնապես բարձր որակավորում չեն պահանջում: Բոլոր ինտենսիվ անհատական աշխատանք պահանջող ծառայությունների տեսակներին էլ հատուկ է արտադրողականության բարձրացման սահմանափակ ներուժը: Բժիշկները, մատուցողները, բուժանձնակազմը կամ ուսուցիչները, թեև կարող են միևնույն ժամանակահատվածում ավելի շատ հյուրերի, հիվանդների կամ աշակերտների սպասարկել, սակայն սահմանափակ ներուժը շատ արագ անդրադառնում է ծառայությունների որակի վրա:

Այսպիսով, ինտենսիվ անհատական աշխատանք պահանջող սպասարկման ոլորտի արտադրողականության ծավալը համադրելի չէ հարևան ոլորտի արտադրության ծավալի հետ: «Ոսկյա տարիների» բարձրացող աշխատավարձերի և անկում ապրող գների շրջապատույթը այլևս հնարավոր չէր: Այն դեպքում, երբ արտադրության ոլորտում, բարձրանում էին աշխատավարձերը, սպասարկման ոլորտում զբաղվածության աճը արգելակվում էր ցածր որակավորման պահանջով:

Անհավասար վարձատրության աճը, իհարկե, այլընտրանք կլիներ, որը, ի դեպ նկատվում է վերջին տասնամյակներում: Անհավասար վարձատրությունը, իհարկե, դժվար է արդարացնել արդարության հեռանկարի տեսանկյունից, քանի որ արտադրողականության աճի սահմանափակ հնարավորությունները պայմանավորված են ոչ թե աշխատողների աշխատանքով, այլ՝ աշխատանքի բնույթով: Ահագնացող անհավասար վարձատրությունը կամ աշխատատեղի կորուստը՝ որպես այլընտրանք, առանձնապես հրապուրիչ չեն:

Որպես երրորդ այլընտրանք կարող էր հատկանշվել ծառայությունների բարձր որակավորման վրա կենտրոնացումը: Արտադրության ոլորտի աշխատատեղից անցումը ծառայության ոլորտ առանձնապես հեշտությամբ չի տրվում, քանի որ ծառայության ոլորտում աշխատողներից պահանջվում է մասամբ բարձր որակավորում: Այս միտումը նշանակում է, որ այսուհետև աշխատաշուկայում

Ինտենսիվ անհատական աշխատանք պահանջող ծառայություններ. արտադրողականության միայն սահմանափակ աճ

Անհավասար աշխատավարձեր. արդյո՞ք սա նշանակում է աշխատատեղի կորուստ:

Նոր պահանջներ մասնագիտական և լրացուցիչ կրթության համար:

մասնագիտական կրթությունը և որակավորումը կարևոր դերակատարություն կունենան:

*Զբաղվածության
և որ բնութագրերը
բախվում են ֆինա-
սավորման դասա-
կան կառուցվածքին:*

Այս փոփոխությունների արդյունքում մարտահրավերների առաջ է կանգնում ոչ միայն կրթական ոլորտը (տե՛ս գլուխ 7.5. Կրթություն) այլ նաև ճնշման տակ են հայտնվում սոցիալական քաղաքականության դասական ոլորտները: Սպասարկման ոլորտում շատ աշխատատեղեր միայն մասամբ են համապատասխանում դասական նորմալ աշխատանքային պայմաններին: Աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են աշխատանքային պայմանագրով, որը կարող է լինել լիարժեք աշխօրի կամ դրույթաչափային օրինակով՝ կոլեկտիվ պայմանագրերով հաստատված աշխատավարձով, սոցիալական ապահովագրությամբ, ինչպես նաև գործատուից աշխատողի անձնական կախվածության և պարտավորությունների ձևաչափերով: Սպասարկման ոլորտում աշխատանքը հիմնականում լինում է դրույթաչափով, անհատ ձեռներեցության տարբերակով կամ ժամանակավոր:

*Յետևանք. չափա-
զանց սահմանափակ
սոցիալական
ապահովություն*

Այնքան ժամանակ, քանի դեռ ապահովման համակարգերը կշարունակեն ուղղորդվել տևական և հնարավորիս առանց ընդհատումների աշխատանքային կենսագրություններով, ավելի ու ավելի զբաղվածներ հնարավորություն չեն ունենա բավարարել իրենց սոցիալական ապահովության պատշաճ պահանջները:

*Սակավաթիվ արհ-
միութենական կազ-
մակերպություններ,
փոքրաթիվ կոլեկ-
տիվ պայմանագրեր*

Հավելյալ խնդիրներ են առաջանում նաև սպասարկման ոլորտում արհմիութենական կազմակերպությունների ցածր ցուցանիշների հետևանքով: Այստեղ համեմատաբար քիչ են աշխատավորների խորհուրդները, և շատ գործատուներ չեն անդամակցում գործատուների միություններին: Այդ իսկ պատճառով, կոլեկտիվ պայմանագրերի ծածկույթը սահմանափակ է, և կանոնները պահպանելու վերահսկողությունը դժվարությամբ է իրականացվում:

*Կառուցվածքային
շրջադարձը հիմնա-
կանում արտահայտ-
վում է կրթական, աշ-
խատանքային և
կենսաթոշակային
ոլորտներում*


Կառուցվածքային շրջադարձը հանգեցնում է ընդհանուր առմամբ ավելի բարձր կրթական պահանջների, փոփոխված աշխատանքային կենսագրությունների և անհավասար վարձատրության զարգացման: Այս փոփոխությունները մասնավորապես ազդեցություն են գործում սոցիալական քաղաքականության հետևյալ որոշումների վրա՝ կրթություն, գործազրկություն և կենսաթոշակ:

5.3. Ժողովրդագրական շրջադարձ

Հասարակության ծերացումը ուղեկցվում է մի չափազանց ուրախալի գործոնով՝ մարդիկ մեր օրերում ավելի երկարակյաց են: Հին դաշնային երկրներում կյանքի միջին տևողությունը 1980-2002թթ. ընթացքում տղամարդկանց համար աճել է 69,9 տարեկանից 75,6, իսկ կանանց համար՝ 76,6-ից 81,3:

Երկրորդ գործոնը պայմանավորված է ծնելիության մակարդակի նվազմամբ, որն առանձնահատուկ սաստկությամբ նկատվեց հատկապես 1965-1975թթ.: Այնուհետև նկատվեց ծնելիության մակարդակի թեթև աճ մինչև 1990թ., իսկ հետո արդեն՝ մինչև 2007թ., արձանագրվեց տևական նահանջ: Գերմանիայում 2007թ. ծնելիության միջին մակարդակը մեկ կնոջ համար կազմեց 1,37 երեխա:

Այս երկու զարգացումների համադրությունը հանգեցնում է նրան, որ հաջորդ տասնամյակներին տնտեսապես ակտիվ մարդկանց ցուցանիշը, կենսաթոշակային տարիքում գտնվողների ցուցանիշի համեմատությամբ տևականորեն կնահանջի:



Գծապատկեր 6. Ծերացման գործակցի զարգացում (1960-2020)

Օրինակ՝ 1965թ. Գերմանիայում 20-59 տարեկան յուրաքանչյուր 100 քաղաքացուն բաժին էր ընկնում մոտ 35 վաթսուներեկ քաղաքացի: 2010թ. վաթսուներեկ քաղաքացիների թիվը գերազանցում էր 45-ը:

Կյանքի տևողության աճ

Նվազող ծնելիության ցուցանիշ

Հետևանք. ծերացման գործակիցը բարձրանում է:

Լրացուցիչ ընթերցանության համար՝ Էրիկա Շուլց և Անկե Հանսենյան (2007թ.), «Բնակչության զարգացումը Գերմանիայում մինչև 2050թ. արդյո՞ք միայն բնակչության թվաքանակի թեթև նահանջ», DIW շաբաթական գեկույց, թիվ 47/2007, Բեռլին:

Այսպես կոչված ծերացման գործակցի ցուցանիշը նկարագրում է այստեղ աշխատողների և կենսաթոշակառուների հարաբերակցությունը:

Ծերացման գործակցի ցուցանիշը նկարագրում է 20-59 տարեկանների և 60-ն անց անձանց հարաբերակցությունը:

2005թ. 100 աշխատողի բաժին էր ընկնում 44 թոշակառու, 2020թ.՝ մոտ 53

Եթե 2005թ., ըստ հաշվարկների, ամեն 100 աշխատողի բաժին էր ընկնում 44 թոշակառու, ապա 2020թ. այդ թոշակառուների թիվը կհասնի արդեն 53-ի: Հաշվի առնելով բաշխողական ֆինանսավորվող կենսաթոշակային ապահովագրության համակարգը՝ ֆինանսավորման խնդիրը ակնհայտ է դառնում: Աշխատողների ներկայիս ներդրումների միջոցով պետք է ֆինանսավորվի աճող թվաքանակով կենսաթոշակառուների ծերության ապահովումը: Հանրային հաճախակի քննարկումները աշխատողների ավելի բարձր ներդրումների, ավելի ցածր կենսաթոշակների կամ ավելի մեծ պարտքերի շուրջ են:

Որքա՞ն մեծ է մարտահրավերը

Այսպիսով, որքա՞ն մեծ են այս փոփոխությունների հետևանքով առաջացած կոնկրետ մարտահրավերները: Ծերացման գործակցի աճը, տոկոսային հարաբերակցությամբ ներկայացնելու պարագայում, 2005-2020 թթ. համար կկազմի 20 %, այսինքն՝ տարեկան 1,4 %: 1993-ից 2008 թվականն ընկած ժամանակահատվածում միջին տնտեսական աճը Գերմանիայում կազմել է 1,5 %:

Ամփոփում. բարեփոխման անհրաժեշտությանը՝ այո, ողբերգականացումը չափազանցված է:

Հաջորդ տասնհինգ տարիների ընթացքում, նմանտիպ տնտեսական աճի ցուցանիշ ունենալու դեպքում, այս շահույթը կենսաթոշակային համակարգում ներդնելով, հնարավոր կլինի խուսափել կենսաթոշակների իջեցումից: Եթե նույնիսկ այդպիսի այլընտրանքը գրեթե անհավանական է, այս թվերը, այնուամենայնիվ, հստակեցնում են մարտահրավերի ծավալը: Բարեփոխման անհրաժեշտությունը, անկասկած, առկա է, սակայն խոսել բաշխողական կենսաթոշակային համակարգի անխուսափելի ճգնաժամի մասին, առնվազն չափազանցված է:

Մարտահրավերները առողջապահական և խնամքի համակարգում

Հասարակության ծերացումը ազդում է պետական կենսաթոշակային համակարգի վրա: Ավելի երկար կենսաթոշակային տարիքն առաջ է բերում առողջապահական համակարգի ծախսերի ավելացում: Այստեղ նույնպես առաջանում է ֆինանսավորման հարց, քանի որ առողջապահական համակարգի միջոցները նույնպես մասամբ ձևավորվում են աշխատողների ներդրումներից: Հասարակության ծերացման հետևանքով կանխատեսելի է նաև ապագայում ծերունական խնամքի ապահովման ծավալի աճ:

Կանխատեսումները ցույց են տալիս, որ ժողովրդագրական զարգացումները Գերմանիայում իրենց գազաթնակետին կհասնեն 2040-ին: Այդ ժամանակ աշխատողների և թոշակառուների միջև հարաբերակցության ցուցանիշը ամենամասշտաբային կլինի: Այսպիսով, հաջորդ տասնամյակներում նկարագրված զարգացումների հետևանքով, ֆինանսավորման խոչընդոտների կբախվեն հատկապես կենսաթոշակային և առողջապահական ապահովագրական համակարգերը:

Եթե միաժամանակ ազգային եկամուտների մի մասը ներդրվի սոցիալական համակարգում, և բնակչության ավելի մեծ մասը անհատական ներդրումներ կատարի, ապա այս մարտահրավերները կդառնան միանգամայն հաղթահարելի: 7.3. (Կենսաթոշակ) և 7.4. (Առողջապահություն) գլուխներում մանրամասնորեն քննարկվում են ծերացող հասարակության մարտահրավերների հնարավոր ռիսկերը:

5.4. Սոցիալական շրջադարձ

Տնտեսական կառուցվածքներում և ծերացման կառուցվածքային փոփոխությունների կողքին վերջին տասնամյակներում տեղի է ունենում նաև արժեքային կողմնորոշումների փոփոխություն: Կյանքի ձևերը և պլանները այսօր այլ են, քան հիսուն կամ հարյուր տարի առաջ: Կյանքն այսօր ավելի քիչ է պայմանավորված հասարակության ազդեցությամբ: Անհատի ազատության և ինքնորոշվածության չափը մեծացել է: Փոփոխությունները բազմաբնույթ են և հիմնականում ընկալվում են որպես ազատության ձեռքբերում:

Որպես կենսակերպի փոփոխության օրինակ կարելի է դիտարկել ընտանիքների անդամների քանակը: 20-րդ դարի սկզբում հինգ և ավելի անդամներից բաղկացած ընտանիքները համարվում էին նորմալ: Մեկ անդամից բաղկացած ընտանիքները չափազանց հազվադեպ հանդիպող բացառություններ էին: 21-րդ դարի սկզբում իրավիճակը ճիշտ հակառակ պատկերն ունի: Այժմ ընտանիքների մոտ 40 %-ը բաղկացած է միայն 1 անդամից, իսկ 4 անդամից բաղկացած ընտանիքները չեն գերազանցում նույնիսկ բոլոր ընտանիքների 4 %-ը (տե՛ս գծապատկեր 7):

Այս թվերի հետևում ոչ մի դեպքում զետեղված չէ «սեփական չորս պատերի» մեջ բնակվելու աճի նախապատվությունը (այս հարցում իրավիճակը նույնիսկ հակառակ պատկերն է ցույց տալիս. 1972 թ. 25 տարեկանների 20 %-ն էին դեռ բնակ-

*Չարգացման
գազաթնակետը
2040-ին*

*Լուծում. աճող
ազգային եկամուտի
ներդրում սոցիալա-
կան համակարգում:
Մանրամասները՝ 7.3.
և 7.4 գլուխներում:*

*Կյանքի այլ կառուց-
վածքներ՝ ավելի շատ
ազատություն և
ինքնորոշվածություն*

*Լրացուցիչ ընթեր-
ցանության համար՝
Ուլրիխ Բեք և
Էլիզաբեթ Բեք-
Գերնզհայմ (1994),
«Ռիսկային ազատու-
թյուններ, ժամանա-
կակից հասարակու-
թյունների
անհատականացում»,
Ֆրանկֆուրտ-Մայն:*

Լրացուցիչ ընթերցանության համար՝

Թիոմաս Մեյեր

[Զիեգեն] (1992թ.),

«Մասնավորի արդիականացումը.

ընտանիքների

կացութաձևի


տարբերական և

անհատականացման

գործընթացները»,

Օպլադեն:

վում ծնողների հետ, 2003թ. այդ թիվը կազմում էր 30 %, տե՛ս Մեյեր [Զիեգեն], 2006): Պատճառները պայմանավորված են մի կողմից՝ ծնելիության մակարդակի նահանջով, իսկ մյուս կողմից՝ ավանդական ինստիտուտների, ինչպես օրինակ՝ ամուսնության ինստիտուտի քայքայմամբ:



Աղբյուր՝ Դաշնային վիճակագրական ծառայություն (2012b)

Գծապատկեր 7. Ընտանիքի անդամների թիվը Գերմանիայում 1900-2010թթ.

Օրինակ՝ 1900 թ. գերմանացիների 45 %-ը ապրում էր 5 և ավելի անձից բաղկացած ընտանիքներում, մոտ 17 %-ը՝ 4 անձից բաղկացած ընտանիքներում, և 17 %-ը՝ 3 անձից, մոտ 15 %-ը՝ 2 անձից և 7 %-ը՝ 1 անձից բաղկացած ընտանիքներում: Այսօր բնակչության 40 %-ը ապրում է միայնակ:

Ավելի քիչ ամուսնություններ

1960 թ. ի վեր տեսականորեն անկում է ապրում ամուսնությունների թիվը: Մշտապես ավելի շատ զույգեր, այդ թվում նաև՝ երեխաներով, ապրում են այսօր առանց ամուսնության, կամ, ինչպես նախկինում էին անվանում, «վայրի ամուսնության» (քաղաքացիական ամուսնություն) պայմաններում: Ի լրումն այս ամենի, թեև ավելի քիչ ամուսնություններ էին գրանցվում, միևնույն ժամանակ տեսական աճ էին արձանագրում ամուսնալուծությունները:

Խնդիր. կենտրոնացում արական սեռի վաստակողների վրա

Գերմանական սոցիալական պետությունը, որը շատ ոլորտներում կենտրոնացած է ավանդական ընտանիքի մոդելի վրա, որտեղ հիմնական վաստակողները տղամարդիկ են, պատրաստ չէ դիմակայել նկարագրված փոփոխություններին: Սա վերաբերում է նաև կենսաթոշակային ապահովագրական ոլորտին: Կենսաթոշակի չափը սերտորեն կապված է ներդրումներից և համակարգը բարյացկամ չէ ընդհատումներով աշխատանքային կենսագրություն ունեցող միայնակ կանանց

աճող թվի հանդեպ: Աղքատության են դատապարտված հատկապես միայնակ մայրերը, որոնց թիվը զգալիորեն աճում է:

1960-2010 թթ. ամուսնություններ և ամուսնալուծություններ

Տարեթիվ	Ամուսնությունները 1.000 բնակչի հաշվարկով	Ամուսնալուծությունները 1.000 բնակչի հաշվարկով
1960	9,4	1,0
1970	7,4	1,3
1980	6,3	1,8
1990	6,5	1,9
1995	5,3	2,1
2000	5,1	2,4
2005	4,7	2,4
2010	4,7	2,3

Աղբյուր՝ Դաշնային վիճակագրական ծառայություն (2012c)

1996թ. երեխաներ խնամող միայնակ ընտանիքները կազմում էին 14 %, 2009-ին՝ արդեն 19 %: Միայն յուրաքանչյուր տասներորդ ընտանիքի դեպքում են հանդիպում միանակ հայրեր, 90 %-ի դեպքում գործ ունենք միայնակ մայրերի հետ: 1996-2009թթ. միայնակ հայրերի թվաքանակը նույնիսկ նվազել է՝ 13 %-ից հասնելով 10 %-ի: Միայնակ ծնողների 31 % -ի համար ապրուստը հոգալու հիմնական աղբյուրն էր Harz IV-ը (գործազրկության նպաստ – *ծանոթ.՝ թարգմանչի*) կամ սոցիալական օգնությունը (Դաշնային վիճակագրական ծառայություն, 2010a):

Աղքատության վտանգվածության գործակիցը արտացոլում է այն անձանց ցուցանիշը, որոնք ստիպված են գոյատևել ավելի սակավ միջոցներով, քան բնակչության միջին եկամուտների 60 %-ն է: Այս դեպքում միջին եկամուտը ոչ թե բոլոր եկամուտների միջինն է, այլ միջինի ցածրագույն շեմը: Դա այն հաշվարկային շեմն է, որով տարբերակվում են բնակչության եկամուտները՝ կամ այդ շեմից բարձր կամ դրանից ցածր:

Միայնակ ծնողների աղքատության մատնվելու վտանգը ավելի մեծ է: Թեև երեխաների գոյությունը Գերմանիայում ընդհանուր առմամբ մեծացնում է աղքատության ռիսկը, այնուամենայնիվ, միայնակ ծնողների դեպքում այն ավելի ակնհայտ է դառնում (տե՛ս գծապատկեր 8):

Աշխատանքը և երեխաների դաստիարակությունը ավելի լավ համատեղելը իրավիճակը բարելավելու համար կարևոր մեկնարկ է: Նաև այս հարցին է նվիրված 7.5. գլուխը (Կրթական քաղաքականություն):

*Աղքատության ռիսկը
հատկապես միայնակ
ծնողների համար*


*Աշխատանքի և
ընտանիքի համատե-
ղելիությունը: Մանրա-
մասները՝ 7.5. գլխում:*

*Նաև տարեցներն են
հաճախ աղքատ,
հատկապես՝ կանայք:*

Սոցիալական շրջադարձը ազդում է նաև տարեցների եկամուտների վրա: Այստեղ նույնպես կան միայնակ անձինք, և, ընդհանուր բնակչության համեմատությամբ, աղքատությունը նրանց ավելի շատ է սպառնում: 2002 թ. 65-75 տարեկան միայնակ տարեցները տնօրինում էին 60 % միջին եկամուտների միայն 26,8 %-ը: Միայնակ ապրող կանանց ցուցանիշը կազմում է 29,3 % (Գերմանական միջազգային շաբաթագրությունը DIW 2004): Միայնակ ապրող տարեց կանանց եկամուտների իրավիճակը շատ ավելի վատ պատկեր ունի:

*Աղքատ ծերու-
թյան ռիսկը*

Եթե տարեցները ապրում են երկու անձից բաղկացած տնտեսություններում, ապա նրանց եկամուտը համապատասխանում է բնակչության եկամուտի միջին արժեքին: Ծերության աղքատության խնդրին կարող է հակազդել հարկերի միջոցով ֆինանսավորվող նվազագույն կենսաթոշակի չափի բարձրացումը: Մանրամասներ կներկայացվեն 7.3. գլխում (Կենսաթոշակ):



Աղբյուր՝ Ընտանիքների զեկույց 2011

Գծապատկեր 8. 2010 թ. դրությամբ աղքատության վտանգի ցուցանիշը ըստ ընտանիքի ձևի և միջև 18 տարեկան երեխաների բանակի

Օրինակ՝ եթե մեկ երեխան ընտանիքում ապրում է երկու մեծահասակների հետ աղքատության վտանգի ցուցանիշը կազմում է 10,5 %: Միայն մեկ մեծահասակի խնամքի ներքո գտնվող մեկ և ավելի երեխաների պարագայում վերջիններիս աղքատության վտանգի ցուցանիշը հասնում է 62 %-ի: Դա նշանակում է, որ 100 երեխաներից 62-ի խնամքը ապահովվում է ավելի քիչ միջոցներով, քան միջին եկամուտների 60 %-ն է:

Ի՞նչ է դա նշանակում սոցիալ-դեմոկրատիայի համար:

- Տնտեսության և աշխատանքի համաշխարհայնացումը և կառուցվածքային շրջադարձը, ժողովրդագրական զարգացումը և սոցիալական փոփոխությունը գերմանական սոցիալական պետության համար մարտահրավերներ են, որոնք, սակայն, անլուծելի չեն:
- Խնդիրներն իրականում առաջանում են գերմանական սոցիալական պետության առանձնահատկությունների հետևանքով: Այն դեռ շարունակում է առաջնորդվել արական սեռի միայնակ վաստակողով պահպանողական ընտանիքի պատկերով, թե՛ նպաստների ֆինանսավորումը, և թե՛ փոխհատուցումը հիմնականում կապված են աշխատանքային կարգավիճակի հետ:
- Բազմաբնույթ մարտահրավերները պահանջում են տարբերակված պատասխաններ յուրաքանչյուրի համար, դրանք կնկարագրվեն հաջորդ գլուխներում: Պատասխանների ուղղությունները ընդհանուր հայտարարի բերելով՝ ստանում ենք սոցիալ-դեմոկրատական հաջողված սոցիալական պետություն, որը սերտորեն կապված է քաղաքացու և ոչ թե աշխատանքային կարգավիճակի հետ, և ֆինանսավորումը կատարվում է ավելի շուտ հարկերի, քան անհատական ներդրումների միջոցով:

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Թորիաս Գոմբերթ

Այս գլխում՝ Բուկետթագում ներկայացված հինգ կուսակցությունների ծրագրերը.

- կհամեմատվեն՝ ելնելով նրանց սոցիալական քաղաքական սկզբունքներից,
- կդասակարգվեն ըստ սոցիալական պետության երեք մոդելների,
- կքննվեն արդարության վերաբերյալ նրանց հիմնարար պատկերացումները:

*Կուսակցությունների
ծրագրերը. ապագայի
խոստումներ*

Ծրագրերը պարունակում են ապագայի խոստումներ: Նրանք խոստանում են որոշակի ապագա, որի համար համապատասխան կուսակցությունը պայքարում է և հասնում իր լեգիտիմությանը: Այդ հեռանկարը կարող է իրականություն դառնալ միայն այն դեպքում, եթե կուսակցությունը կարողանում է անցյալի ու ներկայի վերլուծությունից ուրվագծել ցանկալի ապագան: Համեմայն դեպս ծրագրերը կարող են կուսակցության բռնած ուղու կողմնացույցը լինել:

*Համեմատության
ինչպիսի՞ չափանիշ-
ներ կիրառել.*

Սոցիալական քաղաքականության հիմնական առանձնահատկությունն այն է, որ նրան հատուկ են բազում նախապայմաններ: Մինչ պահպանողական ու ազատական կուսակցություններն այն նկարագրում են որպես նեղ սահմաններ ունեցող քաղաքական գործելադաշտ, որտեղ կարիքի մեջ հայտնվածները կանոնավոր կերպով և առանց պարտավորությունների պաշտպանվում են, ապա կենտրոնից ձախ գտնվող կուսակցությունների համար սոցիալական քաղաքականությունը քաղաքական ծավալուն գործելակերպ է, որը ցանկանում է հասարակական ռեսուրսների վերաբաշխման միջոցով հասնել (հնարավորությունների) էական հավասարության: Կուսակցությունների սոցիալական քաղաքական մոտեցումների մեկնաբանությունը, *Սոցիալական ժողովրդավարության տեսության* (տե՛ս Մայեր [Դորտմունդ], 2005 և Քրեստոմատիա 1) տեսանկյունից, պետք է ամենից առաջ սահմանի հասկացությունների ամբողջությունն ու նրանց չափանիշները: Այդ իսկ պատճառով, այստեղ առաջին հերթին պետք է նշվի գնահատման չափանիշը, որպեսզի այնուհետև վերստուգվի, թե սոցիալական պետության ո՞ր պատկերացման են հարում համապատասխան կուսակցությունները և ինչպե՞ս են ցանկանում շարունակել զարգացնել իրենց սոցիալական պատկանելությունը:

Այս դեպքում Էսպինգ-Անդերսենի նկարագրած կապիտալիզմի տարատեսակները՝ սոցիալական պետության համապատասխան դրսևորմամբ, իրենց բնորոշող արդարության հասկացություններով կիրառվում են որպես չափանիշ:

- Եվրոպական մայրցամաքային, պահպանողական տարատեսակ,
- անգլոսաքսոնական, ազատական տարատեսակ,
- սկանդինավյան, սոցիալ-դեմոկրատական տարատեսակ:

Կապիտալիզմի տարատեսակների և դրանց հիմքում ընկած արդարության պատկերացումների վերաբերյալ ավելի մանրամասն բացատրություն կարելի է գտնել այս գրքի 4-րդ գլխում:

Կուսակցությունների ծրագրերի հետևյալ դիտարկման մեջ այս մոդելի հիման վրա պետք է ստուգվի, թե որքանո՞վ են կուսակցությունները ցանկանում շարունակել հետևել, փոփոխել կամ այլ կերպ զարգացնել մինչև այժմ Գերմանիայի անցած «Եվրոպական մայրցամաքային-պահպանողական սոցիալական պետության» ուղին և, դրանով հանդերձ, սոցիալական արդարության ո՞ր պատկերացումն են ցանկանում կիրառել:

6.1. Հիմնարար սկզբունքներ Գերմանիայի համար. Զրիստոնեա- դեմոկրատական միության ծրագիրը

2007թ. Զրիստոնեա-դեմոկրատական միությունը (ԶԴՄ) հիմնարար սկզբունքների Նոր ծրագիր որդեգրեց: Դրա հիմքում որպես հաջողության և ապագայի մոդել է դիտարկվում «սոցիալ-շուկայական տնտեսություն»-ը. «ԶԴՄ-ը սոցիալ-շուկայական տնտեսակարգի կուսակցություն է: [...] ԶԴՄ-ը մերժում է կոլեկտիվիզմի սոցիալիստական և այլ տարատեսակները: Դա վերաբերում է նաև անգուսպ կապիտալիզմին, որը շեշտը դնում է միայն շուկայի վրա և չի գտնում մեր ժամանակների սոցիալական հարցերի լուծումը: Սոցիալ-շուկայական տնտեսակարգը վերամիավորված Գերմանիայում և համաշխարհայնացման ժամանակաշրջանում շարունակում է լինել մեզ առաջնորդող ուղենիշ» (Էջ 46 և հետո)¹²:

¹² Տեքստում հանդիպող Էջերի համարները վերաբերում են համապատասխան կուսակցությունների ծրագրերին, քանի դեռ բացահայտ կերպով հղում չի արվում այլ գրականության և հեղինակի:

*Համեմատության
չափանիշ. սոցիալա-
կան պետության
տարատեսակները:
Մանրամասները՝ 4-րդ
գլխում:*

*Արդարության ո՞ր
ուղին և նրա
վերաբերյալ ո՞ր
պատկերացումը
նախընտրել:*

*«Սոցիալ-շուկայական
տնտեսությունը»
Զրիստոնեա-դեմոկ-
րատական միության
մեկնաբանությամբ*

*Սոցիալ-շուկայա-
կան տնտեսությունը
և ոչ թե սոցիալա-
կան պետությունն է
ԶԴՄ հիմնարար
հասկացությունը*

Սոցիալական պետության ըմբռնումը մշտապես զուգորդվում է «սոցիալ-շուկա-
յական տնտեսության» հետ: Սոցիալական պետությունը շուկան հավասարակշ-
ռող բարելավում է, որը շուկայական տնտեսությունը դարձնում է սոցիալ-շուկա-
յական տնտեսություն: «Սոցիալական պետությունը մեծ հաջողությունների է
հասել: Դա անհերքելի է: Սոցիալական ապահովության համակարգերը մեծա-
մասամբ ԶԴՄ-ն է ձևավորել: Նրանք համերաշխության սկզբունքով մարդկանց
երաշխավորում են ապահովություն՝ պաշտպանելով ռիսկերից: Նրանք բերել
են զգալի բարեկեցություն, սոցիալական խաղաղություն և բաժնետիրություն:
Սակայն ԶԴՄ-ն ապագայում կարող է լուծել մարդկանց խնդիրները, եթե շարու-
նակի զարգանալ ու փոփոխվել: Նպատակը խրախուսող սոցիալական պետու-
թյունն է, որն էլ անհատներին է՛լ ավելի կշահագրգռի և նրանց համար պայմաններ
կստեղծի իրենց հնարավորությունների շրջանակում սեփական նախաձեռնություն
և պատասխանատվություն ստանձնելու համար» (էջ 60): Այս տեսանկյունից ոչ
թե սոցիալական պետությունն է ԶԴՄ հիմնարար հասկացությունը, այլ՝ սոցիալ-
շուկայական տնտեսությունը:

*Սուբսիդիարության
(օժանդակության)
սկզբունք*

«Կոլեկտիվիզմի» հերքումը արտահայտվում է սուբսիդիարության սկզբունքի
միջոցով (տե՛ս քրիստոնեական հիմունքը՝ Ստեֆան/Լանգհորսթ, 2005, էջ 610 և
հետո): «Ազատությունը սեփական պատասխանատվությամբ կյանքի կերտման
հնարավորություն է ստեղծում և դրա կարիքն ունի: Այդ պատճառով, հասարա-
կական կյանքը պետք է կարգավորվի ըստ սուբսիդիարության սկզբունքի. այն,
ինչ քաղաքացին կարող է ավելի լավ կամ նույնքան լավ անել միայնակ, ընտա-
նիքում և այլ մարդկանց հետ կամավոր համագործակցությամբ, պետք է շարու-
նակի մնալ նրա պարտականությունը: Պետությունն ու համայնքները պետք է
ստանձնեն խնդիրների լուծման առաքելությունը միայն այն դեպքում, եթե դրանք
առանձին քաղաքացիների կամ համապատասխան փոքր համայնքների կողմից
չեն կարող իրականացվել: Սուբսիդիարության սկզբունքը գործում է նաև մեծ
ու փոքր համայնքների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների
և պետական կառույցների միջև: Սուբսիդիարությունը պահանջում է, որպեսզի
մեծ համայնքներն ու պետական ապարատը գործեն, եթե հասարակական-քա-
ղաքական պահանջները քանակապես գերազանցում են անհատների կամ փոքր
համայնքների աշխատուժը» (էջ 7):

Սուբսիդիարության սկզբունքը կիրառվում է սոցիալ-շուկայական տնտեսության
հասարակական պատկերացման մեջ. «Սոցիալ-շուկայական տնտեսությունը
մրցակցային տնտեսակարգ է: Սոցիալ-շուկայական տնտեսության քաղաքականու-
թյունը կարգավորող քաղաքականություն է: Սոցիալ-շուկայական տնտեսությունը
ձեռնարկություններին շնորհում է աշխատանքը խրախուսող ազատություններ և

բնակչության համար ստեղծում է ապրանքների և ծառայությունների լայն առաջարկ: Այն յուրաքանչյուրին հնարավորություն է տալիս շուկայում գործել սեփական պատասխանատվությամբ: Այն ենթադրում է գործունակ պետություն, որն ապահովում է մրցակցային նախապայմաններ:

Դրանց մեջ են մտնում արհեստագործական և պայմանագրային ազատությունը, շուկայում գերիշխող ձեռնարկությունները շուկայական խոչընդոտներից ապահովագրումը և շուկայի թափանցիկությունը ապահովելու միջոցով իշխանական չարաշահումներից նրա պաշտպանվածությունը: Սոցիալ-շուկայական տնտեսության մեջ սեփականության պաշտպանությունը համընդհանուրին օգուտ բերելու և այդպիսով, իր սոցիալական պարտավորությունը կատարելու նախապայման է» (Էջ 49):

Սոցիալ-շուկայական տնտեսությունը ուղղված է աշխատանքային արդարությանը, և սկզբից ևեթ հստակորեն նշվում են արդյունքում գոյացած տարբերությունները հանրային հարստության փոփոխվող հավասարության մեջ (տե՛ս օրինակ՝ Էջ 20, 48): Առանցքը կա և մնում է մարդը և ոչ թե պետությունը:

Աշխատանքային արդարությունը և սեփականության պատասխանատվությունը հանգեցնում են ԶԴՄ՝ սոցիալական ապահովագրության համակարգերը երկու ուղղությամբ ձևավորելու ցանկությանը. մի կողմից՝ դրանք պետք է անկախացվեն աշխատանքային գործունեությունից (Էջ 60 և հետո), մյուս կողմից՝ հիմնարար ապահովության կողքին պետք է ուժեղացվի անհատական պատասխանատվությունը (Էջ 60-62): Սա նպաստում է նրան, որ գործառնությունը՝ ըստ իրենց եկամուտի, կարողանան կատարել լրացուցիչ աշխատանքներ: Այս աշխատանքներում գործատուի մասնաբաժինը դուրս է մնում՝ աշխատավարձի հետ կապված լրացուցիչ ծախսերից տարանջատելու միջոցով:

Այսպես՝ ԶԴՄ-ը փորձում է հեշտացնել եվրոպական աշխարհամասային պահպանողական սոցիալական պետության ճանապարհը դեպի ազատական սոցիալական պետության մոդել:

Պետության դերը, շուկայական տնտեսության դերի հետ համեմատությամբ, հիմնական գծերով կողմնորոշվում է դեպի ազատական ըմբռնումը՝ միաժամանակ պահպանելով որոշ կարգավորող բաղադրիչներ և առաջնորդվելով քրիստոնեական արժեքներով:

Դրական վերաբերմունք աշխատանքային արդարության նկատմամբ

Բարեփոխումների նպատակը. ազատական սոցիալական պետություն քրիստոնեական ֆոնի վրա

ՔԴՄ փոփոխությունների առաջարկները.

- **աշխատանք/տնտեսություն**՝ աշխատավարձի հետ կապված լրացուցիչ ծախսերի թեթևացում (նաև գործատուների) սոցիալական ապահովագրության նվազագույն վարձավճարների և գործառույթների հավելյալ կամավոր ապահովագրության միջոցով,
- **առողջություն**՝ օրինակ՝ դրամական պարգևների համակարգերի ներմուծում,
- **կրթություն**՝ խիստ առաջնորդում աշխատանքային արդարությամբ,
- **հարկեր**՝ (աշխատավարձի) հարկային ծանրաբեռնվածության նվազեցում, համընդհանուր հարկային մուտքերի միջոցով սոցիալական ծառայությունների ֆինանսավորման բարելավում:

6.2. Ազատ դեմոկրատական կուսակցության (ԱԴԿ) Կարլզրուեի թեզերը

Յոխեն Դաիմ

Նոր ծրագիր 2012

2012թ. ԱԴԿ-ը հիմնարար սկզբունքների նոր ծրագիր որդեգրեց: Այն ընդունվեց ապրիլի 22-ին: Վերտառությունն է «Պատասխանատվություն ազատության համար: Ազատ քաղաքացիական հասարակության համար ԱԴԿ Կարլզրուեի ազատության թեզեր»:

ԱԴԿ հիմնարար սկզբունքների նոր ծրագիրը սկսում է Tag-Cloud-ով՝ ծրագրի կենտրոնական հասկացությունների՝ գրաֆիկի տեսքով պատկերմամբ: Պատկերումը պարունակում է բառաստուներկու հասկացություն: Այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «արդարություն», «համերաշխություն» կամ «սոցիալական պետություն», բացակայում են:

Առաջինը, ցանկալի «հարկային արդարության» կապակցությամբ, հիշատակվում է «սոցիալական պետություն» հասկացությունը, մասնավորապես նշվում է. «Քանի որ մենք մտածում ենք նաև նրանց մասին, ովքեր իրենց աշխատանքով ազատական սոցիալական պետության հիմքն են ստեղծում» (Էջ 8): Ըստ այս գրքում ներկայացված սոցիալական պետության մոդելների (ազատական, պահպանողական, ինչպես նաև սոցիալ-դեմոկրատական), ԱԴԿ-ը պատկանում է սոցիալական պետության ազատական մոդելին:

Tag-Cloud (հասկացությունների գրաֆիկ ամպի տեսքով-ծանոթ.՝ թարգմ.) կենտրոնական հասկացությունները բացակայում են:

Ընդհանուր թվով 101 թեզերից 49-ում ԱԴԿ-ը ավելի մանրամասն է նկարագրում սոցիալական պետության իր պատկերացումը: Հատվածի վերտառությունն է. «Խրախուսող սոցիալական պետություն. բաժնետիրության հնարավորությունն աջակցության փոխարեն»: «Խրախուսող սոցիալական պետությունը», ըստ ԱԴԿ-ի, «ակտիվացնող, աշխատանքային վերելքին ուղղված սոցիալական պետությունն է»:

ԱԴԿ-ն շարունակում է շարադրել. «Խրախուսող սոցիալական պետությունը կամուրջ է կառուցում դեպի աշխատանքային կարիերա և բանդում է գործազրկության ու աշխատանքային շուկայի միջև գոյություն ունեցող արգելքները: Ընդ որում, նա վստահում է անհատներին և հանդես չի գալիս խնամակալի դերում» (Էջ 57): Ազատականները սոցիալական պետության հասկացության այս պարզաբանումը անմիջականորեն կապում են ավելի ցածր հարկերի պահանջի և «յուրաքանչյուրի աշխատանքը պետք է գնահատվի» ասույթի հետ (Էջ 57):

ԶԴՄ-ի նման, ԱԴԿ-ի համար «շուկայական տնտեսություն»-ն ավելի հիմնարար հասկացություն է, քան «սոցիալական պետություն»-ը: ԱԴԿ-ը սոցիալ-շուկայական տնտեսությունը ազատական իրավապետության և ժողովրդավարության կողքին նկարագրում է որպես «ազատության երեք կարգավորումներից» մեկը: Այս համատեքստում սոցիալական պետությունը ազատականների կողմից չի նշվում (Էջ 6): Մինչև կուսակցությունը կետերից մեկում խոսում է մասնավոր սեփականության պաշտպանության՝ որպես «առաջին աստիճանի» (Էջ 66) հիմնարար իրավունքի մասին, սոցիալական հիմնարար իրավունքները՝ որպես հասկացություն, ծրագրում ի հայտ չեն գալիս:

Այնուամենայնիվ, սոցիալական պետությունը ԱԴԿ նոր ծրագրում որոշակի տեղ է զբաղեցնում, և այնտեղ կարելի է հանդիպել այնպիսի ձևակերպումների, ինչպիսիք են օրինակ՝ «Մեր նպատակն է բոլոր քաղաքացիների իրական մասնակցությունը հասարակության կյանքին՝ անկախ անհատական պատկերացումներից» (Էջ 23) կամ՝ «հասարակական ազատությունը ենթադրում է նաև նյութական ազատություն» (Էջ 26):

Ընդհանուր առմամբ, Կարլգրուեի թեզերում սոցիալական պետությունն իր զարգացման մեջ նկարագրվում է ավելի շուտ որպես (սոցիալական) շուկայական տնտեսության ապահովման գործիք, քան որպես ինքնուրույն հաստատություն: Այսպես՝ կետերից մեկում էլ գոյության նվազագույնի ապահովումը անվանվում է «հասարակական և քաղաքակրթական ձեռքբերում»: Այս պարբերությունն ավարտվում է՝ հղում կատարելով վերջինիս տնտեսական օգուտին (Էջ 56): Մի այլ կետում Կարլգ-

րուելի թեզերում հնչում է. «Ազատականները ցանկանում են ապահովել հնարավորություններ՝ անկախ սոցիալական ծագումից»: Դրա հիմնավորումը հանդիպում է հաջորդ նախադասության մեջ. «Աշխատանքային վերելքի խոստման ցանկացած թարմացում օրինականացվում է շուկայատնտեսական կանոնակարգով» (էջ 57):

*Կենտրոնական
պահանջ՝ սոցիալա-
կան նպաստ*

ԱԴԿ-ը հանդես է գալիս հիմնարար մի ապահովության մեխանիզմի օգտին, որն անվանում է սոցիալական նպաստ և, որը պետք է ձևավորվի որպես եկամուտի բացասական հարկ (էջ 56): Այն հարցի վերաբերյալ, թե որքա՞ն պիտի կազմի այս հիմնարար ապահովությունը (հարց, որը էականորեն վճռորոշ է դրա հետ կապված բաժնետիրական հնարավորությունների համար), չի կարելի գտնել ոչ մի տվյալ:¹³ Բացի դրանից, 2008թ. ֆինանսական ճգնաժամից հետո էլ ԱԴԿ-Ը սոցիալական ապահովագրության տարբեր ոլորտներում (ծերություն, խնամք) ապացույցներ է ներկայացնում ավելի խիստ պաշտպանված համակարգերի համար (տե՛ս էջ 58-60): Կուսակցությունը գրում է. «Յուրաքանչյուր սերունդ ապագայում պետք կատարի հիվանդության և ծերության խնամքի ավելի խիստ պաշտպանված մասնավոր հոգաձուրություն» (էջ 58): Դրանով պայմանավորված ռիսկերը (այդ թվում ինֆլացիան, ֆինանսական շուկաների ռիսկերը) պետք է սահմանափակվեն «հոգաձուրության ձևերի համաձայնեցված համակցությամբ» (էջ 58-59):

*Բարեփոխման
նպատակ՝ ազատա-
կանացված սոցիալա-
կան պետություն*

ԱԴԿ-ի՝ սոցիալական պետության ըմբռնումը իրականում կարելի է դասել սոցիալական պետության ազատական մոդելին, որի համար հատկանշական է սկզբնական աստիճանում սոցիալական ռիսկերից ապահովումը: Արդյո՞ք ԱԴԿ-ի տեսանկյունից գերմանական ներկայիս սոցիալական ապահովագրության մակարդակը համապատասխան կերպով պետք է նվազեցվի, թե՞ այն պետք է կրճատվի: Ծրագիրը հստակ չի պատասխանում, և պետք է միայն կռահել պատասխանը: Այնպիսի ձևակերպումներ, ինչպիսիք են «ուշացած որոշումներ» (էջ 58), «ոչ երկար աշխատել» (էջ 59) կամ «սոցիալական համակարգերի գերծանրաբեռնվածություն» (էջ 18), առնվազն մատնանշում են այդ ուղղվածությունը:

ԱԴԿ-ի փոփոխությունների առաջարկները.

- **աշխատանք/տնտեսություն**՝ քաղաքացիական (սոցիալական) նպաստի ներմուծում,
- **առողջություն**՝ առաջարկողների միջև ավելի ուժեղ մրցակցություն, խնամքի ոլորտում ապագա վճարումների համար ավելի շատ միջոցների տրամադրում,
- **կրթություն**՝ դաշնային համակարգի նոր կարգավորման վերաբերյալ կրթական պետական պայմանագիր, դպրոցական բարեփոխումների մերժում, ավե

13 Նվազագույն կենսական ապահովման և նվազագույն եկամուտի մասին տե՛ս նաև էջ 105 և այնտեղ առաջարկվող գրականությունը:

լի ընդգծված անհատական աջակցության նպատակի ձևակերպում,

- **հարկեր՝** նպատակը՝ պարզ, ավելի ցածր, արդար հարկեր, ռեգրեսիվ եկամտահարկ, դաշնային ու հոդային հարկերի տարանջատում:

6.3. Համբուրգյան ծրագիր՝ Գերմանիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության (ՍԴԿ) հիմնարար սկզնունքների ծրագիրը

ՍԴԿ-ը 2007թ. ընդունեց Համբուրգյան ծրագիրը: Այն նախկին ծրագրերի շարունակությունն է: Համբուրգյան ծրագրում սոցիալական պետությունը դիտարկվում է որպես մարդկանց մասնակցության հիմնարար նախապայման. «Սոցիալ-դեմոկրատական կուսակցության նպատակը բոլոր մարդկանց մասնակցությունն է տնտեսական, մշակութային, սոցիալական և քաղաքական զարգացումներին: Այս ամենի համար կարևոր են լավ կրթությունը, բավարար կենսամակարդակ երաշխավորող աշխատանքը և առողջությունը, ինչպես նաև՝ բարեկեցության արդար բաշխումը: Սոցիալական պետության որակը չի որոշվում միայն նյութական աջակցության չափով, այլ նաև՝ իրական կենսական հնարավորությունների տրամադրմամբ, որոնք սկզբից և եթե և ընդմիջտ բոլորին պետք է նորովի հասանելի լինեն» (էջ 58):

Միաժամանակ «Ժողովրդավարական սոցիալիզմը մեզ համար մնում է [...] ազատ, արդար և համերաշխ հասարակության տեսլական, որի իրականացումը մեզ համար հարատև առաջադրանք է: Մեր գործելակերպի սկզբունքը սոցիալական ժողովրդավարությունն է» (էջ 16 և հետո):

Սոցիալական պետությունը ժողովրդավարական հասարակության միջուկն է: Այն բոլորի համար ապահովում է հնարավոր մասնակցություն: Պետական այս պատասխանատվությունը ընկալելու համար պետք է հստակեցվի պետության, շուկայի և քաղաքացիական հասարակության միջև առաջադրանքների հիմնարար բաշխումը: Այդ բաշխումը ՍԴԿ-ը հստակորեն առանձնացնում է, ի տարբերություն ԶԴՄ-ի և ԱԴԿ-ի:

Երկու եական հայեցակետերով քննվում են կարգավորող պետության անհրաժեշտությունն ու սահմանները. մի կողմից՝ ուսումնասիրվում են չկարգավորվող կամ ոչ բավարար չափով կարգավորվող շուկայի թերությունները, մյուս կողմից՝ ձգտում կա հասնելու ժողովրդավարական սոցիալիզմի նպատակային պատկեր-

*Սոցիալական
պետությունը՝ որպես
մասնակցության
նախապայման*

*Սոցիալական
պետությունը՝ որպես
ժողովրդավարական
հասարակության
միջուկ*

*Շուկայի թերություն-
ներ և կարգավորող
պետություն*

րացման, որի երաշխավորը կարող է լինել միայն ակտիվ և ժողովրդավարական հասարակությունը կարգավորող պետությունը: Ամփոփիչ ակնարկում թերությունները, ինչպիսին է օրինակ՝ նպատակների պատկերացումը, ուրվագծվում են որպես բաց ու հասարակական-քաղաքական պատվեր, որը ՄԴԿ-ը ստանձնել է իր սոցիալական-քաղաքական ծրագրով:

*Հիմնարար իրավունք-
ների իրականաց-
մանն ուղղված
սոցիալական
պետություն*

Սոցիալական պետությունը գործիք է, որի միջոցով բոլոր մարդկանց համար իրական կերպով պետք է գործեն քաղաքացիական, քաղաքական և տնտեսական լայնածավալ իրավունքները: Այդ պատճառով, այս գործիքը միշտ պետք է ուղղել (և այս միտքը հետևողականորեն շարունակվում է Համբուրգյան ծրագրում) մի կողմից՝ աշխատանքի և տնտեսության հետագա զարգացմանը, մյուս կողմից՝ հիմնարար արժեքների իրականացման պայմաններին:

*Ելակետ՝ ներկայի
հասարակական
մարտահրավերները*

Ժամանակակից հասարակության մարտահրավերները ընտրվում են որպես ելակետ. «Մեր աշխատանքային հասարակությունը արմատական փոփոխության է ենթարկվում: Նորարարությունների արագությունը մեծանում է, զբաղվածության ձևերի բազմազանությունը՝ աճում: Որակավորումն ու գիտելիքը ավելի են կարևորվում: Ստեղծվում են նոր, ստեղծագործական մասնագիտություններ: Զժամկետավորված և կանոնավորված աշխատանքային ժամերով ավանդական, նորմալ աշխատանքային հարաբերությունները կորցնում են իրենց նշանակությունը: Շատ մարդկանց աշխատանքային կյանքը բնորոշվում է կախյալ զբաղվածության, աշխատանքային գործունեություն չծավալելու, ընտանեկան աշխատանքի փութերի և ինքնուրունության միջև անցումներով» (Էջ 9):

«Այս փոփոխությունները հաճախ որպես հարկադրանք դիտարկվելով՝ կարող են մարդուն գերծանրաբեռնել և վախեցնել: Շատերը սարսափում են կախվածություն ձեռք բերել, արհամարվել կամ էլ բոլորովին մոռացվել նաև քաղաքականության կողմից: Նա, ով ցածր որակավորում ունի կամ էլ այլևս երիտասարդ չէ, հաճախ դուրս է մղվում աշխատանքային շուկայից: Կանայք, ունենալով նույնիսկ լավագույն կրթություն, դեռ վաղուց չունեն մասնագիտական վերելքի և գոյությունը երաշխավորող աշխատանքի նույն հնարավորությունները: Աշխատանք ունեցողներին հաճախ թվում է, որ աճող ճնշման, խիստ մրցակցության և պահանջների պատճառով իրենց կենսամակարդակը հաճախ սպառնալիքի տակ է» (Էջ 9):

*Նախապես հոգացող
սոցիալական
պետություն*

Ըստ Համբուրգյան ծրագրի, փոփոխվող, ճկուն տնտեսության մեջ հարկադրանքները և հնարավորություններն առանձին մարդկանց համար կան ու կլինեն ավելի մեծ: Եթե այս պայմաններում արդար հասարակությունում ազատությունը,

հավասարությունն ու համերաշխությունը բոլորի համար իրականանալի են, ապա սոցիալական պետության միջոցների ամբողջությունը պետք է փոփոխվի: Ծրագրում այս հարմարվողականությունը ներկայացվում է «նախապես հոգացող սոցիալական պետություն» հասկացության ներքո.

«Սոցիալական պետությունը կազմակերպված համերաշխություն է ուժեղների և թույլերի, երիտասարդների և ծերերի, առողջների և հիվանդների, գործառույթների և գործազուրկների, ոչ հաշմանդամների և հաշմանդամների միջև: Ապագայում սոցիալական պետության հիմքը կկազմեն նաև պետականորեն երաշխավորված սոցիալական ապահովությունն ու մասնակցությունը, սոցիալական աշխատանքի վերաբերյալ դատարանով իրականացվող իրավունքը, ինչպես նաև գործառույթի իրավունքները, [...] որտեղ գործունեության ձևերը ավելի ճկուն և հաճախ նաև ավելի ծանր են դառնում, ավելի է կարևորվում սոցիալական պետության գլխավոր գործառույթը, որն է՝ անցումային շրջաններում անվտանգության ապահովումը: [...] Նախապես հոգացող սոցիալական քաղաքականությունը աջակցում է գոյությունը երաշխավորող աշխատանքային գործունեությունը, օժանդակում դաստիարակության հարցում, շեշտը դնում առողջության մասին նախապես հոգալու վրա: Այն ձևավորում է ժողովրդագրական փոփոխությունը և աջակցում կանանց և ծերերի զբաղվածության մակարդակի բարձրացմանը: Վերջին հանգամանքը նպաստում է սոցիալական մեկուսացման վերացմանը և դյուրացնում մասնագիտական ներգրավվածությունը: Այն ոչ ոքի չի զրկում սեփական կյանքի համար պատասխանատվությունից: Նախապես հոգացող սոցիալական պետությունը ընկալում է կրթությունը որպես սոցիալական քաղաքականության հիմնական տարր՝ փորձելով բոլորին ներգրավել հասարակության մեջ: Այդ պատճառով, նախապես հոգացող սոցիալական քաղաքականությունը միավորում է այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են՝ տնտեսական, ֆինանսական և աշխատաշուկայի, կրթական և առողջապահական, ընտանեկան իրավահավասարության քաղաքականության ոլորտները և ներգաղթյալների ինտեգրումը» (էջ 56):

Ի տարբերություն պահպանողական գերմանական սոցիալական պետության, «հետագայում և նախապես հոգացող սոցիալական պետությունը» չի ուղղորդվում կարգավիճակը պահպանելով, այլ արժանապատիվ ֆինանսական ապահովմամբ ցանականում է յուրաքանչյուրին երաշխավորել հնարավորություններ և մուտք դեպի հասարակություն: Այլ կերպ ասած՝ Զամբուրգյան ծրագիրը ցանկանում է սոցիալական պետությունը զարգացնել սկանդինավյան սոցիալ-ժողովրդավարական սոցիալական պետության մոդելի ուղղությամբ: Իհարկե, այս դեպքում խոսք կարող է լինել միայն նախընտրած ուղուց բխող վերակառուցման մասին,

ՄԴԿ-ի բարեփոխումների առաջարկները

որը համակարգված կերպով շարունակում է զարգացնել նախկին սոցիալ-պետական միջոցները: Սրա վերաբերյալ մի քանի կարծ կետեր են նշվում:

- Սոցիալական ապահովագրության միջոցով ՍԴԿ-ը նախկինի պես ձգտում է հասնել սոցիալական ապահովության ֆինանսավորման, որը հավասարաչափ ֆինանսավորվում է գործատուի և գործառույթի կողմից (էջ 58): Իհարկե, այն պետք է լրացվի ավելի ուժեղ հարկային ֆինանսավորմամբ: Սա հստակորեն տարբերում է ՍԴԿ-ը ԶԴՄ-ից և ԱԴԿ-ից: Պահանջվում է եկամուտի բոլոր տարատեսակների վրա հարկային այդպիսի ֆինանսավորման տարածում, այսինքն՝ կողմնորոշում ըստ «բաղաբացու» և ոչ թե ըստ «աշխատանքային կարգավիճակի» (էջ 58):
- Առողջության և խնամքի ոլորտի համար ՍԴԿ-ը պահանջում է քաղաքացիների համերաշխ ապահովագրություն (էջ 58), որը հաշվի է առնում եկամուտի բոլոր տեսակները (օրինակ՝ նաև պետծառայողների և ինքնազբաղվածների համար):
- Կենսամակարդակի համար ամենից առաջ մեծ կարևորություն է տրվում համայնքային ծառայություններին: Այստեղ պետք է ընդլայնվեն ներգրավման նախագծերը, մանկապարտեզների և դպրոցների հետ կապված առաջարկները, առողջապահական, ինչպես նաև սպորտային առաջարկները և քաղաքների շրջանների զարգացումը:
- Ընտանեկան քաղաքականության ոլորտում վեր են հանվում «ապրուստի և հոգածության» համար ծնողական երկու կողմերի իրավահավասար պատասխանատվությունը, կրթությունը՝ որպես ավելի մեծ անկախության (Էմանսիպացիայի), թափանցիկության և հնարավորությունների հավասարության կենտրոնական և զարգացող բաղադրիչ (էջ 60): Այս կապակցությամբ ամբողջ երկրի տարածքում պետք է ներմուծվեն երկարօրյա դպրոցներ և ներգրավվեն քաղաքացիական հասարակության հնարավորինս շատ գործուն հաստատություններ (երաժշտական և արվեստի դպրոցներ, սպորտային ակումբներ և այլն), որպեսզի բոլոր երեխաներն ու երիտասարդները կարողանան զարգացնել իրենց հետաքրքրությունները (անկախ ընտանեկան բյուջեից):
- Եվրոպական սոցիալական միության միջոցով ՍԴԿ-ը ցանկանում է ամրապնդել Եվրամիությունը ամուր սոցիալական չափորոշիչներով: Ընդ որում, դրանք պետք է երկրներին հնարավորություն տան գործել ըստ իրենց ընտրած ուղու և ըստ իրենց նախապայմանների:

Ընդհանուր առմամբ ՄԴԿ-ը ներկայացնում է հետագայում և նախապես հոգացող սոցիալական մի պետություն, որը ուղղորդվում է ամբողջ կյանքի ընթացքում գործող հնարավորությունների հավասարությամբ և սոցիալական հավասարակշռությամբ: Եվրոպական մայրցամաքային պահպանողական սոցիալական պետությունը պետք է շարունակի իր զարգացումը սկանդինավյան սոցիալ-ժողովրդավարական սոցիալական պետության մոդելի ուղղությամբ:

ՄԴԿ-ի փոփոխությունների առաջարկները.

- **աշխատանք/տնտեսություն՝** ճկուն պետական սոցիալական ապահովմամբ աշխատանքային ապահովագրության¹⁴ ներմուծում, բոլորի ներգրավում ապահովագրման համահավասար համակարգի մեջ,
- **առողջություն՝** քաղաքացիական ապահովագրության ներմուծում, համայնքային կենսաապահովման բարելավում,
- **կրթություն՝** երկար միասնական կրթական փուլեր, բարձր թափանցիկություն և այլն...,
- **հարկեր՝** սոցիալական ապահովագրության զուգորդում հարկային ավելի խիստ ֆինանսավորմամբ, ըստ գործունակության, եկամուտի բոլոր տարատեսակների ներգրավում:

6.4. «Ապագան կանաչ է». 90-ի դաշինք/Կանաչների հիմնադրար սկզբունքների ծրագիրը

90-ի դաշինք/Կանաչները իրենց կուսակցական ծրագիրը ներկայացրել են արդեն 2002թ.: Վերջինս վերը բերված ծրագրերից ամենաերկարն է: Հիմնական նպատակն է հասարակության զարգացումը սոցիալական, բնապահպանական, շուկայական տնտեսության և արևային էներգիայի դարաշրջանի ուղղությամբ: Բնական պաշարների անխնա օգտագործումը դիտարկվում է որպես ապագայի առանցքային հիմնախնդիր: Անհրաժեշտ վերակառուցումը ներկայացվում է որպես մի նախագիծ, որն ունի ոչ միայն բնապահպանական-քաղաքական, այլ նաև՝ հասարակական-քաղաքական ընդգրկուն հետևանքներ և նախապայմաններ:

Հասարակական-քաղաքական տեսանկյունից 90-ի դաշինք/Կանաչները ցանկանում են իրենց ազատական (բայց ոչ շուկայական-ազատական) պատկերացմամբ տարբերվել մյուս կուսակցություններից. «Այդ պատճառով, նախկին

Հիմնական նպատակ՝ սոցիալական և բնապահպանական շուկայական տնտեսություն արևային էներգիայի դարաշրջանում

Ազատական, բայց ոչ շուկայական-ազատական նպատակներ

¹⁴ Զննարկվում է նաև որպես «զբաղվածության ապահովագրություն», տե՛ս էջ 104:

սոցիալ-շուկայական տնտեսությունը, որը չափազանց շատ է ուղղված ձեռնարկությունների շահույթին, չի համապատասխանում իր հավակնություններին և պետք է շարունակ զարգացվի: Սոցիալական նպաստը չի կարող նվազեցվել՝ հասցվելով պետության գերատեսչական գործառույթին: Առանց հասարակական ուժերի ազատության, առանց քաղաքացիների ինքնորոշման, առանց սուբսիդիարության սոցիալական համերաշխությունը քարանում է բյուրոկրատիայի մեջ: Մենք կարևորում ենք պետության միջոցներով քաղաքակիրթ հասարակության աջակցությունը՝ միաժամանակ սահմանափակելով պետությունը: Դա տարբերում է մեզ պետական-սոցիալիստական, պահպանողական, ինչպես նաև շուկայական-ազատական քաղաքական մոդելներից» (Էջ 43): Այսպիսով, 90-ի դաշինք/Կանաչները պահանջում են «կարգավորման շրջանակ», որի պարագայում կերաշխավորվեն բնապահպանական, սոցիալական և մշակութային շահերը (Էջ 46):

Սա հանգեցնում է նաև ազատական, բայց ոչ հասարակության համար պատասխանատվություն կրող սոցիալական պետության ըմբռնմանը. «Սոցիալական քաղաքականություն և ինքնորոշում: Սոցիալական պետության մեր ընկալումը մարդուն դնում է քաղաքականության կենտրոնում: Արդար ու սոցիալական քաղաքացիական հասարակության մեջ պետությունը շրջանակային պայմաններ է ապահովում, որոնք բոլորին հնարավորություն են ընձեռում զարգացնել իրենց ունակություններն ու տաղանդները» (Էջ 62):

Ծավալուն «մասնակցության իրավունք»

90-ի դաշինք/Կանաչները լիովին ինքնուրույն են. մի կողմից՝ նրանք ապավինում են ազատական պատկերացումներին, քաղաքացիական հասարակությանը, հասարակական կազմակերպություններին և մյուս կողմից՝ պետական աջակցությանը, և այս տարբեր ավանդույթները ամփոփվում են «մասնակցության հավասարություն» կոչվող համապարփակ պատկերացման մեջ. «Սոցիալական արդարության և համերաշխության վերաբերյալ մեր պատկերացումները վեր են վերաբաշխման դասական քաղաքականությունից: Մեր քաղաքականության առաջնային նպատակն է խուսափել աղքատությունից և սոցիալական մեկուսացումից, և ծայրահեղ վատ վիճակում գտնվողների սոցիալական պայմանները բարելավել: Մենք կամենում ենք ստեղծել մասնակցության հավասարություն, որը բոլոր քաղաքացիների համար հասանելի է դարձնում կրթությունը, աշխատանքը և հնարավորություն է տալիս քաղաքական մասնակցություն ունենալ կարևորագույն հասարակական ոլորտներում» (Էջ 61):

«Մասնակցության հավասարություն» պատկերացման կիրառման համար 90-ի դաշինք/Կանաչները կուսակցության ծրագրում ներկայացնում են միջոցառումների և միջոցների մի փաթեթ: Այստեղ դրանք ներկայացվում են ոչ ամբողջությամբ, այլ մի քանի հիմնակետերով:

- Սոցիալական օգնությունը (որը ծրագրի ընդունման պահին դեռ գոյություն ուներ) պետք է փոխակերպվի՝ հոգուտ կարիքին ուղղված, ամբողջական գումարային հիմնարար ապահովությունների: Ընդ որում, հիմնարար ապահովությունը խրախուսող միջոցառումների առաջարկով պետք է հնարավոր դարձնի օգնության կարիք ունեցողներին տրամադրել բավարար նյութական աջակցություն (էջ 64, 66): Խրախուսող միջոցառումները պետք է կիրառվեն պետական և քաղաքացիական հասարակության գործուն հաստատությունների (միությունների, քաղաքների շրջանների նախագծերի և այլն) համագործակցությամբ (էջ 65):
- Ի տարբերություն ԶԴՄ-ի և ԱԴԿ-ի, 90-ի դաշինք/Կանաչները ներկայացնում են աշխատանքի ավելի ընդարձակ սահմանում. «Ապագայի բնապահպանական-սոցիալական շուկայական տնտեսությունը պետք է ճանաչի ու գնահատի աշխատանքի բոլոր ձևերը և նախապայմաններ ստեղծի սեռերի միջև իրավահավասար բաշխման համար: Տնային, դաստիարակման, համայնքային աշխատանքը և հարևանության օգնությունը սոցիալապես ձևավորված քաղաքացիական հասարակության հիմնաքարերն են: Առանց դրանց, տեղ չունեն նաև համերաշխությունն ու սոցիալական ցանցերը» (էջ 67): Աշխատանքի այս լայն հասկացությունը անհետևանք չի մնում սոցիալ-քաղաքական դիրքորոշման համար: Ավելին, այն պահանջում է, որ սոցիալական պետությունը ակտիվորեն կառուցի նոր հասարակական դաշտեր. «Հավելյալ պիտի ստեղծվեն հանրային ֆինանսավորմամբ, սոցիալապես և բնապահպանական տեսանկյունից իմաստալից, գոյությունը երաշխավորող աշխատատեղեր: Մենք շեշտը դնում ենք տեղական բնապահպանության առկա միտումները շարունակ զարգացնելու վրա: Դա կախված կլինի աշխատանքային գործունեություն իրականացնելու հնարավորությունների արդար ձևավորումից, կենսաաշխատանքային ժամերի խելամիտ մոդելների զարգացումից, ողջ կյանքի ընթացքում կրթությունը բոլորի համար հնարավոր դարձնելուց, կանանց խտրականությունն ու թերազնահատումը կանոնավոր կերպով վերացնելուց և ծերերին ու ներգաղթյալներին մեկուսացնելու փոխարեն ակտիվորեն ներգրավելուց» (էջ 68):

- ՍԴԿ-ի նման, Կանաչները կողմ են արտահայտվում առողջության, խնամքի և ծերության ոլորտներում քաղաքացիների անդամավճարներով ֆինանսավորվող ապահովագրությանը (էջ 80): Այս ապահովագրության մեջ անժամկետ պետք է ներառվեն եկամուտի բոլոր տեսակներն ու անձինք (էջ 80): Պետք է մտածել ապագա վճարումների համար միջոցների տրամադրման գործընթացի և ընկերակցությունների մոդելների համադրման մասին՝ առանց կանոնավոր բացատրություններ ներկայացնելու, թե ինչպես պիտի այն գործի:
- 90-ի դաշինք/Կանաչների կուսակցական ծրագիրը հատկանշական է նրանով, որ այն դիտարկում է ոչ միայն ֆինանսական համակարգը, այլ նաև հաշվի է առնում առաջարկի որակական ապահովությունը՝ շահառուների համար անարգել ազատություն (էջ 87) և թափանցիկ կրթական համակարգ ստեղծելով (էջ 72):

Ընդհանուր առմամբ, Կանաչները հստակորեն նկատելի կողմորոշում ունեն դեպի սկանդինավյան, սոցիալ-ժողովրդավարական սոցիալական պետության տարատեսակը, թեև, դրսևորում են նաև որոշակի միտումներ, որոնք կարելի է դասել ազատական սոցիալական պետության տարատեսակին:

Կանաչների փոփոխությունների առաջարկները.

- **աշխատանք/տնտեսություն**՝ կարիքին ուղղված, ամբողջական գումարային հիմնարար ապահովությունների ներմուծում, աշխատանքի հասկացության ընդլայնում և աշխատանքի այլ ձևերի ճանաչում,
- **առողջություն**՝ անդամավճարներով ֆինանսավորվող ապահովագրություն, ապագա վճարումների համար միջոցների տրամադրման գործընթացի հավելում,
- **կրթություն**՝ սեփական պատասխանատվության ուժեղացում, երկարօրյա դպրոց, հանրային պատասխանատվություն կրող վերապատրաստման ընդլայնում,
- **հարկեր**՝ ըստ գործունեության, եկամուտի բոլոր տեսակների ներառում:

6.5. «Զախ» կուսակցության ծրագիրը

Յոխեն Դահմ

Ձևավորվելով «Աշխատանք և սոցիալական արդարություն կուսակցություն» և «Ընտրության այլընտրանք», Դեմոկրատական սոցիալիզմի կուսակցություններին՝ 2011թ. «Զախ» կուսակցությունն առաջին անգամ որդեգրեց իսկական կուսակցական ծրագիր: Այն որոշվեց 2011թ. ապրիլի 23-ին Էրֆուրտում կայացած կուսակցական նիստին և հաստատվեց անդամների որոշմամբ:

«Զախ» կուսակցության ծրագիրը բաղկացած է հինգ գլուխներից: Սկիզբը կուսակցությունը նվիրում է իր ծագման մասին ներածականին և դրանով իսկ՝ իր ԳՍՄԿ-ական (Գերմանիայի սոցիալիստական միասնական կուսակցություն) անցյալին: Երկրորդ գլուխը նվիրված է «կապիտալիզմի ճգնաժամին», երրորդը՝ «21-րդ դարում ժողովրդավարական սոցիալիզմին», հինգերորդը՝ ռազմավարական հարցերին: Չորրորդ գլխում կուսակցությունը նկարագրում է «բարեփոխումների ձախակողմյան նախագծեր» հասարակական վերածնափորման քայլեր: Այստեղ տեղ է գտնում նաև «Ժողովրդավարական սոցիալական պետությունում սոցիալական անվտանգություն» վերտառությամբ հատվածը (էջ 42):

«Զախ» կուսակցությունը սոցիալական պետության իր տեսլականում ընդգծում է սոցիալական կապը ժողովրդավարականի հետ, մասնավորապես. «Ինքնորոշված ապրելու և ժողովրդավարության ձևավորմանը մասնակցելու իրավունքը ծավալուն կերպով ըմբռնել կարողանալու համար յուրաքանչյուր ոք կարիք ունի սոցիալական ապահովության» (էջ 42): Ստորև ներկայացվելիք տեքստը կուսակցության՝ սոցիալական պետության հանդեպ ունեցած պահանջի կարճ ամփոփումն է.

«Մենք ցանկանում ենք ունենալ սոցիալական մի պետություն, որը համերաշխորեն կերաշխավորի կենսական այնպիսի վտանգներից, ինչպիսիք են հիվանդությունները, դժբախտ պատահարները, խնամքի կարիքը և հաշմանդամությունը, ինչպես նաև աշխատանքի անկարողությունն ու գործազրկությունը, կապալանի աղբատությունից և ծերության ընթացքում կապահովի ինքնորոշված արժանապատիվ կյանք» (էջ 42):

Վերը նշվածին հասնելու համար «Զախ» կուսակցությունը ցանկանում է սոցիալական հիմնարար իրավունքներն ամրագրել օրենսդրության մեջ և կենսաապահովումը կազմակերպել հասարակական, շահույթ չհետապնդող կազմակերպությունների միջոցով (էջ 42): Նրանք հանդես են գալիս բաղաբացիների ապահովագրության և «կենսաթոշակի համահավասար ապահովագրության օգտին, որը բոլոր կանանց

2011թ., հիմնարար
սկզբունքների
առաջին ծրագիր

Պահանջ՝ սոցիալա-
կան հիմնարար
իրավունքների
ներմուծումը
օրենսդրության մեջ

ու տղամարդկանց ներառում է կենսաթոշակային հավասար ֆինանսավորվող, օրինական ապահովագրական համակարգի մեջ»:

Գլխավոր՝ գործազրկության խնդրի քննարկում

Կուսակցության գլխավոր թեմաներից մեկը գործազրկության խնդիրն է: Նրանց պահանջը հետևյալն է. «Գործազրկության պարագայում սոցիալական ծառայությունները պետք է մոտավորապես ապահովեն մինչև այդ ունեցած կենսամակարդակը» (Էջ 43 և հետո): «Hartz IV-ը պետք է վերացվի» (Էջ 44): Բայց այլընտրանքը մնում է անորոշ:

Այլընտրանքային սեփական տարբերակները պարզ չեն

Այսպիսով՝ «Ձախ» կուսակցությունը առաջին հերթին կարևորում է «նախկին եկամուտով առաջնորդվելիք գործազրկության գումարը, առնվազն կարիքները ծածկող և պատժամիջոցներից ազատ նվազագույն ապահովություն»: Շարունակելով՝ նրանք նշում են, որ «Ձախի թևերը» հարում են «առանց պայմանների հիմնարար եկամուտի հայեցակարգին»: Ծրագիրը ոչ մի որոշակիություն չի մտցնում: Նրանք միայն ավելացնում են. «Մենք ցանկանում ենք շարունակել այս քննարկումը» (Էջ 44):

Մի անորոշություն, որը կարելի է հանդիպել նաև «Ձախ» կուսակցության ծրագրի այլ կետերում: Ծրագիրը հագեցած է այնպիսի ձևակերպումներով, ինչպիսիք են «Մենք ցանկանում ենք», «Մենք պահանջում ենք» կամ այնպիսի կառույցներով, ինչպիսիք են՝ «պետք է», օրինակ ինչպես՝ «Բնակվելը բոլորի համար պետք է երկարաժեշտ կտրվածքով վճարելի լինի»: Այս շատ վերացական նպատակադրումները գրեթե դասակարգված չեն ըստ իրենց առաջնահերթությունների և թվարկվում են կողք-կողքի՝ միայն մասամբ կապված լինելով միմյանց հետ: Ծրագիրը կոնկրետ է դառնում այն հատվածներում, որտեղ խոսքը մերժումների մասին է: Սեփական կառուցողական հեռանկարները հաճախ մնում են համեմատաբար անորոշ:

Կողմնորոշում սոցիալ-ժողովրդավարական սոցիալական պետության մոդելով՝ որոշակի վերապահումներով

«Ձախ» կուսակցության սոցիալական պետության պատկերացումները կարելի է դասել մեծամասամբ սոցիալ-ժողովրդավարական սոցիալական պետության տարատեսակին: Դասակարգումը Էսպինգ-Անդերսենի «Սոցիալական պետության տիպաբանության» մեջ կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, եթե «Ձախ» կուսակցությունը հիմնովին հանդես գա քաղաքական համակարգի փոփոխության օգտին, կամ ինչպես իրենք են պահանջում, «քաղաքականության ուղղության փոփոխության, որը ճանապարհ է հարթում դեպի հասարակության հիմնարար վերակառուցում, ինչն էլ հաղթահարում է կապիտալիզմը» (Էջ 4): Սա առաջ է բերում հարցեր, որոնք անցնում են սոցիալական քաղաքականության դաշտի սահմանները:

«Ձախ» կուսակցության փոփոխությունների առաջարկները.

- **աշխատանք՝** պատժամիջոցներից ազատ նվազագույն ապահովություն (հիմնարար եկամուտ), աղքատությունից ապահով նվազագույն կենսաթոշակ,
- **առողջություն՝** բոլոր քաղաքացիների ապահովագրության համակարգի ներմուծում,
- **կրթություն՝** համատարած անվճար կրթություն,
- **հարկեր՝** փոքր և միջին վաստակ ունեցողների հարկի թեթևացում, բարձր եկամուտների, ինչպես նաև մեծ ունեցվածքի, ժառանգության, կապիտալի եկամուտի և ձեռնարկությունների շահութահարկի բարձրացում, հասարակական աշխատանքների ապահովման և բարելավման նպատակով վերից վար վերաբաշխում:

6.6. Ամփոփում

Բուրժուազում ներկայացված հինգ կուսակցությունների կուսակցական ծրագրերը վերջիններիս «մտադրությունների հայտարարություններն» են, թե ունենալով քաղաքական իշխանություն՝ ո՞ր ուղղությամբ կշարունակեն զարգացնել գերմանական հասարակական համակարգը և սոցիալական պետությունը:

Առանց անձնական գնահատականից խուսափելու՝ կարելի է գալ հետևյալ եզրակացությանը, որ կուսակցությունների սոցիալ-քաղաքական դիրքորոշումների համար կարելի է զարմանալի պարզ սահմանագիծ անցկացնել մի կողմից ԶԴՄ և ԱԴԿ կուսակցությունների և մյուս կողմից ՍԴԿ, 90-ի դաշինք/Կանաչներ, «Ձախ» կուսակցությունների միջև:

ԶԴՄ-ը և ԱԴԿ-ը ձգտում են սոցիալական պետության ազատական մոդելի, որը խստորեն խարսխված է աշխատանքային արդյունավետությամբ պայմանավորված սկզբունքի վրա, թեև երկու կուսակցություններն էլ ունեն միմյանցից հստակորեն տարբերվող մոտեցումներ: Ընդհանրությունը անգլոսաքսոնական տիպի ազատական սոցիալական պետությունն է: ԶԴՄ-ը մասամբ տարբերվում է պետական սոցիալական օգնության վրա իր խիստ կենտրոնացմամբ՝ հաշվի առնելով սուբսիդիարության սկզբունքը:

ՍԴԿ-ը, Կանաչները և «Ձախ» կուսակցությունը հստակորեն ավելի միտված են կարիքների և հնարավորությունների հավասարության խառը մի համապատկերի,

*Սոցիալական
պետության
ընթերցման հստակ
սահմանագիծ*


որը պետք է կիրառվի հիմնարար համապարփակ իրավունքներում և պետականորեն երաշխավորվի: Սակայն նրանք հստակորեն տարբերվում են միմյանցից այդ հիմնարար պահանջների կիրառման վերաբերյալ պատկերացումներով:

- 90-ի դաշինք/Կանաչները պետական ապահովության տարրերի հետ մեկտեղ իրենց մտորումներում ավելի հստակորեն ներառում են ազատական հայեցակետեր և քաղաքացիական հասարակությանը վերաբերող տարրեր:
- «Ձախ» կուսակցությունը սոցիալական հիմնարար իրավունքներն ապահովող սոցիալ-պետական տարրերի հետ մեկտեղ քննարկում է նաև կապիտալիզմը հաղթահարելու և հասարակության վերակառուցման հարցերը:
- ՍԴԿ-ը վերլուծում է փոփոխվող տնտեսության մարտահրավերները և ձգտում սկանդինավյան, սոցիալ-ժողովրդավարական սոցիալական պետության մոդելին միտված բարեփոխման, որը միաժամանակ ճկունություն ցուցաբերող տնտեսությունում պետք է հիմնի նախապես և հետագայում հոգացող սոցիալական պետություն: Քաղաքացիական հասարակության, ընտանեկան և պետական տարրերը պետք է դիտարկվեն հավասարաչափ և շարունակել զարգացվել:

7. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Նախորդող գլուխներում պարզաբանվեցին սոցիալ-դեմոկրատիայի ծրագրային ծավալը և սոցիալական քաղաքականության հիմնարար հարցերն ու հասկացությունները: Այս գլխում քննության կառնվեն գերմանական սոցիալական համակարգի հարկային, գործազրկության, կենսաթոշակային, առողջապահական և կրթական ոլորտները և կհամեմատվեն այլ երկրների օրինակների հետ: Կենտրոնում կլինի այն հիմնական հարցը, թե գերմանական սոցիալական պետությունը ինչպիսի՞ր իրավիճակում է գտնվում արդարության տարբեր հարթություններում և ի՞նչ դասեր պետք է քաղել իրավիճակից:

Տարբեր երկրներում տարբեր են կենսապահովման ծախսերը: Ներկայացվող թվերը ավելի լավ դասակարգել կարողանալու համար 9-րդ գծապատկերում ներկայացված են համեմատվող երկրների գնային սանդղակները: Գնային սանդղակը ցույց է տալիս գնողունակության հավասարության և ԵՄ 27 երկրների միջին փոխարժեքի հարաբերակցությունը: Եթե սանդղակը 100-ից բարձր է, ապա համապատասխան երկրում կենսապահովումը համեմատաբար թանկ է, եթե սանդղակը 100-ից ցածր է, ապա այն համեմատաբար մատչելի է: Ներկայացված բոլոր տվյալների հաշվարկը կատարված է եվրոյով:



Գծապատկեր 9. Մասնավոր տնտեսությունների գնային սանդղակը 2010թ.

Օրինակ՝ 5 երկրների համեմատությամբ ԵՄ 27 երկրների միջին հաշվարկով Դանիայում կենսապահովման ծախսերը ամենաբարձրն են՝ մոտ 142 %: Սա նշանակում է, որ ԵՄ երկրներում կենսապահովման համար ծախսվող միջին 1 եվրոյի փոխարեն Դանիայում պետք է ծախսել 1,42 եվրո, Գերմանիայում՝ 104,3 %, այսինքն՝ 1,04 եվրո:

7.1. Հարկեր

Թիմաս Ռիքսեն

Այս գլխում՝

- կներկայացվեն հարկման կարևորագույն սկզբունքները,
- կներկայացվեն հարկերի տարբեր տեսակները և կքննարկվեն նրանց բաշխման ազդեցությունները,
- կներկայացվեն սոցիալական պետության երեք մոդելների կառուցվածքները, վերջիններս կհամեմատվեն իրենց տնտեսական արդյունավետության և բաշխման ազդեցության տեսանկյունից:

*Հարկերի երեք
նպատակները՝
հասույթ, բաշխում և
ուղղորդում*

Հարկերը և տուրքերը սոցիալական պետության համար կարևորվում են երեք պատճառներով: Առաջին՝ դրանք հասույթի աղբյուր են սոցիալական քաղաքական ծրագրերը ֆինանսավորելու համար: Սա առանցքային է նաև քաղաքական մյուս բոլոր ճյուղերի համար և հանդիսանում է հարկերի նշանակության *ֆիսկալ նպատակը*: Երկրորդ՝ հասույթի, բնակաչության ունեցվածքի և բարեկեցության բաշխման չափի և կառուցվածքների վրա ազդեցություն գործելու հնարավորություն (*վերաբաշխման նպատակ*): Երրորդ՝ հարկերը կարող են օգտագործվել որպես ուղղորդող նորմեր հարկատուների շրջանում որոշակի վարքագիծ ստեղծելու համար: Օրինակ՝ ծխախոտի և ալկոհոլի հարկումը արդարացվում է հաճախ առողջապահական քաղաքականության տեսանկյունից:

*Լրացուցիչ ընթերցանության համար՝
Շտեֆան Հոմբուրգ
(2008թ.), «Ընդհանրական հարկերի
ուսմունք», Մյունխեն:
Ջոյել Սլեմոռոդ և Ջոն
Բակլիայ (2004թ.),
«Taxing Ourselves, A
Citizen's Guide to the
Great Debate over Tax
Reform», Cambridge:*

Հարկերի, հաստատագրված վճարների և ներդրումների միջև եղած տարբերությունները

Հարկը, նեղ իմաստով, պարտադրված վճար է առանց ուղղակի փոխհատուցման: (տե՛ս 3-րդ պարագրաֆի 1-ին պարբ., Հարկային օրենսգիրք): Սա չի տարածվում մյուս տուրքերի տեսակների վրա, որոնք, լայն իմաստով, կարելի է նույնպես դասել հարկերի շարքին. դրանք գանձվում են հանրային ծառայությունների ֆինանսավորման համար: Հաստատագրված վճարները միտված են որոշակի նպատակի, որոնց օգուտը վերագրվում է առանձին ոլորտների, ինչպես օրինակ՝ աղբահանության համար վճարները: Ներդրումները նույնպես ուղղված են որոշակի նպատակի, սրանք վերագրվում են որոշակի խմբերի: Օրինակ՝ գործազրկության ապահովագրությունը աշխատողներին ապահովագրում է գործազրկության ռիսկերից: Նույնը վերաբերում է նաև սոցիալական ապահովագրության մյուս տեսակներին:

Չաջորդիվ կպարզաբանվեն հարկման կարևորագույն սկզբունքները և կներկայացվեն տարբեր հարկատեսակները: Դրա հիման վրա կներկայացվեն հարկային պետության երեք տիպերը, և կհամեմատվի վերջիններիս սոցիալական քաղաքականության արդյունավետությունը:

7.1.1. Հարկման սկզբունքները. արդարություն և տնտեսական արդյունավետություն

Հարկային համակարգը ձևավորելիս պետությունը պետք է հետապնդի որոշակի նպատակներ: Այդ նպատակներից երկուսը՝ արդարությունը և տնտեսական

Տարբեր հարկման օրենքների բաշխման ազդեցության գործնական կանոնները

Ռեգրեսիվ հարկման դեպքում հարկերը նվազում են աճող եկամուտների հետ: Ռեգրեսիվ հարկատեսակը վերաբաշխում է եկամուտը և ունեցվածքը ներքևից դեպի վերև: Արդարության առումով վերջինս անընդունելի է: Հարկատեսակը **համամասնական է (պրոպորցիոնալ)**, եթե անկախ եկամուտի չափերից բոլորը հավասարաչափ են հարկվում: Աճող եկամուտի հետ աճում է նաև **բացարձակ հարկային բեռը**: Վերաբաշխման ազդեցությունը ավելի թույլ է, քան պրոգրեսիվ դրույթաչափերի պարագայում: Հարկատեսակը **պրոգրեսիվ է**, եթե հարկային բեռը ավելի բարձր եկամուտների դեպքում տոկոսային հարաբերությամբ ավելի բարձր է, քան ցածրերի դեպքում: Աճող եկամուտի դեպքում աճում է նաև համեմատական հարկային բեռը, և վերաբաշխման ազդեցությունը շատ ավելի մեծ է:

արդյունավետությունը, անմիջականորեն կապված են սոցիալական պետության և քաղաքական մեկնաբանությունների հետ:¹⁵ Երկու նպատակներն էլ ցանկալի են, սակայն կարող են միմյանց հակասել: Վերջիններիս հարաբերական կարևորության շուրջ ընթանում է քաղաքական պայքար:

Ի՞նչ է արդար հարկումը

Հարկային համակարգը պետք է արդար լինի: Հարցը, թե ո՞րն է արդար հարկումը, թերևս վիճելի է: Քաղաքական տնտեսագետների և փիլիսոփաների կողմից վաղուց քննարկվող երկու սկզբունքները՝ աշխատանքի արդյունավետությամբ պայմանավորված արդարու-

Հարկման երկու սկզբունք՝ արդարություն և տնտեսական արդյունավետություն

թյունը և համարժեքության սկզբունքը, կարող են օգտակար լինել հարկային արդարության մասին կառուցողական քննարկումներ անելիս:

¹⁵ Հարկային համակարգի ևս երկու շատ կարևոր չափորոշիչներ են կատարումը, այսինքն՝ կառավարելիությունը և պարզությունը, այսինքն՝ թափանցիկությունը, որոնք այստեղ չեն մանրամասնվի:

*Աշխատանքի
արդարություն և
համարժեքության
սկզբունք*

*Հարկումը ըստ աշխա-
տանքի արդյու-
նավետության*

*Հարկման ուղղահա-
յաց և հորիզոնական
արդարություն*

*Ինչպիսի՞ հարկային
կանոններ են
բավարարում այդ
պահանջները*

*Նվազող սպառման
սահմանային հակ-
վածությունը՝ որպես
պրոգրեսիվ հարկ-
ման հիմնավորում*

Աշխատանքի արդյունավետությամբ պայմանավորված հարկում

Հարկատուների անհատական աշխատանքային արդյունավետությամբ պայ-
մանավորված՝ հարկման պահանջը հանդիպում է արդեն իսկ Ադամ Սմիթի մոտ:
Եթե ցանկանում ենք այս սկզբունքը կիրառել պրակտիկ բաղաբանության մեջ,
անմիջապես հարց է առաջանում՝ ինչպե՞ս պետք է չափել արդյունավետությունը
(այս մասին տե՛ս նաև 3-րդ գլխում): Երբեմն ենթադրվում է, որ անհատական եկա-
մուտը արտացոլում է աշխատանքի արդյունավետությունը:

Աշխատանքի արդյունավետության սկզբունքից կարելի է երկու հետևություն անել:
Առաջին՝ հավասարաչափ եկամուտ ունեցող հարկատուները վճարում են միևնույն
հարկային դրույքաչափերը (հորիզոնական արդարություն): Երկրորդ՝ ավելի բարձր
եկամուտ ունեցող անձանց հարկային բեռը պետք է ավելի մեծ լինի, քան ցածր
եկամուտ ունեցողներինը (ուղղահայաց արդարություն):

Վիճելի է, թե ինչպիսի հարկային կանոններ են բավարարում այդ պահանջները:
Պարզ է, որ ռեգրեսիվ հարկատեսակը հակասում է այս սկզբունքին: Կարելի է
նաև այն տեսակետը ներկայացնել, ինչպես դա անում են Նեոլիբերալները, որ
սա համապատասխանում է աշխատանքի արդյունավետությամբ պայմանա-
վորված հարկման տեսակին, եթե համամասնական հարկը բարձրացվում է:
Սահմանադրական դատարանի նախկին դատավոր Քիրխհոֆը առաջար-
կում է, օրինակ, բոլոր եկամուտների համար կիրառել հավասարաչափ 25 %
հարկային դրույքաչափ:

Հարկային պրոգրեսիվության հիմնավորում

Կարելի է պնդել նաև, որ ուղղա-
հաց արդարությունը պահան-
ջում է, որ եկամուտի աճի հետ
միասին մեծանա նաև համե-
մատական հարկային բեռը: Սա
կարելի է հետևյալ կերպ հիմ-
նավորել, օրինակ՝ տարեկան
100.000 եվրո եկամուտ ունե-
ցող հարկատուի համար իր եկա-
մուտի մեկ քառորդ մաս վճարելը

Սպառման սահմանային հակվածու- թյունը

տնտեսագիտական հասկացություն է:
Այն բնութագրում է սպառման բաժինը հարկերը
վճարելուց հետո մնացած եկամուտի ցանկացած
փոփոխության մեջ և որոշվում է սպառման փոփո-
խության և հարկերը վճարելուց հետո մնացած եկա-
մուտի փոփոխության հարաբերությամբ (օրինակ՝
որքա՞ն ավելի շատ հաճույք կպատճառի տասնե-
րորդ բաժակ գինին իններորդի հետ համեմատու-
թյամբ) (տե՛ս «Քաղաքագիտական հանրագիտա-
րան», 2011թ., էջ 131):

ավելի փոքր զոհաբերություն կնշանակի, քան 20.000 եվրո եկամուտ ունեցողի
համար: Առաջինը 25.000 եվրո հարկ վճարելու արդյունքում ստիպված կլինի հրա-

ժարվել իր երկրորդ ավտոմեքենայից կամ այդ տարվա երրորդ հեռավոր ճանապարհորդությունից: Մինչդեռ երկրորդի համար 5.000 եվրո վճարելը կարող է նշանակել ընդհանրապես հրաժարվել արձակուրդից կամ առողջ սննդամթերքից: Հաշվի առնելով այս քննարկումները՝ հարկային համակարգը պետք է պրոգրեսիվ լինի, ինչը պահանջում է նաև ՄԴԿ-ը: Տնտեսագետները խոսում են եկամուտի սպառման սահմանային հակվածության նվազման մասին:

Ձեռնարկությունները և մասնավոր տնտեսությունները, իրենց աշխատանքային արդյունաբերությանը համապատասխան պետք է մասնակցեն պետական հարկերի ֆինանսավորմանը: Դա նշանակում է, որ մենք կողմ ենք ապացուցված եկամուտների հարկման պրոգրեսիվ հարկատեսակին (Համբուրգյան ծրագիր, 2007թ., էջ 46):

Համարժեքության սկզբունք

Հարկման արդարության երկրորդ սկզբունքը համարժեքության սկզբունքն է: Այն հաճախ դիտարկվում է որպես հակադրություն աշխատանքի արդյունավետության արդարությանը, ըստ որի վճարվող հարկերի ծավալը պետք է չափվի պետության կողմից ստացվող փոխհատուցման ծավալով: Վերջինիս միտքը կայանում է նրանում, որ հարկերը ներկայացնեն հանրային բարիքների տրամադրման արժեքը: Համարժեքության սկզբունքը, այսպիսով, պահանջում է փոխանակման արդարություն:

Հաճախ անհնար է, որ որոշակի պետական նպաստի համար սահմանվի կոնկրետ անհատին վերագրելի արժեք: Բարիքները, որոնք, նեղ իմաստով, ֆինանսավորվում են հարկերի միջոցով, ունեն հանրային բարիքի¹⁶ որակներ: Շուկայի մեխանիզմը այստեղ չի գործում, և այդ իսկ պատճառով հնարավոր չէ որևէ բարիքի համար կոնկրետ գին սահմանել: Հաստատագրված վճարի դեպքում, սակայն, դա հնարավոր է: Այն սահմանվում է ըստ համարժեքության սկզբունքի: Այդպես է նաև ներդրումների պարագայում, փոքր ինչ ավելի ազատ եղանակով: Գործազրկության և կենսաթոշակային ապահովագրության համար վճարվող ներդրումների և իրականում վերադարձվող նպաստների միջև սահմանված չէ խիստ համարժեքություն: Պարզ չէ՝ արդյո՞ք ընդհանրապես գործը կհասնի ապահովագրությանը, և որքա՞ն ժամանակ այն կգործի: Նախատեսված նպաստները, այնուամենայնիվ, սահմանվում են՝ նախկինում վճարված ներդրումների չափը հաշվի առնելով:

16 Տե՛ս գիրք 2, «Տնտեսություն և սոցիալ-դեմոկրատիա», գլուխ 7.3.:

*Համարժեքության
սկզբունք. թվացյալ
արդարության տեսակ*

*Խնդիր. ճիշտ
«արժեքի» սահ-
մանում*

*Փոխհատուցում
հարկերի համար.
«Քաղաքակիրթ
հասարակություն»*

Նեղ իմաստով, նույնիսկ համարժեքության սկզբունքը հարկերի դեպքում խիստ կիրառություն չի գտնում: Այդուամենայնիվ, արդար հարկային համակարգի մասին մտածելիս, օգտակար է այդ սկզբունքը հաշվի առնել «մեղմ» իմաստով: Միանգամայն պարզ է, որ հարկատուները իրենց հարկերի ամբողջականության դիմաց շատ կոնկրետ փոխհատուցում են ստանում, որն արտահայտվում է հանրային բարիքների ամբողջականությամբ, եթե նույնիսկ յուրաքանչյուրի համար հնարավոր չէ հարկերի վճարման ճշգրիտ արժեք սահմանել: Հանրային հարկերի միջոցով են հնարավոր իրավական համակարգի ստեղծումը, ներքին և արտաքին անվտանգության երաշխավորումը, սոցիալական նպաստները, դպրոցների գոյությունը, փողոցների կառուցապատումը և հանրային փոխադրամիջոցների աշխատանքը: Հակիրճ ամփոփում.

«Հարկերն այն են, ինչ մենք վճարում ենք քաղաքակիրթ հասարակության համար»
(Օլիվեր Վենդել Ջոլմես (1927թ.), ամերիկյան սահմանադրական դատարանի դատավոր):

*Հարկային պրոգրեսիվ-
վության համար
հիմնավորում՝ նա, ով
ավելի շատ ունի,
ավելի շատ օգուտ է
բաղում իրավական
համակարգի
պահպանման
արդյունքում:*

Հարկային պրոգրեսիվության համարժեքության տեսական հիմնավորում
Եթե այս քննարկումները շարունակվեն, հնարավոր կլինի ցույց տալ, որ արդյունքում համարժեքության սկզբունքը անպայման չէ, որ հակադրության մեջ հայտնվի աշխատանքի արդյունավետությամբ պայմանավորված հարկման սկզբունքի հետ: Ի դեպ, հնարավոր է այն օգտագործել պրոգրեսիվ հարկման արդարացման համար: Հարկերը նախապայման են հանդիսանում իրավական համակարգի ստեղծման և պահպանման համար, ինչը երաշխավորում է մասնավոր սեփականությունը: Ավելի ճիշտ՝ հարկերով սահմանվում է, թե ինչն է դիտարկվում որպես մասնավոր սեփականություն: Այդ իսկ պատճառով, հարկերի պրոգրեսիվությունն արդարացվում է հատկապես նրանց կողմից, ովքեր ավելի շատ սեփականություն ու եկամուտ ունեն և, հետևաբար, իրավական և սեփականության օրենսդրական համակարգի պահպանման արդյունքում ավելի շատ օգուտ են բաղում, քան պակաս բարեկեցիկները: Նրանք պահանջում են նաև այդ օրենսդրության պահպանման ծախսերի ավելի բարձր մասնակցություն:¹⁷

Տնտեսական արդյունավետություն

Հարկային համակարգի արդարությանն առնչվող նշված սկզբունքների հետ մեկտեղ, պետք է հարկային համակարգը այնպես կառուցված լինի, որ հնարավորինս քիչ տնտեսական վայրիվերումների պատճառ դառնա: Շրջանառվում է չեզոք-

*Չեզոքություն. չկան
տնտեսական
վայրիվերումներ:*

¹⁷ Տե՛ս գիրք 2., «Տնտեսություն և սոցիալ-դեմոկրատիա», գլուխ 7.2.:

թյան նպատակը: Չեզոքությունը կարևոր նպատակ է, քանի որ այն հնարավոր է դարձնում ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և այդպիսով նպաստում աճին: Խնդիրը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր հարկատեսակ խեղաթյուրում է տնտեսական գործիչների որոշումները: Միակ բացառությունն է կազմում այսպես կոչված հարկումն ըստ գլխաքանակի, ըստ որի բոլոր քաղաքացիները պետք է վճարեն բացարձակ համաչափ հարկային վճար: Անգամ նույնիսկ գլխաքանակով հարկատեսակը իրականում որևէ տեղ չի կիրառվում, քաղաքականապես ոչ կիրառելի է, ոչ էլ ցանկալի, քանի որ այն հակասում է վերը ներկայացված արդարության քննարկումներին, այնուամենայնիվ այն կարող է ծառայել չեզոքության հայեցակարգի պարզաբանմանը: Այսպիսի հարկատեսակը կլինե՞ր բացարձակ չեզոք, քանի որ անկախ նրանից, թե մարդը ինչպիսի վարքագիծ ունենար, եկամուտ կունենար թե ոչ, մշտապես պետք է վճարեր բացարձակ հավասարաչափ հարկավճար: Այս պայմաններում տնտեսական տևական բարելավման և դրանով իսկ տնտեսական աճին նպաստելու գայթակղությունը մեծ է: Այլ բան է, եթե աճող եկամուտի հետ մեծանում է հարկային բեռը: Այդ պարագայում նվազում է ավելի ուժգին աշխատելու գայթակղությունը: Որքան ավելի պրոգրեսիվ է հարկային համակարգը, այնքան ավելի ցածր է անհատական արդյունքը բարելավելու գայթակղությունը:

Արդյո՞ք գոյություն ունի հակամարտություն արդյունավետության և արդարության միջև

Հարկային դրույքաչափը դիտարկվում է որպես արդար, քանի որ հարկային բեռը պրոգրեսիվ է բաշխվում, այն կարող է նաև տնտեսական աճի խոչընդոտ հանդիսանալ: Այս հեռանկարի պարագայում գործ ենք ունենում արդյունավետության և արդարության միջև նպատակային հակամարտության հետ: Արդարության որևէ չնչին մասից հրաժարվելու դեպքում կարող ենք ձեռք բերել աճ կամ հակառակը: Թե ինչպիսի՞ հավասարակշռություն կլինի այդ երկու նպատակների միջև, կախված է հասարակության արժեհամակարգից: Այդ հարցը հարկերի վերաբերյալ քաղաքական քննարկումների առանցքային առարկան է:

Հաջորդիվ կտեսնենք, թե տարբեր երկրներ գնահատման ինչպիսի որոշումներ են կայացրել: Հարց է ծագում՝, ինչպիսի՞ հարաբերակցություն է առկա արդյունավետության և արդարության միջև, արդյո՞ք այդ հարաբերակցությունը չի կարող պայմանավորված լինել այլ գործոններով: Այդ երկու նպատակների՝ արդյունավետության և արդարության միջև հակամարտությունը այնքան էլ մեծ չէ, որքան այն առաջին հայացքից թվում է:

Ինչպիսի՞ հավասարակշռություն պետք է լինի աճի և արդարության միջև:

Իրականում որքա՞ն մեծ է հակամարտությունը:

7.1.2. Տարբեր հարկատեսակներ

Իրականում պետության կողմից հարկվում են տարբեր բաներ, գործունեության տարբեր տեսակներ: Հարկերը բաժանվում են տարբեր տեսակների:

Ուղղակի հարկեր

Ուղղակի հարկերը անմիջականորեն կապված են աշխատանքի արդյունավետության ցուցանիշների հետ, դրանք տարածվում են եկամուտի և գույքի վրա: Ուղղակի հարկերի թվին են դասվում եկամտահարկը, կորպորատիվ հարկը, ժառանգության հարկը և գույքահարկը: Գերմանիայում (և շատ այլ երկրներում) եկամտահարկի պարագայում կիրառվում է պրոգրեսիվ հարկային դրույքաչափ: Այս հարկը վճարվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից: Շահութահարկի պարագայում իրավաբանական անձանց շահույթի համար (օրինակ՝ ՍՊԸ, ՓԲԸ) գործում է համամասնական (proportional) դրույքաչափը: Գերմանիայում այն կազմում է 25 % (սրան ավելանում է նաև գործարարության պետական տուրքը, որը գանձվում է համայնքների կողմից):

Սոցիալական ապահովագրության հարկային և ներդրումային ֆինանսավորումը

Լայն իմաստով սոցիալական ապահովագրական ներդրումները նույնպես դասվում են ուղղակի հարկերի շարքին: Վերջիններս համար գործում է համամասնական (proportional) դրույքաչափ: Բացի դրանից հաճախ գոյություն ունի ներդրումների չափման սահմանագիծ: Բարձր եկամուտները չեն օգտագործվում համապատասխան սոցիալական նպաստների ֆինանսավորման համար: Այսպիսով, սոցիալական ապահովագրությունը ավելի շուտ ռեպրեսիվ կազմաձև ունի: Կենսաթոշակային և առողջապահական ապահովագրության համար տրվում է պետական հավելավճար, որը (նեղ իմաստով) ֆինանսավորվում է հարկերի միջոցով: Սոցիալական ապահովագրության ռեգրեսիվ ֆինանսավորման միտման պատճառով է, որ ՄԴԿ-ը պայթարում է այս ոլորտում հարկերի մասնաբաժնի ընդլայնման համար (տես՝ Համբուրգյան ծրագիր, 2007թ., էջ 58):

Անուղղակի հարկեր

Ի տարբերություն անուղղակի հարկերի, տնտեսական արդյունավետությունը արձանագրվում է շրջանցումների ճանապարհով: Մեծ բեռ է ընկնում եկամուտի իրացման վրա: Գերմանիայում առավել ծանոթ ֆիսկալ նշանակություն ունեցող ամենակարևոր հարկը ավելացված արժեքի հարկն է (ԱՎՀ): Այն գործում է համամասնական 19 % դրույքաչափով, առաջնային խնամքի որոշ ապրանքների համար՝ նվազեցված 7 % դրույքաչափով: Եթե համարենք, որ հիմնականում ցածր եկա-

Ուղղակի հարկերը տարածվում են եկամուտի և գույքի վրա:

Սոցիալական ներդրումները լայն իմաստով հարկեր են:

Անուղղակի հարկերը հավաքագրվում են եկամուտի իրացման արդյունքում, օրինակ՝ ավելացված արժեքի հարկը

մուտ ունեցողներն են իրենց եկամուտի մեծ մասը ծախսում առաջնային խնամքի ապրանքատեսակներ ձեռք բերելու համար, ապա ակնհայտ է դառնում, որ ավելացված արժեքի հարկը ռեգրեսիվ է ազդում:

Արտադրության գործոնի հարկային բեռը

Ի վերջո, կարելի է պարզել, թե ազգային տնտեսության արտադրության ո՞ր գործոնն է ծանրաբեռնվում հարկերով: Այսպիսով, հնարավոր կլինի իմանալ՝ հարկային բեռը պայմանավորված է աշխատանքի, թե՞ կապիտալի գործոններով:

Ինչպիսի՞ հարաբերակցությամբ են հարկվում կապիտալը և աշխատանքը:

7.1.3. Հարկային պետության երեք տիպերը

Նշյալ կատեգորիաներով կառուցված առկա հարկային համակարգերը կարող են վերլուծության ենթարկվել: Սոցիալական պետության տարբեր տիպերը (տե՛ս 3-րդ գլուխ) առանձնանում են նաև հարկային քաղաքական կառուցվածքով: Անգլոսաքսոնական, մայրցամաքային և սկանդինավյան սոցիալական պետությունները տարբերվում են միմյանցից՝ ելնելով հարկային ընդհանուր բեռի ծավալից և տարբեր հարկատեսակների կիրառությունից (հարկերի խառը տարբերակ հմմտ.՝ հարկային կառուցվածք): Սրանով պայմանավորված՝ տարբերակվում է նաև ձեռք բերված բաշխիչ ազդեցությունը (տե՛ս Վազալ, 2001թ.):

Հարկային պետությունների երեք տիպերը (հմմտ.՝ սոցիալական պետության երեք տիպերը)

Անգլոսաքսոնական հարկային պետություն, ԱՄՆ

Միացյալ Նահանգներում, որոնք այստեղ դիտարկվում են որպես անգլոսաքսոնական հարկային պետության օրինակ, հարկային ընդհանուր բեռը ավելի ցածր է: Հարկային հասույթի ավելի բարձր մասնաբաժին է հավաքագրվում ուղղակի հարկերի միջոցով: Անհատական եկամուտի հարկային պրոգրեսիվությունը համեմատաբար ավելի ցածր է: Անուղղակի հարկերը և սոցիալական վճարները ցածր են:

Ցածր հարկային ընդհանուր բեռ, հիմնականում ուղղակի հարկեր

Մայրցամաքային հարկային պետություն, Գերմանիա

Մայրցամաքային հարկային պետությունում հարկային ընդհանուր բեռը միջին բարձրության է, այս տիպի համար օրինակ է ծառայում Գերմանիան: Այստեղ հարկային ընդհանուր բեռի ուղղակի հարկերի մասնաբաժինը ցածր է, մինչդեռ սոցիալական վճարների մասնաբաժինը (սոցիալական ապահովագրական ներդրումներ) բարձր է: Այդ իսկ պատճառով ընդհանուր վճարների և հարկերի ցուցանիշները, որոնք նեղ իմաստով ներքին համախառն արդյունքի (ՀՆԱ) հարկային մասնաբաժինն են չափում, զարմանալիորեն տարբերվում են միմյանցից:

Միջին ընդհանուր հարկային բեռ, սոցիալական վճարների ավելի մեծ մասնաբաժին

**Լրացուցիչ ընթեր-
ցանության համար՝**

Գերդ Գրյոցինգեր
(2007թ.), «Արդյո՞ք

Գերմանիան բարձր
հարկերի երկիր է:

Երկարակյաց

առասպել, խնդրահա-
րույց հետևանքներ»,

Intervention 4 (1), էջ
28-39:

Բարձր հարկա-
յին ընդհանուր
բեռ, բարձր եկամ-
տահարկ և սպա-
ռողական հարկ

Ավանդաբար անվանական հարկային դրույթաչափերը բարձր են, սակայն վերջին-
ներս բարձրացվում են չափման նեղ հիմքերով: Ի դեպ, եկամտահարկի և շահու-
թահարկի դրույթաչափերը 2000թ. հարկային բարեփոխման արդյունքում իջեցվել
են (չափման հիմքերը, ընդհակառակը, ընդլայնվել են): Հարկային բարեփոխման
վերջին բայլը ուժի մեջ մտավ 2005թ.: Այդ ժամանակվանից ի վեր եկամտահարկի
ամենաբարձր դրույթաչափը կազմում է 42 %: Վերջինս 1998-ին կազմում էր 53 %:
Այսպիսով, Գերմանիան ամենափն էլ բարձր հարկերի երկիր չէ, ինչպես մշտապես
պնդում են քաղաքական քննարկումների ժամանակ: Թեև սոցիալական ապա-
հովագրական վճարները այլ երկրների համեմատությամբ իրականում բարձր են,
ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ աշխատաշուկայի վրա:

Սկանդինավյան հարկային պետություն. Դանիա

Սկանդինավյան հարկային պետությունում հարկային ընդհանուր բեռը բարձր է:
Բարձր է թե՛ եկամտահարկը, թե՛ սպառողական հարկը: Նույնիսկ եթե հաշվի
առնենք, որ 2010թ. դանիական հարկային բարեփոխման արդյունքում հարկա-
յին ամենաբարձր դրույթաչափը 59 % -ից իջեցվեց 51,5 % -ի, այդուամենայնիվ,
միջազգային համեմատությամբ անհատական եկամուտի հարկային դրույթա-
չափը զգալիորեն պրոգրեսիվ է: Սոցիալական վճարների ծավալը փոքր է, քանի
որ սոցիալական նպաստները հիմնականում ֆինանսավորվում են հարկային
համակարգի միջոցով:¹⁸

¹⁸ Սոցիալական պետության այս ընտանիքին պատկանող մի այլ երկրում՝ Շվեդիայում, այս միտումը
նկատվում է ընդհուպ միևնույն այդ ֆինանսավորման տեսակը:

Հարկային պետության տարբեր տիպերի ցուցանիշները

	ԱՄՆ	Գերմանիա	Ռանիա	OECD-միջին
Վճարների ընդհանուր ցուցանիշ	24,1 %	37,3 %	48,1 %	33,8 %
Հարկային ցուցանիշ	17,6 %	22,9 %	47,1 %	24,6 %
Եկամտահարկի ամենաբարձր դրույթաչափ	35 % սկսած 265.334 եվրո- յից ¹⁹	42 % սկսած 52.151 եվրո- յից ²⁰	51,5 % սկսած 51.000 եվրո- յից ²¹	
Մուտքային հարկի դրույթաչափ	10 % ²²	15 %	5,48 % ²³	
Հարկից ազատված եկամուտի մասնաբաժին	5.913 եվրո	7.663 եվրո	0 եվրո ²⁴	
Կորպորացիաների անվանական հարկային դրույթաչափ ²⁵	39,88 %	29,83 %	25 %	
Կորպորացիաների համար սահմանված դրույթաչափ (2008թ.)	36 %	27,3 %	18,6 %	
Ավելացված արժեքի հարկային դրույթաչափ	Ոչ մի տեղեկություն ²⁶	19 %	25 %	

Աղբյուր՝ OECD (2011a), BMF (2011), Chen/Mintz (2008)

19 Դաշնային հարկ. հարկային դրույթաչափը հաշվարկված է պետական մակարդակով, դաշնային մակարդակում հնարավոր է նվազում:

20 2007-ից գոյություն ունի այսպես կոչված հարստության հարկը, ըստ որի եկամուտի սահմանված դրույթաչափը 250.001 եվրոյից սկսած բարձրանում է 45%-ի:

21 Եկամուտի սահմանը թեթևակիորեն տանտանվում է՝ ելնելով եկամուտի ամբողջական կառուցվածքից: Մինչև 2009 թ. գործում էր 59% հարկային դրույթաչափ:

22 Դաշնային հարկ. վերջինիս ավելացվում են նաև հարկեր պետական մակարդակում:

23 Կենտրոնական կառավարում. հարկային հավելում է կատարվում համայնքներում:

24 Գոյություն ունի հարկային դրույթաչափից ազատված մաս՝ 283 եվրո:

25 Ներառում է կորպորատիվ հարկը, առևտրի հարկը, համեմատական կենտրոնական կառավարման և համայնքային կորպորացիաների այլ հարկեր:

26 Տատանվում է՝ կախված դաշնային հողերի բավականին ցածր շրջանառության հարկային դրույթաչափից:

Ի՞նչ են նշանակում տարբեր ցուցանիշները և հարկային դրույթաչափերը
Վճարների ցուցանիշը ցույց է տալիս ներքին համախառն արդյունքում բոլոր հարկերի և տուրքերի մասնաբաժինը: **Հարկերի ցուցանիշը** ներդ իմաստով բոլոր հարկերի մասնաբաժինն է ՀՆԱ-ում:


Եկամտահարկի **ամենաբարձր դրույթաչափը** եկամուտի որոշակի շեմից սկսած՝ հարկային ամենաբարձր դրույթաչափն է: **Մուտքային հարկը** հարկային այն դրույթաչափն է, որը գանձվում է ազատված շեմից վերև: Խոսքը վերաբերում է նաև սահմանային հարկային դրույթաչափերին, որոնք արտահայտում են յուրաքանչյուր հավելյալ վաստակած եվրոյի հարկաչափը, դա նշանակում է՝ այս հարկային դրույթաչափով է հարկվում եկամուտի այն մասը, որը գերազանցում է նշված շեմը: Եկամուտի մյուս մասը, որը չի գերազանցում նշված նվազագույն շեմը, մուտքային հարկային դրույթաչափի դեպքում չի հարկվում: Սահմանային հարկային դրույթաչափը կարելի է տարբերել **միջին հարկային դրույթաչափից**: Սա այն դրույթաչափն է, որ գանձվում է միջին հաշվարկով: Եթե տարիֆային դրույթաչափը պրոգրեսիվ է, միջին հարկային դրույթաչափը սահմանային հարկային դրույթաչափից ցածր է:

Անվանական հարկային դրույթաչափը այն սանդղակն է, որը տարածվում է չափման որոշակի բազայի վրա: Այն տարբերվում է **արդյունավետ հարկային դրույթաչափից**, որը սահմանում է, թե իրականում եկամուտի որ մասն է հարկելի, եթե չափման հիմքերը ավելի փոքր են, քան եկամուտը: Այսպես է, օրինակ, այն դեպքում, երբ առկա են չհարկվող եկամուտի մասնաբաժնի կամ արժեզրկման (ամորտիզացիա) հնարավորություններ:

Զննարկման համար

Գերմանիայում ամուսնական զույգերի եկամտահարկի ընդհանրական գնահատում է կատարվում, այսինքն՝ նրանց եկամուտը գումարվում է իրար և բաժանվում է երկուսի, այնուհետև կիրառվում է համապատասխան հարկային դրույթաչափը: Ի՞նչ է դա նշանակում բաշխման ազդեցության տեսանկյունից: Գայթակղի՞չ է դա արդյոք ամուսնական զույգերի համար ցածր աշխատավարձով աշխատանքի անցնելու համար: Արդյո՞ք ամուսնալուծություններն արդարացի են:

Ստորև բերվող գրաֆիկը պատկերում է երկրների միջև եղած հարկային միջոցների տարբերությունները: Տեղեկություններ են ներկայացվում, թե յուրաքանչյուր պետության ընդհանուր հասույթի ո՞ր մասն է հավաքագրվում ուղղակի, անուղղակի հարկերի և պարտադիր սոցիալական վճարների միջոցով: Գույքահարկը, որը նույնպես դասվում է ուղղակի հարկերի շարքին, գրաֆիկում առանձին է ներկայացվում:




Աղբյուր՝ OECD (2011a)

Գծապատկեր 10. 2009 թ. հարկային համակարգ

Կապիտալի և աշխատանքի ծանրաբեռնվածություն

Եթե դիտարկում ենք, թե հարկային բեռը ազգային տնտեսության ինչպիսի գործոններով պայմանավորված է բաշխվում, պարզ է դառնում, որ անգլոսաքսոնական սոցիալական պետությունում կապիտալը, աշխատանքը և սպառումը հավասարաչափ են ծանրաբեռնված: Այլ պատկեր է սկանդինավյան մոդելում: Այստեղ աշխատանքի և սպառման ծանրաբեռնվածությունը շուրջ 50 %-ով ավելի բարձր է, քան կապիտալի եկամուտինը: Այսպիսով, կապիտալի գործոնի մասնակցությունը սոցիալական պետության ծախսերին համամասնականից զգալիորեն ցածր է: Մայրցամաքային սոցիալական պետության աշխատանքի գործոնի ծանրաբեռնվածությունը նույնպես բարձր է: Մայրցամաքային սոցիալական մեծաթիվ պետություններում կապիտալի և աշխատանքի հարկային բեռը տարբեր է, սակայն ոչ ավելի մեծ, քան Գերմանիայում:

*Գերմանիա.
կապիտալի և
աշխատանքի
բավականին
անհավասար
հարկում*



Աղբյուր՝ Carey/Rabesona (2002թ.: 172)

Գծապատկեր 11. Կապիտալի, աշխատանքի և սպառողական հարկային ցուցանիշները (1990-2000թթ. միջին արժեքներ)

7.1.4. Որբանո՞վ են հաջողակ երեք հարկային պետությունները

Ինչպիսի՞ նշանակություն ունեն տարբեր հարկային համակարգերը սոցիալական քաղաքական նպատակներին հասնելու տեսանկյունից: Հաջորդիվ կդիտարկենք բաշխման ազդեցությունը և աճի հաջողությունը:

Բաշխման ազդեցությունը անգլոսաքսոնական սոցիալական պետությունում
Անգլոսաքսոնական պետությունը շեշտը դնում է ուղղակի հարկերի վրա, որոնք պրոգրեսիվ են կառուցված: Կորպորատիվ հարկերը ամենապակաս համամասնականն են: Թեև եկամտահարկերի դրույքաչափը համեմատաբար ցածր է, սակայն կապիտալի և գույքային եկամուտի հարկային բեռը բարձր է: Սա, միգուցե, զարմանալի թվա, բայց, ի վերջո, համապատասխանում է ազատական գաղափարախոսությանը, որը առաջնորդվում է անհատական արդյունքով և ոչ թե կարգավիճակով: Պարտադիր վճարների ընդհանուր ցուցանիշը ցածր է, այսպիսով, սոցիալական քաղաքական միջոցառումներ իրականացնելու համար պետությունը քիչ միջոցներ է տնօրինում: Ակնկալվում է, որ անգ-

Ակնկալիք. բավականին անհավասարաչափ բաշխում

լուսաբոսական պետության դեպքում գործ ունենք համեմատաբար անհավասար բաշխման հետ:

Բաշխման ազդեցությունը սկանդինավյան սոցիալական պետությունում

Սկանդինավյան սոցիալական պետությունը մեծամասամբ հենվում է ուղղակի հարկերի վրա, որոնք ընդգծված պրոգրեսիվ կառուցածն ունեն, և այդ պատճառով, սոցիալական պետությունը պետք է ակնհայտ վերաբաշխողական ազդեցության հասնի: Կապիտալի և աշխատանքի եկամուտի հարկային բեռի հարաբերակցությունը ավելի ցածր է, քան մյուս պետություններում: Դանիան ունի այսպես կոչված *դուալ եկամտահարկ*՝ կապիտալից ստացված եկամուտը հարկվում է համամասնական ավելի ցածր հարկային դրույքաչափով, քան աշխատանքի եկամտահարկը: Վերջիններս դուրս են մնում պրոգրեսիվ եկամտահարկից: Մեծ է նաև ռեգրեսիվ ազդեցություն ունեցող անուղղակի հարկերի մասնաբաժինը: Գույքահարկերը միջին բարձրության են: Հարկային ընդհանուր ցուցանիշը բարձր է, այնպես որ հնարավոր է դառնում ֆինանսավորել լայնածավալ սոցիալական պետության ծախսերը՝ շեշտադրելով վերաբաշխողական ազդեցության խնդիրները:


Ակնկալիք. բավականին հավասարաչափ բաշխում

Բաշխման ազդեցությունը մայրցամաքային սոցիալական պետությունում

Մայրցամաքային սոցիալական պետությունը հենվում է հավասարաչափ և՛ ուղղակի, և՛ անուղղակի հարկերի մասնաբաժինների վրա: Եկամտահարկի կառուցածնը պրոգրեսիվ է, այսպիսով անհրաժեշտ է ծավալի վերաբաշխողական ազդեցություն: Անուղղակի հարկերը հակված են ռեգրեսիվ ազդեցության: Սոցիալական պարտադիր վճարների պարագայում գործում է համամասնական ազդեցությունը: Միջազգային համեմատությամբ գույքահարկը շատ ցածր է: Ցածր է նաև կապիտալով պայմանավորված եկամտահարկը աշխատանքի եկամտահարկի հարաբերակցությամբ: Հարկային ընդհանուր ցուցանիշը միջին բարձրության է, սրանով ֆինանսավորվում է սոցիալական պետությունը: Այն իրականացնում է ավելի շուտ կարգավիճակը պահպանող, քան վերաբաշխողական գործառույթ: Այսպիսով, ակնկալվում է, որ անհավասարության չափը միջին է, այն ընկած է ԱՄՆ-ի և Դանիայի տվյալների միջակայքում:

Ակնկալիք. միջին անհավասարաչափ բաշխում

Եթե մենք իսկապես դիտարկենք բաշխման արդյունքները այդ երեք երկրներում, ապա ակնհատ է դառնում, որ արդյունքները համապատասխանում են սպասումներին:



Աղբյուր՝ OECD (2011b: 36)

Գծապատկեր 12. Բաշխման ազդեցությունը 2000-ականների ավարտին²⁷

Օրինակ՝ Դանիայում եկամտի անհավասարությունը Gini-գործակցով սկզբում 0,37 է: Հարկերի և փոխանցումների համաձայն այն իջնում է 0,24-ի: Ի սկզբանե սահմանափակ անհավասարությունը ևս մեկ անգամ նվազում է 35 %-ով:

*Սպասումները
հաստատվում են:
Դանիան հաս-
նում է ամենա-
լավ բաշխմանը:*


Դանիայում եկամտի բաշխումը ոչ միայն «ավելի հավասար» է, քան Գերմանիայում, այլ հարկերի և փոխանցումների համակարգի միջոցով անհավասարությունը ավելի է նվազում, քան մյուս երկու երկրներում: Առաջնային բաշխման Gini-գործակիցը (այսինքն՝ շուկայի եկամտի բաշխումը մինչև հարկերը և տրանսֆերտները) հարկերից և տրանսֆերտներից հետո առաջացող բաշխվող եկամտի համեմատությամբ Դանիայում նվազում է 35 %-ով, Գերմանիայում՝ 28,5 %, իսկ ԱՄՆ-ում՝ 18 %-ով:

Դա նշանակում է, որ եթե սոցիալական քաղաքականությունը հիմնվում է հարկերի բարձր դրույթաչափի վրա, հարկային համակարգը պրոգրեսիվ է կառուցվում և բաշխողական ծախսերի քաղաքականություն է վարում՝ այդ գործելաոճով իրականացնելով իր առջև դրված բաշխման նպատակները:

²⁷ Gini-գործակիցը հավասարության ցուցիչ է: Gini-գործակիցների արժեքը 0-ի դեպքում հավասար է ամբողջական հավասարության և 1-ի դեպքում՝ ամբողջական անհավասարության (դա նշանակում է, որ ամբողջ եկամուտը տրվում է մեկ անձի):

Արդյո՞ք հավասարության բարձր աստիճանը տնտեսական աճի գինն է

Այսպիսով, հարց է առաջանում՝ արդյո՞ք կառավարությունները բաշխման նպատակներին հասնելու հաջողության համար իրականում պետք է հրաժարվեն տնտեսական աճից, ինչը մոտ է արդարության և արդյունավետության միջև նպատակային հակամարտության տեսությանը:



Գծապատկեր 13. Հարկերի ցուցանիշ և տնտեսական աճ (1997-2009 թթ.)

Օրինակ՝ Շվեդիան 1997-2009 թթ. միջակայքում հարկերի մոտ 49 % միջին ցուցանիշի պարագայում ունեցել է մոտ 2,4 % տնտեսական աճ, Ճապոնիան շուրջ 27 % հարկերի ցուցանիշով արձանագրել է 0,4 % տնտեսական աճ:

Հարկերի ցուցանիշի և տնտեսական աճի հարաբերակցություն

Ինչպես տեսնում ենք 13-րդ գծապատկերում, հարկերի ցուցանիշի բարձրության և տնտեսական աճի միջև չկա որևէ կապ: Ինչպես ցածր, այնպես էլ բարձր հարկադրույթ ունեցող պետությունների շարքերում կան և՛ բարձր, և՛ ցածր տնտեսական աճ ունեցող երկրներ: Այսպիսով, արդյունավետության և արդարության միջև նպատակային հակամարտության համար չկա որևէ էմպիրիկ հաստատում:

Այնուամենայնիվ, պետք է եզրակացնել, թե հարկերը ոչ մի ազդեցություն չեն գործում տնտեսական աճի վրա: Հնարավոր է, որ հարկերի ծավալի հետ զուգահեռ պետք է հաշվի առնել նաև այլ գործոններ: Տնտեսական աճը կարող է հարկերի և

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուղղակի կապ չկա:

Ազդեցության գործոն. ինչի՞ համար է ծախսվում փողը

**Լրացուցիչ ընթեր-
ցանության համար՝**

Շտեֆֆեն Գանգիոֆ
(2004թ.), «Ռ՞վ է
կառավարում
սոցիալական
քաղաքականության
մեջ. եկամտահարկի
բարեփոխում
միջազգային
մրցակցության և
ազգային բաշխման
հակամարտության
միջև», Ֆրանկֆուրտ/
Մայն:

Թոմաս Ռիքսեն և
Սուզանն Ռուլ
(2011թ.), «Ձեռնարկու-
թյունների հարկումը
ներդաշնակեցնել
եվրոպական
մակարդակով, ի՞նչ է
հարկավոր ԵՄ-ում
հարկերի մրցակցու-
թյունը զսպելու
համար. կարծիք
Ֆրիդրիխ Էբերտ
ինստիտուտի
համար», Բոնն:

հարկային համակարգի ազդեցությունից կախված լինել նաև պայմանավորված նրանով, թե ինչի համար են ծախսվում հարկերը, և արդյո՞ք վերջիններիս միջոցով առաջարկվող սոցիալական նպաստները նաև դրական, արդյունավետ կողմնակի ազդեցություն ունեն (տես՝ գլուխ 4.): Սկանդինավյան բարձր հարկային պետություն-ների բավականին բարձր տնտեսական աճի հաջողությունը կարող է բացատրվել նաև նրանով, որ կապիտալի գործոնի հարկային բեռը աշխատանքի գործոնի հարաբերակցությամբ բավականին թեթևացված է, և այդպիսով, ներդրումների համար ստեղծված է տնտեսական բարենպաստ միջավայր:

**Դուալ եկամտահարկ և միջազգային հարկային մրցակ-
ցություն**

Կա երկու պատճառ, որոնք ցույց են տալիս, թե ինչու կարող է կապիտալի եկամուտի (օրինակ՝ ձեռնարկատիրական օգուտը) ցածր հարկումը, նպաստավոր լինել պետության համար: Պատճառ առաջին՝ հնարավոր է ներդրումների համար ստեղծել բարենպաստ միջավայր, ինչը դրական աճի արդյունք է ապահովում: Պատճառ երկրորդ՝ հարկային մրցակցություն: Ցածր հարկային բեռի միջոցով հնարավոր է այլ երկրներից շարժական կապիտալ ներգրավել:

Սկանդինավյան պետությունները, այս երկու պատճառներից ելնելով, ներմուծել են **դուալ եկամտահարկը**, ըստ որի կապիտալը ավելի ցածր դրույթաչափով է հարկվում, քան աշխատանքը, թեև շատերը տարբեր եկամուտների նման անհավասար հարկումը անարդար են համարում, քանի որ վերջինս անտեսում է հարկման սկզբունքը՝ ելնելով անհատական աշխատանքի արդյունավետությունից: Կապիտալի եկամուտը, վերջիվերջո, նույնպես չափորոշիչ է անհատական աշխատանքի արդյունավետության համար: Եթե ցանկանում ենք պահպանել սոցիալական պետությունը և միաժամանակ կապիտալի եկամուտները պատշաճորեն վերջինիս ծախսերի մասը դարձնել, ապա հարկային մրցակցության միջազգային կարգավորման անհրաժեշտություն է առաջանում (տես՝ գլուխ 5.1. Համաշխարհայնացում):

Ի՞նչ է դա նշանակում սոցիալ-դեմոկրատիայի համար:

- Հասարակության առաջադրանքների ֆինանսավորումը պետք է հետևի այն սկզբունքին, որ ուժեղ ուսերը ավելի շատ կարող են ծանրաբեռնվել, քան թույլերը:
- Պրոգրեսիվ եկամտահարկը և գույքի հարկումը համապատասխանում են այս սկզբունքին: Անուղղակի հարկերը (օր.՝ ԱԱՀ) և ներդրումային համակարգերը հաճախ ռեգրեսիվ են ազդում: Վերջիններս անհամամասնորեն են ծանրաբեռնում թույլերին:
- Բաշխման ազդեցության համար կարևոր է ոչ միայն հարկերի պրոգրեսիվությունը, այլ նաև՝ այն, թե ինչի՞ համար և որքա՞ն փող է ծախսվում:
- Սոցիալ-դեմոկրատական պետությունները իրենց հարկային և սոցիալական համակարգերի արդյունքում հասնում են եկամուտի համեմատաբար հավասար բաշխման՝ առանց վնասելու տնտեսական դինամիկային:
- Սոցիալական համակարգերի ֆինանսավորմանն ուղղված կապիտալի գործոնի մասնակցությունը կարող է վերանայվել, եթե միջազգային համագործակցության միջոցով կանխվի վնասակար հարկային մրցակցությունը:

7.2. Աշխատանք

Այս գլխում՝

- կնկարագրվի գերմանական գործադրության ապահովագրության համակարգը և կհամեմատվի դանիական և բրիտանական մոդելների հետ,
- երեք ապահովագրության համակարգերը կգնահատվեն արդարության տարբեր հարթություններում,
- կպարզաբանվեն բարեփոխումների միջոցառումները, ինչպես օրինակ՝ «մասնագիտության ապահովագրության» միտքը:

*Գործադրություն.
ավելին, քան
եկամուտի կորուստ*

Գործադրությունը ավելին է նշանակում, քան միայն աշխատանքի, եկամուտի և վերջինովս պայմանավորված նյութական կորուստը: Գործադրության հետ մեկտեղ հաճախ առաջ են գալիս այնպիսի երևույթներ, ինչպիսիք են հուսահատությունը և ապագայի հանդեպ վախերը: Երկարատև գործադրությունը կարող է հանգեցնել հասարակության շրջանում անհատի սոցիալական կարգավիճակի անկման, ինչպես նաև առողջական և հոգեբանական հետևանքների:

Գործադրության ապահովագրության սկզբնաղբյուրները

19-րդ դարում գործադրության հետևանքով առաջացած աղքատությունը և թշվառությունը դառնում էին հրատապ խնդիրներ: Բնակչության արագ աճը, միգրացիան դեպի քաղաքներ և վերջինովս պայմանավորված՝ գյուղական բարեկամական և հարևանական հարաբերությունների աղճատումը հանգեցրեց նրան, որ եկամուտի կորուստը բերում էր ավելի մեծ չափերի թշվառության, քան մինչև արտադրական ժամանակաշրջանում: 19-րդ դարի ազատական ժամանակների ոգու ներքո առողջ մարդիկ, ովքեր, այդուհանդերձ, կարիքի մեջ էին, համարվում էին ծույլ և անբան: Նրանք օգնություն էին ստանում աղքատների համար նախատեսված տներում՝ միևնույն ժամանակ ենթարկվելով խտրականության և պատժամիջոցների: Եթե մարդիկ օգտվում էին աղքատների համար նախատեսված օգնությունից, ապա նրանք կորցնում էին իրենց քաղաքցիական իրավունքները և չունեին նույնիսկ ընտրելու իրավունք:

*Արդյունաբերական-
ցումը սրեց գործադր-
ության խնդիրները*

19-րդ դարի վերջին շատ եվրոպական երկրներում աշխատողները միավորվեցին կուսակցություններում: Սոցիալական ապահովագրությունների ստեղծումը, որը աստիճանաբար փոխարինում էր աղքատների օգնության ավանդական տարբերակը, շատ երկրներում դարձավ աշխատավոր խավի վրա հասարակական և քաղաքական ճնշման դեմ արձագանք:

*Աշխատավոր խավի
ճնշումը հանգեցրեց
սոցիալական ապա-
հովագրությանը:*

Գործազրկության առաջին ապահովագրության ստեղծումը

Մեծ Բրիտանիայում

Այսպես տեղի ունեցավ առաջին պետական սոցիալական ապահովագրությունների ներմուծումը: 1911 թ. Մեծ Բրիտանիայի առաջին երկիրն էր, որտեղ ներմուծվեց պարտադիր համազգային ապահովագրությունը: Այս ապահովագրության նպաստները սկզբում ապահովում էին միայն մարդկանց գոյության համար նվազագույն կարիքները: Նպաստի տրամադրման ժամանակահատվածի սահմանափակումը, աշխատանք փնտրելու պարտավորությունը պետք է կանխեին նպաստների չարաշահումը:

Գերմանիա

Գերմանիան ամբողջ աշխարհում հայտնի է որպես պետական առողջապահության և վթարների ապահովագրությունների (1883 և 1884 թթ.) ստեղծման առաջամարտիկ, սակայն գործազրկության պարտադիր ապահովագրությունը այստեղ ներմուծվել է միայն 1927 թ.: Մինչ այդ մեծ քաղաքներում գոյություն ունեին միայն արհմիությունների կողմից կազմակերպված տեղական ապահովագրություններ, որոնք ֆինանսավորում էին ստանում քաղաքների կողմից:

Աղքատների խնամքից հրաժարվելու և համազգային գործազրկության ապահովագրության ներմուծման արդյունքում գործազուրկները այլևս ստիպված չէին կատարել յուրաքանչյուր աշխատանք: Գործատուների շահերից չէր բխում ունենալ արհմիությունների կողմից կառավարվող և ամբողջական ծածկույթ ապահովող գործազրկության ապահովագրություն: Նրանք նախընտրում էին ունենալ արհմիությունների և գործատուների կողմից միասնական կառավարվող գործազրկության ապահովագրություն, որը և ներմուծվեց 1927 թ.: Վերջինիս կառավարումը հանձնվեց պետությանը, արհմիություններին և գործատուներին:

Դանիա

Պետական պարտադիր ապահովագրության մոդելի ներմուծումը չիաջողվեց բոլոր երկրներում: Դանիայում գործազրկության ապահովագրությունը առ այսօր պարտադիր չէ: Գործազրկության ապահովագրությունը կառավարում են արհմիությունները, այդ պատճառով գործազրկության նպաստ ստանալու իրավունք ունենալու համար անհրաժեշտ է անդամակցել արհմիությունների կողմից կազմակերպված գործազրկության ֆոնդերի: Դանիացի զբաղվածների 75-80 % ունեն գործազրկության ապահովագրություն և անդամակցում են արհմիությունների:

*Գործազրկության
առաջին ապահովագ-
րություն, 1911 թ.*

*Գերմանիա.
գործազրկության
ապահովագրությունը
ներմուծվեց բավականին ուշ՝ միայն 1927
թվականին:*

*Դանիա. ապահովագ-
րությունը կատար-
վում է արհմիություն-
ների միջոցով:*

75-80 %-ը անդամակցում են արհմիությունների և այդպիսով նաև ապահովագրված են

Չափը տատանվում է:
Դանիայում՝ 90 %,
ԳՂՀ-ում՝ 65-67 %

Գործազրկության ապահովագրությունների տարբերությունները պայմանավորված չեն միայն դրանք կառավորողներով: Գոյություն ունեն նաև այլ հատկանիշներ, որոնցով պայմանավորված՝ զգալի տարբերություններ կան զարգացած պետությունների միջև: Այդ տարբերությունները հնարավոր է լավ պատկերել Գերմանիայի, Դանիայի և Մեծ Բրիտանիայի միջև անցկացվող համեմատությունների շնորհիվ:

Գործազրկության նպաստի (գումարի) չափը

Հիմնականում համեմատություններն անցկացվում են գործազրկության նպաստի չափի և վերջինիս տրամադրման տևողության շուրջ: Երեխաներ ունեցող գործազուրկների համար Գերմանիայում գործազրկության նպաստը կազմում է նախորդ հարկված աշխատավարձի 67 %-ը, իսկ մյուսների համար (առանց երեխաների)՝ 60 %: Վերջինս գործում է միայն մինչ եկամուտի չափման որոշակի սահմանագիծը (Գերմանիայի արևմուտքում ամսեկան չհարկված աշխատավարձ՝ 5.600 եվրո, իսկ արևելքում՝ 4.800 եվրո, 2012 այդ սահմանագիծը կազմում էր արևելքում տարեկան 57.600 եվրո, իսկ արևմուտքում՝ 67.200 եվրո):

Երեխաներ չունեցող միայնակների համար գործազրկության նպաստը ԳՂՀ-ի արևմուտքում կազմում է առավելագույնը 1.760 եվրո, իսկ արևելքում՝ 1.580 եվրո: Երեխաներ ունեցող ամուսնացածների համար (աշխատավարձի հարկման 3-րդ աստիճան) գործազրկության առավելագույն նպաստը կազմում է 2.300 եվրո արևմուտքում և 2.038 եվրո արևելքում:²⁸

Դանիայում գործազրկության նպաստը սահմանվում է նախորդ չհարկված աշխատավարձի 90 %-ի չափով: Այստեղ գոյություն ունի ամսեկան գործազրկության նպաստի առավելագույն սահման, այն է՝ ամսեկան 2.100 եվրո (շաբաթական մոտ 530 եվրո): Դանիայում գործազրկության համար տրվող նպաստը ենթակա է հարկման: Այսպիսով, Դանիայում նախկինում քիչ վաստակած գործազուրկները Գերմանիայի հետ համեմատությամբ գործազրկության ավելի բարձր նպաստ են ստանում, իսկ նախկինում լավ վաստակածները վնասներ են կրում:

Մեծ Բրիտանիայում գործում է միասնական դրույքաչափ: 2012-ին այն կազմում էր շաբաթական 67,50 ֆունտ (մոտ 80 եվրո, մինչև 25 տարեկան անձանց համար այն կազմում էր շաբաթական 53,45 ֆունտ կամ 64 եվրո): Վարձակալության վճարումների համար հնարավոր է հավելավճարների հայտ ներկայացնել: Մեծ Բրիտանիայում գործազրկության նպաստը թե՛չափով, թե՛ հայեցակարգով (միասնական դրույքաչափ) համապատասխանում է Գերմանիայում գործող սոցիալական

28 www.pub.arbeitsagentur.de/selbst.php կայքում կարող եք ինքնուրույն հաշվարկել ձեզ հասանելի գործազրկության նպաստի չափը:

Նվազագույն ապահովման համակարգին, որը արտահայտվում է գործազրկության գումար II-ի միջոցով (ALG II): Պահպանողականներից և ազատականներից բաղկացած կոալիցիոն կառավարությունը պլանավորում է բրիտանական սոցիալական համակարգի արմատական փոփոխություն: Այսպես կոչված Universal Credit-ը պետք է փոխարինի աշխատունակ տարիքում տրամադրվող սոցիալական նպաստների և հարկային հավելավճարների (“tax credits”) մեծ մասին, այդ թվում նաև՝ գործազրկության նպաստին: Այս «universal»՝ համընդհանուր սոցիալական նպաստի չափը դեռ պարզ չէ: Նոր համակարգի համաձայն վճարումները կկատարվեն միայն 2013թ. հոկտեմբերից: Այս գաղափարը հիշեցնում է բազային եկամուտը, որը չպետք է վճարվեր անվերապահորեն, այլ՝ պայմանավորվոր որոշակի նախապայմաններով (աշխատանքի փնտրտուք, աշխատաշուկայի ծրագրի մասնակցություն և այլն...): Universal Credit-ը հիմնականում նպատակ է հետապնդում ֆինանսական խթան հանդիսանալ աշխատանքը վերսկսելու համար՝ աշխատելով հանդերձ ստանալ նաև սոցիալական նպաստների որոշ մասը:

Տրամադրվող գործազրկության նպաստի ժամանակահատվածը

Գործազրկության նպաստի տրամադրման տևողության տարբերություններն ավելի մեծ են, քան գործազրկության նպաստի չափի դեպքում: Գերմանիայում գործազրկության նպաստի տրամադրման տևողությունը պայմանավորված է տարիքով և կատարած ներդրումների ժամանակահատվածով: 50-ից ցածր բոլոր քաղաքացիների գործազրկության նպաստի տրամադրումը կազմում է 1 տարի, եթե վերջիններս նախորդող 2 տարիների (նվազագույնը 2 տարի) կատարել են պարտադիր սոցիալական ապահովագրություն պահանջող աշխատանք: Եթե զբաղվածության ժամանակահատվածը նախկինում ավելի կարճ է եղել, ապա գործազրկության նպաստ տրամադրվում է 6 ամիս (1 տարի աշխատած լինելու դեպքում) և 10 ամիս (20 ամսվա աշխատանքի դեպքում): 50 տարեկանից բարձր քաղաքացիներն իրավունք ունեն միջև 2 տարվա գործազրկության նպաստի ALG II (58-ից բարձր քաղաքացիների դեպքում անհրաժեշտ է նախորդող նվազագույնը 4 տարիների ընթացքում սոցիալական պարտադիր ապահովագրություն պահանջող աշխատանք):

Մեծ Բրիտանիայում գործազրկության նպաստը տրամադրվում է առավելագույնը կես տարի: Դրանից հետո գործազուրկներն իրավունք ունեն դիմելու գործազրկության օգնության, որը տրամադրվում է միայն դրա անհրաժեշտության հավաստիությունը ստուգելուց հետո: Այս օգնության առավելագույն սահմանը նույնն է, ինչ գործազրկության նպաստի դեպքում: Վերջինիս տրամադրումը ուղեկցվում է ավելի խիստ գործընթացներով և արդյունքում հնարավոր է, ինչպես ALG II-ի

*Գործազրկության
նպաստի տրամադր-
ման տևողության մեծ
տարբերություններ*

պարագայում, որ տրամադրվող նպաստի չափը խիստ սահմանափակ լինի կամ այն ընդհանրապես չհատկացվի: Դանիայում գործազրկության նպաստի տրամադրման ժամանակահատվածը երկար տարիներ կազմում էր չորս տարի: Նպաստառուի համար հարկավոր էր մեկ տարի անց աշխատանք փնտրելու, մասնագիտացման կամ որակավորման միջոցառումների մասնակցության ապացույցներ ներկայացնել: Դանիայի ազատական-պահպանողական կառավարությունը 2010 թվականին գործազրկության տրամադրման ժամանակը կրճատեց՝ այն հասցնելով երկու տարվա:

Ֆինանսավորում

Նշված երեք երկրներում գործազրկության նպաստների ֆինանսավորման ճանապարհները տարբեր են: Գերմանիայում աշխատավարձի 3 %-ը՝ մի կեսը՝ գործատուներից, մյուսը՝ գործառույթներից, վճարվում է գործազրկության ֆոնդ, այս սկզբունքը գործում է միայն մինչև սահմանված աշխատավարձի չափման սահմանը՝ 5.600 եվրո արևմուտքում և 4.800 եվրո արևելքում:

Դանիայում 2012 թ. դրությամբ ամբողջությամբ աշխատանքի պարագայում գործազրկության ապահովագրության համար վճարվող ամսական վճարը կազմում է 63 եվրո (467,50 կրոն ամենաբարձր՝ A աստիճանի դեպքում, Dansk Metal): Այս գումարը չի ներառում կենսաթոշակային տարիքի համար հավելյալ կամավոր վճարը, որը կազմում է ամսական մոտ 60 եվրո: Մեծ Բրիտանիայում չկան գործազրկության ֆոնդին վճարվող առանձին վճարներ: Այստեղ սոցիալական նպաստների համար վճարվում է ընդհանուր գումար, որը կազմում է չհարկված աշխատավարձի 23,8 %-ը (որից 11 %-ը գանձվում է աշխատողներից, իսկ 12,8 %-ը՝ գործատուներից): Այս միջոցներից վճարվում են գործազրկության նպաստները, պետական կենսաթոշակները, առողջապահական համակարգը, երեխաների խնամքի գումարները և անգործունակության նպաստները: Մեծ Բրիտանիայում նույնպես գոյություն ունի առավելագույն սահման (մոտ 4.500 եվրո), սրանից բարձրի դեպքում գանձվում է վճարների կրճատված տոկոսադրույք՝ 13,8 % (որից 1 %-ը գանձվում է աշխատողներից և 12,8 %-ը՝ գործատուներից):

Չափ, ժամանակահատված և արդարություն


Ինչպես Գերմանիայում, այնպես էլ Դանիայում գործազրկության նպաստները տոկոսային հարաբերակցությամբ զուգորդվում են նախկին աշխատավարձի չափի հետ: Գերմանիայում բարձրացվում են նաև վճարները՝ որպես չհարկված աշխատավարձի տոկոսային մասնաբաժին: Այս կառուցածքում նկատելի է վարձատրության արդարության սկզբունքը (ինչպես նաև համարժեքության սկզբունքը): Նա,

*Ֆինանսավորման մեծ
տարբերություններ*

*Նպաստների
սկզբունքը. Գեր-
մանիա, Դանիա*

ով ավելի շատ է վճարում գործազրկության ապահովագրության համար, պետք է գործազրկության դեպքում ավելի շատ ստանա:

Դանիայում այս մոտեցումն ավելի սահմանափակ է գործում, քանի որ վճարները գանձվում են միասնական դրույքաչափով: Միաժամանակ նպաստների վճարումները կատարվում են նախկին աշխատարժի համաձայն: Այստեղ հիմնականում նկատելի է պահանջի արդարության սկզբունքը: Գործազուրկները հնարավորություն ունեն աշխատանք փնտրելու և կարող են, համապատասխանաբար, տվյալ ժամանակահատվածում (վերջինս ֆինանսական ճգնաժամի հետևանքով կրճատվեց՝ հասցվելով երկու տարվա) ապահովել իրենց կենսական պայմանները: Այս կանոնակարգումը ուղեկցվում է չկարգավորվող աշխատաշուկայով, որտեղ գործնականում գոյություն չունի աշխատանքից հեռացման որևէ երաշխիք: Նկարագրված կանոնակարգումները, միաժամանակ հանգեցրել են նրան, որ միջազգային համեմատությամբ, այստեղ կամավոր աշխատանքից հեռացողների և այլ աշխատանք փնտրողների թիվը շատ մեծ է:



Աղբյուր՝ OECD (2012a)

Գծապատկեր 14. Հարկված դրույքաչափերի ցուցանիշները միջազգային համեմատությամբ

Դանիայի հետ համեմատությամբ Մեծ Բրիտանիայում գործում է կառուցվածքային ճիշտ հակառակ սկզբունքը: Այստեղ աշխատավարձով պայմանավորված վճարները բարձրացվում են, տրամադրվող նպաստները, սակայն, վճարվում են

Հավասարության սկզբունք. Մեծ Բրիտանիա (ավելի ցածր մակարդակ)

միասնական դրույքաչափով: Այս կառուցվածքով համերաշխության գաղափարը ավելի ուժեղ է շեշտադրվում, քան Գերմանիայում և Դանիայում («ամուր ուները» ավելին են վճարում, սակայն ավելի մեծ պահանջներ չունեն): Թեև, նպաստները գործում են ակնհայտ ավելի ցածր մակարդակի վրա, այդուհանդերձ կա համերաշխության ցածր ինտենսիվություն: Նոր Universal Credit-ի միջոցով սոցիալական նպաստների շարքը կհամալրվի, սակայն վարձատրության արդարության միտքը չի իրականանում, իսկ պահանջի արդարությունը միայն չափազանց թերի ուշադրության է արժանանում:

*Կատարվող
վճարների ժամանա-
կահատվածը
չափանիշ է:*

Դիտարկելով այս երեք տարբեր կառույցները՝ հարց է առաջանում, թե արդարության ո՞ր սկզբունքով առաջնորդվելով պետք է լավագույնս սահմանվի գործազրկության նպաստի չափը և տևողությունը: Այսպես կոչված Hartz-բարեփոխման շուրջ բնարկումները ցույց տվեցին, որ շատերը մտածում են, որ «Նա, ով երկար է վճարում, պետք է նաև ավելին ստանա»: Ապահովագրության տրամաբանության հետ այս պնդումը որևէ կապ չունի: Օրինակ, եթե դուք հարևանի տանը վերարկուն հագնելիս անզգույշ շարժման հետևանքով կոտրում եք միջանցքում դրված թանկարժեք վազը, պարտադիր ապահովագրությունը չի փոխհատուցում, նույնիսկ եթե դուք շատ երկար ժամանակ վճարումներ եք կատարել: Եթե ընդունում ենք ապահովագրության տրամաբանությունը, ապա գործազրկության ապահովագրության պարագայում նախորդ աշխատավարձի որոշակի տոկոսի փոխհատուցման կանոնը արդարացված կլինի: Այսպիսով, մնում է վճարների կառույցի հարցը: Աշխատանքի կորուստը հիմնականում կամավոր տեղի չի ունենում (կամավոր աշխատանքից ազատվելու դեպքում նախատեսվում է 3 ամիս արգելափակման ժամանակահատված), և հետևաբար գործազրկության պարագայում գործ ունենք կենսական ռիսկի հետ: Վերջինիս համար հասարակությունը պետք է պայքարի միասնականորեն և համերաշխ: Այս հեռանկարի պարագայում աշխատավարձից տոկոսային հարաբերությամբ կատարվող վճարները, ինչպես Գերմանիայում է, ավելի արդար է թվում, քան միասնական դրույքաչափը: Վճարների չափման սահմանի գոյությամբ գործի չի դրվում համերաշխ ֆինանսավորման պրակտիկան, քանի որ Գերմանիայում վճարների չափման սահմանի միջոցով համերաշխ ֆինանսավորման շրջանակից ազատվում է բնակչության բացառապես այն հատվածը, որը գործազրկության ենթարկվելու միայն շատ սահմանափակ ռիսկ է պարունակում:

*Ինչպիսի՞ ալլ
չափանիշներ կան*

Գործազրկության չարաշահման համար ավելորդ գայթակղության առիթ չտալու համար, նպաստի տրամադրման տևողության առումով, ամենաին էլ պատճառ չկա նվազագույն զբաղվածության ժամանակահատվածից բացի որևէ աստիճանավորում կատարել՝ ելնելով կատարված վճարների տևողությունից: Գոյություն ունեն

արդյոք այլ փաստարկներ կամ չափանիշներ, որոնք կարող են խոսել նպաստի համար ժամանակահատված սահմանելու օգտին:

Գերմանիայում գործազրկության շրջանում տարիներ շարունակ ապահովվում էր կենսական մակարդակ ապահովող եկամուտ, որը տրամադրվում էր ամբողջ կյանքի ընթացքում: Նախորդ աշխատավարձով պայմանավորված՝ մեկ տարի տրամադրվող գործազրկության նպաստից հետո գործազուրկները կարող են հայտ ներկայացնել աշխատվարձով պայմանավորված ավելի ցածր գործազրկության օգնության, որը տրամադրվում է առանց ժամանակային սահմանափակման (կարիքը ստուգելուց հետո): Գործազրկության և սոցիալական օգնության նպաստները ALG II-ում միավորելու արդյունքը հանգեցրեց նրան, որ 12 ամիս անց գործազուրկներին տրամադրվում են միայն առաջնային ապահովման կարիքները հոգալու միջոցներ (ALG II կամ “Hartz IV”): 2006-ի փետրվարից ի վեր, տարեցներին ևս 8 ամսվա հավելյալ ժամանակահատվածի հնարավորություն տրվեց, որը 2007-ին տարբեր տարիքային խմբերի համար տարբերակված կարգով 12 ամսով (ընդհանուր մինչև 24 ամիս) երկարացվեց: Եթե նույնիսկ սա չի համապատասխանում հավասարության սկզբունքին, հնարավոր է հիմնավորել հնարավորությունների հավասարության սկզբունքի տեսանկյունից, քանի որ տարեց գործազուրկների հնարավորությունները աշխատաշուկայում շարունակում են ակնհայտ ցածր մնալ: Տարեց գործազուրկների սակավ հնարավորությունները հավասարակշռելու համար արդարացված է գործազրկության նպաստի տրամադրման ժամանակահատվածի երկարացումը: Հարցին, թե ընդհանրապես որքա՞ն ժամանակ պետք է վճարել նախկին եկամուտով պայմանավորված գործազրկության նպաստը, դժվար է պատասխանել արդարության սկզբունքի տեսանկյունից: *Agenda 2010*-ի շրջանակում գործազրկության նպաստի տրամադրման ժամանակահատվածի նվազեցումը մեկ տարվա շատերի կողմից որակվեց որպես անարդար և ֆինանսական Դամոկլյան սուր, որը շահառուներին մեկ տարի գործազրկությունից հետո կստիպի վերադառնալ ծերության համար կուտակված պահուստներին կամ էլ ուղղակիորեն կնշանակի ֆինանսական կարգավիճակի զանգվածային անկում:

Սահմանափակ ֆինանսական ռեսուրսների ֆոնին, գուցե, սահմանափակումները անհրաժեշտ են: Գործազուրկների շուրջ ծավալվող քննարկումների բովանդակությունը գրեթե հասել է այն սահմանագծին, որտեղ գործազուրկների մի ստվար զանգված սոցիալական ցանցաճոճում է գտնվում: Քննարկումների բովանդակության շուրջ վստահաբար կասկածներ են առաջանում: Թեև Hartz-բարեփոխման ներդրումից հետո գործազրկության ցուցանիշը նվազել է, սակայն դրանով պայմանավորված՝ աճել են անկայուն/կասկածելի աշխատանքային հարաբերություն-

*Հասարակությանը
հուզող երկու հարց*

ները: Երկարատև գործազուրկների թիվը Եականորեն չի նվազել, թեև նրանք ենթարկվում էին լուրջ ֆինանսական «գայթակղության»: Ամբողջ հասարակությանը հուզող երկու հարցերը հետևյալներն են. առաջին՝ որքա՞ն ժամանակ ենք մենք պատրաստ աշխատանք որոնողներին աշխատանք գտնելու հնարավորություն ընձեռել, հաշվի առնելով, որ նրանք ամեն աշխատանք չէ, որ ընդունում են: Երկրորդ՝ որքա՞ն պետք է լինի նրանց հատկացվող նպաստը, ում չի հաջողվել այդ ժամանակահատվածում աշխատաշուկայում նոր աշխատանք գտնել: Սա վերաբերում է ALG II-ի չափին, որը շատերի կողմից շատ ցածր է որակվում:

Իրավունքներ և պարտականություններ

Բավարար ժամանակահատված պարտադիր վճարումներ կատարած քաղաքացիները Մեծ Բրիտանիայում այժմ կես տարի են գործազրկության նպաստ ստանում (այնուհետև ճիշտ նույն չափի գործազրկության օգնություն), Գերմանիայում՝ մեկ տարի շարունակ (50-ից ցածր քաղաքացիները) և Դանիայում՝ երկու տարի շարունակ: Այս թվերը չեն ներկայացնում, իհարկե, այն նախապայմանները, որոնք առկա են բոլոր երկրներում գործազրկության նպաստ ստանալու համար: Վերջիններս մի քանի տարի է, ինչ քննարկվում են «իրավունքներ և պարտականություններ» կամ «ակտիվացնող աշխատաշուկա» խորագրի ներքո: Նշված բոլոր երկրներում էլ գործազրկության նպաստ ստանալու հիմնական նախապայմանը աշխատանքի ակտիվ որոնումն է: Եթե այդ որոնումները հաջողությամբ չեն ավարտվում, ապա գործազուրկները, տարբեր ժամկետներից ելնելով, կարող են այլ պարտավորություններ ունենալ: Դանիայում այդպես է մեկ տարի անց, Մեծ Բրիտանիայում տասնութ ամիս անց (երիտասարդ գործազուրկների դեպքում ժամկետը մեկ տարի է): Գերմանիայում չկա սահմանված ժամանակահատված, սակայն, հատկացվող գործազրկության նպաստի սահմանված ժամանակահատվածից հետո (մեկ տարի) արձանագրվում է պայմանների խստացում:

Վերաինտեգրում

Նշված բոլոր երեք երկրներում գործազուրկները կարող են պարտավորված լինել մասնակցելու հատուկ ծրագրերի, որոնք ուղղված են աշխատաշուկայում վերաինտեգրվելու օժանդակմանը: Ժամանակահատվածը, որի ընթացքում գործազուրկները առանց ուղղակի ճնշման կարող են աշխատանք որոնել, կազմում է Գերմանիայում տասներկու, իսկ Դանիայում՝ տասնութ ամիս: Եթե աշխատանքի որոնումները հաջողություն չեն ունենում, ապա զբաղվածության նախարարությունը կարող է աշխատանք փնտրողներին պարտավորեցնել մասնակցել ծրագրերի, որոնք աշխատաշուկայում աշխատանք գտնելու հնարավորությունները

բարձրացնում են («Ակտիվացում»): Այս ծրագրերի բովանդակությունը նշված երեք երկրներում ակնհայտ տարբեր են:

Մեծ Բրիտանիայում լեյբորիստական կառավարության օրոք այս ծրագրերը կրում էին “New Deal” խորագիրը: Այժմ այդ միջոցառումները ենթարկվել են բարեփոխումների և կրում են “Work Programme” անվանումը: Ենթադրվում է, որ գործազուրկները պետք է անմիջապես համաձայնագիր կնքեն զբաղվածության նախարարության հետ, որով նրանք որոշակի անհատական պարտավորություններ են ստանձնում: Եթե գործազուրկները այդ պարտավորությունները չեն իրականացնում, ապա գործազրկության օգնությունը՝ Universal Credit-ը 2013 թ.-ից սկսած կրճատվում է:

*“New Deal”-եր Մեծ
Բրիտանիայում*

Դանիայում այդ ծրագրերի առանցքում կրթությունն է: Այստեղ այդ ծրագրերը ինտենսիվ և ժամանակատար առաջարկներ են: Վերջիններս ոչ միայն կարճաժամկետ որակավորման առաջարկներ են, այլ նաև՝ «նորմալ» կրթական համակարգի շրջանակում պետության կողմից աջակցվող մասնագիտացման հնարավորություն: Այստեղ կան նաև սուբսիդավորվող աշխատանքներ, վերջիններս հնարավոր են միայն որևէ վերապատրաստման միջոցառման հետ համատեղ: Սա հնարավոր է նաև այն գոծառուների համար, որոնք աշխատանքային ռոտացիայի շրջանում երկարաժամկետ աշխատանքային ընդմիջման են դիմում: Աշխատաշուկայի այս ծրագրերի շրջանակում ցածր վարձատրվող աշխատանքային սեկտորներում առանձնակի աջակցությունը հստակորեն մերժվել է: Ծրագրերի անհատական ընտրությունը տեղի է ունենում պարտադիր ակտիվացման պլանների շրջանակում: Ակտիվացման պլաններին մասնակցությունը ինքնին կամավոր չէ, վերջինս նախապայման է հանդիսանում հետագայում գործազրկության նպաստի տրամադրման համար:

*Դանիա. ծրագրերի
առանցքում
կրթությունն է*

Զբաղվածության գործակալությունների և աշխատանք որոնողների միջև նման պայմանագրեր գոյություն ունեն նաև Գերմանիայում: Hartz-բարեփոխման համատեքստում ևս փորձ կատարվեց Նորովի սահմանել գործազուրկների իրավունքները և պարտականությունները: Այսպիսով, առաջարկները, և դրանով պայմանավորված՝ նաև իրավունքները ընդլայնվեցին, միաժամանակ այդ առաջարկների ընդունման ճնշումը ավելի սրվեց: Վերապատրաստումներ և որակավորման միջոցառումներ այստեղ ևս առաջարկվում են, սակայն վերջիններս ակտիվ աշխատաշուկայի քաղաքականության առանցքում չեն: Այստեղ ավելի կարևոր են գործիքները, ինչպիսիք են՝ կադրերի սուբսիդավորումը, անհատ ձեռներեցների համար քիզնեսի հիմնադրման սուբսիդիաները կամ երկարաժամկետ գործազուրկների

*Գերմանիա.
ինտեգրման
համաձայնագիր*

համար այսպես կոչված 1-եվրո-աշխատանքները: Այս ամենով առանցքային են դառնում աշխատանքի հնարավորություն ստեղծող պայմանները, որոնց բովանդակությունը բխում է հանրային շահերից և որոնց միջոցով գործազուրկները կրկին մուտք կգործեն աշխատաշուկա (այս աշխատանքի համար գործազուրկության նպաստին ավելանում է այլ ծախսերի համար հավելյալ փոխհատուցում, որից և առաջացել է «1-եվրո-աշխատանք» անվանումը):

Ակտիվ աշխատաշուկայի բաղաբաղանության համար կատարված ծախսեր 2009թ.

Աշխատանքով հետաքրքրված 1 անձի համար աշխատաշուկայի բաղաբաղանության միջոցառումների համար կատարված ծախսերը եվրոյով (KKS սպառողականության ճշգրտումով)	Դանիա	Գերմանիա	Մեծ Բրիտանիա	ԵՄ-15
	15.819,97	10.353,49 (այսքան է գնահատվում)	2.336,58	7.801,28 (այսքան է գնահատվում)

Աղբյուր՝ Եվրոստատ

Հատկապես լավ.
Դանիա

Մասնագիտական կրթության և վերապատրաստման համար ծախսեր

Գերմանիայում մասնագիտական կրթության և վերապատրաստման համար կատարվող ծախսերը ԵՄ 15 երկրների համեմատությամբ միջինից բարձր են: Գերմանիայի դիրքը գործազուրկների մասնագիտական կրթության և վերապատրաստման համար կատարվող ծախսերի առումով ակնհայտորեն բարձր է, մասնավորապես՝ Մեծ Բրիտանիայի համեմատությամբ: Տարբերությունը ակնհայտ է նաև Դանիայի հետ համեմատությամբ: Առաջին հայացքից թվում է, թե այս բացահայտումները որևէ կապ չունեն արդարության հարցերի հետ: Սակայն եթե դիտարկում ենք գործազուրկների բաշխվածությունը ըստ կրթական աստիճանի, արդարության խնդիրը ակնհայտ է դառնում: Որևէ այլ արևմտաեվրոպական երկրում կրթությամբ պայմանավորված գործազրկության ռիսկը այդքան մեծ չէ, որքան Գերմանիայում:

2010 թվականի գործազրկության ցուցանիշը ըստ կրթական աստիճանի

	Միջնակարգ մակարդակ I	Միջնակարգ մակարդակ II	Բարձրագույն կրթություն
Գերմանիա	15,1	7,0	3,2
Դանիա	11,3	6,9	4,8
Մեծ Բրիտանիա	4,1	8,3	4,1
ԵՄ-15	16,1	8,6	5,5

Աղբյուր՝ Եվրոստատ

Գործադրության ռիսկը Գերմանիայում անհավասար է բաշխված: Գործադրության անհավասար բաշխվածությունը 2010թ. վերը նշված թվերով նույնիսկ թերագնահատված է, քանի որ եվրոպական մյուս երկրների աշխատաշուկաները զգալիորեն ավելի ուժեղ էին տուժել ֆինանսական և դրան հաջորդող տնտեսական ճգնաժամից, քան Գերմանիայում: Այսպիսով, սահմանափակ որակավորում ունեցողների գործադրության ցուցանիշը ճգնաժամից առաջ՝ 2007 թվականին, Դանիայում միայն 4,2 % էր, Մեծ Բրիտանիայում՝ 6 %, իսկ Գերմանիայում՝ 17,7 %: Բոլոր արևմտյան երկրներում սահմանափակ կրթություն ունեցողները ավելի շատ են վտանգված տնտեսական վայրիվերումներից, քան ավելի լավ որակավորում ունեցող գործառույթները: Ցածր կրթությունը տևականորեն մեծացնում է գործադրության ենթարկվելու ռիսկը, և գործադրությունն էլ իր հերթին մեծացնում է բարձր տարիքում անբավարար եկամուտ ունենալու ռիսկը: Այս իրավիճակը արմատականորեն հակասում է հնարավորությունների հավասարության սկզբունքին:

Հնարավորությունների հավասարությունը ենթադրում է առանձնահատուկ աջակցություն, մասնավորապես, այն գործազուրկներին, որոնց հնարավորությունները աշխատաշուկայում ամենաչնչինն են: Հասարակությունը փորձում է համոզվել, արդյո՞ք օժանդակության միջոցները չեն չարաշահվում: Այս մտահոգությունը համապատասխանում է «աջակցել և պահանջել» սկզբունքին: Ինչպես երեք տարբեր երկրների օրինակներն են ցույց տալիս, աջակցելու և պահանջելու հարաբերակցությունը շատ տարբեր հաջողություններ է ունենում: Մեծ Բրիտանիայում շեշտը միանշանակորեն դրվում է **պահանջելու** վրա: Թեև Դանիայում առաջարկների պարտավորեցնող բնույթը և նպաստների կրճատման սպառնալիքները պակաս տհաճ չեն, սակայն առաջարկներն այստեղ անհամեմատ ավելի բարձր որակ ունեն: Կրթության վրա շեշտադրելով՝ այստեղ գործազուրկների հնարավորությունները աշխատաշուկայում մշտապես բարելավվում են: Գերմանիայում, վերջին տարիների բարեփոխումների հետևանքով, **պահանջելը** էականորեն ավելի ինտենսիվ բնույթ է կրում: Փորձ է կատարվում ընդլայնել նաև **աջակցության** դաշտը: Կրթական աստիճանով պայմանավորված՝ գործազուրկների հանդեպ քաղաքականության որոշիչ փոփոխություն, այնուամենայնիվ, տեղի չի ունենում, թեև վերջինս Գերմանիայում ավելի քան անհրաժեշտ է, քան այլ եվրոպական երկրներում:

Չբաղվածության ապահովագրության գաղափարը

Չբաղվածությունը պահպանելու և գործադրության ի հայտ գալը կանխելու համար դեռևս զբաղվածության ընթացքում անհրաժեշտ է ավելի մեծ կարևորություն տալ մասնագիտական կրթությանը և վերապատրաստումներին, աշխատատեղը կորցնելուց հետո միայն դա անելու փոխարեն: Այս ուղղությամբ կարևոր

քայլ կլիներ գործադրության ապահովագրությունը զարգացնել ընդհուպ մինչև զբաղվածության ապահովագրության:

Ոչ միայն աշխատանքը, այլ նաև անցումային շրջանները պետք է արժանավայել լինեն երեք տարր

Եկամուտների ռիսկերը ապահովագրված պետք է լինեն ոչ միայն գործադրության, այլ նաև ռիսկային անցումային շրջանների ժամանակ: Ոչ միայն աշխատանքը, այլ նաև անցումային շրջանը պետք է արժանավայել լինի: Գործադրության ապահովագրության ընդլայնումը զբաղվածության եռաստիճան ապահովագրության, կկարողանար ավելի արդար վերաբերվել աշխատանքային աշխարհի ժամանակակից ռիսկերին, ինչպես ծերության ապահովության ապահովագրական համակարգն է բաժանված երեք մասերի:

Առաջին՝ ունիվերսալ տարրական ապահովություն

Վերջինս պետք է բաղկացած լինի առաջին հերթին ունիվերսալ տարրական ապահովությունից, որը մեծամասամբ համապատասխանում է ALG II-ին (գործադրության նպաստ), բայց, միևնույն ժամանակ, ավելի լավ պետք է պաշտպանի աղքատությունից: Ապահովությունն ունիվերսալ պետք է լինի այն իմաստով, որ գործի բոլոր գործունակների համար առանց նախապայմանների (բացի կարիքից), երաշխավորի կենսական միասնական ստանդարտներ և ֆինանսավորվի հարկերի միջոցով:

Երկրորդ՝ աշխատավարձով պայմանավորված եկամուտի ապահովում

Երկրորդ՝ ոչ կամավոր գործադրության դեպքում եկամուտի ապահովումը պետք է պայմանավորված լինի աշխատավարձով, որը համապատասխանում է ALG I-ի, այն պետք է սահմանափակվի իր առանցքային գործառնությունով և ներառի բոլոր զբաղվածներին՝ անկախ նրանց աշխատանքային կարգավիճակից:

Երրորդ՝ կողմնորոշում ըստ կենսագրության

Երրորդ աստիճանը պետք է լինի կենսագրությամբ պայմանավորված աշխատաշուկան, որը ներկայիս ակտիվ աշխատաշուկայի քաղաքականությունից բացի, երեք գործառնություններ կիրականացնի. առաջին՝ հանրային կամ հանրային աջակցությամբ աշխատաշուկայի փոխհատուցում, որը բացի աշխատանքի միջնորդությունից առաջարկում է նաև աշխատաշուկայի ծառայություններ: Վերջիններս ոչ միայն աշխատանքի տեղավորման գործակալության գործառնությամբ կիրականացնեին, այլ, աշխատանք առաջարկողի տեսանկյունից, կաջակցեին նաև աշխատանքային կարիերայի կայունությանը, իսկ աշխատանք փնտրողների տեսանկյունից, կօժանդակեին հատկապես մանր ու միջին ձեռնարկությունների անհատական քաղաքականությանը: Երկրորդ՝ զբաղվածության աջակցություն, որը վերապատրաստումների, աշխատավարձի հավելումների կամ անցումային աշխատանքի տարբեր ձևերի միջոցով կօժանդակեր աշխատատեղ ստեղծող կամ պահպանող մակրոտնտեսական զբաղվածության քաղաքականությանը:

Երրորդ՝ աշխատանքային կյանքի քաղաքականություն, որը անհատական զարգացումների և մասնավոր, ինչպես նաև կոլեկտիվ պայմանագրերի արդյունքում լրացուցիչ ապահովման բազայի վրա (վերապատրաստման հնարավորություններ, երկարաժամկետ կամ փուլային) կապահովեր աշխատանքային միջավայրի շրջանակներում ռիսկային անցումներից:

Բազային եկամուտի գաղափար

Քաղաքական քննարկումներում հաճախ տեղ է գտնում բազային եկամուտի շուրջ տարբեր գաղափարների առաջարկը: Բազային եկամուտը նվազագույն եկամուտի մի տարբերակ է: Ի տարբերություն սոցիալական օգնության, բոլոր քաղաքացիները, անկախ իրենց աշխատանքային եկամուտից կամ այլ եկամուտի աղբյուրներից, ստանում են բազային եկամուտ: Այսպիսով, այն պայմանավորված չէ աշխատանքի արդյունավետությամբ կամ աշխատանքի պատրաստակամությամբ:

Գոյություն ունեն բազային եկամուտի կառուցածքի մի շարք առաջարկներ: Վերջիններիս տարբերությունները կայանում են բազային եկամուտի չափի, ֆինանսավորման ձևի, ծավալի և այլ մանրամասների մեջ:

Տարբեր առաջարկների միջոցով տարբերակվում են նաև մտադրությունները: Այսպիսով, *Նեոլիբեռալ* առաջարկների նպատակն է ցածր բազային եկամուտի միջոցով ցածր վարձատրվող ոլորտներում աշխատանքային գայթակղությունը բարձրացնել և նվազեցնել աշխատավարձի լրացուցիչ ծախսերը:

Մյուս առաջարկների նպատակն է ակնհայտորեն ավելի բարձր բազային եկամուտի միջոցով զբաղվածների անկախության աստիճանը բարձրացնել և աշխատանքը վերաբաշխել: Այս մոդելի շրջանակում հնարավոր է նաև իրականում խուսափել անցանկալի աշխատանքից: Աշխատանքային այս մոդելը, որը ներառում է աշխատանքային ամուր իրավունքներ և հնարավորություն է տալիս ամբողջ հասարակությանը կեսօրյա աշխատաժամանակ ունենալ, պետք է նրան ազատագրի շուկայի ուժերից: Այս երկու արմատական տարբեր առաջարկների միջակայքում կան նաև շատ այլ տարբերակներ:

Այսպիսով, հարցին « Ի՞նչ կարծիք ունես բազային աշխատավարձի հայեցակարգի մասին», պետք է հարցով պատասխանել՝ «Բազմաթիվ հայեցակարգերից ո՞րի մասին է խոսքը»: Ամեն դեպքում բազային եկամուտը, որը ավելին կլինի, քան գոյության համար նվազագույն ծավալը, սոցիալական քաղաքական ծրագրերի և հարկային համակարգի տեսանկյունից կհանգեցնի լայնածավալ հետևանքների:

*Հաճախակի
քննարկումների
առարկա. բազային
եկամուտ*

Լրացուցիչ ընթերցանության համար՝
*Գյունթեր Շմիդ
(2008), «Գործազրկության ապահովագրության միջև զբաղվածության ապահովագրություն.,
Ֆրիդրիխ Էբերտ
հիմնադրամ, Բոնն:*

Լրացուցիչ ընթերցանության համար՝

Բյուրն Վազներ (2009),

«Բազային եկամուտը

գերմանական

քննարկումներում.

օրինակներ,

մոտիվներ և շահեր»,

Ֆրիդրիխ Էբերտ

հիմնադրամ, Բոնն:

Շտեֆան Լեգենիխ

(2009), «Բազային

եկամուտը հասարա-

կական և քաղաքա-

կան քննարկումնե-

րում», Ֆրիդրիխ

Էբերտ հիմնադրամ,

Բոնն:

Անշուշտ սպասելի են նաև աշխատաշուկային վերաբերող քաղաքական զգալի հետևանքներ: Այլ կերպ ձևակերպելով՝ մեր տնտեսական և սոցիալական համակարգի առանցքային ոլորտները և այդպիսով նաև՝ հասարակական կարգը ամենայն հավանականությամբ կենթարկվեն լայնածավալ փոփոխությունների: Այդպիսի փոփոխություններ կատարելու համար անհրաժեշտ է հասարակական ընդարձակ համաձայնություն: Բազային եկամուտի շուրջ առաջարկների տարբերություններն արդեն ցույց են տալիս, որ առնվազն ներկայումս այդպիսի համաձայնություն դեռևս նկատելի չէ:

Սոցիալ-դեմոկրատիայի համար դա նշանակում է՝

- ակտիվ աշխատաշուկայի ամրապնդում,
- մասնագիտական կրթության և վերապատրաստման ֆինանսական ու որակական վերազնահատում,
- գործազրկության ապահովագրության զագգացում մինչև զբաղվածության ապահովագրության:

7. 3. Կենսաթոշակ

Այս գլխում՝

- կնկարագրվի գերմանական կենսաթոշակային ապահովագրական համակարգը և այն կհամեմատվի դանիական, շվեդական և բրիտանական մոդելների հետ,
- արդարության չափման տեսանկյունից կգնահատվեն նշված չորս մոդելները,
- կպարզաբանվեն բարեփոխման միջոցառումները, ինչպես օրինակ՝ կապիտալի միջոցով ֆինանսավորումը (կուտակային կենսաթոշակային համակարգ),
- կքննարկվեն բաշխողական ֆինանսավորվող կենսաթոշակի բարեփոխման առաջարկները (կենսաթոշակային համակարգ ըստ սերունդների համերաշխության սկզբունքի):

Կենսաթոշակային ինչպես և գործազրկության ապահովագրությունը դասվում են պետական սոցիալական քաղաքականության առանցքային էլեմենտների շարքին: Կենսաթոշակային ապահովագրությունը մի շարք զարգացած երկրներում կազմում է սոցիալական ծախսերի ամենամեծ բաժինը: Այն շատ երկրներում ներմուծվել է ավելի վաղ, քան գործազրկության ապահովագրությունը:

Կենսաթոշակային ապահովագրության ակունքները

1889 թվականին Գերմանիան առաջին երկիրն էր, որ ներմուծեց պետական կենսաթոշակային ապահովագրությունը: Մինչև 1920-ական թվականները շատ զարգացած այլ երկրներ ևս ներմուծեցին պետական կենսաթոշակային ապահովագրությունը: Այդուհանդերձ, այդ ժամանակների ծերության ապահովագրությունը, հնարավոր չէ համեմատել ներկայիս կենսաթոշակային ապահովագրական համակարգի հետ:

Առաջին մեծ տարբերությունը կայանում է կենսաթոշակային տարբեր տարիքային շեմերի և կյանքի միջին տևողության մեջ: Կենսաթոշակային շեմի տարիքը 70 տարեկանն էր: 1871-1880 թթ. 100 նորածիններից միայն 18-ն էին հասնում կենսաթոշակային տարիքի (70): Մեկ 15 տարեկան երիտասարդի կյանքի միջին տևողությունը կազմում էր 42,3 տարի: Այսպիսով, աշխատողների միայն մի չնչին մասն էր իրականում օգտվում այդ ժամանակների կենսաթոշակային համակարգից:

*Գերմանիա. առաջին
կենսաթոշակային
ապահովագրություն
(1889թ.)*

*Մեծ տարբերություն
մեր օրերի համեմա-
տությամբ. կյանքի
միջին տևողություն*

Կենսաթոշակ սկզբնական շրջանում ամոռացական ֆինանսավորում կապիտալի միջոցով (կուտակային), փութումներ 1920-ականների և Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո:

1957 թ. ի վեր բաշխողական գործընթաց (սերունդների պայմանագիր)

Լրացուցիչ ընթերցանության համար՝
Էլլեն Մ. Իմերգուլթ, Կառեն Մ. Անդերսոն, Իզաբել Շոպե (2007), «The Handbook of West European Pension Politics», Oxford:

Երկրորդ տարբերությունը կայանում էր նրանում, որ նախկինում կենսաթոշակային համակարգը կապիտալի միջոցով ամբողջապես ֆինանսավորվող էր (կուտակային կենսաթոշակային համակարգ), իսկ այսօր՝ բաշխողական (սերունդների համերաշխության սկզբունք): Այս հանգամանքը հանգեցրեց նրան, որ բաժր գնաճի փուլում 1920-ականներին կուտակային համակարգը գործնականում փուլվեց: Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո Գերմանիայի դեռ երիտասարդ կենսաթոշակային ապահովագրական պատմության ընթացքում երկրորդ անգամ ոչնչացվեցին կապիտալի պահուստները:

Բարեփոխում Գերմանիայում 1957թ.

Մինչև 1957 թվականը Գերմանիայում դեռ շարունակում էր գործել հին կենսաթոշակային համակարգը իր հիմնական կառուցվածքով, թեև պատերազմից հետո կենսաթոշակների մի մեծ մաս ստիպված էին վճարել դաշնային բյուջեյից: 1957 թվականի բարեփոխումից ի վեր ներմուծվեց մինչև այժմ գործող բաշխողական գործընթացը: Այսպիսով, ներկայիս կենսաթոշակառուների կենսաթոշակները վճարվում են ներկայումս զբաղվածների կատարած վճարների միջոցով (սերունդների համերաշխության պայմանագիր):

1957 թ. բարեփոխման առանցքային կետերից մեկն էր նաև կենսաթոշակի համապատասխանեցումը եկամուտների ընդհանուր զարգացմանը: Կենսաթոշակի չափը կապված էր աշխատավարձի զարգացման հետ: Սկզբում այն պայմանավորված էր չհարկված աշխատավարձով, ապա, 1992-ից ի վեր, գնաճի հետևանքով հարկված աշխատավարձով: Կենսաթոշակառուները այդ ժամանակ օգտվում էին տնտեսական աճից, որը հանգեցնում էր աշխատավարձերի բարձրացման:²⁹

Սերունդների համերաշխության պայմանագիրը

Գերմանիայում կենսաթոշակային ապահովագրության հիմնարար սկզբունքի քաղաքական ընդունում է, որի համաձայն քնակչության աշխատավոր զանգվածի կենսաթոշակային վճարումներով կատարվում են միևնույն ժամանակահատվածի կենսաթոշակային տարիքի քնակչության կենսաթոշակային վճարները: Սա նշանակում է, որ աշխատանքային կյանքի ընթացքում կատարած պարտադիր կենսաթոշակային վճարները չեն կուտակվում կապիտալի տեսքով, որը հետագայում կհանդիսանար վճարողների կենսաթոշակային վճարների աղբյուր: Պարտադիր կենսաթոշակային վճարումներ կատարելով՝ քաղաքացիները ձեռք են բերում միայն հետագայում կենսաթոշակ ստանալու իրավունք («Քաղաքական բառարան», 2011թ., էջ 121):²⁹

29 Ընդհանրապես ենթադրվում էր, որ «Յ.Յ.Վ. Դիթց Նախֆ. Բոնն» հրատարակչությանը Զլայնի և Շուբերթի 2011 թ. «Քաղաքական բառարան»-ից տարբեր հասկացություններ օգտագործելու հնարավորության համար:

Մինչև 1960-ականների ավարտը ընդհանուր կենսաթոշակային ապահովագրությունը բայլ առ բայլ տարածվեց վարձու աշխատողների և անհատ ձեռնարկողների արհեստավորների վրա, իսկ 1972-ից ի վեր՝ նաև տնային տնտեսուհիները և անհատ ձեռնարկողները, կամավոր վճարումներ կատարելով, կարող էին կենսաթոշակի իրավունք ձեռք բերել: Վերջին տարիներին իրականացվել են նաև այլ վերափոխման միջոցառումներ: 2003 թ.-ից ի վեր գործում է հիմնական ապահովումը այն անձանց համար, ովքեր չեն ստանում բավարար կենսաթոշակ: Այս պարագայում պետական կենսաթոշակային ապահովումը փոխարինում է նախկին սոցիալական օգնությանը:

2012 թ. հունվարի 1-ից այն կազմում է ամսական 374 եվրո: 2001 թվականից ի վեր պետական աջակցության «Ռիզթեր» կենսաթոշակին ավելանում է ծերության ապահովագրության մասնավոր կուտակային բաղադրիչը, որը պետությունը ուղղակիորեն սուբսիդավորում է: Մինչև 2011 թվականի ավարտը ավելի քան 15 մլն. «Ռիզթեր» պայմանագրեր են կնքվել: Այս ամենի հետ մեկտեղ սերունդների համերաշխության սկզբունքով բաշխողական ֆինանսավորվող պետական կենսաթոշակային ապահովագրությունը Գերմանիայում մեծամասնության համար մինչև այսօր կազմում է ծերության ապահովագրության հիմքը:

2004 թվականին կենսաթոշակային բանաձևը համալրվեց կայունության գործոնով, որի համաձայն հաշվի է առնվում պարտադիր կենսաթոշակային վճարումներ կատարողների և կենսաթոշակառուների թվաքանակը, և առկա ժողովրդագրական զարգացումով պայմանավորված՝ սահմանվում է կենսաթոշակի չափը: Կայունության գործոնով պայմանավորված՝ հաշվարկների արդյունքում կենսաթոշակների չափի նվազեցման անհրաժեշտության ի հայտ գալու պարագայում գործում է 2009թ. ընդունված «կենսաթոշակի երաշխիքը»: Հաշվարկների արդյունքում առաջացած կենսաթոշակի չափի անհրաժեշտ նվազեցումը փոխհատուցվում է հետագայում հնարավոր բարձրացմամբ: Այսպես կոչված ստանդարտ կենսաթոշակառուն, որը բառասուկիկ տարի շարունակ միջին աշխատավարձ է ստացել և 2011թ. հուլիսի 1-ից կենսաթոշակի է անցել, արևմտյան Գերմանիայում ստանում է 1.236,15 եվրո, իսկ արևելյան Գերմանիայում՝ 1.096,65 եվրո: 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արևմտյան Գերմանիայում պետական օրինական կենսաթոշակի միջին չափը կազմում էր տղամարդկանց համար 963, կանանց համար 502 եվրո, իսկ արևելյան Գերմանիայում՝ 1.010 տղամարդկանց և 703 եվրո կանանց համար: Արևելյան Գերմանիայում ավելի բարձր միջին կենսաթոշակի չափը պայմանավորված է Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում (DDR) ավելի երկար աշխատանքային ժամերով: Արևմտյան Գերմանիայում շատ գործառուներ ունեն

Օրինական կենսաթոշակային ապահովագրության տարածումը

2001 թ.-ից ի վեր լրացուցիչ «Ռիզթեր» կենսաթոշակ

Կայունության գործոնը 2004 թվականից ի վեր

նաև աշխատանքային կենսաթոշակային հավելավճար, և դրանով պայմանավորված՝ ընդհանուր առմամբ արևմտյան Գերմանիայում կենսաթոշակի սանդղակը ավելի բարձր է, քան արևելյան Գերմանիայում:

Ծերության ապահովության երեք բաղադրիչները

Գերմանիայում կենսաթոշակային ապահովագրության առաջին բաղադրիչը պարտադիր պետական կենսաթոշակային ապահովումն է: Դրա կողքին աշխատավարձով պայմանավորված պետական կենսաթոշակային ապահովագրությունն է, որն ունի նույնպես պարտադիր բնույթ, և երրորդ բաղադրիչը կազմված է կամավոր մասնավոր կենսաթոշակային ապահովագրությունից և աշխատանքային կենսաթոշակից: Ծերության ապահովումը շատ երկրներում հիմնված է այս երեք բաղադրիչների վրա: Առաջին՝ գոյություն ունի պետական կենսաթոշակային ապահովում անկախ նախկին եկամուտների չափից, երկրորդ՝ եկամուտներով պայմանավորված պարտադիր կենսաթոշակային ապահովագրություն և երրորդ՝ կամավոր մասնավոր կենսաթոշակային ապահովագրության հնարավորություններ: Այս երեք բաղադրիչների կառուցածները և հնարավոր նշանակությունները կարող են շատ տարբեր հաջողություններ ունենալ:

Ազգային և աշխատանքային կենսաթոշակ Դանիայում

Դանիայում կենսաթոշակառուների եկամուտների առաջին աղբյուրը այսպես կոչված ազգային կենսաթոշակն է («folkepension»): Այս հիմնական կենսաթոշակը ամբողջովին ֆինսավորվում է հարկերի միջոցով և 2012 թվականին կազմում էր ամսեկան 5.713 կրոն (մոտ 765 եվրո): Ազգային կենսաթոշակի իրավունք ունի Դանիայի յուրաքանչյուր քաղաքացի, ով 16-ից մինչև 67 տարեկան հասակը առնվազն երեք տարի բնակվել է Դանիայում: Օտարերկրացիների պարագայում Դանիայում բնակվելու նվազագույն շեմը տասը տարին է, որից հինգը պետք է լինի մինչև կենսաթոշակային տարիքը: Յուրաքանչյուր տարի ձեռք է բերվում պետական պարտադիր կենսաթոշակի քառասուներորդի իրավունք և քառասուն տարի Դանիայում բնակվելուց հետո ստանում են առավելագույն ազգային կենսաթոշակը: Այն կենսաթոշակառուների համար, ովքեր կենսաթոշակի այլ աղբյուր չունեն , գոյություն ունի ազգային կենսաթոշակի հավելավճար (բոնուս): Այն հատկացվում է դրա անհրաժեշտության փաստը ստուգելուց հետո և 2012 թ. դրությամբ չամուսնացածների համար կազմում էր առավելագույնը հավելյալ 5.933 կրոն (մոտ 795 եվրո):

*Առաջին բաղադրիչ՝
հարկերով ֆինանսավորվող
պետական
կենսաթոշակային
ապահովում*

*Երկրորդ բաղադրիչ՝
կուտակային
կենսաթոշակ*

Բոլոր աշխատողների համար պարտադիր կենսաթոշակային ապահովագրության երկրորդ բաղադրիչը այսպես կոչված կուտակային կենսաթոշակն է: 2012 թվականին այդ կենսաթոշակի առավելագույն չափը կազմում էր տարեկան 24.800

կրոն (ամսեկան մոտ 277 եվրո): Այն հաշվարկվում է աշխատանքային տարիների քանակով և շաբաթական աշխատանքային ժամերով: Պարտադիր վճարները (ըստ շաբաթական աշխատանքային ժամերի, ամբողջ դրույքով աշխատողների համար՝ ամսեկան 36 եվրո) կատարվում են մեկ երրորդ մասով աշխատողների և երկու երրորդ մասով՝ գործատուների կողմից: Այս պարտադիր վճարները օրենսդրական վերահսկողությամբ կառավարվում են մասնավոր ընկերությունների կողմից:

Եկամուտով պայմանավորված կենսաթոշակային բաղադրիչը Դանիայում բաղկացած է աշխատանքային կենսաթոշակից: Աշխատողների մոտ 90 %-ն ունեն աշխատանքային կենսաթոշակ: Աշխատանքային կենսաթոշակը հավաքական կոլեկտիվ պայմանագրերի բաղկացուցիչ մասն է կազմում և գրեթե մոտենում է պարտադիր ապահովագրության ձևաչափին: Վճարները (մեկ երրորդը՝ աշխատողների կողմից և երկու երրորդը՝ գործատուների կողմից, միջին հաշվարկով կազմում է չհարկված աշխատավարձի 15 %-ը) ներդրվում են պետության կողմից վերահսկվող ֆոնդերում:

Շվեդական կենսաթոշակային համակարգը

Շվեդիայում նույնպես գոյություն ունի պետական կենսաթոշակային ապահովման բաղադրիչը, որը ֆինանսավորվում է ընդհանուր հարկերի միջոցով և որի համար անհրաժեշտ է, որ բաղաբացու բնակության վայրը լինի Շվեդիան: Նվազագույնը բառասուն տարի Շվեդիայում բնակվելու և կենսաթոշակային այլ բաղադրիչներից չօգտվելու պարագայում, 2012 թ. դրությամբ չամուսնացածները իրավունք ունեին ամբողջական «երաշխիքային կենսաթոշակի», որը կազմում էր ամսեկան 7.810 կրոն, (մոտ 880 եվրո), ինչպես նաև՝ հավելյալ բնակարանային ապահովման նպաստի: Մասնավոր և աշխատանքային կենսաթոշակային բաղադրիչներից օգտվելու պարագայում երաշխիքային կենսաթոշակը չի նվազեցվում, վերջինս ենթակա է պարտադիր հարկման:

Շվեդական կենսաթոշակային ապահովագրական երկրորդ բաղադրիչը բաշխողական ֆինանսավորվող աշխատավարձով պայմանավորված կենսաթոշակն է: Կենսաթոշակային պարտադիր վճարների 18,5 %-ից 7 %-ը կենսաթոշակային ֆոնդեր են վճարում աշխատողները, իսկ մյուս մասը՝ գործատուները: Գոյություն ունի պարտադիր վճարների չափման սահմանագիծ (2012 թ. այն կազմում էր տարեկան 409.500 շվեդական կրոն կամ մոտ 46.000 եվրո), որից սկսած աշխատողները չեն կատարում պարտադիր կենսաթոշակային վճարներ, իսկ գործատուները՝ միայն 50 %: Պարտադիր վճարների չափման սահմանագիծը գերազանցող եկամուտների դեպքում կենսաթոշակի իրավունք չի տրվում: Հետագայում կենսաթոշակի իրավունքը պայմանավորվում է կատարված վճարներով, որոնք համապատաս-

*Երրորդ բաղադրիչ՝
աշխատանքային
կենսաթոշակ
(աշխատողների 90 %)*

*Առաջին բաղադրիչ՝
հարկերի միջոցով
ֆինանսավորվող
պետական կենսաթոշակային ապահովում*

*Երկրորդ բաղադրիչ՝
աշխատավարձով
պայմանավորված
բաշխողական
գործընթաց*

խանցվում են աշխատավարձերի և գնաճի զարգացումներին: Կենսաթոշակային բանաձևում հաշվի է առնվում պարտադիր կենսաթոշակային վճարներ կատարողների և կենսաթոշակառուների հարաբերակցությունը: Կենսաթոշակառուների աճող թվաքանակը ինքնաբերաբար հանգեցնում է կենսաթոշակների նվազեցման: 2011 թվականին աշխատավարձով պայմանավորված միջին պետական կենսաթոշակը կազմում էր ամսեկան 1.250 եվրո:

*Երրորդ բաղադրիչ՝
կուտակային
(պարտադիր)*

Շվեդիայում պետական կենսաթոշակային ապահովագրության երրորդ բաղադրիչը այսպես կոչված պարզաւժմարային կենսաթոշակն է: 18,5 % կենսաթոշակային պարտադիր վճարների 2,5 %-ը ուղղվում է պետության կողմից կառավարվող կուտակային կենսաթոշակային ֆոնդեր: Աշխատողները ֆոնդերի ընտրության հարցում ազատ են: Ի տարբերություն Գերմանիայում գործող «Ռիզթեր» կենսաթոշակի, Շվեդիայում աշխատողները պարտադրված են մի (փոքր) մաս ներդրում կատարել կուտակային կենսաթոշակային բաղադրիչի շրջանակում:

Կենսաթոշակները Մեծ Բրիտանիայում

Բրիտանական կենսաթոշակային համակարգի առաջին բաղադրիչը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը պետական կենսաթոշակային ապահովումն է («basic state pension»): Վերջինս ստանալու իրավունք ունեն Բրիտանիայի բոլոր այն քաղաքացիները, ովքեր առնվազն տասը տարի շարունակ պարտադիր վճարներ են կատարել: Ամբողջական պետական կենսաթոշակային ապահովումը կազմում է շաբաթական 107,45 ֆունտ (2012-2013 թթ. համար ամսեկան մոտ 525 եվրո): Վերջինս կարող են ամբողջական տեսքով ստանալ միայն այն տղամարդիկ և կանայք, ովքեր ունեն համապատասխանաբար՝ բառասունչորս և երեսունինը տարվա պարտադիր կենսաթոշակային վճարների փաստաթղթային ապացույցներ: 1945 թ. հետո ծնված տղամարդկանց և 1950 թ. հետո ծնված կանանց համար ամբողջական պետական կենսաթոշակային ապահովման համար նախապայման հանդիսացող պարտադիր կենսաթոշակային վճարների տարիների թվաքանակը նվազեցվում է երեսունի: Բավականաչափ տարիներ վճարում չկատարելու պարագայում կենսաթոշակառուները ապավինում են սոցիալական օգնության, որը տրամադրվում է անհրաժեշտությունը ստուգելուց հետո միայն: Պետական կենսաթոշակային ապահովման երկրորդ մասը կոչվում է «pension credit» (կենսաթոշակային արժեկտրոն): Այն կենսաթոշակառուներին ապահովում է շաբաթական եկամուտով, որը 2011-2012 թթ. միայնակների համար կազմում էր 137,35 ֆունտ, իսկ ամուսնական զույգերի համար՝ 209,70 ֆունտ: Սա համապատասխանում է առաջին դեպքում ամսեկան 673, իսկ երկրորդ դեպքում՝ 1.028 եվրոյի:

*Առաջին բաղադրիչ՝
պետական կենսաթոշակային ապահովում*

Երկրորդ բաղադրիչը՝ աշխատավարձով պայմանավորված կենսաթոշակը, բաղկացած է կամ՝ պետական բաշխողական ֆինանսավորվող կենսաթոշակից, կամ՝ աշխատանքային, կամ՝ մասնավոր կենսաթոշակից: Պետական կենսաթոշակը, («state second pension», թարգմանաբար՝ «երկրորդ պետական կենսաթոշակ»), սկսած տարեկան 5.304 ֆունտ եկամուտի սահմանագծից (մոտ 6.500 եվրո)՝ ֆինանսավորվում է պարտադիր սոցիալական ապահովության վճարների միջոցով: Վերջինի չափը որոշվում է՝ ամբողջական մասնագիտական կարիերայի եկամուտով պայմանավորված (մինչև այժմ այն կազմում է 49 տարի, կենսաթոշակային տարիքի շեմը 67 տարեկանի բարձրացնելու արդյունքում, 1960-ից ի վեր ծնվածների համար այդ ժամանակահատվածը աստիճանաբար բարձրանում է 51 տարվա): Տարեկան մինչև 14.400 ֆունտ եկամուտ ունենալու դեպքում (մոտ 17.650 եվրո) կենսաթոշակառուները ստանում են տարեկան 3.638 ֆունտ միասնական դրույթաչափով (մոտ 4.460 եվրո) կենսաթոշակի իրավունք: 14.400 և 32.592 ֆունտի միջակայքում (մոտ 17.650 և 40.000 եվրո) տարեկան եկամուտ ունենալու դեպքում միասնական դրույթաչափին ավելանում է 10 %, իսկ 14.400 և 42.475 ֆունտի միջակայքում (մոտ 17.650 և 52.000 եվրո)՝ մոտ 20 %: Յնարավոր 49 տարիներից պակասող յուզաքանչյուր տարվա համար կենսաթոշակը համապատասխանաբար նվազում է:

Յատկապես 14.400 ֆունտից պակաս վաստակողները օգտվում են «երկրորդ պետական կենսաթոշակի» միասնական դրույթաչափից: Ավելի բարձր եկամուտ ունեցող մարդկանց համար պետական կենսաթոշակը պակաս գրավիչ է: Ի դեպ, պետական կենսաթոշակային ապահովագրության երկրորդ բաղադրիչը պարտադիր չէ: Վերջինիս փոխարեն հնարավորություն է ընձեռնվում կնքել մասնավոր կամ աշխատանքային կենսաթոշակային ապահովագրություն («contracting out»): Այս դեպքում վճարվում են սոցիալական ապահովագրության ավելի քիչ վճարներ, և պետությունը խթանում է այդպիսի ապահովագրությունը հավելյալ հարկային մեղմացող միջոցառումների միջոցով: Կենսաթոշակային ֆոնդերում «contracting out»-ը չի երաշխավորում հաստատուն կենսաթոշակի չափ՝ «defined contribution»: Ի դեպ, 2012 թ. ի վեր հաստատուն կենսաթոշակն այլևս հնարավոր չէ:

Կենսաթոշակային համակարգ և արդարության սկզբունքներ

Կենսաթոշակային ապահովագրության առաջին բաղադրիչը արտացոլում է կարիքի արդարության սկզբունքը, քանի որ այստեղ խոսքը գնում է այն անձանց նյութական կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին, ովքեր այլ բավարար կենսաթոշակի հայտ ներկայացնելու իրավունք ձեռք չեն բերել: Այստեղ կարելի է առանձնացնել երկրների միջև եղած տարբերությունները: Օրինակ՝

*Երկրորդ բաղադրիչ՝
բաշխողական
ֆինանսավորման
գործընթաց
(կամավոր)*

*Այլընտրանք.
մասնավոր կամ
աշխատանքային
կենսաթոշակ*

*Առաջին բաղադրիչ՝
կարիքի արդարու-
թյուն*

Դանիայում բոլոր կենսաթոշակառուներին վճարվում է ունիվերսալ միասնական դրույքաչափ, մինչդեռ Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում և Շվեդիայում անցկացվում է պայմանների նախնական ստուգում, և միայն նրանց համար, ովքեր կենսաթոշակի այլ բաղադրիչների սահմանափակ իրավունք ունեն, կիրառվում է առաջին բաղադրիչը: Բացի դրանից, տարբերվում է նաև պետական կենսապահովման նվազագույն բյուջեյի մակարդակը: Դանիայում և Շվեդիայում այն ամսեկան 400-500 եվրոյով ավելի բարձր է, քան Գերմանիայում, թեև այս երկրներում կենսապահովման ծախսերը ակնհայտորեն շատ ավելի բարձր են: Այդուհանդերձ, այդ երկրներում պետական կենսապահովման նվազագույն բյուջեն շատ ավելի բարձր մակարդակի վրա է գտնվում: Եթե վերջինս դիտարկենք Գերմանիայի, Շվեդիայի և Դանիայի համեմատությամբ, ապա այս պատկերը չի արտացոլվում կենսաթոշակառուների այն հատվածում, ովքեր միջին եկամուտի 60 %-ից պակաս են ստանում: Գերմանիայում այս խումբը համեմատաբար շատ ավելի փոքրաթիվ է, քանի որ ներկայիս կենսաթոշակային սերունդը մեծամասամբ ունի անընդատական մասնագիտական կենսագրություն: Այս պատկերը կփոխվի, քանի որ ապագայում գնալով ավելի շատ մարդիկ, հասնելով կենսաթոշակային տարիքի, աշխատանքային կենսագրության մեջ կունենան երկար աշխատանքային ընդմիջումներ կամ միայն անեական զբաղմունքներ և դրանով իսկ ձեռք կբերեն սահմանափակ կենսաթոշակային իրավունք: Այսպիսով, ծերության շրջանում պետական կենսապահովման նվազագույն բյուջեյի մակարդակը որոշակիորեն ավելացող մի զանգվածի համար ավելի ու ավելի կարևոր է դառնում: Այստեղ տեսանելի է այն, որ Գերմանիայում աղբատների եկամուտի և աղբատության սահմանագծի միջև եղած այսպես կոչված աղբատության անդունդը զգալիորեն ավելի մեծ է, քան Դանիայում և Շվեդիայում: Վերջին տարիներին աշխատաշուկայում նկատվող կանոնավոր և ժամանակավոր զբաղվածների միջև առաջացած ճեղքի խորացումը ապագա կենսաթոշակային սերնդի համար ինքնին աղբատության սպառնալիք է: Այսպիսով, ավելի են ընդգծվում նաև նվազագույն կենսապահովման համար պետական հատկացումներով ապրող սերնդի և հարուստ խավի միջև բաժանարար գծերը: Հարուստ խավի ներկայացուցիչները պետական կենսա-

Աղբատության մակարդակը արտացոլում է մարդկանց այն զանգվածը, որը ազգային միջին եկամուտի 60 %-ից պակաս է ստանում (տե՛ս էջ 65):

Աղբատության խորությունը ցույց է տալիս, թե մարդիկ աղբատության որքան մեծ ռիսկի են ենթակա: Աղբատության պակասորդը առաջանում է այն հաշվարկից, թե որքանով է աղբատների միջին սպառումը ցածր աղբատության սահմանագծից: Աղբատության խորությունը մեծանում է այնքան, որքան աղբատների եկամուտը հեռանում է աղբատության սահմանագծից:

թոշակային ապահովագրության հետ մեկտեղ կարող են մասնավոր ապահովագրական միջոցառումներ ձեռնարկել:

Աղքատության մակարդակ և աղքատության խորություն 2010 թ.

ԵՄ-15	17,9 %	16,0 %
Դանիա	18,4 %	11,7 %
Գերմանիա	14,8 %	16,6 %
Շվեդիա	15,9 %	10,7 %
Մեծ Բրիտանիա	22,3 %	19,2 %

Աղբյուր՝ Եվրոստատ

Պետական նվազագույն կենսաապահովումը բոլոր երկրներում ֆինանսավորվում է ընդհանուր հարկերի միջոցով: Այս առումով, պետական նվազագույն կենսաապահովումը բավականին ընդգծված վերաբաշխողական բնույթ ունի: Մարդիկ իրենց աշխատանքային տարիների ընթացքում բարձր եկամուտի պարագայում վճարում են ավելի բարձր հարկեր, սակայն նպաստներ չեն ստանում (Գերմանիա, Շվեդիա, Մեծ Բրիտանիա) կամ հավասարաչափ փոխհատուցում են ստանում այնպես, ինչպես նախկինում ավելի ցածր աշխատանքային եկամուտ ունեցող թոշակառուները (Դանիա): Այստեղ նկատելի է նաև վերաբաշխում սերունդների միջև: Մեծամասամբ գործառույթների վճարած հարկերի միջոցով հատուցվում է կենսաթոշակառուների պետական նվազագույն կենսաապահովումը:

Կենսաթոշակային ապահովագրության երկրորդ բաղադրիչը աշխատավարձով պայմանավորված կենսաթոշակն է: Այս բաղադրիչի շրջանակում հիմնականում հաշվի է առնվում աշխատանքային արդյունավետության արդարության սկզբունքը: Արդյունավետությունը հիմնականում չափվում է աշխատանքի տևողությամբ և եկամուտի չափով: Գերմանիայում և Շվեդիայում ծերության ապահովման այս հատվածը կազմակերպվում է պետական բաշխողական գործընթացով (ներկայիս աշխատողները վճարում են ներկայիս կենսաթոշակային սերնդի համար), մինչդեռ Դանիայում գործում է մասնավոր ղեկավարվող (պետականորեն կարգավորվող) կուտակային կենսաթոշակ, ինչպես նաև գրեթե պարտադիր կուտակային աշխատանքային կենսաթոշակ:


Այս բաղադրիչի շրջանակում տարբեր եկամուտ ունեցող խմբերի միջև վերաբաշխումը բնականաբար զգալիորեն ավելի սահմանափակ չափով է իրականանում, քան պետական նվազագույն կենսաապահովման բաղադրիչում: Պետական

*Երկրորդ բաղադրիչ՝
աշխատանքային
արդյունավետության
արդարություն*

կենսաթոշակային ապահովագրության հայտ կարող է ներկայացվել նաև այն չվարձատրվող փուլերի համար, որոնք դիտարկվում են որպես հասարակության համար նպաստաբեր ժամանակաշրջաններ: Գերմանիայում մինչև 2005 թ. կենսաթոշակային ապահովագրության հայտ ներկայացվում էր նաև դպրոցական և բուհական տարիների համար՝ 17 տարեկանից սկսած, այդ տարիները համարվում էին հասարակական նպաստավոր տարիներ: Մինչև այսօր երեխաների դաստիարակության համար նախատեսված ժամանակաշրջանը (36 ամիս), բոլոր ապահովագրվածների միջին եկամուտի հաշվարկով, գումարվում է անհատական կենսաթոշակային հաշվեկշիռ: Խնամակալության ժամանակահատվածի համար առողջության ապահովագրությունը նույնպես որոշակի պայմաններում վճարներ է կատարում պետական կենսաթոշակային ապահովագրության համար: Վերջիններիս միջոցով պետական ապահովագրությունը ի վիճակի է լինում պարգևատրել նաև այն գործունեությունը, որը աշխատաշուկայում չի վճարվում: Այսպիսով, պետական ապահովագրության միջոցով քաղաքացիները ապահովագրվում են նաև այլ ռիսկերից:

*Կենսաթոշակի չափը
համեմատության մեջ*

Նախկին աշխատանքային եկամուտով պայմանավորված կենսաթոշակային ապահովագրության երկու բաղադրիչների տարբեր կառուցաձևերի ազդեցությունները կենսաթոշակի չափի վրա՝ չորս երկրների համեմատությամբ, կարելի է տեսնել 15-րդ գծապատկերում:



Աղբյուր՝ OECD (2011 c)

Գծապատկեր 15. Կենսաթոշակի չափը աշխատանքային եկամուտի համեմատությամբ

Օրինակ՝ Դանիայում (կանաչ սյունակ) իրենց աշխատանքային կյանքում միջին աշխատավարձի կեսը վաստակած կենսաթոշակառուները ստանում են մաքուր կենսաթոշակ՝ իրենց նախկին մաքուր (հարկված) աշխատավարձի մոտ 132 %-ի չափով: Եթե վաստակել են ամբողջական միջին աշխատավարձ, ապա ստանում են մոտ 90 %-ի չափով, իսկ միջին աշխատավարձի կրկնակին վաստակելու պարագայում ստանում են իրենց նախկին մաքուր աշխատավարձի 80 %-ը:

Այս գրաֆիկը ցույց է տալիս բոլոր չորս երկրների տարբեր եկամուտներ ունեցող խմբերի կենսաթոշակի չափը: Ընդ որում, խոսքը բացարձակ գումարի մասին չէ: Կենսաթոշակը այստեղ արտահայտված է աշխատանքային կյանքի ընթացքում ունեցած եկամուտի տոկոսային դրույքաչափի տեսքով՝ որպես նախկին աշխատավարձի փոխադրվող մաքուր տոկոսադրույք: Գրաֆիկից հնարավոր է դառնում հասկանալ, որ Դանիայում բոլոր երեք եկամտային խմբերի կենսաթոշակի մակարդակը նախկին եկամուտների համեմատությամբ ավելի բարձր է, քան մյուս երեք երկրներում: Բացահայտ է նաև տարբերությունը երեք տարբեր եկամտային խմբերի համեմատությամբ: Այստեղ պարզ է դառնում, որ Գերմանիայում կենսաթոշակային համակարգի ներսում (մասամբ նաև Շվեդիայում) վերաբաշխում գրեթե տեղի չի ունենում: Բոլոր երեք եկամտային խմբերը ստանում են նախկին աշխատանքային եկամուտի 57 %-ը: Կարելի է ասել, որ աշխատանքային արդյունավետության արդարության սկզբունքի առումով բաշխումը կատարյալ է: Դանիայում և Նույնիսկ Մեծ Բրիտանիայում քիչ վաստակողների փոխհատուցվող մաքուր տոկոսադրույքը ավելի բարձր է, քան միջին և բարձր եկամուտ ունեցողներինը: Այս երկու երկրներում, այսպիսով, կենսաթոշակային համակարգի ներսում վերաբաշխում է տեղի ունենում: Թեև քիչ վաստակողները ավելի ցածր կենսաթոշակ են ստանում, քան միջին և ավելի լավ վաստակողները, սակայն հարաբերականորեն դիտարկելով, ստանում են իրենց նախկին աշխատավարձի ավելի մեծ մասը, քան մյուսները: Այսպիսով, սա կարելի է բացատրել որպես կարիքի և աշխատանքի արդյունավետության սկզբունքների սինթեզ:

Գերմանական կենսաթոշակային համակարգում քիչ վաստակողներին կարծես ավելի լավ պայմաններ են առաջարկվում, որպեսզի կանխվի տարեցների աղքատության աճը: Նշվածը հատկապես կարևոր է, քանի որ եկող տարիներին սպասվում է երկու միտումների համընկնում. մի կողմից՝ գերմանական պետական նվազագույն կենսապահովման ցածր մակարդակը տարեցների շրջանում և մյուս կողմից՝ կենսաթոշակառուների աճող թվաքանակը, որոնք էլ իրենց հերթին մի կողմից՝ չունեն անխափան աշատանքային կենսազնություն և մյուս կողմից՝ հավակնում են միայն ցածր աշխատանքային եկամուտով պայմանավորված կեն-

*Կենսաթոշակի չափ.
Գերմանիայում քիչ
վաստակողների
իրավիճակը
համեմատաբար
ավելի վատ է*

Լրացուցիչ ընթերցանության համար՝
*Յարալո Շյոյդեդեր
(2011թ.), «Կենսաթոշակային համակարգերը և ծերերի աղքատությունը միջազգային համեմատությամբ», Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Միջազգային բաղա-բական վերլուծություն, Բեռլին.*

*Ավելի բարձր միջին
կենսաթոշակը
կարող է կանխել
տարեցների
աղքատությունը*

սաթոշակի: Աշխատավարձով պայմանավորված կենսաթոշակի փոխարեն այս զանգվածի ավելի լավ ապահովագրումը առավել արդյունավետ կլինի իրականացնել նվազագույն կենսաթոշակային բարեփոխումների միջոցով: Վերջին տարիների բանավեճերը ավելի շատ կենսաթոշակային ապահովագրության երկրորդ բաղադրիչի կառուցման շուրջ են միայն: Այստեղ հիմնականում այն հարցն է շոշափվում, թե ինչ ծավալով պետք է կուտակային կենսաթոշակը փոխարինի կամ լրացնի բաշխողական կենսաթոշակին:

Կուտակային կենսաթոշակային համակարգի առավելություններն ու թերությունները

«Գոյություն ունի մի պարզ և հստակ սահմանում, համաձայն որի բոլոր սոցիալական ծախսերը պետք է կատարվեն ընթացիկ ժամանակաշրջանի ազգային եկամուտից: Գոյություն չունի և երբևէ չի ունեցել այլ աղբյուր, որից հնարավոր կլիներ ստանալ սոցիալական ծախսերի համար միջոցներ, չկան կուտակային ֆոնդեր, գոյություն չունի եկամուտի մասնակի տեղափոխում մի ժամանակաշրջանից մյուս ժամանակաշրջան: Մասնավոր տնտեսության իմաստով, գոյություն չունի «խնայել» ասվածը: Բացի ընթացիկ ժամանակաշրջանի ազգային եկամուտից՝ որպես սոցիալական ծախսերը հոգալու աղբյուր, ուրիշ բան գոյություն չունի: [...] Կապիտալի կուտակման և բաշխման գործընթացները իրականում իրարից գրեթե չեն տարբերվում» (Մակենլոդ, 1952թ., էջ 41):

«Մակենլոդի թեզ» անվանմամբ հայտնի դարձած այս մեջբերումը մինչ օրս վիճելի է: Այստեղ նշվում է, որ անկախ ֆինանսավորման մոդելից, կենսաթոշակառուների սպառողականության ապահովումը հնարավոր է դառնում գործառույթի կողմից սպառումից հրաժարվելու միջոցով: Կուտակային կենսաթոշակի պարագայում ապագա կենսաթոշակառուները կախված կլինեն նրանից, թե երիտասարդ սերունդը իր կենսաթոշակային արժեթղթերը երբ կզնի, որպեսզի վերջիններիս փոխհատուցմամբ թոշակառուները կարողանան ապրել: Այլապես արժեթղթերը (բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլն ...) հաճախորդ չեն ունենա և ոչինչ չեն արժենա: Այսպիսով, կուտակային կենսաթոշակի չափը կախված է նրանից, թե ինչպիսի ժողովրդագրական և տնտեսական իրավիճակում է գտնվում ընթացիկ ժամանակաշրջանի գործառույթի զանգվածը: Այլ կերպ չենա բաշխողական համակարգում: Այստեղ նույնպես ընթացիկ ժամանակաշրջանի կենսաթոշակառուների սերնդի կենսաթոշակների չափը կախված է միևնույն ժամանակաշրջանի գործառույթի կատարած վճարներից: Եթե պարտադիր վճարներ կատարողների թվաքանակը կամ աշխատավարձերը նվազում են (կամ երկու գործընթացները զուգահեռաբար են տեղի ունենում), ապա նվազում են նաև բաշխողական ֆինանսավորվող կենսաթոշակային ապահովագրության գանձումները, որի արդյունքում նվազում են նաև կենսաթոշակները:

Որոշ տնտեսական տեսություններ ցույց են տալիս, որ խնայելու միջոցով (այսինքն՝ կուտակային հաշվեկշիռ ստեղծելով) միանգամայն հնարավոր է դրականորեն ազդել ապագա տնտեսական աճի վրա: Դրանով տարեցների կենսաթոշակային արժեթղթերի արժեքը կբարձրանա: Սա կուտակային կենսաթոշակի համախոհների կողմից բերվող փաստարկն է, որը միտված է ընդ-

լայնելու կենսաթոշակային կուտակային բաղադրիչը: Բաշխողական ֆինանսավորման պարագայում ոչինչ չի խնայվում, քանի որ երիտասարդների պարտադիր վճարները անմիջապես ուղղվում են տարեցների կենսապահովմանը: Կան նաև այլ վերլուծություններ, որոնք վկայում են, որ կուտակային հաշվեկշռի միջոցով առաջացած աճը, որը նախատեսված է հաջորդող սերնդի համար, առաջանում է ընթացիկ սերնդի եկամուտների կորստով, որի միջոցով հավաքագրվում է կուտակված կապիտալը: Միանգամայն սպասելի է նաև, որ վերջին տասնամյակների ընթացքում նկատվող կուտակային կենսաթոշակային համակարգին անցնելու միջազգային միտման հետևանքով կենսաթոշակային ֆոնդերի թվաքանակի աճի արդյունքում գնալով պակասեն նաև օգտակար և վստահելի պահառու ֆոնդերի հնարավորությունները: Սա, ի դեպ մի հայեցակետ է, որը, պետական պարտքի հետ մեծ հետադարձ կապի տեսանկյունից, որոշում կայացնողների կողմից անտեսվում է: Ընդհանուր առմամբ, կասկածներ առաջ քաշվեցին, թե կապիտալի կուտակային կենսաթոշակային ապահովագրությունը որքանով է նպատակահարմար և արդյո՞ք վերջինս առավելություններ է առաջարկում:

Անվանական եկամտաբերություն՝

պարտադիր վճարների գումարը համադրվում է վճարվող կենսաթոշակների գումարի հետ: 4,1 % եկամտաբերությունը նշանակում է, որ վճարողը վճարված 100 եվրոյի դիմաց ստանում է 104,10 եվրո: Ընդ որում, գնային զարգացումը հաշվի չի առնվում (եթե գնային զարգացումը հաշվի առնվեր, ապա խոսք կլիներ իրական եկամտաբերության մասին): Կապիտալի պահուստների հաշվարկման ժամանակ անվանական եկամտաբերության ճշգրտումը ընդունված գործընթաց է:

Կուտակային կենսաթոշակային ապահովագրության ընդհանուր տնտեսական էֆեկտների շուրջ տարածայնությունների կողքին գույություն ունեն նաև միանշանակ անհատական ռիսկեր: Վերջին տարիների ֆինանսական և տնտեսական ճգնաժամերը վստահորեն ցույց տվեցին, որ կան բազմաթիվ ռիսկեր. նվազող փոխարժեք (փոխարժեքի ռիսկ), պարտատու չի կարողանում կատարել վճարումներ (ճախողման ռիսկ), բարձրացող

գնաճ, որի հետևանքով պահուստային գումարների իրական արժեքը իջնում է (արժեզրկման ռիսկ), օտարերկրյա ներդրումների պարագայում ավելանում է նաև հավելյալ արտարժույթի փոխարժեքի ռիսկը:

Բարձր եկամտաբերության սպասումը ինքնին վտանգված է: Ֆինանսական ճգնաժամին նախորդող 20 տարիներին միջազգային արժեթղթերի ֆոնդերը ապահովում էին միջինում 6,5 % (Բրեյթեր, 2000) անվանական եկամտաբերություն: Բաշխողական ֆինանսավորվող կենսաթոշակի եկամտաբերությունը ըստ եուրոյան համապատասխանում է աշխատավարձերի գումարների զարգացմանը: Դա պայմանավորված է նրանով, որ կենսաթոշակները ֆինանսավորվում են

*Հաշվի առնելով
անհատական
ռիսկերը*

*Եկամտաբերությունը
բաշխողական
մոդելում*

գործառնների պարտադիր վճարներից: Գործառնների թվի աճի կամ աշխատավարձերի բարձրացման դեպքում, ակնհայտորեն կենսաթոշակի չափը ավելի բարձր է լինում, քան կենսաթոշակառուները իրենց աշխատանքային տարիներին վճարել են: Աշխատողների թվի և աշխատավարձի նվազման պարագայում կամ եթե ավելանում է կենսաթոշակառուների թվաքանակը, կենսաթոշակի չափը նվազում է: Գերմանական կենսաթոշակային ապահովագրության հաշվարկները ցույց են տալիս, որ 2008 թվականի կենսաթոշակային անվանական եկամտաբերությունը միայնակ տղամարդկանց համար կազմել է շուրջ 3,5 % իսկ կանանց և ամուսնացած տղամարդկանց համար՝ շուրջ 4,1 % (45 տարվա միջին աշխատավարձով աշխատանքային տարիների առկայության և կյանքի միջին տևողության պարագայում): 2020, 2030 և 2040-ականներին կենսաթոշակային եկամտաբերությունը սահմանափակ կլինի՝ միայնակ տղամարդկանց համար կազմելով շուրջ 2,8 %, իսկ կանանց և ամուսնացած տղամարդկանց համար՝ 3,3 % («Գերմանական կենսաթոշակային ապահովագրություն», 2009թ.):

Դա նշանակում է, որ ամենայն հավանականությամբ, կուտակային կենսաթոշակի պարագայում եկամտաբերությունը ավելի մեծ կլինի, քան բաշխողական կենսաթոշակի դեպքում: Եվ քանի որ խոսքը միայն հավանականության մասին է, առկա է նաև կենսաթոշակները ավելի ցածր լինելու վտանգը: Երկարաժամկետ կտրվածքով դիտարկելով՝ մշտապես եղել են ժամանակաշրջաններ, երբ արժեթղթերի շուկաները բացասական եկամտաբերություն են ունեցել: Վատագույն դեպքում ինսայդությունները կարող են ամբողջովին արժեզրկվել: Նման դեպքերից խուսափելու համար հնարավոր է, իհարկե, կնքել ապահովագրություններ, թեև ապահովագրությունների պարագայում կուտակային համակարգի եկամտաբերության առավելության պարզևատրումները ակնհայտորեն սահմանափակվում են: Վերջինիս համար այլընտրանք կարող էին լինել պետական երաշխիքները, որն էլ փաստացիորեն հենց նույն բաշխողական ֆինանսավորումն է, քանի որ կենսաթոշակների պետական աջակցությունը ֆինանսավորվում է հիմնականում աշխատողների հարկերի միջոցով:

*Կուտակային
կենսաթոշակային
եկամտաբերություն*

Այսպիսով, հարց է առաջանում, արդյո՞ք ռիսկերը անտեսելու պարագայում, եկամտաբերության առավելության հույսը արդարացված է: Սա վերաբերում է ամբողջ հասարակությանը, քանի որ այստեղ խոսքն անհատների կուտակային ռազմավարության ազատ որոշման մասին չէ, այլ՝ պետական ծրագրության ապահովման խթանիչ համակարգերի և կառուցվածքի մասին: Այս հարցի պատասխանը, անկասկած, նույնպես կախված է վերջիններիս մաշտաբից, որով կուտակային կենսաթոշակը պետք է կազմի ամբողջական կենսաթոշակ: Շվեդիայում կենսաթոշակային պար-

տադիր վճարների 2,5 %-ը ներդրվում է կենսաթոշակային կուտակային բաղադրիչում: Այս մասնաբաժինը համեմատաբար փոքր է: Գերմանիայում նույնպես պետական հոգաժողովուն ստանալու համար պետք է չհարկված աշխատավարձի 4 %-ը ներդնել: Այս չափը առաջին հայացքից ընդունելի է թվում:

Կուտակային բաղադրիչի կամավոր բնույթը այստեղ թերևս խնդրահարույց է, քանի որ հավելյալ խնայողություններ ավանդաբար կատարում են հիմնականում նրանք, ովքեր բարձր եկամուտ ունեն և կարող են չհարկված աշխատավարձի 4-ից ավելի տոկոսից հեշտությամբ հրաժարվել: Ըստ էության, այստեղ խոսքը վերաբերում է կամավորականության սկզբունքով հավելյալ 4 % կենսաթոշակային ապահովագրության վճարին, որը սակայն ուղեկցվում է պետական աջակցությամբ: Վերջինից հիմնականում օգտվում են նրանք, ում համար հավելյալ վճարը խնդիրներ չի առաջացնում: Այսպիսով, պետական աջակցությունից փաստացիորեն օգտվում են հիմնականում միջին և բարձր վաստակ ունեցողները:

Կուտակային «Ռիզթեր» կենսաթոշակի նպատակն էր հատուցել պետական կենսաթոշակային ապահովագրության նվազող մակարդակը: Հավասարության տեսանկյունից թվում է, որ այս բաղադրիչին անհրաժեշտ է տալ պարտադիր բնույթ: Ռիսկերի նկատառումներից ելնելով՝ խելամիտ կլինի չգերազանցել ներկայիս կուտակային բաղադրիչի 4 %-անոց մասնաբաժինը: Այս փաստարկը հիմնականում առնչվում է սերունդների համերաշխության սկզբունքի հետ, քանի որ կուտակային կենսաթոշակի ճգնաժամի պարագայում առաջացած հետևանքները համերաշխ հասարակությունում կրում են հարկատուները, իսկ այս պարագայում վճարներ կատարած սերնդի վրա կրկնակի ծանրաբեռնվածություն կընկնի: Այստեղ նաև առաջ է քաշվում այն սկզբունքային հարցադրումը, թե «Ռիզթեր» կենսաթոշակները որքանով են ի վիճակի իրենց ներկայիս ձևաչափով պահպանել կապիտալը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ «Ռիզթեր» կենսաթոշակների եկամտաբերությունը ծայրահեղ ցածր է: Ըստ ուսումնասիրությունների, 2001 թ. ապահովագրական պայմանագրեր կնքած կանայք պետք է դառնան 78,4 տարեկան, որպեսզի կրկին հետ ստանան այն, ինչ վճարել են (տղամարդիկ՝ 76,8): 2,5 % եկամտաբերության համար կանայք պետք է հասնեն 90 տարեկան հասակին (տղամարդիկ՝ 85,8): 5 % եկամտաբերության համար նրանք պետք է հասնեն անհավանական 127,9 տարեկան հասակին (տղամարդիկ՝ 105,5): 2011 թ. կնքված պայմանագրերի համար իրավիճակը նույնիսկ ավելի է վատթարացել: Այսպիսով, կուտակային կենսաթոշակային ապահովագրության տեսական առավելությունները «Ռիզթեր» պայմանագրերի ներկայիս կառուցվածքով անհնարին են:

Որքա՞ն պետք է լինի կուտակային բաղադրիչը

Խնդրահարույց կետ. կամավորականություն

Լրացուցիչ ընթերցանության համար՝
Զորնեյիա Զլայնլայն (2011թ.), «Տասը տարի՝ «Ռիզթեր» կենսաթոշակ. ուրախանալու ոչ մի պատճառ», DIW շաբաթական զեկույց, թիվ 47/2011, Բեռլին:

Եթե համարում ենք, որ բաշխողական համակարգով ֆինանսավորվող կենսաթոշակը տարեցների ապահովման առանցքային համակարգն է, ապա հարց է առաջանում, թե ինչպիսի միջոցներ պետք է ձեռք առնել ներկայացված ժողովրդագրական զարգացումներին պատշաճ արձագանքելու համար (տե՛ս գլուխ 5.3. Ժողովրդագրական շրջադարձ): 2012-2029 թթ. կենսաթոշակային տարիքային շեմը 67-ի բարձրացնելով և կենսաթոշակային համակարգում կայունության գործոնը ներդնելով՝ արդեն իսկ որոշակի միջոցներ ձեռնարկվել են:

Կենսաթոշակի անցնելու իրական և օրինական տարիքը, 2004-2009 թթ.


	Տղամարդիկ		Կանայք	
	իրական	օրինական	իրական	օրինական
Շվեդիա	66	65	63,6	65
Դանիա	64,4	65	61,9	65
Մեծ Բրիտանիա	64,3	65	62,1	60
Գերմանիա	61,8	65	60,5	65
OECD-միջին	63,9	64,4	62,5	63,0

Աղբյուր՝ OECD (2010 a)

Ժողովրդագրական շրջադարձի հետևանքները մեղմացնելու համար պետք է նաև այլ միջոցներ ձեռք առնվեն: Վերջիններիս նպատակը պետք է ուղղված լինի հատկապես ազգային տնտեսության եկամուտների աճին:

Երկրորդ մեկնարկային կետը աշխատավարձերի բարձրացումն է: Դրան կարելի է հասնել արտադրողականության առաջընթացի նվաճմամբ: Այս հեռանկարից ելնելով՝ կրթական, մասնագիտական վերապատրաստումների ուղղությամբ ներդրումները կարևորագույն գործիք են ժողովրդագրական փոփոխությունների կողմնակի էֆեկտները շրջանցելու համար: Գերմանիայում, չնայած արտադրողականության բարձրացմանը, 2000 թվականից ի վեր աշխատավարձերի ցուցանիշը մինչև ֆինանսական-տնտեսական ճգնաժամի բռնկումը տևական անկում է ապրել: Դա արտահայտվում է անինքնազբաղվածների աշխատանքից առաջացած ազգային եկամուտի տոկոսային հարաբերությամբ: Դա պայմանավորված չէ տուրքերի

բեռնի ծանրացմամբ, ինչպես մշտապես պնդում են շատերը: Մաքուր ցուցանիշը (հարկված աշխատավարձերի մասնաբաժինը չհարկվածների հարաբերակցությամբ) կազմում էր մոտ 67 %, հարկերի և տուրքերի մասնաբաժինը տատանվում էր 33 %-ի շուրջ: Ձեռնարկատիրական և գույքի եկամուտների պարագայում հակառակ պատկերն է , այստեղ տևական աճ է արձանագրվել:



Գծապատկեր 16. Աշխատավարձի և հարկված աշխատավարձի ցուցանիշները Գերմանիայում

Օրինակ՝ 1999 թվականին մաքուր աշխատավարձի ցուցանիշը կազմում էր մոտ 66 %, 2011 թ.՝ 66,4 %: Միևնույն ժամանակահատվածում աշխատավարձերի մասնաբաժին ծավալը ազգային եկամուտում 71 %-ից նվազել է 67 %-ի: Աշխատավարձերը, ի տարբերություն այլ եկամուտների դրական զարգացման (ձեռնարկատիրական գույքային եկամուտը), նվազել են, մինչդեռ տուրքերի բեռը գրեթե անփոփոխ է մնացել:

Այսպիսով, գերմանական բաշխողական համակարգը ամրապնդելու համար անհրաժեշտ է աշխատավարձերի բարձրացում: Եվրոպական համեմատությունը ցույց է տալիս, որ աշխատավարձերը հատկապես ցածր են սպասարկման ոլորտում: Տարբեր ոլորտներում աշխատավարձերի ընդգծված տարբերություններից խուսափելու միջոց կարող է լինել նվազագույն աշխատավարձը, որով և ներդրում կկատարվի ապագա կենսաթոշակային ապահովման ուղղությամբ:

Մեկ այլ այլընտրանք է նաև ձեռնարկատիրական և գույքից առաջացած աճող եկամուտներն ուղղել պետական կենսաթոշակային ապահովագրության ֆինանսավորմանը, հատկապես որ դրանք վերջին տարիներին ակնհայտորեն աճ են արձանագրել: Նմանատիպ հարկային ֆինանսավորումը կարող էր ծառայել նվազագույն կենսաթոշակի չափի բարձրացմանը, որով և հնարավոր կլիներ հատուցել մասնավորապես ցածր և միջին եկամուտ ունեցողների կենսաթոշակի աշխատավարձով պայմանավորված բաղադրիչը:

Կենսաթոշակային տարիքային շեմի բարձրացման արդյունքում հարկավոր է միջոցառումներ ձեռնարկել, որպեսզի աշխատողները կարողանան իրականում հաղթահարել ավելի երկար աշխատանքային ժամանակաշրջանը: Շատ ոլորտներում աշխատանքային պայմանները պետք է համապատասխանեցվեն օրինական կենսաթոշակային տարիքային շեմի բարձրացմանը (աշխատանքային պայմանների հումանիզացիա՝ մարդկայնացում):

Սոցիալ-դեմոկրատիայի համար դա նշանակում է՝

- հարկերով ֆինանսավորվող նվազագույն կենսաթոշակի բարձրացում ծերության ապահովման համար (օրինակ՝ ձեռնարկատիրական և գույքահարկի միջոցով),
- պետական բաշխողական կենսաթոշակային համակարգում վճարումներ կատարողների շրջանակի ընդլայնում,
- պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչ («Ռիզերվ-պարտականություն»)՝ չավելացնելով ընթացիկ մասնաբաժինը ավելի խստացնելով պետական կարգավորումը կամ «Ռիզերվ» կենսաթոշակի վերացում,
- նպաստել կանանց աշխատանքային զբաղվածությանը՝ աշխատանքի և ընտանիքի ավելի լավ համատեղությամբ,
- նպաստել արտադրողականությանը՝ աջակցություն ցուցաբերելով կրթության, վերապատրաստման, գիտության և հետազոտության ուղղությամբ,
- աշխատանքային պայմանների մարդկայնացում:

7.4. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Դիանա Օգնյանովա և Ալեքսանդր Փետրինգ

Այս գլխում՝

- կներկայացվեն գերմանական, սիդերլանդական և բրիտանական առողջապահական համակարգերի հատակագծերը,
- կներկայացվեն առողջապահական երեք համակարգերի ուժեղ և թույլ կողմերը,
- կքննարկվեն գերմանական առողջապահական համակարգի բարեփոխման տարբերակները, մասնավորապես՝ ֆինանսավորման տեսանկյունից:

Եվրոպայում պատմականորեն ձևավորվել են երկու առողջապահական մոդելներ: Այս երկու համակարգերը էականորեն տարբերվում են միմյանցից իրենց տեսակով: Առաջին՝ պետականորեն համակարգվող (ինչպես օրինակ՝ National Health Service -ը (NHS) Մեծ Բրիտանիայում), և երկրորդ՝ սոցիալական ապահովագրության միջոցով իրականացվող առողջապահական ծառայություններ, որոնք հիմնված են սոցիալական ապահովագրության վրա, ինչպես Գերմանիայում և Նիդերլանդներում:³⁰

*Երկու մոդելներ՝
պետականորեն
կառավարվող և
սոցիալական
ապահովագրության
միջոցով*

Առողջապահական մոդելների կազմաձևեր և առանձնահատկություններ

Ազգային առողջապահական ծառայություն	• անվճար մուտք պետական բժշկական հաստատություններ ամբողջ բնակչության համար • մեծամասամբ ֆինանսավորում հարկերի միջոցով • հիմնականում հասարակական ծառայությունների մատուցում
Սոցիալական ապահովագրության մոդել	• ընդարձակ պարտադիր ապահովագրություն • մեծամասամբ ֆինանսավորում գործատուների և գործառուների կողմից աշխատավարձով պայմանավորված պարտադիր վճարների միջոցով • մասնավոր և հասարակական բժշկական ապահովագրողներ • հասարակական և մասնավոր ծառայությունների մատուցում

Գերմանական առողջապահական համակարգը

Գերմանական առողջապահական համակարգի մոդելի ստեղծումը թվագրվում է 1883 թվականով: Այդ ժամանակ «Աշխատավորների բժշկական ապահովագրության մասին» օրենքով մինչև որոշակի եկամտային շեմ ունեցող աշխատողների համար ներմուծվեց միասնական բժշկական պարտադիր ապահովագրությունը:

*1883 թ. «Օրենք
աշխատավորների
բժշկական ապահովագրությանը
մասին»*

³⁰ Որոշ եվրոպական երկրներում գոյություն ունեն նաև համադրված ձևեր, օրինակ՝ ֆինանսավորում թե՛ հարկերի, թե՛ սոցիալական ապահովագրական վճարների միջոցով:

Յուրաքանչյուր պարտադիր ապահովագրվող անդամակցում էր որևէ մասնագիտական ճյուղային ապահովագրական կազմակերպության, որին նա պատկանում էր:

*Կառուցվածք.
ապակենտրոնաց-
ված և դաշնային՝
ուժեղ ոչ պետական
ինստիտուտներ*

Բժշկական սոցիալական ապահովագրության ներկայիս համակարգը ապակենտրոնացված և դաշնային կառուցածն ունի: Այն բնորոշվում է տարբեր ոչ պետական (կորպորատիվ) ինստիտուտների ուժեղ դիրքով: Բժշկական ապահովագրական համակարգի գլխավոր դերակատարների շարքին են դասվում մի կողմից՝ ծառայություն մատուցող ապահովագրական բժշկական և ատամնաբուժական միությունները, իսկ մյուս կողմից՝ ծախսերը կրող բժշկական ապահովագրական կազմակերպությունները և իրենց միավորումները:

Ամբուլատոր ինսամբ

Ամբուլատոր բժշկական ինսամբը այն ոլորտն է, որտեղ կորպորատիվ ինստիտուտները ամենամեծ ազդեցությունն ունեն (Բուսսե/Ռիզբերգ, 2005թ.): Ապահովագրական բժշկական միավորումներն ամբողջական վարձատրության վերաբերյալ համաձայնության են գալիս տվյալ երկրում ակտիվ ապահովագրական ընկերությունների հետ, և վարձատրությունը բաշխվում է դաշնային համամասնությամբ իրենց անդամների միջև՝ համապատասխանեցվելով մարզային օրենսդրությանը: Ընդհանուր և նեղ մասնագիտական բժիշկների վարձատրությունը կատարվում է ըստ վերջիններիս կողմից մատուցած առողջապահական ծառայությունների ծավալի: Գոյություն ունի ծառայությունների ծավալի վարձատրության չգերազանցվող վերին շեմ:

Ստացիոնար ինսամբ

Ստացիոնար ինսամբի դաշտում գործում է դուալ ֆինանսավորման կարգ: Ներդրումները պլանավորվում են դաշնային մարզերի կողմից և հետագայում համաֆինանսավորվում համապատասխան դաշնային մարզի և դաշնության կողմից, մինչդեռ բժշկական ապահովագրությունները կրում են ընթացիկ ծախսերը: 2004 թվականին Գերմանիան ընդունեց ավստրալիական ախտորոշման խմբային համակարգը (DRG), և այդ պահից ի վեր բուժաստատությունների ընթացիկ ծախսերը մեծամասամբ հաշվարկվում են ըստ այդ համակարգի (WHO – Համաշխարհային առողջապահական կազմակերպություն, 2006 թ.):

Պետական բժշկական ապահովագրություն

Գերմանական բժշկական ապահովագրական համակարգը բնութագրվում է պետական և մասնավոր բժշկական ապահովագրությունների տարբերակմամբ: Պետական բժշկական ապահովագրությունը (ՊԲԱ) մեծամասամբ ֆինանսավորվում է ապահովագրական վճարների միջոցով: Այդ վճարները մինչև 2005 թ. հավասարապես կատարվում էին գործատուների և աշխատողների կողմից:

*Երկու բժշկական
ապահովագրու-
թյունների միջև
տարբերակում*

2005 թվականին աշխատողների և կենսաթոշակառուների համար ներմուծվեց հավելյալ 0,9 % վճար: Երեխաները և գործազուրկ ամուսինները համաապահովագրվում են անվճար, դրա արդյունքում ՊԲԱ-ի ներսում տեղի է ունենում վերաբաշխում հոգուտ ընտանիքների:

Բնակչության շուրջ 86 %-ն ունի պետական բժշկական ապահովագրություն: Բոլոր աշխատողների անդամակցությունը որևէ բժշկական ապահովագրության պարտադիր է, եթե նրանց տարեկան եկամուտը չի գերազանցում որոշակի շեմ: 2012թ. պարտադիր ապահովագրություն ունենալու համար ամսեկան չհարկված եկամուտի շեմը կազմում էր 4.237,50 եվրո: Պարտադիր վճարների չափը բարձրացվում է՝ հաշվի առնելով վճարների չափման սահմանագիծը, որը 2012 թ. կազմում էր ամսեկան 3.825 եվրո:

2012թ. մարտի դրությամբ գոյություն ունեն մոտ 145 պետական բժշկական ապահովագրություններ: 1996-ից ի վեր, գրեթե բոլոր բժշկական ապահովագրությունների համար առկա է ազատ ընտրության հնարավորություն: Առանձին ապահովագրությունների անդամակցության կառուցվածքները, ելնելով ներդրումների տարբեր ծավալներից և «հիվանդացությունների կառուցվածքից», առավելապես բազմատարր են:

Հիվանդացություններով պայմանավորված ռիսկային կառուցվածքի փոխհատուցումը

միտված է կրճատելու այն ապահովագրությունների վսասները, որոնք ունեն հատկապես ինտենսիվ ծախսեր պահանջող հիվանդություններով բազմաթիվ ապահովագրվածներ: «Morbität» բառը սերում է լատիներենից («morbus») և նշանակում է «հիվանդ»: Բժշկական ապահովագրությունների փոխհատուցման հին եղանակն իրականացվում էր(մինչև 2002 թ.)՝ հաշվի առնելով տարիքը, սեռը և անաշխատունակությունը: 2002 թվականից ի վեր, հաշվի է առնվում նաև բրոնխի հիվանդների համար հատուկ ծրագրերի մասնակցությունը: Ռիսկային կառուցվածքի նոր փոխհատուցումը այժմ հաշվի է առնում 80 տեսակի ինտենսիվ ծախսեր պահանջող, բրոնխի և ծանր հիվանդություններ, որոնց համար ապահովագրական ընկերությունները հավելավճար են ստանում:

Տարբերությունները հավասարակշռելու համար 2009 թ. հունվարի 1-ից տարբեր փուլերով ներդրվեց հիվանդացություններով պայմանավորված ռիսկային կառուցվածքի փոխհատուցման համակարգը («Morbi-RSA»): Ըստ այդ համակարգի, բժշկական ապահովագրական ընկերությունները յուրաքանչյուր ապահովագրվածի համար ստանում են հաստատագրված դրույքաչափ մեկ անձի համար նախատեսված ծախսերի միջին հաշվարկով: Այդ հաստատագրված գումարը ավելացվում կամ նվազեցվում է՝ կախված տարի-

*86 % պետական
ապահովագրություն*

*Ապահովագրական
ընկերությունների
ազատ ընտրություն*

«Morbi-RSA»

քով և սեռով պայմանավորված առանձնահատկություններից: Սրան են գումարվում նաև որոշակի քրոնիկ և ծանր, միջինից բարձր ծախսեր պահանջող հիվանդությունների համար հավելավճարներ:

Բարեփոխված ռիսկային կառուցվածքի փոխհատուցումը միտված է առկա ռիսկային կառուցվածքներում միջոցների ավելի նպատակային վերաբաշխմանը: Այն նաև կրճատում է բարձր առողջական ռիսկերով մարդկանց հանդեպ խտրական վերաբերմունքը: Այսպիսով, քրոնիկ հիվանդները, որոնց հիվանդությունները դասվում են սահմանված 80 տեսակների շարքին, այսուհետ ապահովագրական ընկերությունների կողմից չեն նույնացվի պարտադիր հավելյալ ֆինանսական ռիսկերի հետ:

2009 թվականից ի վեր պարտադիր ապահովագրություն

Այն ինքնազբաղվածները և գործառույթները, որոնց եկամուտը գերազանցում է ապահովագրության համար սահմանված պարտադիր սահմանագիծը, պարտավոր չեն ապահովագրվել պետական բժշկական ապահովագրական ընկերություններում (ՊԲԱ): Նրանք կարող են կամավոր ապահովագրվել ՊԲԱ-ներում կամ կնքել մասնավոր բժշկական ապահովագրական պայմանագրեր: 2007 թ. առողջապահության բարեփոխման արդյունքում 2009թ. հունվարի 1-ից բոլոր անձինք, ովքեր բնակվում են Գերմանիայում, պարտավորված են կնքել բժշկական ապահովագրական պայմանագրեր:

Առողջապահական ֆոնդերը՝ որպես բաղաբացիական ապահովագրության և առողջապահական պարզական վճարների փողոցի ջրանային լուծում

2007 թ. ԶՂՄ/ԶՍՄ և ՍՂԿ-ից բաղկացած կոալիցիան ընդունեց պետական ապահովագրական ընկերությունների մրցակցության խթանման օրենքը, որը ներկայացնում է ՍՂԿ-ի բաղաբացիական ապահովագրության առաջարկի և ԶՂՄ-ի առողջապահական պարզավճարների հայեցակարգի մի փոխզիջումային լուծում: Այն համակարգը հայտնի է նաև «անձի հաստատագրված գումար» անվամբ:³¹

Յարկային հավելավճարներ. ավելի արդար բաշխում

Նոր առողջապահական ֆոնդերում ամփոփվում են ապահովագրված աշխատողների գլխավոր խմբի պարտադիր վճարները, այդ միջոցները գոյանում են աշխատողների և գործատուների կատարած վճարներից, որոնք համալրվում են հարկային հավելավճարներով, վերջիններս 2011թ. կազմում էին մոտ 15,3 մլրդ. եվրո: Յարկային համակարգը, ի տարբերություն վճարների բարձրացման, պրոգրեսիվ եղանակով է ազդում (դա նշանակում է՝ որքան բարձր է եկամուտը, այնքան բարձր է տոկոսային հարկադրույթը): Յարկային հավելավճարները բարելավում են բաշխման արդարությունը և բժշկական ապահովագրական ընկերությունների ֆինանսավորման համար ավելի լայն հիմքեր են ստեղծում (Գրետ/Վասեն, 2008թ., տես նաև գլուխ 7.1. Յարկեր):

31 Տես գլուխ 6 (Կուսակցությունների սոցիալ բաղաբաղական դիրքորոշումները):

Մինչև 2009թ. ապահովագրական ընկերությունները իրենց վճարները անմիջականորեն ապահովագրվածներից էին ստանում: Առողջապահական ֆոնդը վճարները հավաքագրում և կենտրոնացնում է պետական բժշկական ապահովագրական ծառայության շրջանակում: Ապահովագրական ընկերությունները յուրաքանչյուր ապահովագրվածի համար առողջապահական ֆոնդից

ՄԴԿ-ի քաղաքացիական ապահովագրության առաջարկը նախատեսում է առողջապահական համակարգի բաշխողական ֆինանսավորման կարգի պահպանում և վերջինիս ավելի լայն ֆինանսավորման հիմքերի տրամադրում: Պետական ապահովագրության պարտադրանքը պետք է գործի բոլոր քաղաքացիների համար: Դա նշանակում է, որ մինչև այժմ համակարգում չներառված քաղաքացիների խումբը, ինչպես օրինակ՝ ինքնազբաղվածները և պետական ծառայողները, պետք է ներառվեն համակարգում: Ապահովագրության համար սահմանված եկամուտի սահմանգիծը պետք է վերացվի: Պարտադիր վճարների հիմքերը պետք է համալրվեն այլ եկամուտի տեսակներով, ինչպիսիք են օրինակ՝ վարձակալությունից, բանկային գործարքներից և գույքից առաջացած եկամուտները: Ընթացիկ պարտադիր վճարների սահմանագիծը պետք է բարձրացվի: Քաղաքացիական ապահովագրության ծառայություն մատուցողները պետք է լինեն թե՛ պետական և թե՛ մասնավոր ապահովագրական ընկերություններ, որոնց միջև հնարավոր կլինի ազատ ընտրություն կատարել: Այս ապահովագրությունների կառուցվածքային տարբերությունները կփոխհատուցվեն ռիսկային կառուցվածքային փոխհատուցման գործիքի միջոցով:

ստանում են հաստատագրված գումարը, ինչպես նաև՝ սեռային, տարիքային և ռիսկային հիվանդությունների առանձնահատկություններով պայմանավորված՝ հավելավճարները: Վերջին հանգամանքով պայմանավորված՝ ներմուծվում և շարունակում է զարգանալ 1994 թ. առողջապահական ֆոնդերում ներդրված ռիսկային համակարգերի փոխհատուցուման մեխանիզմը:

ԶԴՄ/ԶՍՄ-ի առողջապահական պարզևավճարների մոդելը նախատեսում է պահպանել պետական և մասնավոր ապահովագրվածների տարբերակումը: Փոփոխություններ նախատեսվում են միայն պետական ապահովագրական ընկերությունների համար: Այստեղ ապահովագրվածները պետք է ապագայում միասնական հաստատագրված գումարներ վճարեն իրենց ապահովագրական ընկերություններին: Սահմանափակ գումարներ վաստակողներն իրենց ապահովագրական պարզևավճարների ֆինանսավորման ժամանակ աջակցություն կստանան հարկային միջոցներից: Մոդելը նպատակ ունի առողջապահական պարտադիր վճարները տարանջատել աշխատանքային ծախսերից և սոցիալական բալանսավորման գործառույթը փոխանցել պետական հարկերին և տրանսֆերային համակարգին:

*Վճարների դրույթա-
չափը կենտրոնաց-
ված որոշում է:*

Պարտադիր վճարների դրույթաչափն ամեն տարի որոշվում է դաշնային կառավարության կողմից և 2012 թ. մարտի դրությամբ կազմում է պարտադիր ապահովագրության ենթակա աշխատավարձի 15,5 %-ը: Արտոնյալ դրույթաչափը կազմում է 14,9 %: 2012 թ. մարտի դրությամբ գործում է վճարների չափման ամսեկան 3.825 եվրո սահմանագիծ: Եթե ապահովագրվողի աշխատանքային եկամուտը գերազանցում է սահմանված շեմը, ապա գերազանցվող գումարի մասը ենթակա է հաշվարկման:

*Հնարավոր են
սահմանափակ
հավելավճարներ*

Եթե պետական ապահովագրական ընկերություններն իրենց հատկացված միջոցներով չեն կարողանում գոյատևել, ապա կարող են ապահովագրվածներից հավելավճարներ ստանալ: 2011 թ. ի վեր, հնարավոր հավելավճարները պահվում են անկախ աշխատավարձի չափից և առանց սահմանված հաստատուն վերին սահմանագծի: Եթե պահվող միջին հավելավճարը գերազանցում է ապահովագրված անձի պարտադիր ապահովագրության ենթակա աշխատավարձի 2 %-ը, ապա կատարվում է սոցիալական փոխհատուցում, որն էլ ֆինանսավորվում է հարկերի միջոցով: Լավ կառավարվող ապահովագրական ընկերությունները կարող են վճարների մի մասը փոխհատուցել:

*Պետական բժշկական
ապահովագրական
(ՊԲԱ) ծառայություն.
ծառայություններից
օգտվելու հավասար
իրավունք*

Անկախ ապահովագրվածների կարգավիճակից, վճարների չափից կամ ապահովագրական պայմանագրի ժամանակահատվածից՝ պետական բժշկական ապահովագրական (ՊԲԱ) ծառայության բոլոր անդամները և իրենց համաապահովագրված ընտանիքի անդամները, անհրաժեշտության դեպքում, ունեն առողջապահական ծառայություններից օգտվելու հավասար իրավունք:

*11 % մասնավոր
ապահովագրվածներ*

Մասնավոր բժշկական ապահովագրություն

2011 թ. նոյեմբերի դրությամբ բնակչության 11 %-ն ունի մասնավոր բժշկական ապահովագրություն: Մասնավոր բժշկական ապահովագրության (ՄԲԱ) դեպքում ապահովագրական պարզևավճարները, ըստ համաձայնեցված ծառայությունների ծածկույթի, հաշվարկվում են համաձայն ընդհանուր առողջական վիճակի, սեռի և տարիքի: Վերը նշված տարբերակումների համաձայն, ՄԲԱ-ը կարող է, հաշվի առնելով անհատական ապահովագրական ռիսկերը, առաջարկել անհատական սակագներ:

Ի տարբերություն ՊԲԱ համակարգի, որը կառավարվում է համաձայն բաշխողական սկզբունքի (որը նշանակում է, որ ապահովագրական ծառայությունները վճարվում են միևնույն տարվա հավաքագրված վճարներից), մասնավոր բժշկական ապահովագրությունները պարտավոր են ծերության խնայողություններ ստեղծել

(կուտակային համակարգ): 2009 թ. սկսած՝ որոշակի բազային սակագնի պարագայում ապահովագրվողները ՄԲԱ- ը փոխելիս կարող են այդ խնայողությունները տեղափոխել նոր ապահովագրական ընկերություն:

ՄԲԱ սակագները, մասնավորապես՝ երիտասարդ և առողջ ապահովագրվողների, ինչպես նաև բարձր աշխատավարձ ստացող միայնակների համար՝ ավելի ընդարձակ ծառայությունների առաջարկով, հաճախ ավելի մատչելի են, քան ՊԲԱ առաջարկները: Այս անհավասարության որոշիչ պատճառը, թե՛ մասնավոր և թե՛ պետական ապահովագրական կառուցվածքում, անհավասար սոցիալական բաշխումն է:

ՄԲԱ համակարգում ապահովագրվածներն ունեն միջինից բարձր եկամուտ և ավելի ցածր առողջական ռիսկեր, որով պայմանավորված՝ ՄԲԱ-ը պետական համերաշխ ֆինանսավորվող բժշկական ապահովագրությունների հաշվին կորցում է ավելի բարձր հասույթ և «լավ» ռիսկեր: Մասնավոր ապահովագրվածների համար ծախսերը այնքան մատչելի են (պետական ծառայողներ, ինքնազբաղվածներ, բարձր եկամուտ ունեցողներ), որ ՄԲԱ ընկերությունները բժշկական ծառայություններ կարող են փոխհատուցել ոչ միայն նորմալ արժեքով, այլ նաև՝ հավելավճարով: Դա ծառայություն մատուցողներին խրախուսում է մասնավոր հիվանդներին արտոնյալ խնամելու:

ՊԲԱ համակարգում ընտանիքի անդամները կարող են առանց սեփական եկամուտի անվճար համաապահովագրվել, մինչդեռ ՄԲԱ համակարգի պարագայում յուրաքանչյուր ապահովագրվող անձի համար անհրաժեշտ է առանձին ապահովագրական գումար: ՄԲԱ համակարգով ապահովագրվածները չեն կարող յուրաքանչյուր պահի վերադառնալ ՊԲԱ համակարգ: Դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ նրանք պարտավորված են լինում ապահովագրվել (օրինակ, երբ ինքնազբաղվածությունից անցնում են վարձու աշխատանքի) կամ եթե դեռ չի լրացել նրանց հիսունհինգ տարին, և նվազագույնը մեկ տարի շարունակ եկամուտը չի գերազանցել պարտադիր ապահովագրության ենթակա եկամուտի սահմանված սահմանագիծը:

Մասնավոր ապահովագրողները, 2009 թ. ի վեր, օրենսդրական պարտավորություն ունեն սահմանելու բազային սակագին, որն իր ծառայությունների ծածկույթով կհամապատասխանի ՊԲԱ առաջարկին և չի գերազանցի ՊԲԱ համար վճարվող պարտադիր վճարների միջին դրույթաչափը (մոտ 592 եվրո ամսեկան, 2012թ.): ՄԲԱ և կամավոր ՊԲԱ ապահովագրվածները կարող են միայն որոշակի նախապայ-

Ավելի լավ առաջարկներ. «ավելի լավ ռիսկերի» հետևանք

Ընտանիքի անդամները պետք է լրացուցիչ ապահովագրվեն

2009 թ. բազային սակագնի առաջարկի օրենսդրական պարտավորվածություն

մանների պարագայում տեղափոխվել հիմնական սակագնային ծածկույթ: Անցման համար վճարը պայմանավորված է ապահովագրվողների տարիքով և սեռով:

Առողջապահական համակարգը Նիդերլանդներում

Նիդերլանդական առողջապահական համակարգը նման է գերմանականին: Երկու համակարգերի դեպքում էլ գործում են սոցիալական ապահովագրական համակարգեր, որոնք մեծամասամբ հիմնված են աշխատանքային եկամուտով պայմանավորված պարտադիր վճարների վրա, առկա է ապահովագրողի ազատ ընտրության հնարավորություն, մասնավոր կառավարվող ընդարձակ ապահովագրական ծառայություններ, սակայն առկա է նաև մասամբ անորոշ ծառայությունների ծածկույթ: Երկու համակարգերի միջև նմանությունները հնարավոր է հետազոտել բացատրել: 1941 թ. ներդրված Նիդերլանդական առողջապահական համակարգը էապես ոգեշնչված է գերմանական համակարգով (Գրես, 2006թ.): Այն վերջին անգամ հիմնովին բարեփոխվել է 2006 թ.:

*Նմանություններ
գերմանական
համակարգի
համեմատությամբ*

*Առողջապահական
համակարգ. երեք
բաղադրիչներ*

Նիդերլանդական բժշկական ապահովագրական համակարգը բաղկացած է երեք բաղադրիչներից: Առաջին (խնամքի և երկարաժամկետ ապահովագրություն) և երրորդ (մասնավոր լրացուցիչ ապահովագրություն) բաղադրիչները 2006 թ. բժշկական ապահովագրական համակարգի հիմնական բարեփոխման ժամանակ ընդհանրապես փոփոխության չեն ենթարկվել: Բարեփոխումը վերաբերում է բացառապես երկրորդ բաղադրիչին: Մինչև բարեփոխումը երկրորդ բաղադրիչը ներառում էր սոցիալական (պետական) պարտադիր և մասնավոր ամբողջական ապահովագրությունը: Եկամուտի սահմանագիծը գերազանցող եկամուտ ունեցող աշխատողները և ինքնազբաղվածները ստիպված էին լքել սոցիալական պարտադիր ապահովագրությունը և անցնել մասնավոր ամբողջական ապահովագրության:

*2006թ. միասնական
առողջապահական
ապահովագրական
համակարգ*

Բարեփոխումից ի վեր գործում է միասնական առողջապահական ապահովագրական համակարգ: Սոցիալական և մասնավոր բժշկական ապահովագրական ընկերությունները միասնական ապահովագրական համակարգում մրցակցում են միմյանց հետ:

*Սոցիալական և
մասնավոր ապահովագրական
ընկերու-
թյունների համար
մրցակցության
շրջանակ*

Բոլոր բժշկական ապահովագրական ընկերությունների համար գործում են միևնույն հիմնավորումները: Նրանք ենթարկվում են պայմանագրային վերահսկողության, և չեն կարող դիմումատուներին շեղել, իրավունք չունեն ռիսկով պայմանավորված պարզապահարներ բարձրացնել և ներգրավված են հիվանդություններով պայմանավորված ռիսկային կառուցվածքի փոխհատուցման համակարգում: Բժշկական ապահովագրական ընկերությունները կարող են ապահովագրվող-

ներին տարբեր սակագներ առաջարկել: Պարտադիր ապահովագրության օրենքը գործում է բոլորի համար:

Համակարգը ֆինանսավորվում է աշխատավարձով պայմանավորված (գործատուներ) և աշխատավարձից անկախ (գործառույթներ, մոտ 1.100 եվրո տարեկան) պարտադիր վճարների միջոցով: Վերջինիս մի մասը վճարում է պետությունը՝ առողջապահական հավելավճարներ տրամադրելով երեխաների և դեռահասների, ինչպես նաև ցածր վաստակողների համար:

Բարեփոխման ազդեցության արդյունքում սկզբնական շրջանում ապահովագրվողների շրջանում նկատելի էր ապահովագրական ընկերությունների փոփոխման մեծ շահագրգռվածություն: Նիդերլանդներում բարեփոխման հետևանքով ապահովագրվածների մոտ մեկ հինգերորդը փոխեց ապահովագրական ընկերությունները: Նիդերլանդներում ապահովագրվողների ընտրության վարքագիծը ցույց տվեց վերջիններիս անվտանգության մեծ պահանջը: Ապահովագրվողները շատ հազվադեպ էին ընտրում բարձր սեփական մասնաբաժին պահանջող սակագնային ծածկույթներ և նրանց շուրջ 95 %-ն ունեն մասնավոր լրացուցիչ ապահովագրություն, քանի որ ապահովագրությունները փոխհատուցում են միայն բազային ծառայությունների ծածկույթները:

Գերմանիայի առողջապահական համակարգի միջնաժամկետ և երկարաժամկետ զարգացման համար քննարկվում է բժշկական ապահովագրական համակարգի մրցակցային մոդելը, որը հաղթահարում է պետական և մասնավոր բժշկական ապահովագրության սահմանները:

Մեծ Բրիտանիա

Մեծ Բրիտանիայում առողջապահության ապահովումը ավանդաբար իրականացվում է հանրային ծառայության ձևաչափով: Առողջապահական համակարգի հիմնական առաջադրանքները պլանավորվում, ղեկավարվում և կարգավորվում են 1948 թ. գործող National Health Service-ի (NHS) կողմից: NHS-ը մեծամասամբ ֆինանսավորվում է հարկերի միջոցով և կառավարվում է պետության կողմից: NHS-ին անդամակցությունը պարտադիր է բոլոր քաղաքացիների համար:

Մեծ Բրիտանիայի ամբողջ բնակչությունը, անկախ ազգությունից և եկամուտից, իրավունք ունի օգտվելու առողջապահական համակարգի ծառայություններից: Բոլորին հասանելի առաջնային ապահովման համակարգը ներառում է

*Ֆինանսավորվում է
հիմնականում
վճարների միջոցով*

*Բարեփոխման մոդել
Գերմանիայի համար*

*Կենտրոնական
կառավարում
National Health
Service-ի (NHS)
կողմից*

*Իրավունք ամբողջ
բնակչության համար*

ընդհանուր և նեղ մասնագիտական բժշկական, աբուլատոր և ստացիոնար բուժօգնություն, ինչպես նաև կացության ապահովում խնամքի հաստատություններում:

*Հարկերի միջոցով
ֆինանսավորում,
որպես կանոն անվ-
ճար բուժօգնություն*

Առողջապահական համակարգը մեծամասամբ ֆինանսավորվում է հարկերի, մասամբ նաև՝ մասնավոր հավելվածարների միջոցով, վերջիններս հիմնականում ուղղվում են դեղամիջոցների և ատամնաբուժական ծառայությունների համար: Առողջապահական համակարգի ֆինանսավորման իրենց մասնաբաժինն ունեն նաև NHS ազգային ապահովագրական ծառայություն վճարվող վճարները, որոնք կատարվում են ինքնազբաղվածների, վարձու աշխատողների, ինչպես նաև գործատուների կողմից: Հիվանդների համար բուժօգնությունը որպես կանոն անվճար է:

*Ընտանեկան
բժիշկների կլինի-
կաների ցանց*

Ծառայությունների կազմակերպման ժամանակ առանցքային դերակատարություն ունեն առաջնային բուժօգնության ծառայությունները (Primary Care Trusts/ PCTs): Այստեղ խոսքը 151 ընտանեկան բժիշկների կլինիկաների ցանցի մասին է, որոնք պատասխանատու են միջինում 340 000-անոց բնակավայրերի բուժապահովման համար: PCT-երը պատասխանատու են իրենց տարածքներում առողջապահական ծառայությունների կարիքի գնահատման և համապատասխան բուժօգնության ապահովման համար: PCT-երը ստանում են առողջապահական ծառայությունների համար նախատեսված բյուջեի 7,5 %-ը և կարող են բուժօգնության ապահովման պայմանագրեր կնքել իրենց համայնքների խնամքի հաստատությունների, NHS-ի, ինչպես նաև հարևան համայնքների հաստատությունների, մասնավոր կամ հասարակական ընկերությունների հետ:

*Ընտանեկան
բժիշկներ. առաջ-
նային բուժօգնու-
թյուն և հետագա
միջնորդություն*

Առաջնային բուժօգնությունը մատուցվում է ընտանեկան բժիշկների կողմից: Մեծամասամբ ինքնազբաղ բժիշկներին՝ իրենց Gatekeeper-ի³² կարգավիճակում, բաժին է ընկնում առողջապահական համակարգում նեղ մասնագիտական ծառայություններ մատուցելու կարևոր դերակատարությունը: Հիվանդանոցները վճարվում են և՛ ըստ մատուցած ծառայությունների հաշվարկների, և՛ պայմանագրերով սահմանված հաստատավճարների տեսքով: Ամբողջ բյուջեն կառավարվում է Անգլիայի, Ուելսի, Շոտլանդիայի և Հյուսիսային Իռլանդիայի կենտրոնական պետական գերատեսչությունների և առողջապահության նախարարությունների կողմից:

*Հիվանդների
սահմանափակ
ընտրության
հնարավորություն*

Հիվանդների համար ընտրության ազատությունը սահմանափակ է: Բժիշկների ազատ ընտրությունը հնարավոր է համապատասխան համայնքի պատկանելության շրջանակում: Հիվանդները կարող են, իրենց ընտանեկան բժիշկի հետ խորի-

32 «Դռնապան» բառի անգլերեն տարբերակը: Ընտանեկան բժիշկը այցելուների առաջին կանգառն է: Նա պատասխանատու է հիվանդների հետագա միջնորդության համար, եթե վերջիններս ունեն նեղ մասնագետների կարիք:

դակցելով, բուժօգնության համար ընտրել ցուցակում ներկայացված մոտակա բազմաթիվ հիվանդանոցներից որևէ մեկը: Հիվանդանոցների ընդլայնված ընտրության հնարավորությունը նպատակ ունի ազատ ընտրության հետ համատեղ նվազեցնել սպասելաժամանակը:

Բրիտանական առողջապահական համակարգի խնդիրը անբավարար ֆինանսավորումն է և դրանից բխող երկար սպասելաժամանակը: ՀՆԱ-ի (համախառն ներքին արդյունք) հարաբերակցությամբ Բրիտանիան համեմատաբար քիչ գումար է հատկացնում առողջության և բուժապահովման համար: 2010թ. դրությամբ Գերմանիան ՀՆԱ-ի 11,6 %-ը ներդնում էր առողջապահության ոլորտում, միևնույն ժամանակահատվածում Մեծ Բրիտանիան OECD-ի միջին 9,5 % ցուցանիշից (OECD 2012b) առաջ էր անցնում չնչին առավելությամբ՝ 9,6 %-ով: Բյուջեյի խիստ քաղաքականության և ծառայություններից օգտվելու կանոնակարգման հետևանքով ստացիոնար բուժօգնության ոլորտում առաջանում են բուժապահովման խոչընդոտներ:

Մեծ Բրիտանիայում 2000թ. ներդրված «The NHS Plan-A Plan for Investment. A Plan for Reform»-ը լայնածավալ բարեփոխումների մեկնարկ էր: Այն նախատեսում էր հիվանդանոցներում մահճակալների, գլխավոր բժիշկների, ընտանեկան բժիշկների, ինչպես նաև բժշկական ուսումնական տեղերի թվաքանակի ավելացում: Ի լրումն այս ամենի, ընդլայնվեց նաև քաղցկեղի կանխարգելման ծրագիրը: NHS-առողջապահական արժեկտրոնների միջոցով հնարավոր դարձավ տարեցների համար ապահովել սոցիալական առավել լավ պաշտպանվածություն: 2008-2009 թթ. Մեծ Բրիտանիայում առողջապահական համակարգի ծախսերը ակնհայտորեն բարձրացան՝ ՀՆԱ-ի 8,8 %-ից հասնելով 9,8 %-ի (2010 թ.՝ 9,6 %), այդուհանդերձ այստեղ առողջապահության համար կատարվող ծախսերը Գերմանիայի և Նիդերլանդների համեմատությամբ դեռևս շարունակում են ցածր մնալ:³³

2012 թ. ազատական-պահպանողական կառավարությունը Մեծ Բրիտանիայում որոշեց բարեփոխում իրականացնել՝ ծախսերը նվազեցնելու և մասնավոր ու պետական ապահովագրական ծառայությունների մրցակցությունը հնարավոր դարձնելու նպատակ հետապնդելով: Հիվանդները այսուհետև կարող են ազատ ընտրել իրենց ընտանեկան բժշկին: Ընտանեկան բժիշկների ընտրությունն այլևս չի սահմանափակվում համայնքային պատկանելությամբ: Կառավարման կարգը ենթակա է վերակառուցման: PCT-ները և տասը ռազմավարական առողջապահական մարմինները պետք է լուծարվեն: Ընտանեկան բժիշկները պետք է միավորվեն

*Մեծ Բրիտանիա.
առողջապահության
համար համեմատա-
բար սահմանափակ
ծախսեր*

*Բարեփոխումը
միտված է հաղթահա-
րելու սոցիալական
պաշտպանության
խնդիրները*

33 Տես էջ 154:

այսպես կոչված կոնսորցիումներում: Կոնսորցիումներին միջոցներ է տրամադրվում, վերջիններս բաշխվում են՝ համաձայն ընտանեկան բժիշկների մատուցած բուժօժանայությունների որակի: Ընտանեկան բժիշկները իրենց հիվանդների համար փնտրում են բուժօժանայությունների լավագույն առաջարկները և վճարում են համապատասխան ծառայություն մատուցողներին: Հիվանդանոցները այսուհետև ազատ կլինեն ընդունել մասնավոր հիվանդների և մասնավոր բուժընկերությունների հետ կմրցակցեն ընտանեկան բժիշկների բուժօժանայությունների պատվերների համար:

Առողջապահական համակարգերի համեմատություն

Տարբեր համակարգերի ուժեղ և թույլ կողմերը գնահատելու համար հաճախ դիտարկվում է առողջապահական քաղաքական նպատակը: Առողջապահական համակարգի արդյունավետության և բուժօգնության բարձր որակի հետ մեկտեղ յուրաքանչյուր առողջապահական համակարգի կարևորագույն խնդիրն է առողջապահական ծառայություններից օգտվելու հավասար հնարավորությունների ստեղծումը և կարիքի արդարացի գնահատումը: Տարիներ շարունակ սոցիալական քաղաքականության 20-րդ դարի ամենամեծ ձեռքբերումը համարվում է այն, որ առողջապահական ապահովագրության համար եկամուտը և սոցիալական խավը որևէ դերակատարություն չունեն:

*Առանցքային
նպատակ. արդյունա-
վետություն,
հավասար հնարավոր-
ություններ և
կարիքի արդար
գնահատում*

*Արդյունավետության
և ֆինանսավորման
հարցերը*

Բժշկական-տեխնոլոգիական առաջընթացի շնորհիվ այսօր էականորեն ավելի շատ հիվանդությունների բուժումն է հաջողությամբ պսակվում, քան տարիներ առաջ: Այս հանգամանքը կապված է առավել բարձր ծախսերի հետ: Այսպիսով, առողջապահական համակարգի արդյունավետության և ֆինանսավորման խնդիրը ինքնին անխուսափելի է դառնում:

«Եվրոպա-առողջապահական սպառողական ինդեքս»

2005թ. ի վեր, եվրոպական առողջապահական համակարգերի տարեկան համեմատու-
թյունը կատարվում է Health Consumer Powerhouse (HCP) խորհրդատվական կազմա-
կերպության կողմից: Այս համեմատությունը հատկապես կարևորվում է քաղաքական
հարթակներում, և իրականացվում է HCP-ի կողմից ձևավորված «Եվրոպա-առողջա-
պահական սպառողական ինդեքսի» հիման վրա (EHCI): Երկրների կողմից տրամադր-
վող հանրային վիճակագրությունների, օրենսդրական տեքստերի, փաստաթղթերի,
հարցազրույցների, հարցումների և փորձագետների քննարկումների հիման վրա
ձևավորվող ինդեքսը նպատակ ունի պարզելու առողջապահական համակարգի
հասանելիությունն ու հարմարավետությունը սպառողների տեսանկյունից: Այսպիսով,
սպառողների կարծիքը ուսումնասիրության առանցքային հարցն է:

*Health Consumer
Powerhouse (HCP)*

2012 թ. եվրոպական առողջապահական համակարգերի դասակարգումը, համաձայն «Եվրոպա-առողջապահական սպառողական ինդեքսի», իրականացվեց հինգ առանցքային ոլորտներում: Դրանք են՝ հիվանդների իրավունքներ և տեղեկատվություն, բուժօգնության արդյունքներ, բուժօգնության համար սպասելաժամանակ, բուժօժանդությունների ծավալ և կանխարգելման շրջանակ, դեղամիջոցներ, որոնք իրենց հերթին ներառում են ծառայությունների քառասուներկու ցուցիչ:

2012թ. «Եվրոպա-առողջապահական սպառողական ինդեքս»

	Գերմանիա	Նիդերլանդներ	Մեծ Բրիտանիա
Հիվանդների իրավունքներ և տեղեկատվություն	117	170	160
Բուժօգնության սպասելաժամանակ	200	200	133
Բուժօգնության արդյունքներ	200	263	133
Առողջապահական ծառայությունների ծավալ/ կանխարգելման շրջանակ	111	163	146
Դեղամիջոցներ	76	76	81
Ընդհանուր միավորներ	704	872	721
Զբաղեցրած աստիճան	14	1	12

Աղբյուր՝ Health Consumer Powerhouse (2012թ.)

«Եվրոպա-առողջապահական սպառողական ինդեքսի» համաձայն 2012թ. դրությամբ Գերմանիան 34 ուսումնասիրված առողջապահական համակարգերի շարքում զբաղեցնում է 14-րդ հորիզոնականը: Այստեղ պարզ է դառնում, որ Գերմանիան ակնհայտորեն զիջել է դիրքերը, քանի որ 2009թ. զբաղեցնում էր 6-րդ, 2007թ.՝ 5-րդ, իսկ 2005թ.՝ 3-րդ հորիզոնականները:

2008թ. HCP-ը գերմանական համակարգում դրական էր գնահատում սպասելաժամանակի բացակայությունը, մասնագիտական բժշկական կանխարգելիչ ծառայությունների ակտիվացումը հասանելիությունը և մատուցվող ծառայությունների ընդգրկումը ծածկույթը: Դրական էր նաև այն, որ հիվանդները Գերմանիայում յուրաքանչյուր պահի կարող են ստանալ երկրորդ կարծիք: 2007թ. դրությամբ Գեր-

Գերմանիան՝
34-ից 14-րդ հորի-
զոնականում

Դրական. հասանե-
լիություն և ծառայու-
թյունների ծածկույթ

մանիայի իրավիճակը համեմատաբար բարվոք էր նաև բժշկական ծառայությունների որակի առումով: HCP-ի համար որպես չափման միավոր են հանդիսանում, օրինակ, երեխաների մահացության, բաղցկեղի ժամանակ *հինգ-տարվա-կյանքի* կամ սրտի կաթվածից հետո մահացության ցուցանիշները:

*Բացասական.
հիվանդների
իրավունքներ և
տեղեկատվություն*

«Հիվանդների իրավունքների և տեղեկատվության» թեմայի շրջանակում Գերմանիան, դեռևս սկսած 2008 թ., համեմատաբար ոչ նպաստավոր դիրքերում էր: Հիվանդների պաշտպանվածության մասին օրենքի և գերմանացի բժիշկների և կլինիկաների որակների համեմատության թափանցիկության բացակայությունը հանգեցրեց միավորների կորստի: 2012 թ. EHC-ի Գերմանիայի վատ ցուցանիշները մասամբ կապված են նաև ինը նոր չափորոշիչների ներդրման հետ: Ակնհայտ է, որ եթե 2009թ. Գերմանիայի առողջապահական համակարգը առաջատարների թվին էր դասվում, ապա 2012թ. EHCI – ի ցուցանիշներով Գերմանիան ունի միայն միջին կարգի առողջապահական համակարգ: Այսպիսով, Գերմանիան առաջին անգամ զիջում է Մեծ Բրտանիային: Չարմանալիորեն վատ ցուցանիշներ են արձանագրվել սրտանոթային հիվանդությունների ապահովման և հիվանդանոցային վարակների ոլորտում: Արձանագրված ցուցանիշները HCP-ի կողմից բացատրվում են ոչ մասնագիտացված փոքր կլինիկաների մեծ թվով: Համակարգը դիրքերը զիջում է նաև առատածեռության (առողջապահական ծառայությունների ծավալ և տեսակների բազմազանություն) տեսանկյունից: E-Health-ը (առողջապահության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործում) քայլ առ քայլ ամրապնդում է իր դիրքերը: Բարելավման կարիք կա նաև կանխարգելիչ առողջապահական ոլորտում: Մի հարց, որը անմիջականորեն կապված է *նախապես հոգացող* սոցիալական պետության առողջապահական ենթակառուցվածքների կառուցածքի, ինչպես նաև կրթական հարցերի հետ (տե՛ս գլուխ 7.5):

*Առաջատար՝
Նիդերլանդներ*

Նիդերլանդները EHCI-ի կողմից գնահատվել է որպես առաջատար առողջապահական համակարգ ունեցող երկիր: 2006 և 2007 թթ. Նիդերլանդները զբաղեցնում էր 2-րդ, իսկ 2009 թ.՝ առաջին հորիզոնականը: 2012 թ. Նիդերլանդները չի զիջել իր առաջատարի դիրքերը: Նրան հետևում են Դանիան, Իռլանդիան, Լյուքսեմբուրգը և Բելգիան: Նիդերլանդական առողջապահական համակարգը հատկանշվում է մրցակցության մեջ գտնվող ապահովագրողների մեծ թվով և որոշումների ընդունման գործընթացում հաճախորդների կազմակերպությունների ուժեղ դերակատարությամբ: Կարծես թե թույլ կողմեր չկան: Միայն սպասելաժամանակի առումով բարելավման ներուժի անհրաժեշտություն կա: Նիդերլանդական առողջապահական համակարգի շատ լավ արդյունքները պայ-

մանավորված են նաև ԵՄ-ում մեկ շնչի հաշվարկով կատարվող առողջապահական ամենաբարձր ծախսերով:

Մեծ Բրիտանիան շարունակում է զբաղեցնել միջին հորիզոնականներ, սակայն 2012թ.առաջին անգամ զբաղեցրեց ավելի բարձր հորիզոնական, քան Գերմանիան: Մեծ Բրիտանիան 2006 թ. գտնվում էր 15-րդ, 2007 թ.՝ 17-րդ հորիզոնականներում: 2008թ. Մեծ Բրիտանիայի առողջապահական համակարգի ցուցանիշը 13-րդն էր, 2009թ.՝ 14-րդը, իսկ 2012 թ.՝ 12-րդը: Հաջորդելով Դանիային և Նորվեգիային՝ Մեծ Բրիտանիան երրորդ ամենաբարձր ցուցանիշն ունի հիվանդների իրավունքների և տեղեկատվության, ներառյալ E-Health-ի ոլորտում: Մեծ ներդրումների արդյունքում նկատելի է նաև առաջընթաց առողջապահական ծառայությունների ծավալի և տարածականության տեսանկյունից: Առողջապահական ծառայությունների հասանելիության տեսանկյունից այստեղ հաջողություն չի արձանագրվել, երկար սպասելաժամանակը ևս շարունակում է մնալ բրիտանական առողջապահական համակարգին բնորոշ խնդիր: Բուժօգնության արձանագրվող արդյունքները զարգացած երկրի համար դեռ գոհացուցիչ չեն:

Անկասկած կարելի է վիճել այն հարցի շուրջ՝ արդյո՞ք ընտրված ցուցիչների սպեկտրը բավականաչափ «ներկայացուցչական» է առողջապահական համակարգերի համեմատության և գնահատման համար: Ցուցիչների մշակման համար տվյալների աղբյուր են հանդիսանում մեծամասամբ հարցումները, հարցազրույցները, փորձագիտական քննարկումները և այլն: Վերջիններս այդքան էլ ճշգրիտ և ստույգ չեն, որքան առողջապահական վիճակագրությունները: Այսպիսով, Գերմանիայի դիրքի իջեցումը կարող է կապված լինել առողջապահական համակարգի գնահատման մշակութային տարբերությունների հետ:

Այս և այլ ուսումնասիրություններ մատնանշում են, որ հակառակ այն ընդունված կարծիքի, թե գերմանական առողջապահական համակարգը շատ արդյունավետ է, շատ ոլորտներում, այնուամենայնիվ, առկա է բարելավման ներուժ: 2006 և 2009 թթ. ամերիկյան «US-Commonwealth» հիմնադրամը, մի քանի երկրների համեմատությամբ, հրապարակեց առաջնային բժիշկների կարծիքը իրենց առօրյա աշխատանքի և իրենց ընդհանուր գնահատականը առողջապահական համակարգի մասին: Գերմանիայում հարցմանը մասնակցած ընտանեկան բժիշկների 82 %-ը գտնում էր, որ հիմնարար փոփոխությունների անհրաժեշտություն կա: Հարցվածների 73 %-ը կարծում էր, որ փոփոխված պայմանների արդյունքում բուժօգնության ապահովումը վատթարացել է: Մյուս երկրներում այդ կարծիքը կիսում են հարցվածների առավելագույնը 41 %-ը (Զոխ, 2011թ.):

Մեծ Բրիտանիա. միջին հորիզոնականներ

Գերմանիա. բարելավման աննկատանհրաժեշտություն

Գերմանիայում ֆինանսավորման հարցը շարունակում է մնալ քննարկումների առաջնային պլանում: Վերջինիս պատճառն է ահագնացող ֆինանսավորման ճնշումը, որը պայմանավորված է թե՛ ծախսերի և թե՛ վճարներ հավաքագրման հիմնահարցերով: Աճող ծախսերը արտացոլվում են բժշկական առաջընթացի և ծերացող բնակչության հաճախ ու առավել լավ առողջապահական ծառայություններից օգտվելու անհրաժեշտության, ինչպես նաև մատուցվող ծառայությունների արդյունավետության բացերի մեջ (Վալենդցիկ, 2009թ.): Միջազգային համեմատությամբ Գերմանիան առողջապահական ապահովման համար համեմատաբար ավելի շատ գումար է տրամադրում:


Առողջապահական ծախսեր 2010թ.

	Գերմանիա	Նիդերլանդներ	Մեծ Բրիտանիա
Առողջապահական ծախսերը ՅՆԱ-ի տոկոսով	11,6	12,0	9,6
Մեկ շնչի համար հատկացվող առողջապահական ծախսերը*	4.338	5.066	3.443

*Ներկայացված է ամերիկյան դոլարով, հաշվի է առնված գնողունակության համարժեքությունը // աղբյուր՝ OECD (2012)

Այս համատեքստում հաճախ է խոսվում «առողջապահական համակարգում ծախսերի պայթյունի» մասին: Եթե դիտարկում ենք պարտադիր վճարների զարգացումը, ապա պարզ է դառնում, որ վճարները շատ չեն բարձրացել: 1998 թ. վերջիններս կազմում էին տարեկան 13,6 %, իսկ 2012թ.՝ 15,5 % (տե՛ս գծ. 17):

Եթե դիտարկում ենք (հանրային) առողջապահական ծախսերի զարգացումը՝ որպես ՅՆԱ-ի տոկոսային կշիռ, ապա ակնհայտ է դառնում, որ հատկապես 2003 և 2004 թթ. վերջինս նույնիսկ նվազել է: Սա պայմանավորված էր ծախսերի ճնշման բազմաթիվ բարեփոխումներով, որոնք ուղեկցվում էին «հասույթով կողմնորոշվող ծախսերի բաղաբաժանությամբ» (Բուսե/Ռիեզբերգ, 2005թ.): 2008 և 2009թթ. հանրային ծախսերը ավելացան մոտ մեկ տոկոսով՝ 2010 թ. կազմելով ՅՆԱ-ի 8,9 %-ը:



Դաշնության (www.gbe-bund.de) և դաշնային առողջապահության նախարարության առողջապահական հաշվետվությունների (2011թ.) հիման վրա կատարված սեփական հաշվարկներ

Գծապատկեր 17. Հանրային առողջապահական ծախսերի և առողջապահական պարտադիր վճարների դրույթաչափերի զարգացումը, 1998-2010/2012թթ.

Գերմանական առողջապահական համակարգի խնդիրները, պարտադիր վճարների հավաքագրման մասով, ահռելի են: Վճարների հիմքերը շարունակ կրճատվում են: Առավել լավ վաստակողները կարող են, համերաշխություն (ռիսկերի և եկամուտի համերաշխություն/գորակցություն) ցուցաբերելով, հրաժարվել պետական առողջապահական ապահովագրությունից՝ ընտրելով մասնավոր բժշկական ապահովագրական ուղին:

Պարտադիր վճարներով պայմանավորված գանձումները միայն շատ չնչին աճ ունեն: 1992թ. ի վեր, նվազում է բնակչության զբաղվածների թվաքանակը (Բուսե/Ռիեգերթ, 2005թ.) Ի տարբերություն զբաղվածությամբ պայմանավորված եկամուտների, այլ եկամուտների տեսակների նշանակությունը (ինչպես օրինակ՝ կապիտալից առաջացած եկամուտների) միաժամանակ մեծանում է: Սրանով պայմանավորված՝ բոլոր եկամուտների անհամաչափ աճի պայմանները դրական են ազդում պետական բժշկական ապահովագրության վճարների (ՊԲԱ) հիմքերի վրա, իսկ վերջին տարիների աշխատավարձերի լճացումը և ատիպիկ աշխատանքների աճը՝ բացասական: ՊԲԱ-ների վճարների սահմանագիծը թույլ է տալիս ունենալ բաշխողական ռեգրեսիվ ազդեցություն, որը նշանակում է, որ վճարների սահմանագծից առավել եկամուտ ունեցող ՊԲԱ անդամները պետք է իրենց եկամուտի միայն մի չնչին չափաբաժինը վճարեն:

*Հավաքագրման
խնդիրներ*

Եթե ցանկանում ենք այսուհետև ևս բոլոր քաղաքացիներին համեմատաբար հավասարաչափ առողջապահական ծառայությունների հասանելիություն ապահովել, ապա հարկավոր է ձգտել հնարավորինս լայնածավալ և համերաշխ ֆինանսավորման: Տեսականորեն դրան հնարավոր է հասնել, թե՛ բարձրացված հարկային հավելավճարների, թե՛ առողջապահական պարզազվածքների մոդելի և թե՛ քաղաքացիական ապահովագրության միջոցով: Վերաբաշխման իրական էֆեկտը երկու մոդելների պարագայում էլ պայմանավորված է հարկային հավելավճարների կառուցվածքով, համապատասխանաբար՝ պարտադիր վճարների սահմանագծի չափով: Հավելավճարային համակարգը, սակայն, վերաբերում է միայն ցածր եկամուտ ունեցողներին, մինչդեռ առողջապահական պարզազվածքների մոդելը, ի տարբերություն քաղաքացիական ապահովագրության, նախատեսում է միջին եկամուտով տնտեսությունների ավելի խիստ ծանրաբեռնում՝ հոգուտ ավելի բարձր եկամուտ ունեցող ընտանեկան տնտեսությունների:

«Հիվանդները, անկախ իրենց ծագումից, տարիքից կամ սեռից, ունեն խնամքի հավասար իրավունք և բժշկական առաջընթացի հավասար մասնակցություն: Մենք չենք ուզում երկու դասի բժշկություն: Այդ իսկ պատճառով մենք ցանկանում ենք համերաշխ քաղաքացիական ապահովագրություն, որտեղ ներառված կլինեն բոլոր մարդիկ» (Համբուրգյան ծրագիր, 2007թ., էջ 58):

Գերմանական առողջապահական համակարգի արդար և համերաշխ ֆինանսավորման համար հարկավոր է վերջ դնել ներկայիս բժշկական ապահովագրության երկփեղկվածությանը (պետական և մասնավոր): Նիդերլանդների օրինակը ցույց է տալիս, որ «սոցիալական» և մասնավոր բժշկական ապահովագրությունների միավորումը կարող է բարձրացնել ապահովագրողների միջև մրցակցությունը հոգուտ ապահովագրվողների: Օգտակար բարեփոխման համար հիմք պետք է լինեն հնարավորինս լայնածավալ ֆինանսավորման աղբյուրները, բոլոր քաղաքացիների պարտադիր ապահովագրությունը միասնական բժշկական ապահովագրական շուկայի շրջանակում, որին բնորոշ կլինեն պայմանագրերով պայմանավորված վերահսկողություն, ռիսկերից անկախ վճարներ և հիվանդությունների ռիսկերով պայմանավորված փոխհատուցման համակարգ:

Սոցիալ-սեմոկրատիայի համար դա նշանակում է:

- Առողջապահական ոլորտում սոցիալ-դեմոկրատիայի առաջնային սկզբունքներն են աշխատունակությունը, արդյունավետությունը, կարիքի արդարությունը և համերաշխությունը (ռիսկի և եկամուտի համերաշխություն):
- Առավել բարձր հարկային հավելավճարները կամ քաղաքացիական ապահովագրության ներդրումը հնարավոր կդարձնեն առողջապահական համակարգի լայնածավալ և արդար ֆինանսավորումը:
- Բժշկական ապահովագրությունների (պետական և մասնավոր) արդար մրցակցությունը պահանջում է տարբեր ռիսկերի փոխհատուցում, ապահովագրության պարտադիր սահմանազծի վերացում և պայմանագրային վերահսկողություն:
- Կանխարգելիչ առաջարկները և միջոցառումները պետք է ընդլայնվեն:

Լրացուցիչ ընթերցանության համար՝
Հագեն Զյուհն և Սեբաստիան Զլինկե (2006թ.), «Համերաշխ բժշկական ապահովագրության հեռանկարները»;
Յուրգեն Զոկա, «Գերմանիայի ապագայի կարողությունները», սոցիոլոգիական էսսե, WZB-տարեգիրք, 2006 թ., Բեռլին, էջ 179-202:

Շտեֆան Գրես (2009թ.), «Հավասար պայմաններով մրցակցություն առողջապահական համակարգում, գերմանական բժշկական ապահովագրական շուկայում միասնական մրցակցային կարգի անհրաժեշտություն», WISO, Ֆրիդրիխ Էբերտ ինստիտուտ, Բոնն:

7.5. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մարիուս Ռ. Բուսեմեյեր

Այս գլխում՝

- կիսամեմատվեն գերմանական, շվեդական և ԱՄՆ-ի կրթական համակարգերը,
- երեք կրթահամակարգերը կգնահատվեն արդարության տարբեր սկզբունքների և կրթական առաջադիմությունների տեսանկյունից,
- կքննարկվեն Գերմանիայի բացասական արդյունքների պատճառները և բարեփոխման հնարավորությունները,
- վեր կհանվի հավասար հնարավորությունների, կրթության և սոցիալ-դեմոկրատիայի արմատական կապը:

*Գերմանիա. երկար
ժամանակ բաժան-
ված սոցիալական և
կրթական քաղա-
քականություն*

Գերմանիայում երկար ժամանակ է, որ սոցիալական և կրթական քաղաքականություններն իրարից զատ են քննարկվում: Այս բաժանումը պետք է վերագրել պահպանողական սոցիալական պետության քաղաքականությանը, ինչպես նաև՝ այս երկու քաղաքական ոլորտների տարբեր ինստիտուցիոնալ պատկանելիությանը: Գերմանական կրթական ֆեդերալիզմում կրթության համար պատասխանատու են հիմնականում դաշնային մարզերը և համայնքները: Կենտրոնական դաշնությունը իրավասու է միայն բարձրագույն կրթության ոլորտի, մասնագիտական կրթության և ուսուցման աջակցության համար: Աշխատանքային այս բաժանումը 2006թ. դաշնային բարեփոխման միջոցով նույնիսկ ավելի ամրապնդվեց: Սոցիալական քաղաքականության պատասխանատվությունը գրեթե ամբողջությամբ պատկանում է կենտրոնական դաշնությանը և սոցիալական գործընկերներին: Այդ իսկ պատճառով անցյալում, ի տարբերություն այլ երկրների, Գերմանիայում կրթությունը հաճախ չի դիտարկվել որպես սոցիալական քաղաքականության քաղկացուցիչ մաս:

*Միջազգային.
միասնական
կրթական և
սոցիալական
քաղաքականություն*

Անգլոսաքսոնական երկրներում, ինչպես օրինակ՝ ԱՄՆ-ում, կրթական համակարգը վաղ ժամանակներում անմիջականորեն ստանձնեց սոցիալական քաղաքական գործառույթներ: Այնտեղ թույլ սոցիալական պետությունը սոցիալական ապահովման այլ հնարավորություններ գրեթե չէր տրամադրում (Բուսեմեյեր, 2006 թ. և 2007թ.): Սկանդինավյան երկրների սոցիալական պետության ընդգրկուն մոդելում կրթությունը մշտապես դիտարկվել է որպես սոցիալական քաղաքականության կարևոր ոլորտ:

*Բանավեճը Գերմա-
նիայում սկսվել է:*

Վերջերս նաև Գերմանիայում հարց է բարձրացվում, թե որքանով «կրթությունը՝ որպես սոցիալական քաղաքականություն» կարող է և պետք է նպաստի հնարա-

վորությունների և աշխատանքային արդարության ամրապնդմանը: Նախապես հոգացող սոցիալական պետության (տե՛ս գլուխ 4 և 6) այս հեռանկարից ելնելով՝ կրթությունը սոցիալական քաղաքականության համար առանցքային արժեք է:

«Նախապես հոգացող սոցիալական պետությունը կրթությունը դիտարկում է որպես սոցիալական քաղաքականության առանցքային տարր» (Համբուրգյան ծրագիր, 2007թ., էջ 56):

Գերմանական կրթական համակարգի ակունքները

Գերմանիան, ավելի սուույզ՝ Պրուսիան, սոցիալական ապահովագրության և կրթական քաղաքականության ներդրման հարցում առաջամարտիկի դերակատարություն կատարեց: 1717թ. Պրուսիան առաջին երկիրն էր, որ ընդունեց պարտադիր հանրակրթության մասին օրենքը: Միջազգային համեմատությունը ցույց է տալիս, որ գերմանական դպրոցական կրթահամակարգի բազմաստիճան կառուցվածքը գալիս է դեռ այդ ժամանակներից:

Բազմաստիճան դպրոցական կրթահամակարգի առանձնահատկությունը

Գերմանիայում, ելնելով դաշնային մարզերի օրենսդրությունից, աշակերտները դպրոցական չորս տարիներից հետո (որոշ դաշնային մարզերում, ինչպես օրինակ՝ Բեռլինում, Բրանդենբուրգում և Մեքլենբուրգ-Ֆորփոմմերնում՝ 6 տարի հետո) կրթությունը շարունակում են հանրակրթության տարբեր կրթակարգերում: Հետագայում միայն շատ սահմանափակ հնարավորություն է տրվում հիմնական դպրոցից անցում կատարել ավագ դպրոց կամ գիմնազիա: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) 30 երկրների շարքում, Գերմանիայից, Ավստրիայից և Շվեյցարիայից բացի, չկա մեկ այլ երկիր, որտեղ դպրոցականների կրթական ճանապարհները այդքան վաղ տարանջատվեն: Հատկանշական է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո որոշ երկրներում ներմուծվեց աստիճանավորված դպրոցական կրթահամակարգ, որը սակայն, որոշակի ժամանակ անց, փոխարինվեց միասնական հանրակրթական համակարգով (օրինակ՝ Շվեդիայում 1958թ.):

Կեսօրյա ուսուցում

Գերմանիայում ուսուցումը մեծամասամբ կեսօրյա է: 2009թ. միջին դաշնային կտրվածքով աշակերտների միայն 26,9 %-ն էր օգտվում ամբողջօրյա դպրոցական կրթական առաջարկից: Այս առումով, տոկոսային տարբերությունը դաշնային մարզերի միջև ավելի քան ակներև է: Ամբողջօրյա դպրոցական առաջարկից օգտվողների թիվը Բավարիայում կազմում է 8,5 %, իսկ Սաքսոնիայում՝ 72,7 %:

1717թ. պարտադիր դպրոցական կրթություն. կառուցվածքը պահպանվել է մինչև այսօր

Առանձնահատկություն. կրթակարգերի վաղ բաժանում

Ուսուցումը իրականացվում է մեծամասամբ կեսօրյա

Ամբողջությամբ դադարեցրելու ոլորտում դրական զարգացումը նկատելի է հատկապես վերջին տարիների ընթացքում: 2003թ., մինչև սոցիալ-դեմոկրատների և Կանաչների կուսակցության կողմից առաջարկված ամբողջությամբ դադարեցված ծրագրի մեկնարկը, ամբողջությամբ դադարեցված առաջարկից օգտվողների թիվը կազմում էր 10,8 % (կրթության նախարարության մշտական հանձնաժողով (KMK), 2011թ., էջ 12, 39):

Դուալ մասնագիտական կրթություն

Գերմանական դուալ մասնագիտական կրթական մոդելը երկար ժամանակ համարվում էր օրինակելի: Այս մոդելը հնարավոր դարձրեց դպրոցից և մասնագիտական կրթությունից անարգել անցումը աշխատանքի: Այս մոդելի շնորհիվ դպրոցում վատ առաջադիմություն ունեցող աշակերտներին, որոնք օժտված են «գործնականում անհրաժեշտ հմտություններով», հնարավորություն է ընձեռնվում ինտեգրվել մասնագիտական կրթական համակարգ: Դուալ մոդելի արդյունքում կրճատվում է նաև գործազրկության աստիճանը երիտասարդների շրջանում: Դժվար է գտնել մեկ այլ երկիր, որտեղ ձեռնարկությունները նման ինտենսիվությամբ մասնակցություն են ցուցաբերել երիտասարդների առաջնային մասնագիտական կրթության հարցում:

Տարիներ առաջ դուալ մասնագիտական ուսուցումը շարունակաբար ճնշումների էր ենթարկվում: Արհմիությունները քննադատում են մասնագիտական ուսուցման շուկայի կառուցվածքային թերությունները և ուսումնական տեղերի սահմանափակ թիվը: Գործատուները, իրենց հերթին, դժգոհում են երիտասարդների անբավարար «մասնագիտական հասունությունից»: Ֆինանսական և տնտեսական ճգնաժամի ժամանակ դուալ մասնագիտական ուսուցումը խորապես արժևորվեց շատերի կողմից: Երիտասարդների գործազրկության մակարդակը շարունակեց մնալ ցածր: Այդուհանդերձ, կառուցվածքային թույլ կողմերը դեռևս առկա են և շուտափույթ բարեփոխման կարիք ունեն:

Երիտասարդների մի մեծ մասի համար դուալ մասնագիտական ուսուցումը շարունակում է մնալ որպես կրթական նախընտրելի այլընտրանք: Այս միտումը ունի թե՛ դրական, թե՛ բացասական հետևանքներ: Նախ, նախընտրելով դուալ մասնագիտական ուսուցումը, միայն քչերն են ուսումը շարունակում բարձրագույն կրթահամալիրներում: Սա խնդրահարույց չէր լինի, եթե այդ երիտասարդները մասնագիտական ուսուցում ստանալուց հետո կարողանային իրենց որակավորմանը համապատասխանող որակյալ աշխատանք գտնել: Մասնագիտական կրթությունից անցումը աշխատաշուկա շարունակաբար

Դուալ մասնագիտական կրթական մոդելը երկար ժամանակ համարվում էր օրինակելի:

Բազմակողմանի քննադատություն

Թափանցելիության խնդիր

ավելի դժվար է դառնում: Սահմանափակ թափանցելիությունը խոչընդոտում է բարձրագույն կրթության հավակնող և մասնագիտական ուսուցումն ավարտած երիտասարդների բարձրագույն կրթություն ստանալու հավասար հանարավորություններին:

Դուալ մասնագիտական ուսուցման ամուր դիրքի երկրորդ բացասական հետևանքն այն է, որ ուսումնական առաջարկները կախված են տնտեսության կառուցվածքային փոփոխություններից և տնտեսական տատանումներից: Մասնագիտական շուկայի կախվածությունը տնտեսական զարգացումներից դուալ մասնագիտական ուսուցման մոդելի հայտնի թույլ կողմերից է:

1970-80-ական թթ. մոդելի տնտեսական վայրիվերումներով պայմանավորված թույլ կողմը հավասարակշռվում էր արհեստավորի «սպունգի գործառույթով»: Տնտեսական անկման ժամանակ արհեստավորները ավելի մեծ թվով մասնագիտական կրթություն ստացողների էին աշխատանքի վերցնում, որոնք, իրավիճակի բարելավման պահին, կարող էին տեղափոխվել արտադրական կամ ծառայությունների մատուցման ոլորտ: Տնտեսության կառուցվածքային փոփոխությունների արդյունքում այս մեխանիզմը այլևս այդքան լավ չի գործում, որքան նախկինում (Յադու, 2004թ.): Սա նշանակում է, որ տնտեսության կառուցվածքային փոփոխություններով պայմանավորված՝ ավելի է ընդգծվել երիտասարդների մասնագիտական և որակավորման հնարավորությունների անկայունությունը:

Բարձրագույն կրթական համակարգ

Գերմանական բարձրագույն կրթության համակարգը բնորոշում են պետական համալսարանները և մասնագիտական բարձրագույն դպրոցները: 2009-2010 ուստարվա տվյալներով ուսանողների միայն 4,5 %-ն էր հաճախում մասնավոր համալսարաններ (Դաշնային վիճակագրական ծառայություն, 2010b):³⁴ Որոշակի ժամանակահատված մի շարք դաշնային մարզերում կրթության համար վարձավճարներ ներմուծելուց հետո, ՍԴԿ-ի ջանքերի շնորհիվ, իր կողմից կառավարվող բոլոր դաշնային կառավարություններում վերացվեցին կրթության վարձավճարները, բացի Բավարիայից և Ստորին Սաքսոնիայից: Գերմանական բարձրագույն կրթահամալիրների ուսանողների շուրջ 18,4 %-ը ստանում է BAföG դաշնային ֆինանսական աջակցություն («19-րդ BAföG գեկույց», 2012թ., էջ 9):³⁵ Գերմանիայում, հատուկ տարիքային խմբի բնակչության շրջանում ուսում սկսողների թիվը 2011թ. դրությամբ կազմում էր 55 % (դաշնային վիճակագրական ծառայություն 2011b):

*Կախվածություն
տնտեսական
փոփոխություններից*

*Լրացուցիչ ընթերցանության համար՝
Ջրիստոֆ Զայնե
(2008թ.), «Ուսումնական վարձավճարները ուսանողների տեսանկյունից», HIS, Զանդեբեր:*

³⁴ Մասնավոր համալսարանները մեծամասամբ ֆինանսավորվում են հանրային միջոցներով:

³⁵ Աջակցություն ստացողների թիվը ներկայացված է ուսանողների ընդհանուր թվի համեմատությամբ:

Վաղ մանկական կրթությունը կատարում է առաջին քայլերը:

Վաղ մանկական կրթություն

Միայն վերջին տարիներին սկսվեց կարևորվել այն միտքը, որ նախադպրոցական տարիքում կրթական աջակցությունը հիմքեր է ստեղծում հետագա կրթական հաջողությունների համար: Գերմանիայում վաղ մանկական կրթական ոլորտը չափազանց խաբիսուլ դիրքերում է: Միջազգային տվյալների համեմատությամբ, ամբողջությամբ և նախադպրոցական կրթական հաստատությունների քանակը Գերմանիայում բավականին փոքր է, հատկապես մինչև երեք տարեկան տարիքային խմբի համար: Շնորհիվ մանկապարտեզների ավանդույթի՝ Գերմանիայում հինգ տարեկանների տարիքային խմբի համար կրթահամալիրների սփռվածության աստիճանը բավականին բարձր է: Ընդհանուր առմամբ, վաղ մանկական կրթական ոլորտը Գերմանիայում դեռևս ըստ պատշաճի չի արժևորվում: Դա հատկապես նշմարելի է, երբ համեմատում ենք գերմանացի դաստիարակների (շատ ավելի ցածր) վարձատրությունը այլ երկրների համապատասխան տվյալների հետ:

Լրացուցիչ կրթության պակաս

Լրացուցիչ կրթություն

Գերմանիայում հանրամատչելի լրացուցիչ կրթական համակարգը հեռու է կատարյալ լինելուց: 2008թ. դրությամբ աշխատողների մոտ 38 %-ը մասնակցում էր լրացուցիչ կրթական միջոցառումների: Սկանդինավյան երկրներում այդ ցուցանիշը ակնհայտորեն ավելի բարձր է: Ֆինլանդիայում այն կազմում է 44 %, իսկ Շվեդիայում՝ նույնիսկ 61 % (OECD 2011d, 373): Երկար ժամանակ տիրում էր այն մտայնությունը, որ ամուր դուռ ամառնային կրթությունը փոխհատուցում է Գերմանիայի լրացուցիչ կրթական համակարգի թույլ կողմերը: Բարեբախտաբար, այժմ արդեն այդ կարծիքը հազվադեպ է հնչում:

«Մենք ցանկանում ենք սովորող հասարակության համար լրացուցիչ կրթությունը դարձնել մեր կրթական համակարգի չորրորդ հիմնասյունը: Այն ևս հանրային պատասխանատվության տիրույթում է: Մենք ցանկանում ենք ապահովել վերապատրաստման և դրա համար հատկացվող գործուղման իրավունք: Դրա համար մենք ցանկանում են համագործակցել սոցիալական գործընկերների և ձեռնարկությունների հետ» (Համբուրգյան ծրագիր, 2007թ., էջ 66):

Համեմատություն ԱՄՆ-ի և Ֆինլանդիայի հետ

Գերմանիան միջազգային համեմատության մեջ

PISA-արդյունքները (Programme for International Student Assessment՝ Դպրոցական առաջադիմության միջազգային գնահատման ծրագիր) հանրության հետաքրքրությունը բարցծրացրեց միջազգային համեմատական հեռանկարի շուրջ: Հաջորդիվ

Գերմանիայի կրթական համակարգը կիսամեմատովի ԱՄՆ-ի և PISA- վերլուծության առաջատար՝ ֆինական կրթական համակարգի հետ, որոնք գերմանական կրթական համակարգի բարեփոխմանն ուղղված քննարկումներում որպես օրինակելի համակարգեր են դիտարկվում:

Կրթական համակարգը Ֆինլանդիայում

Նախադպրոցական կրթական ոլորտը Ֆինլանդիայում բավականին ամուր հիմքերի վրա է: Յուրաքանչյուր նախադպրոցական տարիքի երեխա ցերեկային խնամքի իրավունք ունի: Ֆինլանդիայում մինչև երեք տարեկան երեխաների 28,6 %-ը մասնակցում է նախադպրոցական կրթական ծրագրերի (2008թ.): Գերմանիայում այդ թիվը կազմում է 17,8 %: Սկանդինավյան այլ երկրների ցուցանիշը շատ ավելի բարձր է, քան Ֆինլանդիայինը: Դանիայում օրինակ մինչև երեք տարեկան երեխաների նախադպրոցական կրթական ծրագրերի մասնակցության ցուցանիշը 65,7 %- է (OECD 2011e, էջ 3):

Յոթ տարեկանում սկսվում է իննամյա պարտադիր միասնական ամբողջական դպրոցական շրջանը: Այնուհետև ընտրության հնարավորություն է տրվում եռամյա դպրոցի ընդհանուր կամ մասնագիտական տեսակների միջև: Այս երկու ավարտական վկայականները թույլ են տալիս շարունակել կրթությունը բարձրագույն կրթահամալիրներում (Էուռուդիս, 2011թ., 3 f):

Ֆինլանդիայում մասնագիտական կրթությունը շատ ավելի ամուր է կապակցված ընդհանուր հանրակրթության հետ: Աշակերտները կարող են բազմաթիվ մասնագիտական ուսումնական առաջարկներից ընտրություն կատարել: Դպրոցները ամբողջ ուսուցման ընթացքում համագործակցում են ձեռնարկությունների հետ: Մասնագիտական կրթությունից անցումը բարձրագույն կրթության շատ ավելի հեշտ է, քան Գերմանիայում, նույնը վերաբերում է նաև տարրականից միջնակարգ կրթությանն անցմանը:

Ինչպես սկանդինավյան այլ երկրներում, այնպես էլ Ֆինլանդիայում մասնագիտական լրացուցիչ կրթությունը աշխատաշուկայի ակտիվ քաղաքականության բաղկացուցիչներից է: Ֆինլանդիայում մասնագիտական լրացուցիչ կրթությունը երաշխավորվում է մեծահասակների դուռը մասնագիտական կրթական ծրագրերի միջոցով: Ինչպես Գերմանիայում, այնպես էլ Ֆինլանդիայում բարձրագույն կրթահամալիրները պետական հաստատություններ են և ֆինանսավորվում են պետական միջոցներով:

*Վաղ մանկական կրու-
կրթություն*

*Իննամյա միասնա-
կան ուսուցում*

*Դպրոցի և մասնա-
գիտական կրու-
թյան կապը*

*Լրացուցիչ կրթու-
թյուն՝ աշխատաշու-
կայի ակտիվ
քաղաքականության
բաղկացուցիչ մաս*

Կրթական համակարգի կարգ. հիմնականում մասնավոր և ապակենտրոնացված

Կրթական համակարգը ԱՄՆ-ում

ԱՄՆ-ում կրթական համակարգը էականորեն ապակենտրոնացված է և բնութագրվում է մասնավոր կրթական հաստատությունների բավականին մեծ թվով: Սա հանգեցնում է կողք կողքի գործող շատ տարբեր կրթական հնարավորությունների գոյությանը: Վաղ մանկական շրջանում, տարբեր առաջարկների առկայության պարագայում, ընդհանուր առմամբ 3-5 տարեկանների 56 %-ը ստանում է ցերեկային խնամք, իսկ նրանց գրեթե կեսը ստանում է ամբողջօրյա խնամք: Հինգ տարեկանում երեխաների մեծ մասը հաճախում է հանրային ազատ մանկապարտեզներ:

Հանրակրթական դպրոցի տևողությունը որպես կանոն տասներկու տարի է

Հանրակրթական դպրոցի տևողությունը ԱՄՆ-ում կազմում է տասներկու տարի: Ըստ դաշնային մարզի և դպրոցական շրջանի, հիմնական դպրոցի տևողությունը 6-8 տարի է, ավագ դպրոցի տևողությունը՝ 4-6 տարի: Դպրոցական վերջին չորս տարիները, որպես կանոն, անվանվում են ավագ դպրոց՝ high school:

Մասնավոր դպրոցների բարձր ցուցանիշ

Որպես կանոն «high school»-ը ավարտում են 17 կամ 18 տարեկանում: Շատ երկրներում սա պարտադիր դպրոցական կրթության ավարտի տարիքն է: Հետագայում առաջարկվում են տարբեր գործնական շեշտդրմամբ մասնագիտական ուսումնական հնարավորություններ: Օրինակ՝ երկամյա «community» կամ «junior college» -ը կամ՝ չորսամյա ուսուցում որևէ քոլեջում կամ համալսարանում (ԱՄՆ-ի կրթության պետդեպարտամենտ 2005թ., էջ 13): Մասնավոր դպրոցները կազմում են բոլոր հիմնական և ավագ դպրոցների 24 %-ը: Այս դպրոցներում կրթվում են բոլոր աշակերտների 10 %-ը և այստեղ աշխատում են բոլոր ուսուցիչների 12 %-ը (ԱՄՆ-ի կրթության պետդեպարտամենտ, 2005թ., էջ18):

ԱՄՆ-ի «high school»-ը ունի ընդհանուր մասնագիտական կրթության տարբեր կրթական ծրագրեր: Այդուհանդերձ, բոլոր շրջանավարտները ստանում են միևնույն նմուշի ավարտական վկայականներ:

Արդյո՞ք ԱՄՆ-ի բարձրագույն կրթական հաստատությունները օրինակելի են. նման պնդումը հաճախ խնդրահարույց է:

ԱՄՆ-ի բարձրագույն կրթահամալիրները շատ հաճախ որպես օրինակ են բերվում կրթական բարեփոխումներին նվիրված քննարկումներում: Այստեղ պետք է հաշվի առնել, որ ամերիկյան բարձրագույն կրթահամալիրների միջև գոյություն ունեն որակական և կառուցվածքային մեծ տարբերություններ: Այսպես կոչված «community college» -ները, ըստ էության, ոչ այլ ինչ են, քան մասնագիտական ուսումնական ինստիտուտներ: Միայն շատ քչերն են կարող իրենց թույլ տալ ուսումը ստանալ թանկարժեք մասնավոր համալսարաններում:

Մասնավորի և հանրայինի միջև աշխատանքային նման բաժանում է գործում նաև լրացուցիչ կրթության ոլորտում: ԱՄՆ-ում լրացուցիչ կրթական ոլորտը կարգավորվում է ազատ կրթական շուկայի մոդելով: Այստեղ չի գործում ընդարձակ, օրենքով կարգավորվող լրացուցիչ կրթական համակարգ: Ամերիկյան այս մոդելը անվանվում է «training on the job»: Այստեղ լրացուցիչ մասնագիտական կրթությունն անցկացվում է քոլեջներում և հաճախ ֆինանսավորվում աշխատողների կողմից:

Կրթություն և արդարության սկզբունքներ

Հարց է առաջանում, թե արդարության ո՞ր սկզբունքներից ելնելով է հնարավոր համեմատել նշված երեք կրթական համակարգերը: Դա հասկանալու համար արժե հայացք նետել պատմության վրա: Սոցիալ-դեմոկրատիայի դիրքերից կրթությանը մշտապես կարևոր նշանակություն է տրվել: 19-րդ և 20-րդ դարերում աշխատավորական շարժման ժամանակ ժողովրդավարացման և անհատների ազատագրման համար կրթությունը դիտարկվում էր որպես որոշիչ գործոն: «Ազգային կրթությունը ազգի ազատագրումն է» կարգախոսը կարևոր կրթական նշանաբան էր: Կրթությունը այլևս չպետք է լիներ որոշ խավերի արտոնությունը:

Այս պահանջը դեռևս արդիական է մեր օրերում: Կրթության հասանելիությունը չի կարող պայմանավորված լինել անհատի ծագումով կամ եկամուտով:

Վերը նշված տարբեր կրթական համակարգերը սոցիալ-դեմոկրատիայի դիտանկյունից արժեևորելու համար հարկավոր է չափել արդարության երեք՝ հնարավորությունների հավասարության, արդյունավետության արդարության և պահանջի արդարության սկզբունքները:

Սոցիալ-դեմոկրատիայի տեսանկյունից, հնարավորությունների հավասարությունը կրթական համակարգը գնահատելու առանցքային չափորոշիչ է: Ի տարբերություն դասական սոցիալական քաղաքականության, որը միայն հետահայաց կերպով է փոխհատուցում արդեն իսկ գոյություն ունեցող եկամտային անհավասարությունները, այստեղ հավասար հնարավորությունների ապահովման համար կրթությանը առանձնահատուկ դերակատարություն է տրվում: Բաց է մնում այն հարցը, թե արդյո՞ք կատարյալ կրթական համակարգը ի վիճակի է անհատի մեկնարկային հնարավորությունների տարբերությունները (անհավասար տաղանդ) ամբողջությամբ փոխլրացնել: Լավ կրթական համակարգը պետք է մշտապես փորձի մոտենալ կատարյալին:

*Լրացուցիչ կրթություն
ազատ շուկայի
մոդելով*

*Աշխատավորական
շարժում. կրթությունը
բանալի է ժողովրդա-
վարության և ազա-
տագրման համար*

*Երեք սկզբունք-
ներ. հնարավոր-
ությունների
հավասարություն,
արդյունավետու-
թյան արդարություն
և պահանջի արդա-
րություն*

*Հնարավորու-
թյունների հավա-
սարություն*

Զնարկման համար

Սոցիալ-դեմոկրատիան պահանջում է կրթության հավասար հնարավորություններ: Ներկայիս գերմանական կրթական համակարգը շատերի համար ընդհանրապես որևէ հնարավորություն չի ընձեռում: Ներկայիս համակարգում կրթությունը առաջընթացի և էմանսիպացիայի համար նախապայման չի հանդիսանում, փոխարենը, բացասական փորձի պարագայում, այն նույնականացվում է անհատի սեփական անհաջողությունների և պարտության հետ: «Այնտեղ, որտեղ կա հնարավորություն, առկա է նաև վտանգը, որ շատ մարդիկ այդ հնարավորությունը չեն կարողանա օգտագործել»: Այս թեզը բավականին տարածված է, այն պատկանում է Գյոթթինգենի քաղաքագետ Ֆրանց Վալտերին: Եվ ահա, հարց է առաջանում՝ ինչպե՞ս կարող են այդ մարդիկ ինտեգրվել մի հասարակություն, որը կենտրոնացած է կրթության վրա, ինչպիսի՞ մոթեր պետք է նրանք ձևակերպեն:

Արդյունավետության արդարություն

Արդյունավետության արդարության տեսանկյունից ելնելով՝ առկա կրթական համակարգում պետք է հստակ լինի, որ հավասար կրթական արդյունավետությունը պայմանավորված է համադրելի գնահատականներով և ավարտականներով: Առաջին հայացքից թվում է, թե սա ինքնին հասկանալի է, սակայն հաճախ այդպես չէ:

Պահանջի արդարություն

Կրթական քաղաքականության մեջ պետք է հաշվի առնել պահանջի արդարության սկզբունքը: Կրթական լավ քաղաքականությունը պետք է բոլոր քաղաքացիների համար «կրթության բարիքով» նպատակահարմար նվազագույն կենսամակարդակ ապահովի: Սա կարող է ենթադրել, օրինակ, առանձնահատուկ աջակցություն ցածր որակավորում ունեցող երիտասարդների համար: «Յուրաքանչյուրին՝ իր հնարավորությունների սահմանում, յուրաքանչյուրին՝ իր կարիքներին համապատասխան» կարգախոսը գործում է նաև կրթական քաղաքականության համար:

Գերմանական կրթական համակարգ. վատ և անարդար

Որքանո՞վ է գերմանական կրթական համակարգը լավ և արդար

Միջազգային համեմատության արդյունքները թույլ են տալիս գերմանական կրթական համակարգը գնահատել անբավարար: Թե՛ կրթության արդյունավետության և թե՛ արդարության սկզբունքների առումով, գերմանական կրթական համակարգը միջազգային համեմատությամբ շատ ավելի վատ դիրքերում է, քան մյուս երկրներինը:

Կրթական առաջադիմության պատկերը միջազգային համեմատությամբ

	Գերմանիա	Ֆինլանդիա	ԱՄՆ
PISA-արդյունք «ընթերցանություն», 2009 թ.	497	536	500
PISA-արդյունքի տատանում «ընթերցանություն», 2009 թ.	95	86	97
PISA-արդյունք «մաթեմատիկա», 2009 թ.	513	541	487
PISA-արդյունքի տատանում «մաթեմատիկա», 2009 թ.	98	82	91

Աղբյուր՝ OECD (2010 b)

Կրթական առաջադիմություններ

Ինչ վերաբերում է *կրթական առաջադիմություններին*^{*} Գերմանիան գտնվում է գրեթե միևնույն մակարդակում, ինչ ԱՄՆ-ը: Այս երկու երկրների արդյունքները մոտ են OECD միջին արդյունքներին (500 միավոր): Ֆինլանդիայում աշակերտների կրթական առաջադիմությունները «ընթերցանություն» և «մաթեմատիկա» բաժիններում ակնհայտորեն ավելի բարձր են: Այս հետազոտության ամենաուշագրավ բացահայտումը վերաբերում է արդյունքների տատանմանը, այսինքն՝ աշակերտների կրթական առաջադիմությունների տարբերության աստիճանին: Արդյունքների տատանումները կարող են համարվել կրթական համակարգի առաջին ցուցիչը: Այստեղ պարզ է դառնում, թե կրթական համակարգը որքանով է հարթում և, համապատասխանաբար, թույլ տալիս կրթական տարբերությունների դրսևորումը: Գերմանիան 95 (ընթերցանություն) և 98 (մաթեմատիկա) միավորներով ակնհայտորեն գերազանցում է Ֆինլանդիայի արդյունքներին (86 և 82 միավոր):

Ուշագրավ է նաև այն փաստը, որ Գերմանիայում կրթական առաջադիմությունների տատանումը, այսինքն՝ տարբեր արդյունքների լայնակի դրսևորումը, շատ ավելի ընդգծված է, քան ԱՄՆ-ում: Եվ դա այն դեպքում, երբ ԱՄՆ-ում կրթական համակարգը ապակենտրոնացված է, և դրանով պայմանավորված՝ մեծ տարբերություններ կան առանձին դպրոցների որակների, կազմաձևերի միջև, որն էլ իր հերթին հանգեցնում է կրթական առաջադիմությունների տարբերությունների բարձր աստիճանի:

*OECD միջին
կրթական
առաջադիմություններ*

*Առաջադիմություն-
ների տատանման
բարձր աստիճան*

Հնարավորությունների հավասարությունը կրթական համակարգում

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (OECD) մշակել է մի ցուցիչ, որով կրթական անհավասարությունները հնարավոր է ավելի ճշգրիտ չափել, քան՝ պարզ տատանման աստիճանի միջոցով: Այս ցուցիչը չափում է աշակերտի կրթական առաջադիմության և նրա տնտեսական, սոցիալական և մշակութային բազայի միջև եղած կապի ամրությունը: Այն ցույց է տալիս, թե որքանով է կրթական համակարգը ի վիճակի հավասարակշռել անհատական կրթական խտրականությունները: Որքան ավելի բարձր է արժեքը, այնքան ավելի ամուր է կապը, և այնքան ավելի ցայտուն է կրթական անհավասարությունը: Ցուցիչը տեղեկություն է տալիս նաև այն մասին, թե կրթական համակարգը որքանով է ապահովում հավասար հնարավորություններ: Գերմանիան (44 միավոր) գրեթե նույն մակարդակում է, ինչ ԱՄՆ-ը (42 միավոր), սակայն ակնհայտորեն զիջում է Ֆինլանդիային (31 միավոր):

Կրթության հնարավորությունների անհավասարության ցուցիչները միջազգային համեմատությամբ

	Գերմանիա	Ֆինլանդիա	ԱՄՆ
Կրթության հնարավորությունների հավասարության OECD-ցուցիչ, 2009թ.	44	31	42

Աղբյուր՝ OECD (2011թ. d: 96)

Հիմնապատճառ. բազմավեկտոր դպրոցական համակարգ

Այս արդյունքների հիմնական պատճառը կրթական համակարգի ինստիտուցիոնալ կառույցի մեջ է: Հետազոտությունները բազմակի անգամ ապացուցել են, որ աշակերտների վաղաժամ ուղղորդումը դեպի տարբեր դպրոցներ (հիմնական, միջնակարգ դպրոցներ, գիմնազիա) ավելի է խորացնում կրթական անհավասարությունը (Սոլգա, 2008թ.): Եթե նախկինում հիմնական դպրոցի շրջանավարտները լավ հնարավորություններ ունեին արհեստների և արտադրության ոլորտում մասնագիտական կրթություն ստանալու համար, ապա այսօր հիմնական դպրոցը դարձել է կրթական փակուղի (ըստ կրթական զեկույցի հեղինակների խմբի գնահատականի, 2008թ.): Արդյունքում՝ խորանում են կրթական անհավասարությունները, որն էլ իր հերթին հանգեցնում է սոցիալական անհավասարության:

Հիմնականում. ամբողջօրյա առաջարկների բացակայություն

Այս խնդիրը խորանում է նաև Գերմանիայում՝ տարածված կեսօրյա կրթական հաստատությունների միջոցով: Դպրոցին հատկացվող ժամանակը բավարար չէ: Կախված ընտանեկան առանձնահատկություններից՝ երեխաների ազատ ժամանակը տարաբնույթ ձևերով է կազմակերպվում:

Կեսօրյա պարապուները սահմանափակում են հնարավորությունները

«Տնային աշխատանքների պատրաստումը, սովորելը թողնված են ընտանիքներին: Կեսօրին ազատ ժամանակը կազմակերպում են ընտանիքները: Երեխաները իրենց ծնողներին չեն կարող ընտրել, իսկ ծնողները երեխաներին աջակցելու համար ոչ միշտ ժամանակ, գումար և անհրաժեշտ հմտություններ ունեն» (Սոլգա, 2008թ., էջ 3):

Կրթական մասնակցության ցուցանիշները միջազգային համեմատությամբ

	Գերմանիա	Ֆինլանդիա	ԱՄՆ
Վաղ մանկական կրթական խնամքի կազմակերպում (0-3 տարեկան), այս տարիքային խմբի ցուցանիշները՝ արտահայտված տոկոսային հարաբերությամբ	17,8*	28,6**	31,4
Ուսանողների թիվը, առաջին կուրսեցիներ, 2009թ.	40	69	70

Աղբյուր՝ OECD (2011թ., 1e:3), OECD(2011թ.,d:316)

*Դաշնային հին մարզերում արժեքը կազմում է 2,8 %, Նորբերում՝ 37 %

** Ցուցանիշը ներկայացված է 2-3 տարիքային խմբի համար, 1-2 տարիքային խմբի համար այն կազմում է 27,5 %

Հիմնականում. հանրային կրթական ոլորտի թերի ֆինանսավորում

Իրավիճակի սրմանը նպաստում է նաև հանրային կրթության տարբեր ճյուղերի անբավարար ֆինանսավորումը: Վաղ մանկական դաստիարակության և տարրական դպրոցների համար բացակայում են ամբողջօրյա առաջարկները: Ամբողջօրյա դպրոցական մասնագիտական կրթական ներուժը մնում է չօգտագործված, քանի որ մասնագիտական դպրոցները՝ որպես ընդլայնվող անցումային համակարգի մի մաս, (Բայթգե, 2007թ.) գնալով ավելի ու ավելի են վերածվում կրթական պակասորդի համար նախատեսված վերանորոգման արհեստանոցների: Բարձրագույն ուսումնական հաստատությունները գործում են անբավարար ֆինանսավորմամբ և սարքավորումներով:

Հանրային կրթական առաջարկները բավարար ֆինանսավորում չեն ստանում

Անբավարար ֆինանսավորման հետևանքով բարեկեցիկ ծնողները նախընտրում են մասնավոր այլընտրանքները, օրինակ՝ երեխաների մասնավոր խնամք, մասնավոր դպրոցներ կամ թանկարժեք ուսումնարաններում:

«2007-2008 ուստարում Գերմանիայում մասնավոր միջնակարգ և մասնագիտական դպրոցների թիվը կազմում էր 4.946՝ 53 %-ով ավելի, քան 1992-1993 ուստարում: Եթե նախկին դաշնային տարածքում աճը կազմում էր 21,7 %, ապա դաշնային նոր մարզերում մասնավոր դպրոցների թիվը հնգապատկվել է:» (Դաշնային վիճակագրական ծառայություն, 2009թ., էջ 12)

Մասնավորեցումը սրում է խնդիրը

Այս զարգացումը սրում է կրթական անհավասարությունը, քանի որ միայն բջերը կարող են իրենց թույլ տալ հաճախել մասնավոր դպրոցներ: Կրթության մասնակի մասնավորեցումը նպաստում է նրան, որ հանրային կրթական համակարգը հարկերի միջոցով օժանդակելու պատրաստակամությունը շարունակում է նվազել:

Արդյունավետության արդարություն

Արդյունավետության արդարության սկզբունքը գերմանական կրթական համակարգում չի իրականացվում: Ի՞նչ է սա նշանակում. սոցիալական ցածր խավերի միևնույն կրթական առաջադիմություն ունեցող երեխաները տարրական դպրոցից հետո դժվարությամբ են երաշխավորագրեր ստանում գիմնազիա հաճախելու համար: Կրթական հետազոտությունները ցույց են տալիս, որ գիմնազիա տեղափոխման համար կրթական անձնակազմի որոշումները միևնույն առաջադիմությունը ցուցաբերած երեխաների շրջանում կայացվում են սոցիալապես ապահովված երեխաների օգտին: Անբարենպաստ սոցիալ-տնտեսական ընտանեկան ծագում ունեցող երեխաները ավելի հաճախ հայտնվում են հիմնական կամ նույնիսկ հատուկ դպրոցներում:

«Միևնույն առաջադիմության պարագայում բարձր խավերի երեխաները հինգ անգամ ավելի շատ են գիմնազիա հաճախելու երաշխավորագրեր ստանում, քան սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները» (Սոլգա, 2008թ., էջ 1):

Լրացուցիչ ընթերցանության համար՝

Հայկե Սոլգա (2008թ.), «Ինչպե՞ն է գերմանական կրթական համակարգը առաջացնում կրթական անհավասարություններ», Նամակ 01, Բեռլին:

Կրթության ցուցանիշները միջազգային համեմատությամբ

	Գերմանիա	Ֆինլանդիա	ԱՄՆ
Բնակչության 25-64 տ. տարիքային խմբի առաջնային կրթական աստիճան ունեցողների հատվածը, 2009թ.	85	82	89

Աղբյուր՝ OECD (2011թ., d:39)

Պահանջի արդարություն

Դիտարկելով բնակչության այն հատվածի ցուցանիշները, որն ունի առնվազն առաջնային կրթություն (ավագ դպրոց, մասնագիտական ուսումնարան)՝ պետք է արձանագրել, որ Գերմանիայում, ԱՄՆ-ում և Ֆինլանդիայում ընդհանուր կրթական մակարդակը շատ բարձր է, ավելի քան 80 %: Եթե համեմատություն անցկացնենք հարավ-եվրոպական զարգացած և զարգացող երկրների հետ, ապա վերը նշված երեք երկրները դրականորեն աչքի են ընկնում կրթություն կոչված «բարիքի» ամուր ապահովմամբ:

Այնուամենայնիվ, հարկավոր է քննության առնել ակնառու այլ տարբերություններ: Օրինակ՝ Ֆինլանդիան կարողանում է, երիտասարդներին անհատական աջակցություն ցուցաբերելու միջոցով, ցածր որակավորում ունեցողների համար կրթության հնարավորությունները զգալիորեն բարձրացնել: Այս առումով գերմանական կրթական համակարգը բավականին թույլ է: Այդ թուլությունը նկատելի է հատկապես միգրացիոն ծագում ունեցող անձանց ինտեգրման համատեքստում («Կրթական զեկույց», հեղինակային խումբ, 2008թ., էջ 11):

Կրթության ֆինանսավորման ցուցանիշները միջազգային համեմատությամբ

	Գերմանիա	Ֆինլանդիա	ԱՄՆ
Կրթությանն ուղղված հանրային ծախսերը 2008թ. ԶՆԱ-ի տոկոսային հարաբերությամբ	4,1	5,7	5,1
Կրթությանն ուղղված մասնավոր ծախսերը 2008թ. ԶՆԱ-ի տոկոսային հարաբերությամբ	0,7	0,1	2,1
Բարձրագույն կրթությանն ուղղված հանրային ծախսերը 2008թ. ԶՆԱ-ի տոկոսային հարաբերությամբ	1,0	1,6	1,0

Աղբյուր՝ OECD (2011թ. d.231)

Կրթությանն ուղղված չափազանց քիչ ծախսեր

Գերմանիան աչքի է ընկնում կրթությանն ուղղված համեմատաբար ցածր ներդրումներով: Կրթությանն ուղղված հանրային ծախսերը այստեղ կազմում են ներքին համախառն արդյունքի միայն 4,1 %-ը, մինչդեռ ԱՄՆ-ում դրանք կազմում են 5,1 %, իսկ Ֆինլանդիայում՝ նույնիսկ 5,7 %: Գերմանիայի և Ֆինլանդիայի ծախսերի միջև եղած 1,6 % տարբերությունը, ավելին է, քան Գերմանիայի բոլոր բարձր-

Ընդհանուր կրթության բարձր մակարդակ

Թույլ աշակերտների օժանդակության բացերը

Կրթությանն ուղղված հանրային ծախսեր. Գերմանիա ԶՆԱ-ի 4,1 %, ԱՄՆ՝ 5,1 %, Ֆինլանդիա՝ 5,7 %

գույն կրթական հաստատություններին ուղղված ամողջ ծախսերի ծավալը: Կրթությանն ուղղված հանրային ծախսերը մասամբ փոխհատուցվում են մասնավոր հատվածի կրթությանն ուղղված միջինից բարձր ծախսերով (ՀՆԱ-ի 0,7 %): Սա հիմնականում արտահայտվում է ձեռնարկություններում դուալ մասնագիտական կրթության շրջանակում: Այս ցուցիչի պարագայում ևս ԱՄՆ-ը ՀՆԱ-ի 2,1 %-ով ակնհայտորեն ավելի լավ դիրքերում է: Գերմանիայում կրթության չափազանց սահմանափակ ֆինանսավորումը նկատելի է հատկապես բարձրագույն կրթության հատվածում: Այստեղ Գերմանիան ՀՆԱ-ի 1,0 %-ով զգալիորեն հետ է մնում Ֆինլանդիայից (1,6 %):

Ավելի շատ կարգավորում առավել արդարության համար

Կրթությանն ուղղված ծախսերի բարձրացումը բնավ բոլոր խնդիրների լուծումը չէ: Կրթական ինստիտուտների անհրաժեշտ ընդլայնումը վաղ մանկական դաստիարակության, մասնագիտական կրթական ամբողջօրյա առաջարկների շրջանում և բարձրագույն կրթության հատվածում անհնար կլինի առանց կրթությանն ուղղված ներդրումների ավելացման:

Ջեռանկարներ

Հաշվեկշիռը սթափեցնող է: Գերմանական կրթական համակարգը, կրթական առաջադիմության տեսանկյունից, միջին դիրքերում է: Այն չի երաշխավորում ո՛չ հնարավորությունների, ո՛չ արդյունավետության հավասարություն և ո՛չ էլ պահանջի արդարություն: Այս բացահայտումը տազնապալի է ոչ միայն կրթական համակարգի այլ նաև ժողովրդավարության համար:

Կրթությունը հնարավոր է դարձնում հասարակական, մշակութային և տնտեսական մասնակցությունը: Եթե քաղաքական համակարգը այդ հնարավորությունը տևականորեն չի ընձեռում, ապա մարդիկ նման համակարգից երես կշրջեն: Միայն նրանք, ովքեր կրթություն կունենան, ի վիճակի կլինեն գնահատել և կերտել ժողովրդավարությունը: Արդար կրթական համակարգը ինքնանպատակ չէ, այն ժողովրդավարական ահրաժեշտություն է և տնտեսական դիսամիկայի բանալին:

«Կրթությունը որոշում է մեր ապագան և մեր օրերի մեծ սոցիալական հարցն է: Այն հնարավոր է դարձնում մարդուն իր առաջ նպատակներ դնելու և երազանքներ իրականացնելու: Բացում է մարդու առաջ փոփոխվող աշխարհի մուտքը, զինում է նրան ժողովրդավարության և պատասխանատվության համար, բացում նրա առջև աշխատանքի հնարավորություններ, մշտապես հոգում է մասնակցության և սոցիալական վերելքի համար: Կրթությունը տնտեսական արդյունավետ ուժ է, որի նշանակությունը արագորեն աճում է» (Համբուրգյան ծրագիր, 2007թ., էջ 60):

Կրթական բարեփոխումները Գերմանիայում չեն իրականացվում համակարգային տեսքով, չնայած որ դրա անհրաժեշտությունը մեծ է: Կրթական դաշնային համակարգը սահմանափակում է կենտրոնացված լուծումների շրջանակը, թեև մասնագիտական կրթության և մասամբ նաև բարձրագույն կրթության հատվածներում կենտրոնական դաշնությանը կարևոր իրավասություններ են վերապահված: Կրթական քաղաքականության արդարության համար կարևոր քայլ կլիներ ամբողջությամբ կրթական առաջարկների ընդլայնման, ինչպես նաև երկարօրյա միասնական դպրոցական փուլերի ներմուծման և դաշնային մարզերի կրթական բյուջեյի ընդլայնմանն ուղղված համակարգված գործելակերպը:

Սոցիալ-դեմոկրատիայի համար դա նշանակում է՝

- վաղ մանկական կրթության վերագնահատում,
- ավելի երկար միասնական դպրոցական ժամանակաշրջան և ավելի լավ անհատական օժանդակություն,
- ավելի շատ ամբողջօրյա առաջարկներ վաղ մանկական և դպրոցական փուլում,
- մասնագիտական կրթության ավելի լավ անցումային փուլեր,
- կրթական աստիճանների միջև թափանցելիության բարելավում,
- լրացուցիչ կրթության ամրապնդում,
- կրթական համակարգի ավելի լավ ֆինանսավորում:

Լրացուցիչ ընթերցանության համար՝
Սերժ Էմբախեր
(2009թ.), «Ժողովրդավարություն՞, ոչ, շնորհակալություն. ժողովրդավարության սղություն Գերմանիայում», Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Բոնն:

8. ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՄՏԱԾԵԼ

*«Մեզ հարկավոր է համադրել գործնական միտքը և իդեալիստական ձգտումը»
(Վիլլի Բրանդ, 1960թ., էջ 378):*

Սոցիալ-դեմոկրատիայի գրքերի շարքը առաջարկում է սոցիալ-դեմոկրատիայի հիմնարար հարցերի կողմնացույց և տարբեր քաղաքական հարցերում կողմնորոշման կետեր: Բայց դրանք չեն կարող և չեն կամենում առաջադրել հարատև գործող պատասխաններ: Սոցիալ-դեմոկրատիայի ճանապարհը՝ որպես գաղափար և որպես քաղաքական գործունեություն, շարունակ պետք է ստուգվի, հարմարեցվի և նորովի մտածվի, եթե ցանկանում ենք նրանով հաջողության հասնել:

Այս եզրահանգումը ևս շարունակում է այդ ճանապարհը և այդ իսկ պատճառով, հրավիրում է շարունակել մտածել, խորհել այն մասին, թե ինչպե՞ս կարող է և պետք է ձևավորվի սոցիալ-դեմոկրատիայի սոցիալական քաղաքականությունը մեր օրերում: Այս գրքից պարզ դարձավ, թե ինչպիսի մեծ մարտահրավերների առջև է կանգնած գերմանական սոցիալական պետությունը: Այս գիրքը պարզ դարձրեց նաև, որ այդ մարտահրավերները կարող են հաղթահարվել:

Մեծագույն մարտահրավերը կայանում է, թերևս, նրանում, որ սոցիալական պետությունը հարկավոր է պաշտպանել թշնամիներից և սխալ ընկերներից: Բոլոր նրանցից, ովքեր ցանկանում են կազմաքանդել և թուլացնել սոցիալական պետությունը և նրանցից, ովքեր, պահանջելով «այդպես շարունակել», թուլացնում են այն:

Գերմանական սոցիալական պետության հիմնական հատակագիծը ավելի քան 120 տարեկան է: Հարկավոր է նրա ճարտարապետությունը հարմարեցնել մեր ժամանակներին: Այդ ճանապարհը միշտ չէ, որ հեշտ է, սակայն այս գիրքը ցույց տվեց, որ սկանդինավյան սոցիալական պետության սոցիալ-դեմոկրատական մոդելը արժանի նպատակ է:

Սոցիալական և քաղաքական հարցերի, այսինքն՝ սոցիալականի և ժողովրդավարության կապի վերհանումը աշխատավորական շարժման վաղեմի ձեռքբերումներից է: Սոցիալական պետության և ժողովրդավարության կապը սոցիալ-դեմոկրատիայի ինքնության առանցքն է:

Միայն այն դեպքում, երբ հիմնարար արժեքները և իրավունքները չեն լինի միայն տեսություն, այլ գործնականում կյանքի կկոչվեն, կիրագործվի նաև ժողովրդավարությունը իրականում: Այն կկարողանա երաշխավորել մասնակցություն, հավասար ազատություն ոչ միայն քչերի, այլ՝ բոլորի համար: Կոնկրետ քաղաքականությունը պետք է ուղղված լինի այս պահանջին և պարզ կողմանցույցով մշտապես նորովի ստուգի քաղաքական գործիքները և արդյունքները:

Մենք ցանկանում ենք ձեզ հրավիրել մասնակցելու սոցիալ-դեմոկրատիայի շուրջ բանավեճի: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիան առաջարկում է գործունեության լայն ասպարեզ: Ութ մոդուլներից բաղկացած սեմինարները արժարժում են սոցիալ-դեմոկրատիայի հիմնարար արժեքները և գործնական ոլորտները.

Սոցիալ-դեմոկրատիայի հիմքերը

Տնտեսություն և սոցիալ-դեմոկրատիա

Սոցիալական պետություն և սոցիալ-դեմոկրատիա

Գլոբալիզացիա և սոցիալ-դեմոկրատիա

Եվրոպա և սոցիալ-դեմոկրատիա

Ինտեգրացիա, ներգաղթ և սոցիալ-դեմոկրատիա

Պետություն, քաղաքացիական հասարակություն և սոցիալ-դեմոկրատիա

Խաղաղություն և սոցիալ-դեմոկրատիա

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Autorengruppe Bildungsberichterstattung (2008), Bildung in Deutschland 2008: ein indikatorengestützter Bericht mit einer Analyse zu Übergängen im Anschluss an den Sekundarbereich I, Bielefeld.

Martin Baethge, Heike Solga, Markus Wieck (2007), Berufsbildung im Umbruch: Signale eines überfälligen Aufbruchs, Friedrich-Ebert-Stiftung (Hg.), Berlin.

19. BAföG-Bericht (2012), Neunzehnter Bericht nach § 35 des Bundesausbildungsförderungsgesetzes zur

Überprüfung der Bedarfssätze, Freibeträge sowie Vorphundersätze und Höchstbeträge nach § 21 Abs. 2, BT-Drucksache 17/8498, Berlin.

Ulrich Beck und Elisabeth Beck-Gernsheim (Hg.) (1994), Riskante Freiheiten. Individualisierung in modernen Gesellschaften, Frankfurt am Main.

Irene Becker und Richard Hauser (2004), Soziale Gerechtigkeit – eine Standortbestimmung, Berlin.

Peter Bofinger (2009), Gerechtigkeit für Generationen. Eine gesamtwirtschaftliche Perspektive, Friedrich-Ebert-Stiftung (Hg.), Bonn.

Björn Böhning und Kai Burmeister (Hg.) (2004), Generation & Gerechtigkeit, Hamburg.

Friedhelm Boll und Anja Kruke (Hg.) (2008), Der Sozialstaat in der Krise. Deutschland im internationalen Vergleich, Verlag J. H. W. Dietz Nachf., Bonn.

Sean Boyle (2011), Health Systems in Transition. United Kingdom. http://www.euro.who.int/_data/assets/pdf_file/0004/135148/e94836.pdf (zuletzt abgerufen am 5. November 2012).

Willy Brandt (1960), Mein Weg nach Berlin, aufgezeichnet von Leo Lania, München.

Bundesministerium der Finanzen (BMF) (2011), Die wichtigsten Steuern im internationalen Vergleich, Berlin.

Bundesministerium für Gesundheit (2012), Gesetzliche Krankenversicherung, Kennzahlen und Faustformeln, Berlin.

Bündnis 90/Die Grünen (2002), Die Zukunft ist Grün, Grundsatzprogramm von BÜNDNIS 90/DIE GRÜNEN, beschlossen auf der Bundesdelegiertenkonferenz am 15.–17. März 2002 in Berlin.

Marius R. Busemeyer (2006), Die Bildungsausgaben der USA im internationalen Vergleich. Politische Geschichte, Debatten und Erklärungsansätze, Wiesbaden.

Marius R. Busemeyer (2007), Bildungspolitik in den USA: eine historisch-institutionalistische Perspektive auf das Verhältnis von öffentlichen und privaten Bildungsinstitutionen, in: Zeitschrift für Sozialreform 53 (1), S. 57–78.

Marius R. Busemeyer (2009), From Myth to Reality: Globalization and Public Spending in OECD Countries Revisited, in: European Journal of Political Research 48 (4), S. 455–482.

Marius R. Busemeyer, Christian Kellermann, Alexander Petring, Andrej Stuchlik (2006), Politische Positionen zum Europäischen Wirtschafts- und Sozialmodell – eine Landkarte der Interessen, Friedrich-Ebert-Stiftung (Hg.), Bonn.

Reinhard Busse und Anette Riesberg (2005), Gesundheitssysteme im Wandel: Deutschland, WHO Regionalbüro für Europa im Auftrag des Europäischen Observatoriums für Gesundheitssysteme und Gesundheitspolitik, Kopenhagen.

Christoph Butterwegge (2005), Krise und Zukunft des Sozialstaates, Wiesbaden.

David Carey und Josette Rabesona (2002), Tax Ratios on Labour and Capital Income and on Consumption, in: OECD Economic Studies 35 (2), S. 129–174.

CDU (2007), Freiheit und Sicherheit. Grundsätze für Deutschland, Grundsatzprogramm der CDU, beschlossen auf dem 21. Parteitag am 3.–4. Dezember 2007 in Hannover.

Duanjie Chen und Jack Mintz (2008), Still a Wallflower: The 2008 Report on Canada's International Tax Competitiveness, C. D. Howe Institute, http://www.cdhowe.org/pdf/ebrief_63.pdf (zuletzt abgerufen am 5. November 2012).

Deutsche Rentenversicherung (2009), Rendite der gesetzlichen Rentenversicherung, Deutsche Rentenversicherung Bund, Nr. 107, 1/2009, Berlin.

DIE LINKE (2011), Programm der Partei DIE LINKE, beschlossen auf dem Parteitag der Partei DIE LINKE vom 21.–23. Oktober 2011, Erfurt.

DIW (Markus M. Grabka) (2004), Einkommen, Sparen und intrafamiliale Transfers von älteren Menschen, DIW Wochenbericht Nr. 6/2004, Berlin.

Diether Döring (1998), Leitvorstellungen der Politik der sozialen Sicherung unter besonderer Berücksichtigung der Geschichte der Rentenversicherung, in: Siegfried Blasche und Diether Döring (Hg.), Sozialpolitik und Gerechtigkeit, Frankfurt am Main/New York, S. 214–257.

Dieter Dowe und Kurt Klotzbach (Hg.) (2004), Programatische Dokumente der deutschen Sozialdemokratie. Mit den aktuellen Programmtexten im Anhang, 4., überarb. u. aktualisierte Aufl., Verlag J. H. W. Dietz Nachf., Bonn.

Ronald Dworkin (1981), What is Equality? Part 2: Equality of Resources, in: *Philosophy and Public Affairs*, vol. 10, no. 4 (Autumn), S. 283–345.

Serge Embacher (2009), Demokratie! Nein danke? Demokratieverdruss in Deutschland, Friedrich-Ebert-Stiftung (Hg.), Bonn.

Erhard Eppler (2009), Der Politik aufs Maul geschaut, Verlag J. H. W. Dietz Nachf., Bonn.

Gøsta Esping-Andersen (1990), *The Three Worlds of Welfare Capitalism*, Princeton.

Gøsta Esping-Andersen (1998), *Social Foundations of Postindustrial Economies*, Oxford.

Gøsta Esping-Andersen (2002), *Why We Need a New Welfare State*, Oxford.

Eurostat, Statistische Datenbank der Europäischen Kommission, http://epp.eurostat.ec.europa.eu/portal/page/portal/statistics/search_database.

Eurydice (2011), National system overview on education systems in Europe, Finnland November 2011, http://eacea.ec.europa.eu/education/eurydice/documents/eurybase/national_summary_sheets/047_FL_EN.pdf (zuletzt abgerufen am 5. November 2012).

Christine Färber, Ulrike Spangenberg, Barbara Stiegler (2008), Umsteuern: gute Gründe für ein Ende des Ehegattensplittings, Friedrich-Ebert-Stiftung (Hg.), Bonn.

FDP (2012), Verantwortung für die Freiheit. Karlsruher Freiheitsthesen der FDP für eine offene Bürgergesellschaft. Beschluss des 63. Ordentlichen Bundesparteitages der FDP am 22. April 2012, Karlsruhe.

Friedrich-Ebert-Stiftung (Hg.) (2006), Generationengerechtigkeit, Themenmodul der OnlineAkademie der FES, www.fes-online-akademie.de.

Friedrich-Ebert-Stiftung (Hg.) (2009a), Themenportal Frauen-Männer-Gender, www.fes.de/gender.

Friedrich-Ebert-Stiftung (Hg.) (2009b), Alter, Arbeit, Armut? Altersarmut von Frauen verhindern!, Berlin.

Friedrich-Ebert-Stiftung (Hg.) (2009c), Zukunft des Gesundheitssystems. Solidarisch finanzierte Versorgungssysteme für eine alternde Gesellschaft, Bonn.

Sigmar Gabriel (2008), *Links neu denken. Politik für die Mehrheit*, München.

Steffen Ganghof (2004), Wer regiert in der Steuerpolitik? Einkommensteuerreform zwischen internationalem Wettbewerb und nationalen Verteilungskonflikten, Frankfurt am Main.

Philipp Genschel (2003), Globalisierung als Problem, als Lösung und als Staffage, in: Gunther Hellmann, Klaus Dieter Wolf, Michael Zürn (Hg.), *Die neuen internationalen Beziehungen – Forschungsstand und Perspektiven in Deutschland*, Baden-Baden, S. 429–464.

Stefan Gosepath (2004), *Gleiche Gerechtigkeit*, Frankfurt am Main.

Stefan Greß (2009), Mit gleichen Rahmenbedingungen zu einem fairen Wettbewerb im Gesundheitssystem: zur Notwendigkeit einer einheitlichen Wettbewerbsordnung auf dem deutschen Krankenversicherungsmarkt, WISO direkt, Friedrich-Ebert-Stiftung (Hg.), Bonn.

Stefan Greß und Jürgen Wasem (2008), Auswirkungen des Gesundheitsfonds und Optionen zur Weiterentwicklung, Policy Paper für die Hans-Böckler-Stiftung, Fulda/Essen.

Stefan Greß, Maral Manouguian, Jürgen Wasem (2006), Krankenversicherungsreform in den Niederlanden: Vorbild für einen Kompromiss zwischen Bürgerversicherung und Pauschalprämie in Deutschland?, Studie im Auftrag der Hans-Böckler-Stiftung, Düsseldorf.

Gerd Grözing (2007), Hochsteuerland Deutschland? Langlebiger Mythos, problematische Folgen, in: *Intervention* 4 (1), S. 28–39.

Kornelia Hagen und Axel Kleinlein (2011), Zehn Jahre Riester-Rente: Kein Grund zum Feiern, DIW Wochenbericht Nr. 47/2011, Berlin.

Hamburger Programm (2007), Grundsatzprogramm der Sozialdemokratischen Partei Deutschland, beschlossen auf dem Hamburger Bundesparteitag der SPD am 28. Oktober 2009.

Health Consumer Powerhouse (2012), Euro Health Consumer Index, 2012 Report, <http://www.healthpowerhouse.com/files/Report-EHCI-2012.pdf> (zuletzt abgerufen am 5. November 2012).

Christoph Heine, Heiko Quast, Heike Spangenberg (2008), Studiengebühren aus der Sicht von Studienberechtigten. Finanzierung und Auswirkungen auf Studienpläne und -strategien, HIS: Forum Hochschule 15/2008, Hannover.

Martin Höpner, Alexander Petring, Daniel Seikel, Benjamin Werner (2011), Liberalisierungspolitik. Eine Bestandsaufnahme des Rückbaus wirtschafts- und sozialpolitischer Interventionen in entwickelten Industrieländern, in: Kölner Zeitschrift für Soziologie und Sozialpsychologie 63 (1), S. 1–32.

Stephen Holmes und Cass R. Sunstein (1999), *The Cost of Rights. Why Liberty Depends on Taxes*, New York.

Stefan Homburg (2000), *Allgemeine Steuerlehre*, München.

Ellen M. Immergut, Karen M. Anderson, Isabelle Schulze (Hg.) (2007), *The Handbook of West European Pension Politics*, Oxford.

Joachim Jaudas, Hans Gerhard Mendius, Petra Schütt, Manfred Deiß, Judit Miklos (2004), *Handwerk – nicht mehr Ausbilder der Nation? Übergangsprobleme von der handwerklichen Ausbildung ins Beschäftigungssystem*, München.

Sven Jochem (2012), *Der „vorsorgende Sozialstaat“ in der Praxis, Beispiele aus der Arbeits- und Sozialpolitik der skandinavischen Länder*, Studie der Friedrich-Ebert-Stiftung, Berlin.

Franz-Xaver Kaufmann (2003), *Sozialpolitisches Denken*, Frankfurt am Main.

Wolfgang Kersting (2000), *Politische Philosophie des Sozialstaats*, Weilerswist.

Wolfgang Kersting (2001), Suffizienz, Ermöglichung, Kompensation. Ziele der Verteilungsgerechtigkeit, in: Peter Koller (Hg.), *Gerechtigkeit im politischen Diskurs*, Wien, S. 89–122.

Martina Klein und Klaus Schubert (2011), *Das Politik-Lexikon*, 5., aktualisierte Aufl., Verlag J. H. W. Dietz Nachf., Bonn.

KMK (2011), *Allgemeinbildende Schulen in Ganztagsform in den Ländern in der Bundesrepublik Deutschland, Statistik 2005 bis 2009*, Sekretariat der Ständigen Konferenz der Kultusminister der Bundesrepublik, Berlin.

Sascha Kneip (2003), Die sozialphilosophischen Grundlagen des demokratischen Wohlfahrtsstaats, in: *Welt-trends* 39, S. 11–29.

Klaus Koch, Antje Miksch, Christoph Schürmann, Stefanie Joos, Peter T. Sawicki (2011), *The German Health Care System in international comparison: the primary care physicians' perspective*, in: *Deutsches Ärzteblatt International* 108 (15), S. 255–61 DOI: 10.3238/arztebl.2011.0255

Hagen Kühn und Sebastian Klinke (2006), Perspektiven einer solidarischen Krankenversicherung, in: Jürgen Kocka (Hg.), *Zukunftsfähigkeit Deutschlands. Sozialwissenschaftliche Essays*, WZB-Jahrbuch 2006, Berlin, S. 179–202.

Lesebuch: Geschichte der Sozialen Demokratie, Michael Reschke, Christian Krell, Jochen Dahm u. a. (2012), *Lesebücher der Sozialen Demokratie*, Friedrich-Ebert-Stiftung, Bonn.

Lesebuch 1: Grundlagen der Sozialen Demokratie, Tobias Gombert u. a. (2009), 3. Aufl., *Lesebücher der Sozialen Demokratie*, Band 1, Friedrich-Ebert-Stiftung, Bonn.

Lesebuch 2: Wirtschaft und Soziale Demokratie, Simon Vaut u. a. (2009), 3. Aufl., *Lesebücher der Sozialen Demokratie*, Band 2, Friedrich-Ebert-Stiftung, Bonn.

Lesebuch 3: Sozialstaat und Soziale Demokratie, Alexander Petring u. a. (2009), *Lesebücher der Sozialen Demokratie*, Band 3, Friedrich-Ebert-Stiftung, Bonn.

Lesebuch 4: Europa und Soziale Demokratie, Cécilie Schildberg u. a. (2010), *Lesebücher der Sozialen Demokratie*, Band 4, Friedrich-Ebert-Stiftung, Bonn.

Lesebuch 5: Integration, Zuwanderung und Soziale Demokratie, Christin Henkes u. a. (2011), *Lesebücher der Sozialen Demokratie*, Band 5, Friedrich-Ebert-Stiftung, Bonn.

Lesebuch 6: Staat, Bürgergesellschaft und Soziale Demokratie, Tobias Gombert u. a. (2012), *Lesebücher der Sozialen Demokratie*, Band 6, Friedrich-Ebert-Stiftung, Bonn.

Stephan Lessenich (Hg.) (2003), *Wohlfahrtsstaatliche Grundbegriffe*, Frankfurt am Main/New York.

Stephan Lessenich (2009), *Das Grundeinkommen in der gesellschaftspolitischen Debatte*, Friedrich-Ebert-Stiftung (Hg.), Bonn.

Burkart Lutz (1989), *Der kurze Traum immerwährender Prosperität. Eine Neuinterpretation der industriell-kapitalistischen Entwicklung im Europa des 20. Jahrhunderts*, Frankfurt am Main/New York.

Gerhard Mackenroth (1952), *Die Reform der Sozialpolitik durch einen deutschen Sozialplan*, in: *Schriften des Vereins für Socialpolitik NF*, Band 4, Berlin, S. 39–48.

Thomas Meyer [Siegen] (1992), *Modernisierung der Privatheit: Differenzierungs- und Individualisierungsprozesse des Familienzusammenlebens*, Opladen.

Thomas Meyer [Siegen] (2006), Private Lebensformen im Wandel, in: Rainer Geißler (Hg.), Die Sozialstruktur Deutschlands. Zur gesellschaftlichen Entwicklung mit einer Bilanz zur Vereinigung, Wiesbaden, S. 331–357.

Thomas Meyer [Dortmund] (2005), Theorie der Sozialen Demokratie, 1. Aufl., Wiesbaden.

Thomas Meyer [Dortmund] (2006), Praxis der Sozialen Demokratie, 1. Aufl., Wiesbaden.

Thomas Meyer [Dortmund] (2009), Soziale Demokratie: eine Einführung, Wiesbaden.

Thomas Meyer [Dortmund] und Nicole Breyer (Mitarbeit) (2005), Die Zukunft der Sozialen Demokratie, Bonn.

David Miller (2008), Soziale Gerechtigkeit, Frankfurt am Main/New York.

Liam Murphy und Thomas Nagel (2002), The Myth of Ownership: Taxes and Justice, Oxford.

National Health Service (2009): About the NHS, <http://www.nhs.uk/nhsengland/aboutnhs/pages/About.aspx> (zuletzt abgerufen am 5. November 2012).

Gerd Nollmann (2004), Leben wir in einer Leistungsgesellschaft?, in: Österreichische Zeitschrift für Soziologie 3/2004, S. 24–48.

Herbert Obinger und Peter Starke (2007), Sozialpolitische Entwicklungstrends in OECD-Ländern 1980–2001: Konvergenz, Divergenz und Persistenz, in: Politische Vierteljahresschrift (Sonderheft 38), S. 470–495.

OECD (2010a), Average effective age of retirement versus the official age, 2004–2009, www.oecd.org/dataoecd/3/2/39371902.xls (zuletzt abgerufen am 5. November 2012).

OECD (2010b), PISA 2009 Results: What Students Know and Can Do, Volume I, <http://dx.doi.org/10.1787/9789264091450-en>.

OECD (2011a), Revenue Statistics 1965–2010, Paris.

OECD (2011b), Divided We Stand. Why Inequality Keeps Rising, Paris.

OECD (2011c), Pension at a Glance. Public Policies across OECD Countries, Paris.

OECD (2011d), Education at a Glance 2011: OECD Indicators, Paris.

OECD (2011e), Family Database, PF 3.2: Enrolment in childcare and pre-schools, <http://www.oecd.org/dataoecd/4/6/4698.pdf> (zuletzt abgerufen am 5. November 2012).

OECD (2011–12), Factbook. Economic, Environmental and Social Statistics, Paris.

OECD (2012a), Tax-Benefit Models, <http://www.oecd.org/els/social/workincentives> (zuletzt abgerufen am 5. November 2012).

OECD (2012b), OECD-Gesundheitsdaten 2012, Deutschland im Vergleich, <http://www.oecd.org/germany/BriefingNoteDEUTSCHLAND2012inGerman.pdf> (zuletzt abgerufen am 5. November 2012).

Robert Paquet und Wolfgang Schroeder (2009), Im Haifischbecken. Die Zukunft des „experimentellen Regierens“: das Beispiel der Gesundheitsreform 2007, in: Berliner Republik 2/2009, S. 56–63.

Alexander Petring und Christian Henkes (2007), Die Zukunftsfähigkeit des deutschen Sozialstaats, in: Jürgen Kocka (Hg.), Die Zukunftsfähigkeit Deutschlands, WZB-Jahrbuch 2006, Berlin, S. 47–70.

Matthias Platzeck (2007), Das Leitbild des Vorsorgen Sozialstaats, in: Kurt Beck und Hubertus Heil (Hg.), Soziale Demokratie im 21. Jahrhundert, Lesebuch zur Programmdebatte der SPD, Berlin, S. 228–232.

Ulrich K. Preuß (1990), Verfassungstheoretische Überlegungen zur normativen Begründung des Wohlfahrtsstaates, in: Christoph Sachße und H. Tristram Engelhardt (Hg.), Sicherheit und Freiheit. Zur Ethik des Wohlfahrtsstaates, Frankfurt am Main, S. 106–132.

Gerhard Ritter (1991), Der Sozialstaat, München.

Thomas Rixen (2008), The Political Economy of International Tax Governance, Basingstoke.

Thomas Rixen und Susanne Uhl (2011), Unternehmensbesteuerung europäisch harmonisieren! Was zur Eindämmung des Steuerwettbewerbs in der EU nötig ist, Gutachten für die Friedrich-Ebert-Stiftung, Bonn.

Robert Koch-Institut (Hg.) (2005), Gesundheit im Alter, Gesundheitsberichterstattung des Bundes, Heft 10, Berlin.

Dani Rodrik (1998), Why Do More Open Economies Have Bigger Governments?, in: Journal of Political Economy 106, S. 997–1032.

Thomas M. Scanlon (2005), Political Equality/Politische Gleichheit, Essen.

Willemijn Schäfer u. a. (2010), Health systems in Transition. The Netherlands. <http://www.nivel.nl/sites/default/files/bestanden/HIT-rapport-Nederland.pdf> (zuletzt abgerufen am 5. November 2012).

[HÖRBUCH]

Նորույթ՝ Սոցիալ-
դեմոկրատիայի
գրքերը այսուհետև
կարելի է նաև
ուսկևրել: Գրքերի
առաջին հատորները
առկա են նաև
առդիո տարբերա-
կով: Առդիո գրքերն
առկա են առցանց և
սկավառակի տեսքով:
Բոլոր տեղեկու-
թյուններն այստեղ՝
► www.fes-soziale-demokratie.de

**Լրացուցիչ ընթեր-
ցանության համար՝**

Ֆրիդրիխ Էբերտ
հիմնադրամի տնտե-
սական և սոցիալա-
կան բաղադրական
բաժնի արդի ուսում-
նասիրություններ,
վերլուծություններ և
հրապարակումներ
► www.fes.de/wiso

Ֆրիդրիխ Էբերտ
հիմնադրամի
սիջազգային
վերլուծություններ
► www.fes.de/ipa

Fritz W. Scharpf (1999), Regieren in Europa: Effektiv und demokratisch?, Frankfurt am Main.

Fritz W. Scharpf (2000), The Viability of Advanced Welfare States in the International Economy, in: Journal of European Public Policy 7, S. 190–228.

Günther Schmid (2008), Von der Arbeitslosen- zur Beschäftigungsversicherung. Wege zu einer neuen Balance von individueller Verantwortung und Solidarität durch eine lebenslaufforientierte Arbeitsmarktpolitik, Friedrich-Ebert-Stiftung (Hg.), Bonn.

Erika Schulz und Anke Hannemann (2007), Bevölkerungsentwicklung in Deutschland bis 2050: Nur leichter Rückgang der Einwohnerzahl?, DIW Wochenbericht Nr. 47/2007, Berlin.

Joel Slemrod und Jon Bakija (2004), Taxing Ourselves. A Citizen's Guide to the Great Debate over Tax Reform, Cambridge.

Adam Smith (1778 [1776]), Der Wohlstand der Nationen, München.

Heike Solga (2008), Wie das deutsche Schulsystem Bildungsungleichheiten verursacht, WZBrief Bildung 01, http://www.wzb.eu/sites/default/files/publikationen/wzbbrief/wzbbriefbildung200801_solga.pdf (zuletzt abgerufen am 5. November 2012).

Rudolf Speth (2004), Die politischen Strategien der Initiative Neue Soziale Marktwirtschaft, Studie im Auftrag der Hans-Böckler-Stiftung, Düsseldorf.

Statistisches Bundesamt (2009), Private Schulen – Schuljahr 2007/2008, Fachserie 11, Reihe 1.1, 2007/2008, Wiesbaden.

Statistisches Bundesamt (2010a), Alleinerziehende in Deutschland. Ergebnisse des Mikrozensus 2009, Wiesbaden.

Statistisches Bundesamt (2010b), Pressemitteilung Nr. 102 vom 15.03.2010, Wiesbaden.

Statistisches Bundesamt (2011a), Pressemitteilung Nr. 378 vom 12.10.2011, Wiesbaden.

Statistisches Bundesamt (2011b), Pressemitteilung Nr. 433 vom 23.11.2011, Wiesbaden.

Statistisches Bundesamt (2012a), Erwerbstätige im Inland nach Sektoren, <https://www.destatis.de/DE/ZahlenFakten/Indikatoren/LangeReihen/Arbeitsmarkt/lrwr013.html> (zuletzt abgerufen am 5. November 2012).

Statistisches Bundesamt (2012b), GENESIS-Online-Datenbank, <https://www-genesis.destatis.de/genesis/online>

Statistisches Bundesamt (2012c), Eheschließungen und Ehescheidungen in Deutschland, <https://www.destatis.de/DE/ZahlenFakten/Indikatoren/LangeReihen/Bevoelkerung/lrbev06.html> (zuletzt abgerufen am 5. November 2012).

Statistisches Bundesamt (2012d), Volkswirtschaftliche Gesamtrechnungen, Inlandsproduktsberechnung, Lange Reihen, Wiesbaden.

Franz-Josef Stegmann und Peter Langhorst (2005), Geschichte der sozialen Ideen im deutschen Katholizismus, in: Helga Grebing (Hg.), Geschichte der sozialen Ideen in Deutschland. Sozialismus – Katholische Soziallehre – Protestantische Sozialethik. Ein Handbuch, 2. Aufl., Wiesbaden, S. 599–862.

Joseph Stiglitz (2006), Die Chancen der Globalisierung, München.

Harald Stöger (2011), Rentensysteme und Altersarmut im internationalen Vergleich, Friedrich-Ebert-Stiftung, Internationale Politikanalyse, Berlin.

Duane Swank (2002), Global Capital, Political Institutions, and Policy Change in Developed Welfare States, Cambridge.

Wolfgang Thierse (2005), Zur Begrüßung: Gleichheit und soziale Gerechtigkeit, in: Thomas M. Scanlon (Hg.), Politische Gleichheit, Essen, S. 11–16.

U.S. Department of Education (Hg.) (2005), Education in the United States. A Brief Overview, <http://www2.ed.gov/about/offices/list/ous/international/edus/overview.doc> (zuletzt abgerufen am 5. November 2012).

Björn Wagner (2009), Das Grundeinkommen in der deutschen Debatte. Leitbilder, Motive und Interessen, Friedrich-Ebert-Stiftung (Hg.), Bonn.

Uwe Wagschal (2001), Deutschlands Steuerstaat und die vier Welten der Besteuerung, in: Manfred G. Schmidt (Hg.), Wohlfahrtsstaatliche Politik. Institutionen, politischer Prozess und Leistungsprofil, Opladen, S. 124–160.

Anke Walendzik (2009), Finanzierungsalternativen im Gesundheitswesen. Kurzgutachten, Friedrich-Ebert-Stiftung (Hg.), Bonn.

Michael Walzer (2006), Sphären der Gerechtigkeit. Ein Plädoyer für Pluralität und Gleichheit, Frankfurt am Main/ New York.

Oliver Wendell Holmes Jr (1927), Compania General de Tabacos de Filipinas v. Collector of Internal Revenue, 275 U.S. 87, 100 (1927), (Holmes, J., dissenting), opinion published November 21, 1927.

WHO (2006), Gesundheit im Schlaglicht, Deutschland 2004, Kopenhagen.

Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիայի առաջարկները



Մասնակցել և միանալ

Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիան ձեզ է ներկայացնում տարբեր առաջարկներ: Մասնակցելով տարբեր թեմաներով մեր սեմինարներին՝ գտեք ձեզ համար քաղաքական կողմանցույց: Մեր սեմինարները (հանգստյան օրերին) հնարավոր են դարձնում գիտնականների, քաղաքական գործիչների, քաղաքագետների և այլ շահագրգիռ անձանց հետ շփումը և փորձի փոխանակումը:



Ընթերցել և միանալ քննարկումներին

Սոցիալ-դեմոկրատիայի վերաբերյալ գրաշարի շնորհիվ հնարավոր է ինքնուրույն կարծիք կազմել և տեղեկանալ տարբեր թեմաների մասին: Գրքերը պարզ լեզվով են, հիմնված են վերլուծությունների վրա և ներկայացնում են տեսական և գործնական նյութեր: Համառոտ և հասկանալի ձևաչափով դուք ներածական գիտելիքներ կստանաք հիաժնական ուղղությունների և բանավեճերի մասին:



Ունկընդրել և միասին խորհել

Սոցիալ-դեմոկրատիայի վերաբերյալ աուդիոգրքերը հիմնված են Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիայի գրաշարի վրա: Այս ձևաչափը հնարավորություն է տալիս լսել և մտածել, տանը, ճանապարհին և ամենուր, որտեղ կցանկանաք:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դոկտոր պրոֆեսոր Մարիուս Բուսեմեյեր (* 1978) Կոնստանցի համալսարանի քաղաքագիտության, քաղաքական վերլուծությունների և քաղաքական տեսության ամբիոնի վարիչն է: Հարվարդում և Չայլբերգում ուսանել է քաղաքագիտություն, տնտեսագիտություն, իրավագիտություն և կառավարում: 2006-2010թթ. եղել է գիտաշխատող Զյուլի հասարակագիտական Մաքս-Պլանք ինստիտուտում:

Յոխեն Դահմ (* 1981) Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիայի ռեֆերենտ է: Մյունսթերում և Մալագյում ուսանել է քաղաքագիտություն, հաղորդակցության տեսություն և հանրային իրավունք:

Եվա Ֆլեբեն (* 1983) Բեռլինի ՉԼՄ-ների միասնական էլեկտրոնային կառավարման կենտրոնի ռեֆերենտ է: Գիտական թեզի շուրջ աշխատանքների ընթացքում աշխատել է ՍԴԿ (Սոցիալ-դեմոկրատական կուսակցություն) խորհրդարանական խմբակցության պատգամավոր Չիգմունդ Էիրմանի գրասենյակում: Իր գիտական թեզը ներկայացրել է որպես ֆեմինիստական տեսության հաղորդակցական տեսական քննադատություն:

Թիոբալտ Գումբերթ (* 1975) աշխատում է որպես ռեֆերենտ, թրեյներ, խորհրդատու ՍԴԿ Հանտֆեր/Ստորին Սաքսոնիա ընտրատարածքի քաղաքական կրթական ծրագրերում: Ուսանել է մանկավարժություն, բանասիրություն և փիլիսոփայություն:

Դոկտոր Զրիստիան Զրել (* 1977) Ղեկավարում է Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիան: Ուսանել է քաղաքագիտություն, պատմություն, տնտեսագիտություն և սոցիոլոգիա Չիգենի և Նյու Յորքի համալսարաններում: 2007թ. պաշտպանել է ատենախոսություն « Գերմանիայի ՍԴԿ-ի, Մեծ Բրիտանիայի Լեյբորիստական կուսակցության և Ֆրանսիայի Սոցիալիստական կուսակցության եվրոպական քաղաքականություն» թեմայով: Բազմաթիվ հրապարակումներ ունի Սոցիալ-դեմոկրատիայի տեսական և գործնական թեմաներով: Վերջին հրապարակումը 2012թ.՝ «Ժողովրդավարությունը Գերմանիայում. կարգավիճակ, մարտահրավերներ, հեռանկարներ»:

Ջուլիա Լամբերթին (* 1970) Գերմանիայի արհմիությունների միության դաշնային խորհրդի քաղաքական քարտուղարն է: Բոննի և Բեռլինի Ազատ համալսարաններում ուսանել է քաղաքագիտություն, համեմատական կրոնագիտություն, մանկավարժություն և հանրային իրավունք:

Դիանա Օգնյանովա (* 1981) Բեռլինի Տեխնիկական համալսարանում մենեջմենթի և առողջապահական բաժնի գիտաշխատող է: Բեռլինում և Շպարախենում ուսանել է հանրային բաղադրագիտություն, իսկ Փասսաուի համալսարանում՝ տնտեսագիտություն և մշակութաբանություն:

Դոկտոր Ալեքսանդր Փեթրինգ (* 1976) Բեռլինի գիտությունների կենտրոնում սոցիալական հետազոտությունների գիտաշխատող է: Հայդլբերգում ուսանել է բաղադրագիտություն, տնտեսագիտություն և փիլիսոփայություն: 2009թ. Բեռլինի Հոմբոլդի համալսարանում պաշտպանել է «Բարեկեցիկ պետությունների բարեփոխումների գործընթացները» թեմայով ատենախոսություն:

Դոկտոր պրոֆեսոր Թիոմաս Ռիքսեն (* 1974) Բամբերգի Օթթո-Ֆրիդրիխ համալսարանի միջազգային համեմատական վերլուծությունների բաղադրագիտության պրոֆեսոր է: 2007-2012թթ. Բեռլինի գիտությունների կենտրոնում սոցիալական հետազոտությունների գիտաշխատող է եղել: Բոննում, Համբուրգում և Փարիզում ուսանել է բաղադրագիտություն և տնտեսագիտություն: Բրեմենի Յաբբս համալսարանում պաշտպանել է ատենախոսություն «Պետականության շրջադարձ» թեմայով: Նրա հետազոտության ոլորտն է միջազգային և համեմատական բաղադրական էկոնոմիկան:

20 կարևոր առանցքային բառեր՝

1. **Զբաղվածության ապահովագրություն** (Էջ 117, 118, 120)
2. **Քաղաքացիական ապահովագրություն** (Էջ 79, 142, 143, 156, 157)
3. **Հնարավորությունների հավասարություն** (Էջ 16, 17, 26, 27, 28, 29, 78, 85, 117, 165, 168)
4. **Ժողովրդագրական շրջադարձ** (Էջ 61, 136)
5. **Ազատության (իրավունքներ)** (Էջ 4, 11, 16)
6. **Սերունդների համերաշխություն** (Էջ 18, 121, 122, 123, 135)
7. **Արդարություն** (Էջ 6, 8, 15, 16, 21, 23, 25, 27, 29, 30, 31, 71, 72, 83, 89, 90, 91, 110, 112, 127, 129,
- 142, 157, 165, 166, 170, 171, 172)
8. **Սեռերի հավասարություն** (Էջ 16, 17, 18)
9. **Համաշխարհայնացում** (Էջ 5, 49, 52, 53, 54, 55, 67)
10. **Կենսական պայմաններ** (Էջ 20, 21, 27, 111)
11. **Համերաշխություն** (Էջ 6, 10, 18, 70, 72, 77, 81, 82, 112, 122, 135, 155, 157)
12. **Սոցիալ-դեմոկրատիա** (Էջ 4, 6, 7, 10, 12, 14, 15, 22, 120, 138, 165, 173, 174)
13. **Սոցիալական շրջադարձ** (Էջ 63, 66)
14. **Սոցիալական պետության մոդելներ** (Էջ 72)
15. **Սոցիալական պետության սկզբունք** (Էջ 8, 25)
16. **Համակարգային փոփոխություն տնտեսության և աշխատանքային ոլորտներում** (Էջ 57)
17. **Մասնակցություն** (Էջ 11, 14, 17, 19, 26, 47, 73, 75, 77, 92, 99, 105, 109, 115, 141, 156, 160, 172, 175)
18. **Բաշխողական սկզբունք** (Էջ 144)
19. **Վերաբաշխում** (Էջ 12, 85, 129, 141)
20. **Նախապես հոգացող սոցիալական պետություն** (Էջ 10, 47, 76, 77, 152, 159)

Քաղաքականությանն անհրաժեշտ է հստակ կողմնորոշվածություն: Ով կարողանա հստակորեն ներկայացնել իր նպատակները, միայն նա կհասնի դրանց և կոգնորի դրանցով ուրիշներին: Այդ պատճառով, «սոցիալական պետություն և սոցիալ-դեմոկրատիա» գիրքը հարցնում է, թե ո՞րն է սոցիալական պետության և ժողովրդավարության կապը: Ի՞նչ է նշանակում արդարություն և սոցիալական քաղաքականություն: Ինչպիսի՞ դերակատարություն ունեն հիմնարար արժեքներն ու իրավունքները քաղաքականության կոնկրետ ոլորտներում:

Սոցիալ-դեմոկրատիայի գրաշարի թեմաները տեղ են գտնում նաև Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիայի համանուն սեմինարներում: Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիան **Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի** կողմից խորհրդատվություն և մասնագիտական վերապատրաստում է առաջարկում նրանց, ովքեր հետաքրքրվում և զբաղվում են քաղաքականությամբ:

Ակադեմիայի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելել www.fes-soziale-demokratie.de կայքը

«Սոցիալական քաղաքականության շուրջ թեժ բանավեճեր են ընթանում:

Հազիվ թե որևէ այլ ոլորտում կուսակցությունների աշխարհայացքները նման ուժգնությամբ բախվեին միմյանց:

«Սոցիալական պետություն և սոցիալ-դեմոկրատիա. գիրք 3-րդ»-ը կարող է գինել մեզ նման բանավեճերի համար»

Սաշա Ֆոգտ, ՍԴԿ երիտասարդական թևի դաշնային նախագահ